

Կրկերթ  
Ճանապարհու զոքք ԱՊՄՁԻՆ

---

ԲԱՐՁՈՒՆԷՔ ՏԱՆՈՂ ԱՐԱՀԵՏՈՎ  
ՆՈՐ ՀԱՆԴԻՊՈՒՄ  
ՃԱՔԱԾ ԼՈՒՒԹՅՈՒՆ  
ԼՈՒՒԹՅԱՆ ԲՈՊԵ  
ԾՈՎԱԾԱՂԿԻ ԱՉՔԵՐ  
ՀԱՄԱՆՎԱԳ  
ԿԱՏԱԿԱՊԱՀԵՐ  
ՓՈՔԻՒԿՆԵՐԻ ԱՌԼՈՐԱԿՈՒՄ  
ԻՍԿ ԳՐՔԻ ՎԵՐՉՈՒՄ...

# ԱՐԻՍ ԱՐՄՇՆԻ

---



Գծանկարը՝ Լիանա Քոչարյանի

ԱՐԻՍ ԱՐՄԵՆԻ

---

Կրկերի  
Դոդոկաժու

ԳՐԻՔ ԱՊԱԶԻՆ

ԲԱՆԱՍԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
ԵՎ  
ՊՈՆՄՆԵՐ

ԱՏԵՓԱՆԱԿԵՐՍ 2013

*Հաճախ բարչրացայն չենք արտասույտում մեր զգայուն կրկնող  
Ժողովների նկատմամբ, իսկ երբ փոքրում ենք սիրտ ու կրահատիքի  
խառնելը շնչոսկ արարելում է, որ սպան... ոչացել ենք:  
Ներքո, մայրիկ...*

**Սիրասուն Ժողովներին՝  
Արսեն և Լենա Գրիգորյաններին,  
մշտաներսնք ջախլով**

ՀՏԳ-891.981-1 Արսենի

ԳՄԴ-84Հ-5

Ա 931

**Խմբագիր՝  
ԿՈՄԻՏԱՍ ԴԱՆԻԵԼՅԱՆ  
Նկարիչ՝  
ՌՈՐԵՐՏ ԱՍԿԱՐՅԱՆ**

**ԱՐՄԵՆԻ Արիս (Ա.Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆ)**

**Ա 931 ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒԷ ԳԵՐՔ ԱՈՒՋԻՆ: ԲԱՆԱՏԵՂԾՈՒ-  
ԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՊՈԵՄՆԵՐ. – Սրբեփանակերպ: Դիզակ  
սլլուս, 2012. - 264 էջ:**

Ծարունակելով հայկական պոեզիայի դասական ավանդույթները, բանասիրեղ Արիս Արսենին (Գրիգորյան) չեքք է բերել իր սեփական ոճը՝ սրեղծագործելով հայրենասիրության, սիրտ, մարդկայնության ու իստղադության, բազմաթիվ այլ թեմաներով: Նրա սրեղծագործութունների մեջ առանչնահարուկ տեղ են զբաղեցնում ազգային ազա-րագրական պայքարին նվիրված գործերը: Հայրենիքի ու պարե-րազմի թեման անցնում է հեղինակի քնարերգության միջով՝ սկզ-բից մինչև վերջ:

Թեմատիկ բազմազանությունը, կառուցվածքային նրբություն-ներն ու պոետական ասելիքը շոյում են ընթերցողի ունկերը և նրա հոգում արթնացնում հուշերի, կարտրի զգացումներ:

Հեղինակի բանասիրեղծություններն ու պոեմները, չափածո եր-գիծանքն ու մանկական սրեղծագործությունները գրքում տե-րադրված են ժամանակագրական կարգով՝ ըստ ժամանակին իր իսկ կողմից կազմված (տպագրված և չտպագրված) ժողովածուներ-րի: Այս գրքով առաջին անգամ տորչ է արվում մեկ ամբողջության մեջ ներկայացնել Արսենիի չափածոն:

ՀՏԳ-891.981-1Արսենի

ԳՄԴ-84Հ-5

ISBN 978-99941-2-655-2

© Արիս ԱՐՄԵՆԻ, 2012

# ԱՋՆԻՎ ՄՂՈՒՄՆԵՐԻ ԲԱՆԱՍՏԵՂԾԸ

**Ա**րիս Գրիգորյանի (Արսենի) քնարերգության շուրջը մտորելիս, չգիրես ինչու, ուզում ես կրկնել Նեկրաստովի բանաստեղծական փողերը.

**Պոետ կարող ես և՛ չլինել,**

**Բայց քաղաքացի պարտավոր ես միշտ:**

Երևի պատճառը նրա կյանքի թողած հեղուկիցն է, անցած ճանապարհի աշխարհագրական քարտեզը՝ Կոնոդորի դպրոց, Սյրեիանակաների մանկավարժական ինստիտուտ, խորհրդային բանակ, Արցախյան գոյապայքար...

Նեկրաստովյան պոեզիան սկզբունքը՝ «Նախ քաղաքացի՛, ապա՛ պոետ», Արիսին առաջնորդել է ոչ միայն պարերագվական թռուրտով, այլ՝ նաև խաղաղ օրերում, ամեն մի քայլի... Այդ սկզբունքը մենտորի դեր է խաղացել նաև բանաստեղծական փողերում, արդյունքում՝ գրածն անհամեմատ շար է, քան՝ կորցրածը: Իսկական բանաստեղծ լինելու կոչումն անհանգստացրել է նաև Արիս Գրիգորյանին.

**Ինչքա՛ն դժվար է լավ երգը գրվում,**

**Չգիտեի՞ ես...**

Իսկ այս պարզ պոեզիան վարվելակերպը գիրակցելուց հետո հազիվ թե ծնվեին ժամանակավրեպ, ծամծամված փողեր: Եվ բանաստեղծի հոգին գեղարվեստորեն վերարտադրվել է՝ սրեղծելով բնորոշ, յուրօրինակ մի բանաստեղծական աշխարհ, ուր ինքնայրույնի ցոլանք են բանաստեղծներն ու գույների խայտաբղետությունը, ասել է՝ անհմաստ է կյանքը՝ առանց պոեզիայի.

**Բանաստեղծությունն իմ էությունն է,**

**Ես առանց դրա չեմ կարող ապրել:**

Միանվագ, միասպաղաղ չեն Արիս Գրիգորյանի բանաստեղծությունները, քանզի հարուստ ներաշխարհ ունի դրանք արարողը: Թե՛ մտաբերի բազմազանությունը, կառուցվածքային նրբություններն ու պոեզիան ասելիքը շրջում են ընթերցողի ունկերը և նրա հոգում արթնացնում հուշերի, կարոտի զգացումներ.

**Իմ երգը լայնարձակ է,**

**Իմ երգը սահման չունի,**

**Անսահման իմ հոգու պես...**

Անգամ պարերագմի երախում ժպտալ գիրե բանաստեղծը, քանզի սերը և ժպիտը կարող են ծնկել մահին...

**Ես միշտ ժպտում եմ...**

**Երբ որ ապրելը դժվար է թվում:**

Արիս Գրիգորյանի բանաստեղծական աշխարհում իշխողը խոհականությունն է, և երազներն ու կարոտները խոհական

ԱՐԻՍ ԱՐՍԵՆԻ  
ՉԵՐԿԵՐ ԺԱՂՈՒՄԱՆ, ԳԻՐԻ ԱՄՈՎՅԷ

լեզվով են փոխանցվում ընթերցողին՝ մերք սպրեցնելով հուշերի ջերմությամբ, մերք՝ արթնացնելով հայրենիքը կորցնելու սահասարսուռ միտքը:

**Իմ առաջին ճիչը, որ լսել է տունը  
Մեր այն հեռո՛ւ գյուղում աղամանդյա,  
Հրդեհվել է տան հետ, ավերվել է, ավա՛ղ,  
Ու էլ չկա՛ տունս, ճիչս չկա...**

Հայրենիքի ու պատերազմի թեման անցնում է նրա քնարերգության միջով՝ սկզբից միևնչև վերջ: Հայրենիք ասածը զուր պռարկա չէ, այլ դարերի խորքից աղաղակող կյանքեր, պատերի ու ասուպակերի գերեզմաններ ու կանչե՛ր, կանչե՛ր... Արցախն ամփոփված է բանաստեղծի պապի կերպարում, իսկ հերոս փոխանցվում է հորը, որդուն, թոռանը, ժոռանը.

**Իմ պապը Խաչունց Անդրին է,  
Ականջս նրա կանչին է:**

Ճշմարիտ է նկատում բանաստեղծը, որ «մի կյանքն էլ քիչ չէ», եթե ապրես լիարյուն կյանքով, իմաստալից, ավելի շար ունեցածդ րաս այդ կյանքին, հայրենիքին ու ժողովրդին, քան ինքդ պոկես կյանքից: Արարելն ավելի պարզակալն է, քան վարկելն անիմաստ.

**Մի կյանքն էլ հերիք է մարդուն,  
Միայն թե մարդու պես ապրի  
Ու կյանքն իր չվատնի իզուր...**

Եվ փույթ չէ, որ իր՝ միայն մի անգամ փրված, կյանքը քնարական հերոսը պարբարա է գոհաբերել հանուն հայրենի հողի, հանուն մայր ժողովրդի.

**Առաջին մարտում, ինչ էլ որ լինի,  
Ես պիտի կռվեմ շարքում առաջին:  
Իսկ թե առաջին մարտում պիտ ընկնեմ՝  
Թող ընկնեմ միայն շարքում առաջին...**

Հայրենիքը քաղցրանում է նաև «Միևս մայրիկներով», ում հիևզ զավակները երկրորդ աշխարհամարտում գոհվել են, և փոխարենը հիևզ «սև թղթերն» են մոր դուռը բախել: Արցախը սրբանում է այն բոլոր քաջարի տղաներով ու աղջիկներով, ովքեր նահատակվեցին, որ սպրեկը մենք՝ սպրողներս: Արցախյան Ազատամարտի նահատակ Մարգարիտ Մարգարյանին չոնած բանաստեղծության մեջ Ա. Գրիգորյանը գրում է.

**Եվ թո՛ղ հիշենք միշտ նրանց, ովքեր հանգույն ճարակի՛  
Ելան արի, անվարան ու գոհվեցին մե՛զ համար...  
Եվ քեզ, որ չես երկնչել, չես զգացել սրտի դող...**

Ի դեպ, բանաստեղծի եղբայր Անդրանիկն էլ թշնամու զնդակին գոհ գնաց, ում «գրկել է սիրող մոր պես մայր հողը»:

Կորուստների ցավը փանջում է բանաստեղծին, քայց և նրան սիրոխում է այն զաղափարը, որ հայրենիքի համար նահատակվողները երբեք չեն մեռնում, այլ նրանց անունները փարիկնե-

ԱՐԻՍ ԱՐՈՒՄԻ  
ՏՐԻԲՆԱԼ ԺՈՂՈՎԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԳՐԱՐԱՆ

րի հեղ պվելի պայծառ են շողում, ամոքում կորուսյալների անախ վիշրն ու կսկիծը:

Արիսը հավայրում է Արցախի լուսե ապագային, քանզի այս փոքրիկ երկրամասն արծիվ որդիներ ունի, ովքեր լեռնածին են, իսկ «լեռները չեն խոնարհվում, լեռները խոնարհվել չգիտեն»:

Բազմագույն ու բազմաբույր են հայրենի բնությանը ներքողած երգերը: Նրանցում կան խոր կարոյր, մանկութ օրերի քաղցրություն, արարչագործության անզուգական պարկերներ: Կարոյրների և հուշերի գրկում քնարական հերոսը սիրում է շրջել մեն-մենակ, որ ոչ մեկը չիսանգարի իրեն՝ հիշելու, ըմբռչխներու քաղցր անցյալը, տա-ռապանքների քաղցրությունը:

**Կարոտներիս կանաչ հովտում՝ թափառում եմ մեն-մենակ,  
Աշխարհի չափ բարությամբ լի, հուր բաղձանքով մի համակ:**

Նա լուռքյան մեջ պվելի խորն է ճաշակում հայրենի բնությունը, Խաչունց աղբյուրի ջրի սառնությունը, Արցախին է կարոյրով փար-վում, անպարտելի է դառնում Արցախը, իրենից՝ անբաժանելի բնու-թյան անզամ ամենափոքրիկ մասնիկը:

**Իմ հայրենի անտառնե՛ր, գմբուխտե դաշտեր,  
Նորից այցի կզամ ձեզ՝ ինչ էլ որ լինի...**

Այս քանարողերը խորհրդանշում են հաղթանակի երանգներ, անկուրրում կամք, հավայրի հավայր: Եվ քանարեղծն ընթեր-ցողի առաջ բացում է իր հոգու գաղտնարանը, ոչինչ չթողնելով քո-ղարկված: Նա սիրում է անկեղծ ու ազնիվ լինել և իր փողերն էլ իմոդում է անապակյան զգացումներից, երազային մաքրություն է քարոզում թե՛ հայրենիքի հանդեպ տաժած սիրո մեջ, թե՛ աղջկա, թե՛ հարսագարի, թե՛ անմատնթի: Ահա թե ինչու, սիրած աղջկան դի-մեկիս չի վարարում՝ նրան անզամ Ասրված անվանել, որովհետև կարարյալն Ասրվածն է լոկ, ինչպես կասեր Եդիշե Չարենցը:

**Գու երազակերտ իմ սրբապատկեր,  
Գու՝ իմ լուսաշխարհ,  
Իմ Ասոված, իմ Սեր...**

Արիս Գրիգորյանի քնարերգությունը հարուստ է քնանկար-ներով, խոհափիլիսոփայական մտորումներով, քանարողերի ռիթմիկ խաղերով ու բազմանախչ պարկերներով:

Արվեստի հանդեպ տաժած սիրո գեղարվեստական արտա-հայտություն են Խ. Աբովյանին, Հովհ. Թումանյանին, Ավ. Իսա-հակյանին, Հովհ. Շիրազին, Պ. Սևակին, Հ. Սախյանին և այլոց նվիրած քանարեղծությունները, որոնցում ոչ միայն դասական-ների արվեստի նկատմամբ խորին ակնածանք ու երկրպագու-թյուն են ընդգծվում, այլև շեշտվում են նաև նրանց պոետական որոշակի առանձնահատկություններն ու լեզվատոնական յուրա-հատկությունները:

Արիսի պոետական աշխարհում քանարեղծական նորույթ է նրա «Պահի վկայումներ» շարքը, որտեղ յուրաքանչյուր վկայում կյանքից նրբորեն քաղած մի անմոռանալի պահ է, նա էլ հանդես է գալիս որպես օրվա մի պահի գեղարվեստական վերարտադ-րող, նշեմք, դրանք քանարեղծական յուրօրինակ ընկալում-

ներ են, եղածի և զգացածի զուգադրում.

**Պատուհանիս տակ շրշում է քամին,  
Ի՞նչ է որոնում նա այս ուշ ժամին:**

Կամ՝

**Այնպես լինեք,  
Հունից շեղված առուն  
Նախկին հունը գտներ:**

Այսպիսին է բանաստեղծ Արիս Գրիգորյանի՝ վեհ չգրումներին ծնված պոեզիան, ուր հեղինակը ցավով է տեսնում վայրը, երագում լավի մասին: Նրա հոգին բզկիրում է ոչ միայն մարդու, այլ նաև բնության փառապանքը. «Ու ծառի ցավով փառապում եմ... ես»:

Անհանգիստ է բանաստեղծը ոչ միայն տողեր արարելիս, այլ, ընդհանրապես, իսադադության մեջ էլ պատերազմի որոյրներ է լսում, քանզի ռազմադաշտում քանիցս է նայել մահվան աչքերին.

**Կապույտ են լինում հորիզոնները:  
Իսկ երբ ցերեկվա հոգսերից հոգնած  
Դեպ մայրամուտ է թերվում արևը՝  
Ինչո՞ւ են հաճախ  
Հորիզոնները կարմիրով ներկվում,  
Ես ի՞նչ իմանամ,  
Գուցե ինչ-որ տեղ արյուն է հեղվում:**

Արիս Գրիգորյանը չեռք է զարկել նաև պոեմի ժանրին, գրելով՝ «Յնորք», «Պաբլո Ներուդայի մենախոսությունը», «1988, փետրվար 27-29», «Լռության թուփ» գործերը, որոնցում միախառնված են անհնական վիշտն ու անանհնական մաքառումը հանուն հայրենի եզերքի, հանուն մարդու նվիրական իղջերի իրականացման: Պոեմներում գերակշիռը խոհն է, բանաստեղծի մտորումը և հոգու ճիշտ:

Բարդ ու խորհրդավոր է կյանքը, խորհրդավոր են մարդու ապրումները, բանաստեղծի ընկալումներն ու գեղարվեստական վերարտադրումները, և տերյանական է Արիս Գրիգորյանի խոր կյանքի մասին.

**Կյանք, շատ ես նման դու կարուսելի,  
Ու պտտվում ես ճիշտ որ՝ նրա պես,  
Մարդիկ բարձրանում, իջնում են էլի:**

Նոր է բոլորել Արիս Գրիգորյանի հիսուն փարին: Ցանկանք, որ նրա բանաստեղծական աշխարհը հարստանա նորանոր գույներով, լուսեղեն թեմաներով, ընթերցողին ներկայանա պոեական ընկալումների առավել խորությամբ, ընդգրկման լայնությամբ ու միշտ սրահպանի իր քնարերգությանը հապուկ ազնիվ մղումները:

**Լենա ԳՐԻԳՈՐՅԱՆ**

Արցախի պերական համալսարանի պրոֆեսոր  
«Ազատ Արցախ» թերթ, թիվ 33 (2603), 22 մարտի 2011 թ. (Էջ 8)



## ԽՈՍՔ ԸՆԹԵՐՅՈՂԻՍ

Ահա՛ նորից հանդիպեցինք,  
Իմ սիրելի ընթերցող,  
Ապրումներս ու հույզերս  
Քո մեջ նաև ապրեն թող:

Գուցե դրանք մի քիչ նանիր,  
Դատարկաբան թվան քեզ,  
Բայց դու, ի՞նչ է ասել, հիշիր,  
Մեր բանաստեղծ մարգարեն:

-Չգացմունքն է գերիշխանը,  
Խելքը՝ նրա լուկ ծառան...  
...Ես էլ՝ հաճախ թերանալով,  
Բայց լսել եմ միշտ նրան:

Ոմանց նման ձգտել փառքի՞,  
Կամ էլ... «հանճար երևա՞լ»...  
Գրել եմ այն, ինչ հոգուս մեջ  
Ու իմ սրտում, իրոք, կար:

Հաճախ գուցե այն չեմ գրել,  
Ինչ որ պիտի գրեի,  
Չգրածիս մեջ էլ սահայն,  
Անշուշտ, միշտ էլ ես էի:

Իմ մեջ միայն ես եմ նստած,  
Իմ մեջ «ուրիշ մարդ» չկա,  
Ես չեմ կարող ո՛չ ինձ խաբել,  
Ո՛չ կեղծավոր երևալ:

Ահա և ես, ամբողջությամբ,  
Ընդունիր ինձ՝ ինչպես կամ,  
Սիրտս բաց է միշտ քո առաջ,  
Իմ ընթերցող բարեկամ:

16.03.07, Ստեփանակերտ

Բարչունք տանող արահերամբ  
Իմ երազն քննիչ ո՞ւր է տանում...

...Ես իմ ցա՛նի եմ երկիրն հանում  
Բարչունք տանող արահերամբ...

---



Републик  
Сибирь 1973-1984  
Упунктыр

---

# Կարոպետի Կրակար

## ՆԱԽԵՐԳ

Կարոտներին կանաչ հովտում թափառում եմ մեն՝մենակ,  
Աշխարհի չափ բարու թյամբ լի, հուր բաղձանքով մի համակ:  
Թափառում եմ, շրջում երկար՝ հովտի լայնքով, երկայնքով,  
Ու դյուր թվում եմ ծաղիկների անուշաբույր հմայքով:  
Կանաչ հովտում շրջում եմ ու... հույզերեն եմ ես երգում,  
Իսկ քո սերը ծաղկանց տեսքով բուրվառում է իմ հոգում:  
Ու երգում եմ քո աչքերը՝ ճաճանչներով արևի...  
Երազներին կանաչ հովտում որոնում եմ քեզ էլի:  
1977, Դիլիջան

## ԸՆԿԵՐՈՋ ՀԱՄԱՐ...

Ընկերոջ անհույս վիշտը կկիսեմ,  
Ես նրա լավը չեմ խլի երբեք:  
Ընկերոջ համար կյանքս կզոհեմ,  
Ես նրա վարդը չեմ խլի երբեք:  
Ընկերոջ սրտի փուշը կհանեմ,  
Ես նրա զարդը չեմ խլի երբեք:  
Իմ սրտի համար՝ ես ընկերոջս  
Սրտի մի զարկը չեմ խլի երբեք...  
1973, Կոնոպտ

## ԻՄ ԵՐԳԸ

Իմ երգը լայնարձակ է,  
Իմ երգը սահման չունի  
Անսահման իմ հոգու պես:  
Իմ երգը սիրո հևք է,  
Իմ երգը դադար չունի  
Անդադար իմ սրտի պես:  
Իմ երգը սիրո երգ է:  
Սիրո պես մաքուր ու ջինջ,  
Անսահման, անեզերք է...  
1977, Կոնոպտ

# ՏԻՇՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՂԵԳԻ

Մանկուլթյան այն անհոգ օրերին,  
 Ես՝ վախտ ու անօգ մի մանուկ,  
 Շրջել եմ հանդերում մեր գյուղի,  
 Եվ ամեն ծառի տակ՝ անտառում,  
 Նստել եմ ու անվերջ երազել,  
 Գուրգուրել հույսերը իմ վառման,  
 Ծնվել են վառ հույզեր վարարուն՝  
 Երազկոտ իմ հոգում մանկական:

...Անցել են օրերն այդ, էլ չկա  
 Այն մանուկը վախտ ու անօգ,  
 Բայց կան դեռ հույսերը անըջած,  
 Ու կան դեռ հույզերը երազկոտ,  
 Որ փոխվել են հանգ ու վանկերի,  
 Եվ առած լույս թևեր երգերի՝  
 Մեր գյուղի ծաղկաշատ հանդերից  
 Թռչում են դեպ անհայտ հեռուներ...

1978, Կոնոդոս

# ԽԱՉՈՒՆՑ ԱՂԲՅՈՒՐԸ

Հայրս ասաց՝ Խաչունց աղբյուր՞ւր, չէ՛,  
 Խաչունց... Ջրափոս գրիր, աղաս...

...Քանզի մոլուցքը անձնական շահի  
 Բերում է իր հեռ բիրտ ժամանակներ,  
 Եվ ավերակված երազ-աշխարհիս  
 Խաչունց աղբյուրից ոչինչ չի պահել...

Սնտառի եզրին մի աղբյուր կար ջինջ,  
 Որ խոխոջում էր անվերջ, ամեն օր,  
 Անցնող-դարձողին համբույր էր տալիս  
 Իր եղեմական, քնքուշ շուրթերով:

Եվ կարկաչում էր նա գիշեր ու զօր,  
 Չայնում էր ծանոթ-անծանոթներին,  
 Նրա կարկաչին մանկուց եմ ծանոթ,  
 Մանկուց է տիրել նա իմ սիրտ-հեքին:

Դրա համար էլ որքան հեռացել,  
 Այնքան ավելի սիրել եմ նրան,  
 Ու իմ հոգու մեջ միշտ վառ եմ պահել  
 Խաչունց աղբյուրի անունը պայծառ...

1977, Դիլիջան

ԱՐԴՄ ԱՐՄԵՆԻ Բարբալ Գաևազ արսևեթով

## ՆՈՐԻՑ ԱՅՑԻ ԿԳՆԱՄ

Նորից կգամ հայրենի գյուղը իմ ծաղկուն,  
Նորից այցի կգնամ խաչունց աղբյուրին,  
Խաչունց տափի արտերից հուշն է լուկ մնում,  
Նորից այցի կգնամ ես խաչունց տափին:

Ճրիգներեն աղբյուրից շա՛տ եմ ջուր խմել,  
Շա՛տ եմ այցի գնացել ես Ցուրտ աղբյուրին,  
Քամար-խուժում, Մոշուտում ինչքան եմ եղել,  
Ինչքան եմ ջուր խմել ես Խինա աղբյուրից:

Վաղուց է՝ չեմ այցելել Դնգդնգան ձորին,  
Նրա անուշ... հառաչին կարոտել եմ ես,  
Նորից այցի կգնամ ես Ղամշոտ ծովին,  
Խաչերի սեռ, Վիտին սեռ՝ կարո՞տ մնամ ձեզ...

...Իմ հայրենի՛ անտառներ, զմրուխտե՛ դաշտեր,  
Նորից այցի կգամ ձեզ՝ ինչ էլ որ լինի,  
Երագներն եք իմ մաքուր, կարոտը լուսե,  
Կգամ, հոգում իմ երբեք դուք չեք մոռացվի:

1977, Դիլիջան

## ԼԵՌՆԵՐԸ ԽՈՆԱՐՏՎԵԼ ՉԳԻՏԵՆ

Լեռները չեն խոնարհվում,  
Լեռները խոնարհվել չգիտեն:

Դարերով անվերջ կանգնել են այդպես  
Ու ասես հսկում են  
Աշխարհի անցուդարձը:

Իսկ աշխարհն ապրում է իր համար՝  
Անտեղյակ լեռների տազնապներին ու հոգսերին,  
Խոհերին ու հույզերին...



Կյա՛նք, շատ ես նման դու կարուսելի,  
Ու պտտվում ես ճիշտ որ՝ նրա պես,  
Մարդիկ բարձրանում, իջնում են էլի:



(Խորհուրդ)

Մի՛ պարծենա երբեք դու ձեռքբերածով...  
Այլ պարծեցիր... պահածով:

## ԳԱՐՈՒՆ

Գարո՛ւն է էլի,  
 էլի գարո՛ւն:  
 Ձնհա՛լ է էլի:  
 էլի առուն  
 Իր հին հանգերն է մտաբերել...  
 Շուրջը կանա՛չ է,  
 Կանչող ափե՛ր,  
 Ձնծաղիկների ճերմակ ծափե՛ր:  
 Ամոթխած հոնին ձորն է քշում  
 Դեղնակրակե նրբերանգնե՛ր:  
 Արագիլների վերադարձող  
 Երամների մեջ թախի՛ծ կա լուռ,  
 Երա՛գ կա,  
 Հո՛ւյզ կա,  
 Եվ հայրենի տան կարոտ ու սե՛ր...  
 Ձայնը գլուխն է գցում առուն,  
 Ափերի չորը փոխում թացի,  
 Ու թռչկոտում է, երգում, պարում,  
 Ունկնդրում ձմռան տխուր լացին:

...էլի գարուն է:  
 Գնա՛մ էլի  
 Տնտղեմ՝ ինձ ծանոթ կածան ու խուլթ,  
 Տեսնեմ՝ մի բա՞ն է մնացել դեռ  
 Իմ մանկուլթ յունից երազաչուրթ...

01.03.82, Մարտակերտ

## ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ԲՆԱՆԿԱՐ

Կանա՛չ են հագել դաշտն, անտառը,  
 Բացվել են ծաղիկներն, ահա,  
 Մեղմ քամուց ճկվո՛ւմ են ծառերը,  
 Սվսվում ձայներով հազար:

Զգում եմ ես նրանց ձայները  
 Իմ հոգու ամբողջ էութ՛յամբ...  
 Ինչքան թովի՛չ է այս գարունը,  
 Ու հոգեհամ է ինչքա՛ն:

Մեղմ քամուց ճկվո՛ւմ են ծառերը,  
 Սվսվում ձայներով հազար,  
 Ծաղկե՛լ են անգամ մեր սարերը,  
 Եվ ուրույն գարուն է ամեն սար:

# ՕՐՈՐՎՈՒՄ ԵՆ ԾԱՂԻԿՆԵՐԸ



Մեղմ ու քնքուշ ծաղիկները,  
 Հեզանազ են, օրոր-չորոր,  
 Ու չորս-բոլոր  
 Բո՛ւյրն են իրենց լուռ տարածում:

Փոքրի՛կ-փոքրիկ քայլիկներով  
 Ես շրջում եմ ծաղկանոցում,  
 Ու շոյում եմ  
 Նրանց քնքուշ թերթիկները:  
 Իսկ նրանք լուռ օրորվում են,  
 Սվսվում են ու... լռում են:  
 Թախծում են լուռ  
 Ինչ-որ կորած անուրջների,  
 Անհացած  
 Ու հեռացած երազների՝ համար միայն:  
 Երազանքնե՛ր,  
 Դա՛ռն ու ուրա՛խ երազանքներ,  
 Ինչո՞ւ եք դուք այդպես տանջում  
 Դրախտային ծաղիկներին...  
 Իսկ ծաղիկները քնքշորեն  
 Գլխիկները օրորում են,  
 Թախծում, թախծում ու լռում են:

...Փոքրի՛կ-փոքրիկ քայլիկներով  
 Լուռ շրջում եմ ծաղկանոցում:

...Ծաղիկներին պատած ցավը  
 Ինչի՞ց է, որ ի՛նձ է խոցում...

04-05.08.77, Դիլիջան



Ինչո՞ւ եմ ես էլ լույս աշխարհ եկել...  
 ...Իսկ եթե դո՛ւք ինձ այս հարցով դիմե՛ք՝  
 Կարո՞ղ եմ, արդյոք, ձեզ պատասխանել:



Անցնում է կյանքը՝ հույզերով լեցուն,  
 Ու կանգ չի առնում երբեք, իմացի՛ր,  
 Սակայն վա՛յ նրան, ով ետ է մնում:



## ԳԱՐՆԱՆ ՏՐԱՎԵՐ

Գարունն է հիմա իմ լեռնաշխարհում,  
Բացվել են գարնան լույս ծաղիկները,  
Ու նոր բուրմունքով բուրրում է սերը...

Գնանք, թափառենք դաշտ ու անտառում,  
Հմայվենք գարնան լույս ծաղիկներով  
Ու երգենք սիրով,  
Երգենք սուրբ երգը՝ սիրո, վեհության,  
Հավատարմության:  
Գնանք, սիրելի՛ս, կանաչ դաշտերը,  
Թափառենք այնտեղ անհուն հուզմունքով,  
Թափառենք սիրով,  
Ու զգվենք, փարվենք մենք ծաղիկներին...

Դու է՛լ ծաղիկ ես,  
Ես է՛լ ծաղիկ եմ,  
Գնանք՝ մեզանով գեղեցկացնենք  
Մեր լեռնաշխարհի ժպիտն ու փայլը...

1978, Կոնոդոս

## ԴԵՂԻՆ ԳՈՒՅՆ

Ես քեզ սիրո՞ւմ եմ, դեղին գույն,  
Սիրում եմ այնպես,  
Ինչպես առաջին իմ սերը,  
Իմ երջանկությունն առաջին,  
Ու կյանքում նրա մի անգամ միայն բացվելը...

Ես քեզ սիրո՞ւմ եմ, դեղին գույն:  
Սիրում եմ այնպես,  
Ինչպես իմ երազմանկության  
Երազ օրերը...

Ես քեզ սիրո՞ւմ եմ, դեղին գույն...  
Երբոր ձյուն է դրսում,  
Երբոր ցուրտ է սաստիկ,  
Ու... ծիծաղելի՛ նույնիսկ  
Գարնան մասին երգ գրելը,  
Ես սիրում եմ մաքու՛ր ու անապակ սիրով՝  
Ձնծաղկի հետ քո հայտնվելը...

... Ես քեզ սիրո՞ւմ եմ, դեղին գույն:

1980, Կոնոդոս

ԱՐԴՄԱՆ ԲԱՅՅԱՆԻ ՎԵՐՆԱԿՆԵՐ

## ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԸ

Քայլում եմ հաճախ՝ խոհերով լռին,  
Խոհերով լեցուն,  
Թե ո՞նց է լինում ճանապարհների վերջալուսվելը,  
Թե որտե՞ղ ծնվում,  
Որտե՞ղ վերջանում,  
Եվ ո՞նց է լինում,  
Որ չեն մոլորվում ճանապարհները:

Քնում է քամի՛ն,  
Քնում աշխա՛րհը,  
Արև՛ն է քնում,  
Հոգնում են նույնիսկ  
Ու քնում անգամ հորիզոնները,  
Ոչ հոգնել գիտեն,  
Ոչ վերջ ու վախճան,  
Գնում են, գնում,  
Չեն քնում միայն ճանապարհները:

...Արյո՛ւն է եղել,  
Հրդե՛հ,  
Կոտորա՛ծ,  
Մա՛հ,  
Ավե՛ր,  
Թալա՛ն:

Հրդեհվել, վառվել ու ավերվել են հայոց դարերը,  
Ավերակներից հառնել են նորից փյունիկի նման  
Ու դարեր ապրել ճանապարհները:

...Ծնվո՛ւմ են մեզ հետ,  
Մեր երազներով թե՛ առնում, թռչում,  
Քայլո՛ւմ են մեզ հետ,  
Երբ որ կանչում են լո՛ւրթ հեռուները,  
Մեզ հետ չե՛ն... մեռնում,  
Ամեն նորի հետ ծնվում նորից-նոր,  
Նորի՛ց են ձգվում ճանապարհները...

29.04.82, Մարտակերտ



Օղիկներն են միշտ ինձ ուրախ պահում:  
Ահա թե ինչու՝  
Չմռանը ես միշտ տխուր եմ լինում...

## ԱՅՍ ՃԱՆԱՊԱՐՏԸ...

Անտառի նկատմամբ առանձնակի վերաբերմունք ունեւր հայրաւ:  
 Անտառապաշտի այդ սերը նաև ինձ փոխանցվեց, բայց՝ այլ  
 բնույթով. իմ առաջին բանաստեղծութիւններում հաճախ նաև  
 անտառի ձայնն էր լսվում: Ես այն ժամանակ (նույնիսկ շատ  
 տարիներ հետո էլ) չէի հասկանում, թե իսկապես «անտառի  
 ձայնից ինչու եմ հուզվում»: Միայն հորս մահից հետո, միայն  
 բոլորովին վերջերս կարողացա ըմբռնել այդ հարցի իմաստը.  
 անտառից հորս ձայնն է լսվում...

2003 թվական, ամառ

Սիրասուն հորս՝ Արսեն Գրիգորյանին,  
 մշտամորմոք ցավով

Ա

Այս ճանապարհը ինձ ո՞ւր է տանում,  
 Մերթ վանում, մերթ էլ... գազաթ է հանում:

Մերթ ծունկը ծալում, ուր էլ պատահի,  
 Պատեհ-անպատեհ, կամ՝ հարմար պահի:

Մերթ էլ՝ ծունկը իջնում խաչքարի առաջ,  
 Տեսած՝ և՛ կարոտ, և՛ ցավ, և՛ հառաչ:

Տեսած՝ կոտորած, ավերված... դարերը,  
 Ու սրի քաշված սրբոց-սուրբ քարեր:

Բ

Այս ճանապարհը ինձ ո՞ւր է տանում,  
 Ի՞նչ է ինձանից քամին գողանում:

Եվ ո՞վ է այնպես անհույս կանչո՞ւմ ինձ  
 Այն եղեմական, զմրուխտ անտառից:

Անտառի ձայնից ինչո՞ւ եմ հուզվում,  
 Եվ ի՞նչ է անտառն ինձանից ուզում...

Գ

Այս ճանապարհը ինձ ո՞ւր է տանում.  
 Դեպի խաչքարն է անաղմուկ գնում:

Գնում, չոքում է լուռ ու անհառաչ,  
 Ասես խաչքարն այդ դարերը ուսած՝

Ինչոր ժամանակ ինքն է հենց բերել,  
Բերել ու լեռան գագաթն է հանել:

Գագաթից ձորն է նա իջել նորից,  
Երևում է դեռ խաչքարը ձորից:

Խաչքարը, պարզ է, չի երևացել,  
Գագաթ է նորից ճամփան բարձրացել:

Ու այդպես՝ անվերջ... Ոչ հոգնում է նա,  
Որ ինքն էլ գոնե քիչ հանգստանա,

Ոչ էլ քունն է մոտ գալիս աչքերին,  
(Անխիղճ է բախտը ճանապարհներին)...

Դ

Տա՛ր ինձ, ճանապարհ, անտառ ու դաշտին,  
Կարոտս տանեմ անտառապաշտին:

Քայլեմ անտառի կածանով շաղոտ,  
Լսեմ կաքավի «չաղ-կղա»-ն կարոտ:

Անուշ խոխոջի աղբյուրը լեռան,  
Կոտրեմ ծարավս համբույրով նրա:

Կախարդվեմ ձայնից Խաչունց աղբյուրի,  
Թողնեմ, որ նա իմ... շուրթը համբուրի:

Մոռանամ մի պահ աչխարհ ու... մարդիկ,  
Մարդկային բարքեր՝ կեղծավոր ու... լիբբե:

Ե

Անտա՛ռ իմ, մի՞թե ես հանցավոր եմ,  
Իմ հանցանքն այն է, որ... անցավոր եմ:

Իմ հանցանքն այն է, որ դարավոր չեմ,  
Որ քեզ պես, անտա՛ռ, հազարավոր չեմ:

Մե՛կ եմ, միայնա՛կ, մենավո՛ր, մենա՛կ,  
Ինքս իմ հոգսին, ինքս ինձ հենակ...

07.08.82, Կոճողոտ

## ՄԻՆԱ ՄԱՅՐԻԿԸ

*Մինա մայրիկի և Երկրորդ աշխարհամարտում զոհված նրա հինգ զավակների՝ Ներսես, Գեղեոն, Լևոն, Մուրեն և Անդրանիկ Դանիելյանների պայծառ հիշատակին*

**Մ**ինա մայրիկի հինգ զավակները  
կռիվ գնացին ու էլ ետ չեկան:  
Նրանց փոխարեն գյուղ վերադարձան  
Լոկ... «սև» թղթերը:  
Դանդաղ խաչվեցին  
Մինա մայրիկի անհույս ձեռքերը:  
Մինա մայրիկը լուին սև հագավ  
Եվ արտասուքից սմքած աչքերով  
Սգաց կորուստը իր զավակներին:

*...Մինա մայրիկն իր խաչված ձեռքերով  
Մի խաչ է դրել  
Աշխարհի բոլոր պատերազմներին,  
Որ էլ աշխարհում արյուն ու ավեր,  
Դավեր չլինեն:  
09.05.78, Դիլիջան*

## ՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅՈՒՆ

**Տ**ե՛ժ մարտում զոհված  
Խիզախ զինվորի գերեզմանի մոտ  
Ամեն գարնան հետ  
Մեղմիկ ժպտում են ձնծաղիկները:

Երկու քայլ ներքև՝  
Առվի եզերքին,  
Սգվոր մոր նման  
Լուռ արտասվում են ուռենիները:

Իսկ որդիները ծաղիկ են դնում  
Քաջաբար զոհված գերեզմանին հոր,  
Ու երգվում՝  
Ինչ էլ պատահի կյանքում,  
Քայլել միմիայն հոր ճանապարհով...

09.05.78, Մարտակերտ

## ԻՄ ԺՈՂՈՎՐԳԻՆ

Պատմությունը, ի՛մ ժողովուրդ, քեզ շատ ցավ է պատճառել,  
Քո դարավոր պատմության մեջ մի՞թե լավ օր չես տեսել:

Ոսոխներդ շատ են եղել, բարեկամներդ՝ սակավ,  
Սակայն այր ես եղել դու մեծ, կուվի դաշտում՝ Ավարայր:

Այլադավան ցեղերն եկան, հոխորտացին ու անցան,  
Կանգուն են դեռ լեռներդ վես՝ ինչպես փառքի հուշարձան:

Հսկել են միշտ լուրթ երկնքից նրանք խաղաղ նիրհը քո,  
Թե թշնամին մոտեցել է քո սահմանին գողեգող:

Թնդացել են ողջ էությամբ, զենքի կոչել ամենքին,  
Որ հանգիստ ու խաղաղ ապրի իր մայր հողում հայրդդին:

...Բայց, դե, դեպի հյուսիս ես դու մեկ-մեկ նայել անխռով,  
Եվ օգնություն ակնկալել, ազատություն ու կորով:

Ու միշտ քո մեջ ուժ ես գտել ինքդ խոչը քո հարթել,  
Ինքդ փրկել տունդ ցավից և թշնամուն քո հաղթել...

1980, Մարտակերտ

## ՀԱՅԱՍՏԱՆ

Ի՛նչ ես եղել առաջ,  
Ի՛նչ ես դարձել հիմա:

...Ու երբ ընթերցո՛ւմ եմ  
Պատմությունդ կրկին՝  
Ջարմանո՛ւմ եմ,  
Իրա՛վ...

1980, Կոնոզոտ



Մի կյանքը շատ քիչ է մարդուն...  
Հուփսիմե ՊՈՂՈՍՅԱՆ

Նորհո՛ւմ ես, խորհո՛ւմ ես անլուր.  
«Մի կյանքը շատ քիչ է մարդուն»:  
Իզո՛ւր ես այդպես բորբոքվում՝  
Մի կյանքն է՛լ հերիք է մարդուն:

Միայն թե մարդո՛ւ պես ապրի  
Ու կյանքն իր չվատնի իզուր,  
Դու իզուր էլ մի՛ բողոքիր:  
Մի կյանքն է՛լ հերիք է մարդուն:

1977, Դիլիջան

# ՇԻՐԱԶԱԿԱՆ

1  
 Լեռվում է, Շիրա՛գ, քո մուրազի Մասիսը,  
 Հեռվից քեզ տենչում է, կանչում է Մասիսը,  
 Թախծում ես դու մենակ, տխուր ես, և, գիտե՞ս,  
 Ա՛խ, հեռվում տխուր է ու... լո՛ւռ է Մասիսը:

2  
 Գտնե՛ի՛ ճշմարիտ ու վեհ այն հնարը,  
 Մտնե՛ի՛, Շիրա՛գ, քո սիրո սուրբ աշխարհը...  
 ...Երգերով հոգեթով, վերքերով անամոք  
 Լցրել ես աշխարհն ու քո... «Սիրո քնարը»:

1977, Դիլիջան

## ՀՈՎՏ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ

Ստում են, թե բանաստեղծը  
 Մեն մի կյանքով չի ապրում,  
 Նա ապրում է հազար կյանքով,  
 Հազարի պես՝ մի կյանքում:

Նա ապրում է աշխարհի հետ,  
 Որ կյանքից ետ չմնա,  
 Եվ այս կյանքում դրա համար  
 Միշտ անմա՛հ է մնում նա...

1977, Դիլիջան

## ԱՎ. ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ

Լազա՛ր-հազար երգերում  
 Ապրում ես դու, վարպե՛տ ջան,  
 Ապրում է քո հանճարը,  
 Քո քանքարը, վարպե՛տ ջան:

Ի՞նչ կլինե՛ր՝ մնայի՛ր  
 Դու մշտապես, հավիտյան,  
 Որ իմ հոգում էլ երբեք  
 Մ ու ժ չլինե՛ր տխրության...

1977, Դիլիջան



...Շորից լեռներ են ծնվում:  
 Ավա՛ղ, լեռնե՛ր են գնում  
 Նորից աշխարհից:

21.03.82, Ստեփանակերտ

Մարտի 21, 1982

## ՖԻՐԴՈՒՍՈՒՆ

Ո՛չ, չէ՛մ մեռնի թեկուզ անցնեն դար ու դարեր անքանակ,  
Զի պողաբեր խոսքի սերմեր ես ցանեցի երկնի տակ...  
ՖԻՐԴՈՒՍԻ

Դ ու ասում ես.  
- Չեմ մեռնելու՝ թեկուզ անցնեն դար-դարեր,  
Զի ցանել եմ ես երկնի տակ խոսքի սերմեր պողաբեր...

...Թեկուզ անցնեն դար ու դարեր՝ քո անունը կհիշեն,  
Քո անունը, քո երգերը դարերի մեջ կհնչեն,  
«Շահնամե»-ով ապրել ես ու ապրելու ես դեռ դարեր...

1977, Դիլիջան

## ԻՄ ՈՒՍՈՒՑԻՉԸ

Բազմավաստակ մանկավարժ  
Գուրգեն ԴԱՎԹՅԱՆԻՆ

Ուսուցիչ էր նա հայրենի գյուղում:  
Ուսուցանում էր երեխաներին,  
Թե ոնց պիտ սիրել  
Հողն ու հայրենին:

... Սև ծովի ափին արկի շառա՛չ էր,  
Գնդա՛կ էր, ճի՛չ էր Սև ծովի ափին:  
Սև ծովի ափին արյուն-կրա՛կ էր,  
Երկաթե կարկո՛ւտ... անարգ՝ թշնամի՛ն...  
Ու մարտնչո՛ւմ էր Սև ծովի ափին:  
Բայց մի առավոտ, թեժ մարտում, հանկարծ...  
Վերավորվել է: 44-ն էր:  
Բեռլին չհասած՝  
Հաղթել էր արդեն նա ոսոխներին  
Ու հաղթանակով տուն վերադարձել...

...Ուսուցիչ էր նա հայրենի գյուղում,  
Ուսուցանում էր լավը և բարին...

1980, Մարտակերտ



Քանաստեղծությունն իմ էությունն է,  
Ես առանց դրա՝ չեմ կարող ապրել,  
Սա է իմ միակ խոստովանությունը:



# ՎԵՐԱԴԱՐՁԻ ՄՏՈՐՈՒՄ

*Խորհրդային բանակի շարքերից  
գորացրվելուս առիթով*

**Լ**անդիպողները սեղմում են ձեռքս  
Ու շշնջում են.

- Բարո՛վ ես եկել...

Մի՞ թե իսկապես... «բարով եմ եկել»...

Չէ՞ որ հյուրի՛ն են

«Բարով ես եկել» խոսքերով դիմում,

Իսկ ե՞ս... Ես հյո՞ւր եմ, ես տո՞ւն եմ եկել,

Ու ինձ ասում են... «բարո՛վ եմ եկել»...

Կարոտո՛վ,

Մտի դողո՛վ եմ եկել

Նորից փարվելու իմ՝ հանդ ու սարին:

Ու թող ինձ չասեն՝ «բարով ես եկել»...

...Բայց հանդիպում են, սեղմում են ձեռքս

Ու... շշնջում են.

- Բարո՛վ ես եկել...

29.05.80, Կոնոդոս

## ԿԱՐՈՏ

*Սոցիալիստական աշխատանքի հերոս,  
խաղողագործուհի  
Լենա ՋԱՎԱԴՅԱՆԻ հիշատակին*

**Ն**աղողալուծում լույսը բացվել,

Խաղողալուծին քեզ երազել

Կարոտով անքուն,

Եկել՝ վազի կանաչ կանչով

Ու ողկուլյի լույս ճաճանչով

Ձուլվել ես այգուն:

Գարնան հևքին, ձմռան ցրտին,

Միրտդ տված՝ վազի սրտին՝

Հողը փայփայել,

Ու անարատ քո քրտինքով,

Ողկուլյիների լույս-ստինքով

Կա՛մք ես արարել:

...Կյանքդ համակ տառապանք էր,

Տանը, այգում՝ լուռ տքնանք էր,

Մաքո՛ւր էր ու... հին:

Վաղուց է՝ ինչ էլ այգում չես,

Բայց վազերը հիշում են քեզ՝

Քուն՝ թե արթմնի:

1981, Մարտակերտ

Լուսինե Արսենյանի գրքերից

## ԱՇՈՒՆ

Հիմա աշունն է,  
Ծառերը հիմա ներկվել են կարմիր ու դեղին:  
Մաղում է բարակ անձրև  
Ու փչում սառը քամի:

Փողոցով անցնելիս  
Արդեն զգացվում է արևի պակասը,  
Եվ... ուզես-չուզես՝  
Սկսում ես հարմարվել վերարկուին:  
Իսկ հովանո՞ցը...

Ես չեմ սիրում վերարկու հագնել:  
Ես սիրում եմ աշնանային սառն օդը,  
Մեղմ ու բարակ անձրևը:

Հիմա աշունն է:  
Ծառերը հիմա ներկվել են կարմիր ու դեղին:  
Փողոցի միակ տնօրենը քամին է արդեն:  
Նա ջանում է մերկացնել ծառերին,  
Ու մեկ-մեկ թափվում են տերևները  
Մայթերի վրա,  
Իսկ անցորդներն անխնա կոխկրտում են,  
Եվ ուզում ես ճշալ փողոցով մեկ.  
- Մի՛ կոխկրտեք, մե՛ղք են տերևները...

Բայց լսողն ո՞վ է,  
Մարդիկ շտապում են,  
Ամեն մեկն իր գործն ունի:

Քամին էլ է շտապում:  
Նա աշխատում է «Մինչև ձմռան դալը՝  
Ո՛չ մի տերև ծառերի վրա» նշանաբանով:

...Լա՛վ, թող թափվե՛ն տերևները,  
Միայն թե ձմեռը շուտ գա...



Ինչքա՛ն դժվար է լավ երգը գրվում՝  
Չգիտեի՞ ես...

23.04.82, Մարտակերտ

# ՃԱԿԱՏԱՄԱՐՏ

Զմեռը, թեև՝ դժվարությամբ,  
 Բայց, այնուամենայնիվ, գիջեց գիրքերը:  
 Գարնան առաջին օրերը դեռևս պահպանում էին  
 Զմռան սառնաշունչ օդը, բայց հետզհետե  
 Սկսեցին տաքանալ:  
 Գարնան շունչն զգացվեց անմիջապես,  
 Եվ հողն ուռչեց ուրախությունից, կանաչեց:  
 Գարնանային արևի առաջին ջերմ շողերից  
 Սիրախաբ եղան ծաղիկներն ու գարնան այգին լցվեց  
 Կարմրավուն ու ճերմակաթույր երանգներով:  
 Գարնանային արևի շողերով գերված  
 Ու գեղեցիկ ծաղիկներով պծնավորված ծառերն  
 Ասես հրճվում էին անափ ուրախությունից:

Գեղեցիկ է գարունը, բայց երբ բնությունը  
 Հերթական անակնկալն է մատուցում՝  
 Ծառերը կրկին զգաստանում են, ընդդիմանում,  
 Ու հերթական անգամ իրենց անգոր ըմբոստությամբ  
 Ծառանում բնության արհավիրքների դեմ,  
 Թեև շատ անգամ՝ անօգուտ ու անիմաստ:

Այս անգամ էլ բնությունն իր հերթական  
 Ապրիլյան դառն կատակով փորձեց սաստել  
 Գարնան արևի ջերմ շողերի տակ հրճվող  
 Ծառ ու ծաղկունքին:

Մարերին փոված ճերմակ սավանը կամաց-կամաց  
 Սահեց դեպի կանաչին տվող մարգագետիններն ու  
 Արձակ դաշտերը,

Գարնան ծաղիկներով զուգված այգիները:  
 Բոլոր գույներն իսկույն խառնվեցին ճերմակի մեջ,  
 Բայց չկորան լիովին՝

Ճերմակասավան մարգագետինները  
 Տեղ-տեղ կանաչին էին տալիս դեռ:

Իսկ ծառերի՝

Զյան ծանր շերտի տակ ճկված ճյուղերի վրա  
 Դեռևս ծիկրակում էին

Դեղնակարմրավուն ծաղիկները, որոնք, սակայն  
 Անհաղորդ մնացին գիշերային անազարհուր  
 Փորձությանը:

Գարնան գույների մեջ չնչմարվող սևը նույնպես  
 Եկավ խառնվելու ճյունաթույր ճերմակին,  
 Եվ դժգունացրեց ավելի:  
 Սև շղարչի ներքո

ԱՐԴՆ ԱՐՆԵՆԻ Կարգեցիկ կամպ

Գիշերային սառնամանիքը  
Դաժան հաշվեհարդար տեսավ  
Դեռևս թույլ ու տկար ծաղիկների հետ:

Առավոտյան կրկին պարտվեց գիշերն ու  
Մեկդի քաշվեց:  
Բայց գեղեցկաբույր ծաղիկները  
Դժգոունացել էին արդեն ու անզոր կախվել  
Ծառերի ճյուղերից: Ապրիլյան արևի  
Ջերմ շողերն այլևս անզոր էին  
Վերակենդանացնել նրանց: Արևն ավելի ու ավելի  
Տաքացավ, բայց մեռած ծաղիկներն  
Այլևս չէին կարող շնչել:

...Սակայն ոչ բոլոր ծաղկաբողբոջներն էին  
Ձոճ գնացել գարնան ձմեռաշունչ խաբկանքին:  
Եվ բացվեցին այդ բողբոջներն  
Ու իրենց գեղեցկությամբ  
Պարուրեցին շրջապատը:

Նաև՝ մեռած ծաղիկների փոխարեն...

## ԱՆՁՐԵՎԸ

Ես երբեք

Անձրևին այսքան մոտ չէի կանգնել:  
Արևն ասես կուլ էր գնացել  
Հեքիաթի յոթգլխանի հրեշի կոկորդոս,  
Իսկ ամպերն ամուր գրկել են երկնակամարը  
Եվ... ականջ են ծակում:

Տխուր ճայնակցում է անձրևն ամպերին,  
Տխուր,  
Ու զգում եմ նրա թախծոտ երգի  
Մեղմ ելևէջումները,  
Համբույրները՝ քնքուչ ու ցողաթաց:

Ես երբեք

Անձրևին այսքան մոտ չէի կանգնել:  
Եվ հիմա, երբ այսքան մոտ եմ անձրևին,  
Չգիտեմ ինչու՝ ակամա մտածում եմ արևի  
Եվ արևոտ օրերի մասին,  
Որոնք եղել են իմ կյանքում,  
Կան ու կլինեն դեռ:

...Իմ կյանքի բոլոր արևոտ օրերը:

# ՈՐՈՇՈՒՄ

Խաչատուր ԱՔՈՎՅԱՆԻՆ

Ես Քանաքեռում քայլում եմ կրկին՝  
Ուր ծնվել ես դու,  
Եվ իմ տագնապոտ, վիրավոր հոգին  
Քեզ է որոնում:

Հուշիկ քայլերով, մոլոր ու հանգիստ՝  
Երեկոն կամաց իջնում է՝  
Ծածկում տներ ու փողոց:  
Եվ մթության մեջ  
Քեզ որոնող իմ աչքերին հանկարծ  
Կանչում է մի լույս  
Ու քայլում եմ ես լույսին ընդառաջ՝  
Մթնած փողոցով,  
Ուր քայլել ես դու ինչ-որ ժամանակ,  
Ինչ-որ մեկի հետ,  
Որ գուցե... Պարրոտ ազգանունն ուներ:

Քայլում եմ այսպես լույսին ընդառաջ,  
Լույսի հետքերով  
Ու գտնում եմ քեզ.  
Դու կանգնել ես լուռ, մեն-մենակ, դրսում,  
Ու թվում է՝ քո տուն-թանգարանի  
Անդորրն ես հսկում...

20.11.84, Ստեփանակերտ



Ես նորից քեզ հետ եմ, քո գրկում,  
Ու նորից... հեռու եմ քեզնից...

02.01.81, Ստեփանակերտ



Ինչ են ցանկանում բանաստեղծները  
Կյանքից այս,  
Գուցե լոկ երազում են,  
Որ... գոնե կարգա՞ն իրենց երգերը...

1982, Ստեփանակերտ

Մարտիկների համար  
ԿՐԻՄ  
ԼՂԻՄ  
ԼՂԻՄ

## ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

Ողջո՛ւյն, ողջո՛ւյն, գամարջոբա, ամխանագո Վրաստան,  
Արցախական իմ լեռներից հյուր եմ եկել ես հիմա:  
Եկել եմ, որ եղբայրության երգեր հյուսենք միասին,  
իրար պատմենք հույզերը մեր, իրար պատմենք մեր մասին:  
Եկել եմ, որ շրջեմ նորից հին Թիֆլիսի թաղերով,  
Սայաթ-Նովի խաղով լցված՝ շրջեմ սիրո բաղերով:  
Հրաշք լինե՞ր, ծնվե՞ր նորից մեր երգերի մեծ արքան,  
Վերածնված իր Թիֆլիսով, Երևանով հիանար:  
Եվ հյուսեր իր նոր երգերը ճշմարտության ու լույսի,  
ի հակադիր իր այն դարի մութուլուսի, մշուշի:  
Հրաշք լինե՞ր՝ Աբովյանի Աղասուն ես տեսնեի,  
Ու նրա հետ «Վերքի...» դիմաց մեր նոր «Երգը...» հյուսելի:  
Հանդիպեի մեր Գաբրիել Սունդուկյանին հանճարեղ,  
(Ո՞նց կուզեի Պեպոյի հետ մի օր սրտանց գրուցել):  
Սրտի դողով, բայց մեծ հույսով մտնեի ես Վերնատուն,  
Հանդիպեի Լևոն Շանթին, Թումանյանին մեծանուն:  
Իսահակյանն ու Դեմիրճյանն ինձ կյանքի մեծ դաս տային,  
Ու մնայի նրանց դասին՝ ես՝ մշտական ունկնդիր:  
Հրաշք լինե՞ր ու շրջելիս փողոցներով Թիֆլիսի,  
Դեմս ելնե՞ր Շիրվանզադեն՝ իր հայացքով արծվենի:  
Դեմս ելնե՞ր Մարգալետունին՝ Մուրացանին թևանցուկ,  
Ողջունեի՝ լուռ թախծելով նրա մահը վաղանցուկ:  
Հրաշք լինե՞ր ու շրջելով Հավլաբարի թաղում հին,  
Զրուցեի «նեղ օրերից» Նար-Դոսի հետ մտերիմ:  
Ամխանագո՛ Սաքարթվելո, իմ սրտակի՛ց, իմ եղբա՛յր,  
Քո Ակակի Մերեթե լին ապրում է իմ սրտում հար:  
Միշտ հիշում եմ ես կարոտով և անկաշառ սիրով հին՝  
Ռուսթավելուն, Տաբիձեին, Դումբաձեին, Մորիսին...  
Արցախական իմ աշխարհից հյուր եմ եկել ահա ես,  
Որ պատմեմ քեզ իմ երազը, սիրող սիրտս բացեմ քեզ:  
Եկել եմ, որ ապրեմ նորից քո նոր օրով, նոր կյանքով,  
Զուլվեմ քեզ հետ, քո աշխարհին՝ քո ծիծաղով, քո ծափով:  
Ու մեր այս նոր հանդիպմանը՝ որպես նվեր, բարի իղձ՝  
Ընդունիր իմ այս տողերը քո սոմեխի եղբորից...

19.05.82, Թբիլիսի



Ռու տարվում ես ունայն... ոսկով,  
Իսկ ես՝ ոսկի խոսքով...

## ՄԱՂԹԱՆՔ

Պարգև Աղաբեկյանին՝  
ուսանողական ընկերոջս

Իմ սիրելի ընկեր Պարգև, իմ բարեկամ պաշտելի,  
ես քեզ գի՛րք եմ նվեր բերում քո հարսանյաց հանդեսին:

Թեկուզ գանձ չէ նվերը իմ, բայց սիրով եմ ընծայում,  
(Դե, նվերը նվեր է միշտ՝ լավ ու վատ չեն հարցնում):

Երջանկության, անկեղծ սիրո խորհուրդ որպես այն պահիր,  
Քանզի գիրքն էլ սուրբ է՝ ինչպես հացն ու աղը սեղանի:

Եվ երջանիկ են աշխարհում, ովքեր ապրում են, սիրում,  
Ու առիթով կամ անառիթ՝ իրար գիրք են նվիրում:

...Թող քո սերն էլ նվերիս պես մի լուսավոր գիրք լինի:  
Բարի՛ հիշիր ընկերոջդ: Միշտ քո՝ Արիս ԱՐՄԵՆԻ...

01.04.83, Ստեփանակերտ-Քերթ

## ՊԱՏԳԱՄ

Երգե՛ր իմ, այնպե՛ս ճախրեք աշխարհում,  
Որ ձեր հույզերով,  
Ձեր կրակնե՛րով  
Դուք ջերմացնե՛ք սրտերը սառած...

Երբ լուել է պետք՝  
Մի՛ խոսեք, լուե՛ք:  
Երբ խոսել է պետք՝  
էլ մի՛ հապաղեք:

Թևել է թե պետք,  
Հասկանալի է,  
Պատրաստ եք նաև թև ու թռիչքի:  
Գուցե հեռավոր ճանապարհներին  
Ձեզ է կարոտում՝ աչքը ձեր դարձին,  
Մի՛ չմոռացվո՛ղ, քնքո՛ւչ երազանք:  
Դուք պետք է նրա թախիծը վանեք  
Ու պատմեք նրան իմ մասին, երգե՛ր,  
Իմ հոգուց ծնված,  
Իմ հոգու խինդով սնված, թև՝ առած  
Կարոտ ու կանչե՛ր...

1978, Մարտակերտ

ԱՐԻՍ ԱՐՄԵՆԻ  
Բարձրագույն պարտեզում

## ՎԵՐՋԵՐԳ

Լույսը բացվում է,  
Վե՛ր կենամ, գնա՛մ:  
Դեռ երկար ճամփա՛ ունեմ գնալու:  
Ես կարո՛ւտ ունեմ,  
Սե՛ր ունեմ անհուն,  
Ես խոհե՛ր ունեմ աշխարհին տալու...

Լույսը բացվում է...  
Գնամ ու սիրտս բացե՛մ աշխարհին,  
Մարդկանց նվիրեմ իմ ապրումնե՛րը,  
Կարո՛ւտը, սե՛րը,  
Նրանց նվիրեմ և՛ երազ, և՛ հույզ,  
Հո՛ւյս տամ անհույսին,  
Անօգին օգնե՛մ:  
Ջո՛ւր դառնամ ճամփիդ, հայրենի իմ տուն,  
Հո՛ղդ ուռագեմ...

...Լույսը բացվում է:  
Վե՛ր կենամ,  
Գնա՛մ...

31.10.81, Մարտակերտ



# Մեծ Մտայն

Վեներա Աղասյանին

## ՆԱԽԵՐԳ-ԸՆԾԱՅԱԿԱՆ՝ «ԳԱԼԻՔԻՑ»

Քող երգերն այս նվիրեմ՝ քեզ,  
Իմ սիրասո՛ւն, իմ սիրա՛ծ,  
Ու սրտիս փակ դռները ես  
Կրկին բացեմ՝ քո առաջ:

Գուցե կարդաս՝ հուզվես մի քիչ,  
Կրժքիդ սեղմես կարոտած,  
Իսկ ես՝ իմ այս անտես հեռվից  
Մեղմ ու անուշ քեզ... ժպտամ:

...Հեռավո՛րս, ինչո՞ւ, ասա,  
Հոգս դարձար ինձ ցավակեզ...  
Դե՛ ես մենակ չմնացի,  
Չմոռացա բայցև քեզ:

Տարիքս ինչքան առաջանում՝  
Հարբում եմ՝ քո... «հին գինուց»...  
Քեզ կարոտիս ցավն է ջանում  
Պահել, փայել ինչպես լույս...

## ԱՍՈՒՄ ԵՆ, ԹԵ ԱՂՋԻԿՆԵՐԸ...

Ասում են, թե աղջիկները ծաղիկներ են,  
Մաղիկներ ի նման սիրել-բուրել գիտեն:

Սակայն ինչո՞ւ դու էլ նրանց նման չէիր,  
Մի՞թե դու էլ ծաղկային սեր-սիրտ չունեիր...

Ինչո՞ւ նրա՛ երեխային բարուրեցիր,  
Ինչի՞՞ համար ինձ տխրությամբ պարուրեցիր:

1977, Դիլիջան



Ո՛ւր են իմ սիրո երազ-օրերը,  
Արդյո՞ք ես նրանց որտե՞ղ եմ թողել:  
Անցե՞լ են...  
Հանգիստ չեն տալիս ինձ հուշերը...

ՄԻՆ ԱՐՄԵՆԻ  
Բարբառ Գրեկյանի պատկերով

## ՔԱՂՑՐ ՀՈՒՇ

Մի աղջիկ էր նա...  
Կապույտ աչքերով մի աղջիկ էր նա...  
Սևսաթ վարսերով մի աղջիկ էր նա...  
Սևսաթ վարսերը թափել ուսերին՝  
Զրվեժ էր ասես, հրդեհ բռնկված:

...Ասում են՝ սերը գարնանն է ծնվում,  
Աշնանը սեր չի լինում, ասում են:  
Ճշմարտությո՞ւն է դա, թե՞...  
Զգիտեմ:

Աշնանը ծնվեց մեր սերը սակայն:  
Աշնան հազարգույն  
Ու հազարերանգ զուգսերում  
Կանա՛չ մնաց սերը մեր,  
Ինչպես անտառի կանաչությունը՝  
Անմեղ, կուսական:  
Կանաչ էր մեր սերն՝ աշուն էր սակայն...

Մի աղջիկ էր նա...  
Կապույտ աչքերով մի աղջիկ էր նա...  
Սևսաթ վարսերով մի աղջիկ էր նա...  
Աշունը սևսաթ վարսերի մասին  
Տխուր հուշ թողեց,  
Թե սեր չի լինում աշնանը,  
Ինչո՞ւ...  
Ինչո՞ւ է սերը գարնանը ծնվում...

26.10.81, Մարտակերտ



Արի կամա՛ց քայլենք,  
Թող երկարի՛ ճամփան,  
Շատ բան ասենք իրար,  
Շատ բան լսենք:

Ու թող կողքանց նայեմ,  
Որ գծերը դեմ քիդ  
Մարմնավորվեն իմ մեջ,  
Իմ մեջ... ապրեն:

1981, Մարտակերտ

## ՔՈ ԱԶՔԵՐԸ

✠ ո աչքերը առանց կրակ ինձ վառո՛ւմ են,  
Մոխրանո՛ւմ եմ,  
Ու... աշխարհից վերանո՛ւմ եմ:  
Բայց ե՛լ լույս են սփռում ճամփիս,  
Որ մ'իման մեջ չմոլորվեմ,  
Ու չփնտրեմ... ուրիշների՝  
Իմ գտածը դու լինես լուկ:

...Բայց երա՛զ են, ա՛խ, ինձ համար  
Քո աչքերը,  
Անհա՛ս երազ,  
Ու չգիտեմ՝ ինչպե՞ս հայտնել քեզ հույզերս,  
Ապրումնե՛րս,  
Երազնե՛րս...

26.03.77, Դիլիջան



Սանգունեի քո դեմ ու իմ սերը  
Ես քեզ լռութ՛յամբ խոստովանեի...  
(Բառերն ի՛նչ են որ):

## ՔԵՐ ՀԵՏ ԵՎ ԱՌԱՆՑ ՔԵՐ

Երբ քեզ հետ եմ ես՝  
Ամեն ինչ այնպե՛ս ջինջ է թվում ինձ  
Ու երազ անբիծ...

Երբ քեզ հետ եմ ես՝  
Կարծես ամեն ինչ  
(Այս ծով աշխարհը իր ծով էութ՛յամբ)  
Ինձ են նվիրել...

Բայց երբ ինձանից հեռո՛ւ ես լինում,  
Թեկուզ հազարնե՛ր լինեն իմ կողքին՝  
Առանց քեզ ինձ միշտ մենակ եմ զգում:

Առանց քեզ կյանքում ես ոչինչ չունեմ:  
Բայց մի՞թե ոչինչ ես չեմ ունեցել  
Քեզանից առաջ...

1977, Դիլիջան

## ՊԱՏԱՍԽԱՆ

-Քնչ կլինի,-  
Ասում ես,-ինձ  
Մի երգ ձոնես լուսե...

-Ոչ թե մի երգ,  
Այլ մի լույս կյանք  
Քեզ կձոնեմ, իմ սե՛ր...

1978, Կոնոդոս

## ՎԵՐՏՈՒՇ

Բոլ հիշո՞ւմ ես, որ երկուսով  
Իջանք ձորի աղբյուրը...

Ջո՛ւր խմեցի քո կուլայից  
Եվ գգացի քո բո՛ւյրը:

Ես խնդրեցի, սակայն դու ինձ  
Չավիր քո համբուլը:

... Դու ի՛մ սիրտը պղտորեցիր,  
Իսկ քո կուլան՝ աղբյուրը:

1978, Կոնոդոս



Առաջին անգամ, երբ քեզ տեսա՛ ես՝  
Դու ամբողջովին մտար սի՛րտը իմ,  
Կուզեի անվերջ, անվերջ սիրել քեզ,  
Ու քե՛զ նվիրվել ես ամբողջովին:

Բայց ահա մո՛տ է բաժանումը մեր՝  
Չենք տեսնի կյանքում այլևս իրար,  
Ուզում եմ անվերջ, անվերջ քե՛զ նայել,  
Որ էլ մոռանա՛լ չկարողանամ...

1977, Դիլիջան



Շա՛տ ման արի ու ինձ տես,  
Միշտ մտածիր քեզ ու քեզ,  
Որ դու իմն ես, ես՝ քոնը,  
Որ սիրում եմ միայն քե՛զ:

1977, Դիլիջան



Չէ՞ որ ես քեզ սիրում էի  
 Սիրով անմար,  
 Քեզ ասացի՝ մի՛ հեռացիր,  
 Բայց հեռացար:

Ու մնացի տխուր, մոլոր՝  
 Կյանքիս ճամփին,  
 Սպասելով ամեն օր քո  
 Վերադարձին:

...Մոռացե՞լ ես ինձ, հիշո՞ւմ ես՝  
 Ես չգիտեմ,  
 Բայց իմ հոգով, ինձ լսո՞ւմ ես,  
 Միշտ քեզ հետ եմ:

1977, Դիլիջան



Ես գիտեմ, աշխարհում կլինի և մի օր,  
 Որ ես էլ չեմ լինի աշխարհում,  
 Բայց էլի կերգի այն առավակը ամեն օր,  
 Որ մեղմ իկ երգում է ձորակում:

Եվ նորից լեռները ծաղկունքով կզուգվեն,  
 Ու կյանքը կհոսի իր հունով,  
 Բայց, ասա՛, սիրելիս, իմ մասին կխորհե՞ս,  
 Կհիշե՞ս իմ մասին դու արդյոք:

Դո՛ւ գիտես, ոնց կուզես, բնավ չե՛մ առարկում,  
 Մոռացիր, կամ հիշիր, ոնց կուզես,  
 Մոռանալ քե՞զ, գիտե՞ս, քանի կամ աշխարհում՝  
 Մոռանալ չեմ կարող երբեք քեզ...

1977, Մարտակերտ



Դու եկա՞ր...  
 Իմ ծով սրտի ծով կարոտով,  
 Սրտիս կանչո՛վ դու եկար,  
 Լցրի՛ր սիրտս քո ջերմ սիրով  
 Ու հավատով անսպառ...

1978, Մարտակերտ

ԼՂԻՄ ԱՐՄԵՆԻ  
 Բարբառի քանդակարտ

## ԿԳՆԱՄ...

ԿԳՆԱՄ,  
ԿԳՆԱՄ,  
Կմնաս դու մենակ,  
Կթախծե՞ս, կտխրե՞ս՝  
Զգիտեմ...

Եվ գուր ես  
Դու այդպես համառում, որ գնամ՝  
Չե՞մ մնա...  
Կգնամ,  
Բայց հավետ կմնաս իմ հոգում,  
Փուլթ չէ, որ քեզ համար... ոչինչ եմ,  
Փուլթ չէ, որ կյանքում ինձ  
Էլ երբեք չես հիշի,  
Սակայն ես կտխրեմ քեզ անվերջ,  
Եվ սակայն... կգնամ...

1977, Դիլիջան

## ՔՈ ՄԱՍԻՆ...

ՔՈ մասին ոչ-ոք ինձ մոտ չի խոսում,  
Ոչ-ոք քո մասին ոչինչ չի հիշում:  
Ինչո՞ւ չգիտեն քո մասին ոչինչ:  
Դու ո՞վ ես արդյոք... Ասե՞մ... Ոչ այլ ոք,  
Եթե ոչ իմ լույս երազը՝ կյանքս,  
Փա՛նքս, տենչանքս, ե՛րգս, բերկրանքս...

1977, Դիլիջան

## ԱՅԴՊԵՍ ՉԷԻ ՈՐՈՇԵԼ...

Այդպես չէի որոշել,  
Բայց դե՛ այդպես ստացվեց,  
Լսո՞ւմ ես...

Թեկուզ շատ եմ ես թախծել՝  
Դրո՞թյունը չի փոխվել,  
Զգո՞ւմ ես...

Եվ լսում ես, ե՛՛ գգում,  
Սակայն ինչո՞ւ չես խոսում,  
Լու՞մ ես...

1977, Դիլիջան

## ԵՐԱՆԻ, ԹԵ...

Երանի, թե հասկանայի՞ր  
 Դու իմ հոգին  
 Ու իմ հոգում  
 Պահված բոլոր դաղտնիքները,  
 Իմ հոգու մեջ պահված բոլոր  
 Ե՛վ երգերը,  
 Ե՛վ վերքերը...

Երանի, թե հասկանայի՞ր  
 Դու իմ սրտի մորմոքները,  
 Իմ վշտերը,  
 Ապրումները...

Բոլո՛ւր-բոլոր երազներս  
 Երանի, թե հասկանայիր:

1977, Դիլիջան

## ՄԻ՞ԹԵ ՎԱՂՈՒՑ Է...

Մի՞թե վաղուց է, որ ինձ չես հիշում,  
 Մի՞թե վաղուց ես դու ինձ մոռացել,  
 Սիրտս լուր դրանից է դառնանում  
 Ու ընկղմվում եմ ես իմ խոհերում...  
 Մի՞թե վաղուց ես դու ինձ մոռացել:

Քո հոգում անգամ չթողի մի թեկ,  
 Գեթ մի ապացույց, որ քեզ սիրել եմ,  
 Այդ մասին կյանքում ես շատ եմ խորհել,  
 Կուզեի կյանքս ես քեզ նվիրել,  
 Գեթ մի ապացույց, որ քեզ սիրել եմ:

Գիտեմ, դրանից շատ ենք տուժելու,  
 Թեև կյանք մտնենք այլ ճամփաներով,  
 Մտածելու ենք, երկար խորհելու,  
 Ո՞վ էր մեղավոր՝ չենք հասկանալու...  
 Ե՛վ... կյանք կմտնենք այլ ճամփաներով:

1977, Կոնոդոս



Մեկի սիրով ե՛ս եմ վառվել,  
 Մեկին՝ թողել կարոտով...

ԱՐԴՄԵՆԻ ԱՐԿԻՍՏԵՆԻ ԾԱՆԿԻ ԺԱՅՄԵՆԻ

## ՈՒՇԱՑԱԾ... ԿԱՆՉ

Բաժանման օրից տարիներ անցան,  
Զհանդիպեցինք օրից բաժանման,  
Ինչո՞ւ, ինչո՞ւ...  
Բաժանման համար ո՞վ էր մեղավոր,  
Քավե՛լ եմ վաղուց մեղքերս բոլոր,  
Արի՛, արի՛...

Տարիներն անցան ինչպես երազում,  
Սակայն... քո հինն եմ ես միշտ երազում,  
Ինչո՞ւ, ինչո՞ւ...  
Դու անպատասխան թողիր սերը իմ,  
Կոկոնված սերս քամուն պահ տվիր,  
Գնացիր՝ ո՞ւր...

Պարսպապատված բերդերս առար,  
Բայց չմնացիր դու այնտեղ երկար,  
Իմ սե՛ր, իմ լա՛վ...  
Քեզանից հետո էլ ոչի՛նչ չունեմ...  
Բերդերս քամու բերանը գցած  
Ինչպե՛ս տարար...

Տարիներ անցան մեր բաժանումից,  
Որոնում եմ քեզ բաժանման օրից,  
Ո՞ւր ես, իմ սե՛ր...  
Կարոտել եմ քո ծով աչքերի՛ն, քե՛զ,  
Թե՛ չես կարող գալ՝ մեղավո՞ր եմ ես,  
Արի՛, արի՛...

24.04.82, Մարտակերտ



Լ՛ուռ եմ հավատում քո գալուն ես,  
Իսկ դու այդ մասին բա՛ն չգիտես...



Շիկանում՝ մարո՛ւմ են երգերս,  
Ու հանդարտ միտո՛ւմ են վերքերս,  
Թեկուզև գարուն է իմ սրտում,  
Բայց էլի թոչնո՛ւմ են վարդերս:



# ԵՍ ՉԵՄ ՄՈՌԱՆԱ, ԻՍԿ ԴՈՒ՝ ՉԳԻՏԵՄ

Ու վեներայից «եկավ» մի երկտող:  
- Կախա՞նք եմ,  
Բայց փեղ սիրել չեմ կարող...

**Մ**ի տարի անցավ այդ տխուր օրից՝  
Սպասման խորին խորհուրդներով լի...

Այդ մի տարվա մեջ մենք իրար մոտով  
Շա՛տ ենք անցել լուռ: Ամեն անցնելով  
Ուզում էինք միշտ ինչ՞որ բան ասել,  
Եվ չէինք ասում: Դե՛ ինչպե՞ս ասել...  
Ու տարին անցավ հանդարտիկ ու լուռ,  
Եվ բաժանվեցինք իրարից տխուր:

Բայց հրաժեշտի վերջին պահին էլ  
Ոչինչ չասացինք: Կուզեի խոսե՛լ,  
Գեթ մի օր սրտանց մի բառ ասել քեզ,  
Զգայիր, որ լուկ քե՛զ եմ սիրել ես:  
Սակայն... Ի՞նչ անեմ, կանցնեն տարիներ,  
Նոր խորհուրդներով կզան նո՛ր օրեր:

Չեմ մոռանա քեզ՝ ապրում եմ քանի,  
Թեև հանդիպեմ կյանքում մեկ... այլի:  
Դու կա՛մ մշտապես, իմ սե՛րն ես մաքուր,  
Կհիշե՞ս դեռ ինձ, թե՞ հիշելս է գուր...  
Եվ անիմա՞ստ եմ թախանձում այսպես,  
Աղերսում, որ դու... որ դու ինձ հիշես...

...Ու թե սիրել ես, թեկուզե՛մ մի քիչ,  
Դու այդ ժամանակ չես մոռանա ինձ:

1978, Դիլիջան

## Ո՞Վ Է ԱՆՑԵԼ...

**Ո**՞վ է անցել սրտիս ճամփով,  
Ո՞ւր է գնացել,  
Դուք չգիտե՛ք,  
Քանի որ նա լո՛ւռ է գնացել...

Գոնե հայտնե՛ր  
Իր գոյության մասին աշխարհին,  
Հետո անցներ՝ թեկուզ անհետ,  
էլ չտեսնեի թեկուզ կյանքում,  
Իմ ողջ կյանքում,  
Ինչքան ապրեի...

1977, Դիլիջան

Քաղաքի քանդակարտ  
ԱՐԴՄԱՆ

## ՆՈՐԻՑ ԿԳԱՍ...

Նորից կգաս ու կլցվի  
Միտաս երգերով,  
Միտո համար էլ չեմ թախծի՝  
Կործանված սիրո:

Ու քո սերը կպարզեի  
Ինձ մի մեծ աշխարհ,  
Մի մեծ աշխարհ՝ սիրո, կյանքի  
Եվ երջանկության:

Նորից կերգի առվակը լուրթ  
Մեր սիրո մասին,  
Ու երգերով իր քաղցրաշուրթ  
Նա մեզ կհուզի:

Կմոռանանք մեր վիշտը հին՝  
Լցված երազով,  
Կգաս նորից ու կլցվի  
Կյանքս քո սիրով...

1978, Կոնոդոս

## ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ

Սեր երգեց նա իր սև դարում,  
Ու աշխարհից հեռացավ,  
Սակայն պահեց լույսն իր հոգու՝  
Անկրկնելի մի աշխարհ:

...Սեր երգեցին շատ պոետներ՝  
Սիրո երգեր հմայուն,  
Բայց լույ նրա՝ սիրո երգն է  
Տնավորվել մեր սրտում:

1977, Դիլիջան

## ՄԻՔԱՅԵԼ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

Չսիրերգեց նա իր սիրած աղջկան,  
Ու չգրեց սիրո մասին ոչ մի տող:  
Հավետ մնաց ազատության ռահվիրան:

1977, Դիլիջան



Ի՞նչ անեմ,  
Ծո՛վ է սիրտս, ի՞նչ անեմ,  
Ծովածավալ մի սիրո  
Սո՛վ է սիրտս, ի՞նչ անեմ...

1977, Դիլիջան

## ՀՈՒՅՍԻ ՃՐԱԳ

Գարուններ են եկել ու նորից հեռացել  
 Անջատման այն օրից, սիրելի՛ս,  
 Տխրել եմ այն օրից, քո մասին միշտ թախծել  
 Ու... հաճախ եմ դիմել երգերիս:

Բայց անցածն անցած է՝ ետ չի գա հլ նորից,  
 Կզան նոր գարուններ ու կանցնեն,  
 Չենք տեսնի հլ իրար, կողք-կողքի չենք քայլի,  
 Լոկ անհաս երազներ կլինեն:

Իմ հոգու մեջ մնաց մի կարոտ, մի կրակ,  
 Աղմկող անլեզու մի հառաչ,  
 Ու թովիչ մի... երգիչ, ու հույսի մի ճրագ,  
 Ու հույսի մի ճրագ, որ կգա՛ս...

1980, Մարտակերտ

## ԵՐԲ ԵԿԱՐ...

Երբ եկար՝  
 Հոգիս լցվեց երգերով,  
 Եվ ես վերացա աշխարհից ասես  
 Ու անհացա...  
 ... Ես ի՞նչ գիտեի,  
 Թե մի օր հլ դու  
 Նույն ճանապարհով պիտի հեռանաս:

1977, Դիլիջան

## ՎԻՇՏՍՍ ՏՎԻ...

Վիշտս տվի ուռենուն՝ լա,  
 Եվ հյուսեցի քանի՛ տաղ,  
 Մերժված սրտով լուռ հեռացա,  
 Չմոռացա քեզ սակայն:  
 ...Տարիք անցան, բայց դու գիտե՞ս,  
 Ես հիշում եմ ամեն ինչ,  
 Ի՞նչ փույթ, թե դու ինձ չհիշես,  
 Թե չհիշես ինձ՝ ոչի՛նչ...

1980, Մարտակերտ



Ասա՛, ո՞ւր,  
 Ո՞ւր գնացիր, ասա՛, ո՞ւր,  
 Ծիծաղելով հեռացել  
 Ինձ թողել ես դու տխուր...

1977, Դիլիջան

ԱՐԴՆ ԱՐՄԵՆԻ ԵՍ ԴԵՄ ԺԱՅԵԿԻ



Երկա՛ր նայեցի ես քո ետևից,  
 Բայց դու, դու ինչո՞ւ ետ չնայեցիր,  
 Դու ծիծաղելով անցար, հեռացար,  
 Իսկ ե՞ս... ինչո՞ւ ինձ վհատ թողեցիր:

1977, Դիլիջան



Նա երազ էր և երազի պես անցավ,  
 Չէի ուզում, բայց թողեց ու հեռացավ,  
 Մոռացության բավիղներում չքացավ,  
 Գնաց՝ հոգու խորքում պահած հազար ցավ:



Դու մնա՛,  
 Անվերջ ուրա՛խ դու մնա,  
 Երազներով, տխրությամբ  
 Ես գնում եմ, դու մնա՛:

1977, Դիլիջան



- Լ մի՛ տենչա ինձ,- ասում ես,- մոռացի՛ր,  
 Դու իմ սրտին արդեն խո՛րթ ես, հեռացի՛ր...  
 -Ո՞նց չտենչամ ախր ես քեզ, ի՛մ անգին,  
 Ախր սրտիս մեջ լուկ դո՛ւ ես, իմացի՛ր...

1977, Դիլիջան



Կերջացա՞վ...  
 Մի՞թե սերը վերջացավ,  
 Գուցե խաբկա՞նք էր սերդ,  
 Որ մարեց ու... երազ դարձավ...

1977, Դիլիջան

# ՏՐԻՈՒԼԵՏՆԵՐ ՎԵՆԵՐԱ ԱՂԱՍՅԱՆԻՆ



Իրար համար տենչանք էինք,  
Իրար համար՝ երազ,  
Երկու աստղ մի երկնքում  
Ու միշտ իրար... անհաս:

Ռ ու ինձ համար երա՛զ էիր,  
Տենչա՛նք էիր դու ինձ համար,  
Թախի՛ծ էիր, կարո՛տ համար,  
Դու ինձ համար երա՛զ էիր:

Մի աստղ ու մի երկնակամար,  
Բայց ինձ՝ դու միշտ...անհա՛տ էիր,  
Դու ինձ համար երա՛զ էիր,  
Տենչա՛նք էիր դու ինձ համար...

1977, Դիլիջան



Ո՞վ ասաց՝ սերը չկա,  
Ո՞ւր մնաց, ասե՛ք, սիրելիք,  
Իմ կորսված սերը վկա՛  
Աշխարհում սուրբ է սերը...

Ռ ու միշտ էլ եղել ես իմ հոգում,  
Ես երբեք չե՛մ ապրել առանց քեզ,  
Իմ մասին դու, արդյո՞ք, թախճել ես,  
Դու միշտ էլ եղել ես իմ հոգում:

Իզո՞ւր են տանջա՛նքս, սե՛րս, ե՛ս,  
Թե՞ մի քիչ սիրե՛լ ես ինձ կյանքում,  
Դու միշտ էլ եղել ես իմ հոգում,  
Ես երբեք չե՛մ ապրել առանց քեզ:

1977, Դիլիջան



Աչքե՛ր, մի՛ նայեք անցնող զույգերին,  
Ձեր երազ-սերը սպառա՛ծ աչքեր...

Ռ ու գիտե՞ս, թե կյանքն ինչու է այսպես՝  
Մերթ տուժում է մեզ, մերթ էլ՝ հմայում,  
Ընթանար այնպես, ոնց դո՞ւ ես քայլում,  
Դու գիտե՞ս, թե կյանքն ինչու է այսպես:

Անցնող զույգերին ինչո՞ւ ես նայում,  
Երբ քո սերն արդեն դու սպառել ես,  
Դու գիտե՞ս, թե կյանքն ինչու է այսպես՝  
Մերթ տուժում է մեզ, մերթ էլ... հմայում:

1977, Դիլիջան

ԱՐԴՄԱՆ ԲԱՅՅԱԿՅԱՆԻ ՎԵՆԵՐԱ ԱՂԱՍՅԱՆԻՆ



Դու մ'իշտ գողունի իմ կողմն ես նայում,  
 Նայվածքով քո նուրբ՝ սիրտս հմայում,  
 Բայց ես ինչո՞ւ եմ անտարբեր այսպես՝  
 Նայում եմ տխուր ու լուռ հեռանում:

Դու ինձ ես նայում անվերջ գողունի,  
 Ես զգում եմ դա իմ ամեն քայլում,  
 Այս ի՞նչ է, արդյոք, ինձ հետ կատարվում,  
 Դու ինձ ես նայում անվերջ, գողունի:

Սակայն քո մոտով մ'իշտ լուռ եմ անցնում,  
 Կարծես մեր մեջ էլ ոչինչ չի լինի,  
 Դու ինձ ես նայում անվերջ գողունի,  
 Ես զգում եմ դա իմ ամեն քայլում:

1977, Դիլիջան



Ասա՛, ինչո՞ւ քեզ սիրեցի երազներով անսպառ,  
 Ես քեզ կյանքս նվիրեցի ու ապրեցի քեզ համար,  
 Բայց անհաղորդ մնացիր դու սրտիս անհուն վշտերին,  
 Ես՝ անսահման սիրով լեցուն, ես՝ մշտապես քո գերին:

Դու ասում ես՝ զո՞ւր սիրեցի, երազներով անսպառ  
 Նվիրեցի քեզ իմ սերը ու քեզ համար ապրեցի,  
 Դրա՞ համար սեր-երազիս դու անհաղորդ մնացիր,  
 Դու ասում ես՝ զո՞ւր սիրեցիր, երազներով անսպառ:

Ինչո՞ւ թողիր դու ինձ շվար և ուրիշի սիրեցիր,  
 Մի՞ թե, մի՞ թե ուրիշ գրկում շոյանքներս մոռացար,  
 Դու ասում ես՝ զո՞ւր սիրեցի, երազներով անսպառ  
 Նվիրեցի քեզ իմ սերը ու քեզ համար ապրեցի:

1977, Դիլիջան



Դու նայեցիր աչքերիս մեջ ու անցար,  
 Աչքերիս մեջ ցավ, տխրություն դու տեսար,  
 Անհուն թախիժ, տանջանք-զղջում դու տեսար,  
 Կարո՞տ տեսար աչքերիս մեջ ու... անցա՛ր...

Դու նայեցի՛ր աչքերիս մեջ,  
 Դու նայեցիր ու լուռ անցար,  
 Աչքերիդ մեջ տանջանք ու ցավ՝  
 Դու նայեցի՛ր աչքերիս մեջ:

Աչքերիս մեջ՝ ցավ, տխրություն,  
 Զղջում, թախիժ՝ աչքերիդ մեջ՝  
 Դու նայեցի՛ր աչքերիս մեջ,  
 Դու նայեցիր ու լուռ անցար...

1977, Դիլիջան



Դու ատելով ատում ես ի՛նձ,  
 Ես՝ սիրելով սիրում քե՛զ,  
 Եվ թախժում է քո կարոտից  
 Սիրտս դառն ու վշտակեզ...

Դու ատելով ատո՞ւմ ես ինձ.  
 Ես սիրելով սիրում եմ քե՛զ,  
 Սիրտս դառն է ու վշտակեզ՝  
 Դու ատելով ատո՞ւմ ես ինձ:

Ի՞նչ անեմ ես, ես ի՞նչ անեմ,  
 Ա՛խ, չգիտեմ ինչպես վարվել,  
 Դու ատելով ատո՞ւմ ես ինձ,  
 Ես՝ սիրելով սիրում եմ... քե՛զ:  
 1977, Դիլիջան



Տխո՛ւր եմ միշտ էլ անջատման օրից,  
 Ոչ-ոք չի կանչում ինձ սիրո ձորից,  
 Այնքա՛ն եմ թախժել քո սիրո համար,  
 Որ չեմ հավատում, թե կգաս նորից:

Դու տխրո՞ւմ ես դեռ, թե՞ մեկ է արդեն,  
 Որ ճանապարհիդ էլ չեմ երևում,  
 Որ ես, Վեներա՛, ձայնդ չեմ լսում՝  
 Դու տխրո՞ւմ ես դեռ, թե՞ մեկ է արդեն:

Ես քո ետ գալուն էլ չեմ հավատում,  
 Թեև թախժում եմ մինչև այսօր էլ,  
 Դու տխրո՞ւմ ես դեռ, թե՞ մեկ է արդեն,  
 Որ ճանապարհիդ էլ չեմ երևում...  
 1977, Կոնոդոս

## ՉՄՈՒԱՆԱ՝Ս...

Երբ որ գարունն լինի,  
 Ու ծաղիկներ լինեն՝  
 Ծաղիկներով տարված  
 Չմոռանա՛ս դու ինձ,  
 Չմոռանա՛ս...

Չմոռանա՛ս դու ինձ,  
 Եթե նույնիսկ մեկին  
 Մի սրբազան սիրով  
 Հանդիպես քո ճամփին՝  
 Չմոռանա՛ս...  
 1977, Դիլիջան

## ՎԵՐՋԵՐԳ

Մնաս բարով, իմ անգին,  
Սե՛ր իմ առաջին...  
Արդեն ուրիշ սիրո՞վ է  
Լցվում իմ հոգին:

Էլ չե՞ս գերում, թովում ինձ  
Դու քո թովչությամբ,  
Բա՞վ է՝ ինչքան մնացինք  
Մենք համբերությամբ:

...Մնաս բարով եմ ասում  
Դառնացա՛ծ հոգով,  
Ո՛նց կմարի կարոտդ  
Իմ սրտում սիրող...

1977, Դիլիջան



# Վեներա... Մեր Խորհուրդը

## ՊԱՏՎԱԾՆԵՐ ՉՉՐՎԱՑ ՊՊԵՆՄԿ

1

**Դ**ու այնպե՛ս ես ալեկոծվում, սիրտ, ու այնպե՛ս ես հուզվում,  
Երբ որ կորսված սիրո մասին պատմուլթյուններ ես լսում,  
Քանզի ոչ-ոք չի ցանկանում, որ իր սերը կործանվի,  
Ու կարծում է՝ իր սիրածը միշտ... իրենը կլինի:

...Ա՛խ, դու խոցված ինձ թողեցիր, իմ Վեներա՛, իմ սիրա՛ծ,  
Ես մնացի այդ օրվանից ալեկոծված, փոթորկված:  
Դու հեռացար, բայց մնացիր իմ հոգու մեջ հավիտյան,  
Որովհետև քե՛զ հանդիպել ու սիրել եմ քե՛զ միայն:  
Հասկացե՞լ ես քո սխալը, սակայն, ո՛ւշ է, սիրելի՛ս...  
Բայց երբ մեկ-մեկ հանդիպում ենք՝

ա՛յնպե՛ս նայում ես դու ինձ,  
Ցանկանում ես քո պատկերը գտնել սրտիս հայելո՞ւմ,  
Բայց, Վեներա, ավերակ է հիմա սերդ իմ սրտում:  
Ավերակված է արդ սիրտս ու մթազնած՝ հայելին,  
Իզո՛ւր ես դու այդպես երկար նայում խոցված իմ սրտին:  
Այնտեղ ոչինչ դու չես տեսնի ու չես գտնի նույնիսկ... քե՛զ,  
Թե իմ սրտի հայելու մեջ, իրոք, միայն դո՛ւ լինես:

Թեև ուշ է արդեն, բայց ես միշտ կհիշեմ քեզ, իմ լա՛վ,  
Դու չտեսնես քո օրերում ո՛չ կսկիծ, ո՛չ սիրո դավ...

1977, Դիլիջան

2

Նորից գարնան շունչը ցրեց մորմոքները իմ հոգու,  
Մտա պարտեզ՝ այն աղջկա համար վարդեր փնջելու:

Բայց վարդի տեղ սի՛րտս եմ տալու այն աղջկան լուսերես,  
Որ միշտ գարնան շունչը ապրի, ապրեցնի նաև մեզ...

Սերը անմար հո՛ւրն է կյանքի, սերը վարդ է ու ծաղիկ,  
Սիրած աղջիկն ինչքան անգեղ՝ միշտ թվում է գեղեցիկ: 49

ՄԱՐԿ  
ՄԱՐԿ  
ՄԱՐԿ  
Քաջավ գանգ արևելքով

Պետք է սիրով ու սրբությամբ պահել սերը անարատ,  
Սերը մարդուն թե և տալիս, մարդը սիրով է անհաղթ:

Սերը հույս է միշտ ներշնչում դժվար պահին քո կյանքի,  
Սիրով հեշտ ես հաղթահարում կեռամանները քո ճամփի:

Գուցե ծովը ոչ ալիքներ, կամ ոչ էլ ջուր ունենար,  
Եթե սիրո հուրը մարեր ու աշխարհից վերանար:

Բայց սերը կա, կա աշխարհը, որ հիմնված է սուրբ սիրով,  
Ու աշխարհը ինչքան էլ մեծ՝ գեղեցիկ է լուկ... ծովով:

...Կյանքը ծով է մեծ ու անհուն, սկիզբ չունի, ոչ էլ՝ վերջ,  
Մարդը անհույս մի տաշեղ է՝ ընկած ծովը՝ խոր ու մեծ:

Օրորվում է ծովը հանդարտ, ալիքներով իր խաղում,  
Թփրտում է տաշեղը հեզ ու նորից չի... ընկղմվում:

Փոթորկվում է ծովը հանկարծ. ջրերն իրար դեմ կռվում՝  
Բարձրանում են՝ ալիք-ալիք իրար խեղդած գլորվում:

Իսկ տաշեղը, խեղճ տաշեղը ջրերի մեջ մեն-մենակ,  
Խենթ ջրերի դեմ մղում է կենաց-մահու մենամարտ:

Ու թվում է, թե չի... հաղթի, թե կկորչի ջրերում,  
Բայց իր հեռու փիհն հանկարծ սեր-հավատ է նշմարում:

Գոտեպնդված իր մեծ սիրով ու հավատով մարդկային՝  
Հաղթում է գոռ մենամարտում խենթ-խելագար ջրերին:

Հանդարտվում են ալիքները, ծովն է ասես լուռ մեռնում,  
Մակույկ դարձրած հավատ ու սեր՝ փի է նորից նա տենչում:

Բայց ցանկալի փի կհասնի նա ոչ թե ոնց հեզ տաշեղ,  
Այլ ծովի մեջ, մենամարտում հաղթած գոռ այր մի գորեղ:

Ու թե ծովում դու մոլորվես՝ մակույկը փի կհասնի,  
Կյանքի ծովում սերը միայն ուղիղ ճամփով կտանի:

Կյանքի մակույկը սերն է հենց, համբույրն է սեր-աղջկա,  
Ի՛նչ է, արդյոք, կյանքը մարդու, թե սրտի մեջ սեր չկա:

Ինչպե՞ս կապերը մարդը կյանքում, եթե սերը չլիներ,  
Ինչքա՛ն լավ է, որ աշխարհում և՛ արև կա, և՛ մեծ սեր...

...Նորից գարնան շունչը ցրեց մորմոքները իմ հոգու,  
Մտա պարտեզ՝ այն աղջկա համար վարդեր փնջելու:

Բայց վարդի տեղ սի'րտս եմ տալու այն աղջկան լուսերես,  
Որ մ'իշտ գարնան շունչը ապրի, ապրեցնի նաև մեզ...

19.05.82, Մարտակերտ

3

...Ներշնչանքն է սերը կյանքի՝ տրված սիրող սրտերին,  
Սիրո չքնաղ ներաշխարհի երջանկությունն ու... գերին:

Դառն ու դատարկ մեր կիրք-ցավը իսպառ պիտի վերանա,  
Հավերժական այս աշխարհում միայն սերը կմնա:  
Թե սեր ունես, պիտի սիրես անհունորեն ու անհագ,  
Բայց իզուր է կյանքդ հարկավ, թե չես սիրում նրան շատ:

Մերժված սերը դառն է լինում, բայց պիտ ցավին դիմանալ,  
Իսկ երբ փակ է... ճանապարհդ՝ դու ուզում ես հեռանալ:  
Բայց սերն ընկած դու չես տեսնի, սերը հպարտ կտեսնես,  
Մի՛ վհատվիր, արի՛ եղիր, երբ մերժում է սերդ քեզ:  
Վհատությունը քո սրտին վիշտ կբերի կրկնակի,  
Թե ապրում ես՝ ամբողջ հոգով ատիր դավերն աշխարհի:

Ի՞նչ անենք, որ այդ աղջիկը և՛ անսիրտ էր, և՛ անսեր,  
(Գեթ մի անգամ, երանի թե, նա այս խոսքերը լսեր),  
Որ քեզ մերժեց, սիրող վառեց, թողեց՝ քեզնից հեռացավ,  
Գուցեև իր սրտից հանեց, գուցե վաղուց մոռացավ  
Քեզ, քո սերը: Ասա՛, ինչո՞ւ սիրող խոցեց ու գնաց,  
Բայց տխրածոր քո երգերում նրա կարոտը մնաց:

Գուցե նա էլ հիշում է քեզ, գուցե քեզ չի մոռացել,  
Հաճախ էլ քեզ համար գուցե նա աչքերն է իր թացել:  
Դու մի՛ տանջվիր երբեք վշտից, երբ մերժում է սիրելիդ,  
Թեև մերժված, բայց ունեցիր սիրով լցված մի ջե՛րմ սիրտ:  
Ե՛վ՝ հավատո՛ւ, կգա մի օր՝ դու երջանիկ կլինես,  
Ու քեզ համար մի վառ ծաղիկ, սիրող մի սիրտ կգտնես:

...Լսի՛ր դու միշտ խոսքերը իմ, խորհուրդները իմ բարի,  
Որոնք ճամփա ցույց կտան քեզ՝ ճանապարհը մեծ կյանքի,  
Ե՛վ միշտ սիրի՛ր անկեղծ սրտով, մինչև կյանքի վերջ սիրի՛ր,  
Ու ջինջ հոգով, ջահել հոգով սիրո խոսքեր անըջիր...

1977, Դիլիջան

ՄԵՐ ԿԵՐՄԱՆ ԿԵՐՄԱՆ

# Կ Ե Ն Ր Ք Գ Մ Ո Ն Վ

Ընդամենը երեք ամսվա կյանք սպրած  
բրոջս՝ ԱՆԺԵԼԱՅԻ հիշատակին

Ա

Երբ դու հեռացար, քո՛ւյր իմ, մեզանից,  
ինձ համար դարձար  
Չբացահայտված մի մուխ առասպել,  
Մի տխուր լեզենդ...  
Եվ ես հասկացա, որ ինչ էլ լինի՝  
Այլևս չես դա դու մեզ տեսուխյան:

Քո՛ւյր իմ սիրելի,  
Դու չկաս թեկուզ,  
Սակայն ապրո՛ւմ ես իմ էության մեջ,  
Իմ ամեն տողո՛ւմ...

Դու չկա՛ս թեկուզ,  
Սակայն, հավատա՛, քանի կա՛մ կյանքում,  
Քանի ապրում եմ՝  
Կապրես նաև դո՛ւ...

Բ

...Ամռան արևի հիասքանչ բույրից  
Շնչեց ու ելավ հունիսի յոթը,  
Կարծես թե ելավ հնոցի միջից՝  
Տաք շնչառությամբ լցնելով օդը:

...Այն առավոտյան զեփյուռներ ելան,  
Իմ մոտով կամաց սահելով անցան:  
Արդյո՞ք ուզեցին ասել նաև ինձ,  
Բայց լեզու ունե՞ն, էլ՝ ինչպե՞ս, և՛ ի՞նչ...  
Դե, լավ, ինչ-որ է, ես դա իմացա:  
Այն զեփյուռներից ես լավ հասկացա,  
Թե ինչպես գյուղում ինձ քո՛ւյր է ծնվել...  
Ա՛խ, ինչո՞ւ, ինչո՞ւ ես ուչ իմացա...

Գ

Թռչո՛ւմ է սիրտս, թևում դեպի տուն՝  
Տեսնեմ ժպիտը նորեկ իմ բրոջ:

(Հոգուս մեջ մի լույս կրակ է վառվում,  
 Եվ այդ կրակից՝ մարմինս ամբողջ):

...Այնքան անուշ է լեռնային քամին,  
 Այնպե՛ս է բուրում իմ Ղարաբաղում,  
 Պատմելու բան չէ, որ այդ ձեզ պատմեմ,  
 Զգալու համար նախ պիտի տեսնել...

Ու մինչ կհասնեմ՝ այնտեղ եմ մտքով,  
 Իմ կապուտաչյա ծննդավայրում,  
 Որտեղ կապույտ է երկինքը միշտ էլ,  
 Որին տենչում եմ ու որին սիրում...

...Ահա, ուր-որ է՝ դեմս կբացվեն  
 Իմ սուրբ օրրանի դռները, գիտեմ,  
 Որ փրփրակապույտ ջրերով վազող  
 Թարթառի ձայնը շուտով ես լսեմ...

Դ

Այստեղ եմ արդեն՝ իմ սուրբ օրրանում,  
 Ուր լուրթ, կապտավուն երկինքն է փայլում:  
 Արևն է կապույտ, ջրերն են կապույտ,  
 Դեպ կապտակոհակ Թարթառն են վարգում:

Իսկ շուրջ-բոլորը՝ անտառ է միայն...  
 Ու թափառում եմ այդ անտառներում,  
 Թափառում երկար,  
 Առանց դադարի:  
 Զորից աղմուկն է լսվում Թարթառի,  
 Թախանձում է, որ իրեն է՛լ նայեմ,  
 Թչչում է ձորում, աղմկում, լռում՝  
 Այդ զարմանալի «հնազանդ» գետը...

Ու կլանվել եմ ես բնությունով,  
 Իմ լեռնաշխարհով, իմ սուրբ օրրանով,

Ես հմայվել եմ, ես երջանի՛կ եմ,  
 Որ պարփակված եմ այս անտառներով...

Ե

Իմ բնաշխարհն է, կարոտել եմ ես,  
 Դա հասկանում է կյանքում ամեն ոք:  
 Տեսնել ու փարվել, հայրենի՛ հող, քեզ՝  
 Այդպես տենչում է կյանքում ամեն ոք:

Իմ սո՛ւրբ օրրանը...

...Պայծառ երկնքից ներքև է նայում  
Մինչև աստղերը ձգված, բարձրացած  
Իմ Մուսկ սարը,  
Ներքև է նայում, նայում ու ժպտում:

Իմ լեռնաշխարհն է՝ այդպես վեհացած,  
Նայում է նա ինձ աչքերով ծավի,  
Զմուռնն՝ ահել է ասես ճերմակած,  
Գարնանը՝ կայտառ, ինչպես պատանի...

## 2

Ահա՛ մեր գյուղը... Տեսե՛ք դուք նրան,  
Հաճելի է շատ այստեղ ինձ համար...  
Ամենուր ինձ եմ տեսնում ես կարծես,  
Մանկութ օրերն իմ անցել են այստեղ...

Ահա՛ մեր գյուղը... Իր վառ երազով  
Նայում է մարդկանց, նայում աշխարհին,  
Կարծես իրեն է հասանել բարին,  
Որ բաժանում է արդար, բոլորին...  
Ահա՛ մեր տունը՝ աղբյուրի գլխին,  
Տնից քիչ ներքև՝ մեր փոքրիկ այգին,  
Հարազատներս են ծառերն էլ ասես,  
Ասես տիրել եմ համայն աշխարհին...

...Իսկ գյուղում շատ կան թովիչ աղբյուրներ,  
Հիշվո՞ղ, մոռացվա՞ծ, անհաշի՛վ, անհա՛յտ...  
Այդպես մեր գյուղի խոր անտառներում  
Ապրո՞ւմ են նրանք:  
Թեկուզ կիսավեր,  
Անանուն հեռվում՝  
Սակայն ո՞ղջ են դեռ...  
Ու հիշվում են միշտ,  
Ամեն ժամ, վայրկյան...  
Եվ այցելում են մարդիկ միշտ նրանց:

## է

Ահա և՛ տանն եմ,  
Քո կողքին եմ ես, քույրի՛կ իմ, իմ լա՛վ,  
Դու ծիծաղում ես, հրճվում ես անվերջ:  
Իսկ երբ գրկում ու գուրգուրում եմ քեզ՝  
Թվում է՝ իմն է աշխարհը արար,  
Իր վայելքներով, իր հրաչքներով...  
...Ի՞նչ կա ավելի թանկ ու հաճելի,  
Քան կյանքը մարդու:

Քեզ բաժին ընկա՞վ, արդյոք, գոնե՝ քիչ,  
Փոքրի՛կ իմ քույրիկ...

**Ը**

Ծիծաղի՛ր, իմ լա՛վ, ծիծաղի՛ր անվերջ,  
Ոչինչ չե՛մ փոխի քո ծիծաղի հետ  
Ես այս աշխարհում:  
Թախիծը՝ մի կողմ,  
Դու կյանքը սիրի՛ր կենսուրա՛խ սրտով:  
Եվ միշտ հավատա  
Բարի՛ է կյանքը՝ իր ծով բարությամբ:  
Դո՛ւ էլ միշտ բարին սիրի՛ր աշխարհում:  
...Եվ միշտ ծիծաղի՛ր: Ու անվերջ հրճվի՛ր:  
Ծիծաղն է բացում մարդու ներաշխարհն  
Իր հմայքների ո՛ղջ գեղեցկությամբ:  
...Ծիծաղի՛ր, քույրիկ, ծիծաղի՛ր անվերջ:

**Թ**

Ծիծա՛ղն է հնչում փոքրիկ իմ քրոջ,  
Զրնգում՝ ինչպես ձայնը արծաթի,  
Ծիծաղը նրա՝ աշխարհն է լցվել,  
Ծիծաղո՞վ է նա աշխարհին տիրել...

Ծիծա՛ղն է հնչում, ծիծա՛ղն է գնգում,  
Երկաթե ձգված գսպանակի պես,  
Եվ ձայնը նրա՝  
Երկնի կապույտում կորչում է ասես,  
Կրկին հայտնվում  
Ու գնգգնգալով աշխարհը լցնում  
Երգերով քնքուշ, անկեղծ, սիրելի...  
Ծիծա՛ղն է հնչում...  
Ծիծա՛ղն է գնգում...  
Ծիծա՛ղն է վազում...  
Ծիծա՛ղն է թռչում...

Ու երջանկությամբ լցվում է հոգիս,  
Եվ բարի՛-բարի մի երանությամբ...

**Ժ**

...Բայց եկավ պահը մահվան տաճնապի,  
Կարկամեց քույրս՝ թեև քիչ առույգ,  
Ինչպե՞ս, սուրբ դեմքին ծիծաղը կապտի՞,  
Հեռանա՝ առանց «հրաժեշտ տալո՞ւ»...  
Գնա՞: Ու երբեք էլ ետ չի՞ գալու...  
-Քո՛ւյր իմ,- ասացի,- այդ ո՛ւր ես գնում...

Չլսե՞ց, լսե՞ց՝ ժպտաց ու... հանգավ...  
Իսկ երբ նայեցի ես նրա դեմքին,  
Տեսա, թե ցավը ինչպե՛ս չքացավ:  
Ու թեև էլ չէր շնչում արդեն նա,  
Բայց փոքրիկ դեմքին թառել էր սառած  
Մի քնքո՛ւշ ժպիտ:  
Ու ես զգացի,  
Որ ծիծաղո՛վ է ընդառաջ վազել  
Դեպ մահը դաժան,  
Ծիծաղո՛վ միայն...

### ԺԱ

Քո գերեզմանին  
Չեմ թափել երբեք աղի-արտասուք,  
Սակայն, հավատա՛, իմ լա՛վ, իմ փոքրի՛կ,  
Մի՛րոս է թախժե՛լ քո մահվան համար,  
Մի՛րոս է լացել...

...Դե՛հ, մնա՛ս բարով, իմ քնքո՛ւշ քույրիկ,  
Պինդ կաց... հողի տակ հանկարծ... չմրսե՛ս...  
Դե՛հ, մնա՛ս բարով...  
Ե՛վ միշտ... ծիծաղի՛ր քո... գերեզմանում:  
Հանկարծ... չտխրե՛ս...  
...Ե՛վ դու ապրեցի՞ր,  
Դու ի՛նչ կյանք տեսար...

### ԺԲ

...Ե՛վ դու հեռացար,  
Քո՛ւյր իմ, մեզանից:  
Չբացահայտված իմ անհո՛ւյս լեզենդ,  
Իմ մո՛ւթ առասպել:  
Ու թեև... չկա՛ս,  
Թեև չե՛ս գալու այլևս,  
Քույրի՛կ,  
Սակայն, հավատա՛,  
Որ ապրո՞ւմ ես դեռ  
Ու կապրե՛ս անվերջ երազներիս մեջ...

1977, Դիլիջան-Կոճողոտ



---

---

# ԲԱՐՁՈՒՆՔ ՏԱՆՈՂ ԱՐԱՏԵՏՈՎ

*Բարձունք տանող արահետով  
Իմ երազն ինձ ո՛ւր է տանում...*

*...Ես իմ ցա՛վն եմ երկինք հանում  
Բարձունք տանող արահետով...*

**Ք**արձունք տանող արահետով  
Գնում եմ՝ իմ նպատակին  
Հասնելու համար,  
Շուրջս՝ քարեր, հողմ ու տարափ,  
Իրար բազմած ձոր ու քարափ՝  
Հսկում են համառ:

*Մացառներն են ճամփաս փակում,  
Մերթ՝ փաթաթվում, մերթ՝ ետ քաշվում  
Նեղ արահետից,  
Բայց գնում եմ ոգով տոկուն,  
Համառ է երթս ու անզիջում՝  
Չեն խանգարի ինձ:*

*Սակայն... բան է՝ կպատահի,  
Ճանապարհս, տեղ չհասած,  
Գուցե... ընդհատվի...  
...Միայն զգամ, որ ապրել եմ,  
Ու իմ կյանքով պայքարել եմ՝  
Հանուն բարձունքի:*

1977, Դիլիջան

Ռուզան Գասպարյանին

Ես քո շրթո՛ւնքն եմ,  
Դու՝ իմ համբա՛ռն չրք,  
Ես քո ափո՛ւնքն եմ,  
Դու՝ իմ աղբյու՛ր չրք:

---



Упр 1977-1985  
Кубицкий

---



## ԵՍ ՈՒ ԴՈՒ

Պատվում են գուլգերը  
Ու ձգվում է մեղեդին,  
Իսկ մենք իրար դեմ-դիմաց  
Նստել անտարբեր,  
Ո՛չ պարել ենք ցանկանում,  
Ո՛չ կատակել,  
Ո՛չ երգել՝  
Ասես հոգսերն աշխարհի  
Մեզ են լուկ տվել:  
Մինչդեռ շուրջը՝ ծափ-ծիծաղ,  
Իսկ մենք կյանքից վերացած,  
Նստել իրար դեմ-դիմաց՝  
Լուռ ենք ես ու դու:

Թ՛վում է՝ այս հանդեսում  
Հյո՛ւր ենք... ես ու դու:

Թե՞ կորցրել ենք իրար:  
Ո՞ւր ենք ես ու դու:

Չէ՛, մոռացե՛լ ենք իրար:  
Չո՛ւր ենք... ես ու դու:

03.04.82, Կոնոդոս

## ԴՈՒ...

Պո՛ւ ես իմ կյանքը, իմ հավատամքը,  
Անհամբեր սրտիս անհուն տենչանքը,  
Աղբյուրը, առուն, հանդը, հուշերս,  
Երգս, երազս, ցավս, հուլզերս,  
Եվ ծաղկանկար հուզագիշերս...

...Սե՛ր իմ, իմ հուլյսն ես ու իմ արևը,  
Իմ տիեզերքն ես ու իմ... բարև՛ը:

## ԵՍ...

**Ե**ս քո շրթո՛ւնքն եմ,  
 Դու՛ իմ համբո՛ւյրը,  
 Ես քո ակո՛ւնքն եմ,  
 Դու՛ իմ աղբյո՛ւրը:

Ես քո մաքրու[թյան  
 վկա՛ն եմ միակ,  
 Ծովի տարեբքում՝  
 Նավակիդ թիա՛կ:

Գնո՛ւմ եմ մենակ  
 Իմ երազ-հեռուն,  
 Ուր դու անընկեր  
 Ի՛նձ ես երազում...

12.08.85, Ստեփանակերտ

## ԴՈՒ...

**Դ**ու իմ աչքերին բնավ մի՛ նայիր,  
 Իմ աչքերը քեզ ոչինչ չեն ասի,  
 Ոչինչ չեն հուշի կրակոտ ու տաք  
 Իմ ապրումների, հույզերի մասին:

Դու իմ աչքերին բնավ մի՛ նայիր,  
 Ոչ էլ՝ խոսքերին դու իմ հավատա,  
 Եթե քեզ խաբեն խոսքերս մի օր,  
 Իմացիր, որ իմ աչքերից է դա:

Դու իմ աչքերին բնավ մի՛ նայիր,  
 Դու խո՛րքը նայիր իմ խոռով հոգու,  
 Ուր կրակված են և՛ սեր, և՛ երազ,  
 Ուր կարոտո՛ւմ են աչքերս անքուն:

Բայց՝ չէ: Մեկ-մեկ էլ աչքերի՛ս նայիր,  
 Ու երբ-որ խո՛րքը նայես աչքերիս  
 Գուցե աչքերս խելքի գան մի պահ,  
 Գուցե աչքերս քեզ էլ... չխաբե՛ն:

21.04.83, Ստեփանակերտ

## ԵՍ...

Ես լո՛ւռ եմ սիրում:  
Եվ եթե հանկարծ ինձ չեն հասկանում՝  
Մեղավոր չեմ, ո՛չ...

Մեղավորը իմ աչքերն են,  
Որոնք նայում ու ոչինչ չեն տեսնում...

Մեղավորը իմ խոհերն են,  
Որոնք հորդում են,  
Սակայն չեն խոսում...

Մեղավորը իմ ձեռքերն են,  
Որոնք շոյում են,  
Սակայն չեն... գրկում...

19.04.83, Ստեփանակերտ

## ԳՈՒ...

Ռ ու ո՞ւր ես, որտե՞ղ է գիշերում իմ սերը,  
Ո՞ւմ գրկի մեջ ես դու սպանում գիշերը...

...Գիշեր է: Հանգիստ չեն տալիս ինձ հուշերս,  
Այրվում է իմ հոգում կարոտի գիշերս:  
Ու սիրտս լցվում է տազնապով մի հետին,  
(Մ՛, ինչ ծանր է նատում գիշերը իմ սրտին):  
Փողոց եմ դուրս գալիս, որ ցրեմ՝ հուշերս,  
Որ քամու հետ կիսեմ խոհերս, հույզերս,  
Բայց քամին գնում է՝ ինձ լսել չի ուզում,  
Հուշերիս հետ նորից մենակ եմ ես մնում:

Գիշե՛ր է... Խավա՛ր է: Վառում եմ լույսե՛րը:  
Թող լույսի հետ վառվեն խավարում հույսերս:  
Իմ հույսը իմ տունն է՝ սերաշխարհս անծայր,  
Ինչքան էլ նենգ լինի գիշերս ու խավար:  
Եվ թեկուզ մենակ եմ, բայց նորից իմ տանն եմ,  
Իսկ հուշս իմ հոգու արևահնձանն է:  
Նրանից եմ առնում երազս, կարոտս,  
Եվ արև նկարում նրանով մինչև լույս,  
Որ խաղաղ, անաղմուկ լուսանա գիշերը,  
Հույսի հետ տունս գա ու մնա իմ սերը:

...Իսկ հիմա դեռ մոլթ է, հիմա դեռ գիշեր է,  
Բայց տանս մենակ չեմ, ինձ հետ են... հուշերս...

27.08.82, Կեսօր, Մարտակերտ

## ԵՍ...

Ես լո՛ւռ եմ կարոտում:  
 Իմ կարոտը թռչուն է անթև:  
 Եթե իմ կարոտն ունենար թևեր՝  
 Ես կպատմեի նրան երազներիս մասին,  
 Եվ նա կտաներ աշխարհին իմ երազները,  
 Եվ երազներս կապրեին անվերջ,  
 Եվ թախիծս կվանվեր ընդմիջտ իմ աչքերից,  
 Եվ ես լեզու կառնեի՝  
 Մի կողմ թողնելով լուռ մնալս՝  
 Եթե իմ կարոտն ունենար թևեր...

... Բայց հիմա մի անթև թռչուն է իմ կարոտը  
 Եվ ես շարունակում եմ լուռ կարոտել...

25.04.83, Ստեփանակերտ

## ԴՈՒ...

Դու արի՛, քո սիրով լցրու  
 իմ առնը և սիրաս մոլոր,  
 Քո սիրով արի հանգցրու  
 իմ հոգու հրդեհը ոլոր:

Եվ մնա գրկիս մեջ թեկուզ  
 Մի վայրկյան, ակնթարթ միայն,  
 Իսկ հետո կարող ես, իմ սե՛ր,  
 Դու հետո կարող ես... գնալ:

Բայց եթե մոլորվես հանկարծ  
 Ու եթե քայլերդ... կանգնեն,  
 Դու կրկին ետ դարձիր ու թող  
 Գրկիս մեջ քեզ դարձյալ գտնեն:

Ու եթե կրկին ետ դառնաս  
 Եվ դառնաս իմ սրտի գերին,  
 Կգրկեմ քայլերդ հոգնած,  
 Որ կրկին քեզ ինձ մոտ բերին:

20.10.84, Ստեփանակերտ

## ԵՍ...

Ես քեզ չեմ ասել՝ սիրում եմ,  
Միայն ասել եմ, որ դու իմ միակն ես,  
Իմ անփոխարինելին,  
Որ առանց քեզ՝  
կյանքս գրազ է տանուլ տված,  
Որ դու այն միակն էակն ես աշխարհում,  
Առանց որի ես նավ եմ անդեկ՝  
Մոլորված կյանքի ծովում:

Ես քեզ չեմ ասել՝ սիրում եմ,  
Միայն ասել եմ, որ դու իմ լավն ես,  
Իմ աննմանը,  
Որ քեզ չեմ տա ուրիշի,  
Չեմ տա,  
Եթե նույնիսկ արևը մոխիր դառնա,  
Տիեզերքն անէանա անթափանց խավարում:

Ոչինչ չեմ ուզում աշխարհից,  
Ոչինչ,  
Միայն դո՛ւ լինես ինձ հետ,  
Միայն դո՛ւ թերթես կյանքիս էջերը...

...Ես քեզ չեմ ասի՝ սիրում եմ,  
Եվ, ընդհանրապես, ոչինչ չեմ ասի...  
...Իմ փոխարեն աչքե՛րս թող խոսեն:

## ԴՈՒ...

Դու ինձ չթողիր քեզնից ոչինչ,  
Գնալիս հետդ լրիվ տարար,  
Իսկ հոգուս միայն պահ տվեցիր  
Միայն անունդ ծաղկանկար:

Մնաց աղմկող անունդ հուր,  
Աղմկող, բայց... լուռ:

1977, Դիլիջան



## ԵՍ...

**Ե**ս քեզ սպասել եմ երկար:  
 Բայց հաճախ կրքերս  
 Խեղդել են իմ մեջ ճիչը,  
 Ինչը  
 Ինձ ստիպում էր,  
 Որ պահեմ հավատս քո նկատմամբ,  
 Քո, որ կաս,  
 Որ իմ մեջ ես,  
 Իմ խոհում,  
 Իմ ամեն քայլում,  
 Ու դու եկար:  
 ...Հիմա ես քեզ չեմ որոնում,  
 Քանզի որոնում են միշտ գտնելու համար,  
 Իսկ գտնելու համար կորցնել է պետք:  
 02.01.85, Ստեփանակերտ

## ԴՈՒ...

**Դ**ու գայիր նորից աղբյուրը՝ ջրի  
 Ու ետ գնալու միտքդ չլիներ,  
 Ուռենին գետի եզերքին լռին  
 Մեր երազների պսակը հիներ:  
 Ու տուն շինեինք գետի եզերքին,  
 Մեր տունը սիրով, կյանքով շեն լիներ,  
 Հավատ ու լույսով մեր երազարտի  
 Եղեգան փողից ծուխը վեր ելներ:  
 Էլ ոչոք չգար աղբյուրը՝ ջրի:  
 Չքնեինք մենք մի անհուն գիշեր,  
 Մեր սերը մաքուր, հավատը բարի՝  
 Մեր խենթ գիշերվա կանթեղը լիներ...  
 ...Էլ ուրիշ ոչինչ, ոչինչ չլիներ,  
 Միայն սեր լիներ  
 Ու սիրո գիշեր...  
 05.08.82, Ստեփանակերտ

## ԵՍ...

**Ե**ս չիմանայի՛, չտեսնեի՛ ու... չսիրեի՛,  
 Քեզ չտեսչայի՛, չթախծեի՛ ու չկանչեի՛:  
 Դու չգայի՛ր, դու չերևայի՛ր իմ ճանապարհին,  
 Չթովեիր ինձ, չհուզեիր իմ խոռով հոգին:  
 Ու ես մնայի՛ իմ երազի մեջ քեզ հետ անվերջ,  
 Ու սիրեի՛ քեզ, ու սիրվեի՛ ես երազիս մեջ...  
 28.10.81, Մարտակերտ

## ԴՈՒ...

Առաջին սիրո կարոտը

Ռու խոռով ես ինձանից,  
Նեղացած ես ինձանից՝  
Բայց ինչի՞ համար:  
Հեռացել ենք իրարից,  
Մոռացել ես, իրավ, ինձ՝  
Բայց ինչի՞ համար:

Ու մնացել ես տխրո՞ւր,  
Ու մնացել ես մ՞թնած,  
Մռայլ ամպի պե՞ս...  
Իրար մենք չենք հասկացել,  
Ոչ էլ սեր ենք իսոստացել՝  
Դու՛ ինձ, ես էլ՝ քեզ:

Ու հին, անուշ մի երազ  
Լքված է և անմուրազ,  
Անանուն, մենակ,  
Բայց օրերում իմ հին՝ ես  
Որոնել եմ միշտ էլ քեզ՝  
Ցավին անգիտակ:

Եվ հավատում եմ ես դեռ,  
Եվ սպասում եմ ես դեռ,  
Որ ինչ էլ լինի՝  
Ես կգան քո՛ օրերը,  
(Թեկուզև կան... նորերը),  
Քո օրերը հին...

1977, Դիլիջան

## ԵՍ...

Ես ա՛յլ կանչով եմ հիմա գերվում,  
Սակայն դեռ հուր կա իմ աչքերում,  
Որով պահում եմ ճամփան հույսի,  
Որ շողերի հետ վերջալույսիդ  
Մի գեղեցիկ օր դու պիտի գաս,  
Մտնես իմ սիրտը լուռ ու մնաս  
Տանս՝ տիրակալ ու սրտիս՝ տեր...

...Հիմա գերում են ինձ... ա՛յլ աչքեր:

## ԴՈՒ...

Դու ինձ աչքերիդ կապույտով՝ թաղիր,  
 Թաղի՛ր շուրթերիդ աղամանդ՝ ծովում,  
 Քո երազները ինձ համա՛ր պահիր,  
 Քո երազները ինձ շա՛տ են թովում:

Ինձ շա՛տ են թովում անուրջները քո,  
 Ես առանց նրանց՝ չեմ կարող ապրել,  
 Առանց քեզ՝ ես մ'իշտ լցվում եմ քաջքով,  
 Քեզ հետ՝ անհուն եմ, առանց քեզ՝ անել:

Քեզ հետ՝ աշխարհը հրաշք է ասես,  
 Առանց քեզ՝ հողմ է, քամին է վայում,  
 Քեզ հետ՝ խենթանում և գիշերն ի լույս  
 Քունը կոպերիս էլ չի այցելում...

15.06.85, Ստեփանակերտ

## ԵՍ...

Ես քեզ տեսա՛,  
 Քեզ տեսա՛,  
 Դու ուրիշի հետ էիր:  
 Սիրտս արագ բաբախեց  
 Ու ես մի խենթ... գետ էի՝  
 Եկա,  
 Անցա մոտովդ՝  
 Ժեռ ավերս ծեծելով...

... Ես քեզ տեսա,  
 Քե՛զ տեսա,  
 Ու ինձ թվաց... դո՛ւ չէիր:  
 1980, Մարտակերտ

## ԴՈՒ...

Դու մի պահ դեմ քիս նայեցիր տխուր,  
 Հեռացար անդարձ:  
 Տարիներ անցան:  
 Այլևս իրար չհանդիպեցինք:  
 Բայց մինչև հիմա  
 Կարոտով եմ ես հիշում քո մասին...

...Այնպես է թվում,  
 Որ դու անպայման  
 Մի օր կերևա՛ս իմ ճանապարհին...  
 1979, Կոնոդոս

## ԵՍ...

Ես ուխտավորի մոլեռանդությամբ  
Որերորդ անգամ խոնարհվում եմ լուռ  
Քո առաջ, ահա, ու լուռ աղոթում,  
Դու՝ երազակերտ իմ սրբապատկեր,  
Դու՝ իմ լուսաշխարհ,  
Իմ Աստված, իմ Սե'ր...

Եվ աղոթք դարձած իմ շշուռները  
Թռչում են մեկ-մեկ ու տեղ չեն հասնում...  
Երևի ոչինչ դու չես հասկանում՝  
Ապրում ես էլի քո նախկին կյանքով,  
Իսկ մեկ-մեկ սակայն քո հայացքի մեջ  
Թախիժ եմ կարդում,  
Կարոտ եմ կարդում, նաև՝ ավսոսանք,  
Եվ սակայն լռում:

Ների'ր ինձ, ների'ր...  
Ես քանի' անգամ  
Փորձեր արեցի նորից մոտենալ,  
Ու առնել կրկին քեզ փերիս մեջ,  
Բայց ուժ չունեի, չկարողացա՛...

Եվ ես մոլեռանդ ուխտավորի պես  
Ուխտի եմ գնում ամեն կիրակի:  
Դու՝ միակ իմ Սուրբ, իմ Աստվածուհի,  
Սրբապատկերիդ առջև կանգնում եմ  
Ու լուռ աղոթում:  
- Ների'ր, որ նորից ուշ եմ եկել ես,  
Ների'ր, որ նորից բռներ չեմ բերել  
Ու քո առաջ ես լուռ եմ աղոթում:  
Ների'ր ինձ, ների'ր...

28.03.82, Ստեփանակերտ

## ԴՈՒ...

Դու խոհերիս մեջ կաս ծաղկանց բույրով,  
Լեռան գովի պես, դու՝ խոհերիս մեջ,  
Ծառերի քնքո՛ւշ, լո՛ւռ սոսափյունով,  
Մեղմիկ հովի պես, դու՝ խոհերիս մեջ:

Հավատ ու կարոտ, կորուստ ու կսկիծ,  
Ու անմար-անվերջ, անեղծ սիրո հուր՝  
Միահյուսել ես, դարձրել մի սիրտ,  
Դու խոհերիս մեջ ու իմ աշխարհում:

### ԵՍ...

Ես այսօր խոսեմ խոհերի լեզվով,  
Դու երազների ու կարոտների,  
Երազով ապրենք ու ապրենք սիրով,  
Ապրենք կարոտով սեր՝անուրջների:

Եկ այսօր խոսենք առանց բառերի,  
Եկ «անխոհ-անհույզ» բառերը թողնենք:  
Ի՞նչ է՝ կարոտից, սիրուց խոսելիս,  
Սիրտը բացելիս միայն բա՞ռ է պետք:

01.06.82, Մարտակերտ

### ԴՈՒ...

Դու, այնպե՛ս լիներ, հանկարծ գայիր  
Ու իմ դեմ՝դիմաց լուռ նստեիր:

Նվազի մեղմ՝իկ կարկաչի տակ  
Քո բաժին հա՛ցը դու ուտեիր:

Առաջարկեին կենաց իմել՝  
Մե՛ր կենացը լուռ դատարկեիր:

Նախատեիր քե՛զ, բա՛խտդ դաժան  
Ու իննթ՝ օրերի՛դ նախատեիր:

Ճերմակափրփուր թագատիրոջն՝  
Իմ թագուհո՛ւն դու նախանձեիր...

...ինչ լա՛վ կլիներ՝ գայիր մի օր,  
Տեսնեիր այսպես ու... գնայի՛ր:

07.05.82, Մարտակերտ

### ԵՍ...

Անունդ չեմ տալիս ցրտում...  
Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

Ես քո անունը  
Ցրտում եմ տալիս,  
Որպեսզի մնա...  
Մառի շուրթերիս՝  
Չպոկվի՛-գնա...

1977, Դիլիջան

## ԴՈՒ...

Ռ ու հարցնում ես,  
Թե ինչ է սե՞րը...

...Օրերի փոշին ծանրացել ճամփիս  
Ու տեղ չի տալիս:  
Անձրևը նորից մաքրուլթյան մասին  
Հին երգն է լալիս:

Կանգնել եմ ճամփիդ ու դալ չեմ կարող,  
Ի՞նչ անեմ, ասա՛:  
Քամու հետ շա՛տ եմ խոհերս կիսել՝  
Կբերի՞ նա քեզ հույսի մի պատառ  
Եվ կսփոփի՞ քեզ:

...Այդ ցավ-տագնապի ցավագարուլթյամբ  
Տառապում եմ լուռ  
Ողջ գիշերը ես:

12.08.85, Ստեփանակերտ

## ԵՍ...

Ե ուրիշների չեմ փնտրել կյանքում,  
Փնտրել եմ լոկ քեզ, իմ երազանո՛ւն:  
Կապվել եմ քեզ հետ կարոտով, սիրով,  
Եվ օրերիդ հետ քայլել իմ օրով:  
Մեզ հանդիպել են հողմեր նենգ ու նեռ,  
Կյանքի ճամփեքին՝ անթիվ կեռամաններ:  
Չենք թեքվել անթեք մեր ուղիներում,  
Բայց... հողմերը միշտ ավեր են բերում:  
Խուժողուժ հողմերից մեր ուղին բեկվեց  
Ու մեր սրբահույզ երազն ավերվեց:  
Բայց մի օր կրկին դու վերադարձար՝  
Մոռացած մերժման տառապանք ու ցավ:  
...Հիմա ինձ հետ ես իմ ամեն քայլում,  
Հիմա ամենուր մեկտեղ ենք քայլում:

15.09.83, Ստեփանակերտ

## ԴՈՒ...

Ռ ու Արև՛ եղիր ինձ, ես քեզ՝ Լուսին,  
Ձեռք-ձեռքի տված ապրենք միասին,  
Մեր կյանքը կերտենք մե՛ր ուզած ձևով:  
Չմնանք երբեք ուրիշի հույսին,  
Հույս ու սիրտս, Արև՛, քո լույսին...

05.05. 82, Ստեփանակերտ

## ԵՍ...

(Իբրև վերջաբան...)

**Ե**ս գիտեի՞, թե ինչեր են  
 Ինձ առջևում դեռ սպասվում,  
 Ով է իր լույս սիրով կանգնած  
 Իմ երազի ճամփավերջում...  
 Եվ դու եկար,  
 Արևի պես մի առավոտ մտար տունս,  
 Արևային քո ջերմությամբ  
 Հալվեց ձյունս:

(...իզուր չէի հույսերս ես ոսկեջրում՝  
 Վաղուց է հույսն հավատ դարձել,  
 Ինչո՞ւ այսքան ուշ եմ գրում):

13.09.83, Ստեփանակերտ

## ԴՈՒ...

(... և՛ հետգրություն)

Արի սիրե՛նք մենք մեկմեկու,  
 Որ մեր մեկը դառնա երկու,  
 Հետո՛ երեք, չորս, հինգ, վեց, յոթ...  
 Ու... սարսափի մահն ահարկու:

**Դ**ո՞ւ սեր իմ մաքուր, երազ իմ՝ Ռուզան:  
 Եվ եղավ, որ մենք՝ երկու եզակի,  
 Միացանք իրար ու դարձանք մի «ես»:  
 Միացանք իրար ու դարձանք մի... զույգ...  
 Եվ եղավ  
 Մի օր կրկին... կենտացանք,  
 Ու լցվեց տունս ճիչով երջանիկ:

Թող որ տառապեմ ես հանուն սիրո,  
 Իսկ տառապանքից աճի սերը մեր,  
 Եվ... չորս դառնանք մենք,  
 Իսկ հետո էլ՝ հինգ,  
 Հետո՛ շատանա՛նք:

Թող իսկի՛ քունս,  
 Հո՞գ չէ, անգի՛նս,  
 Միայն իմանամ արժե՛քս, գի՛նս:

...Դրանից հետո թեկուզ... վե՛րջս լաս,  
 Բայց՝ մեր շատի հետ ապրես ու մնաս...

10.06.85, Ստեփանակերտ

# Մարի Կայուններ

---

## ՎԿԱՅՈՒՄ-1

Քամին ծառերից  
Տերև է պոկում,  
Որ տանի հեռու՝  
Աշխարհին ի տես:

Ու ծառի ցավով  
Տառապում եմ... է՛ս:

10.06.85, Ստեփանակերտ

## ՎԿԱՅՈՒՄ-2

Քարեկամներ են  
Ծառերն ու քամին:  
Քամին հեքիաթ է  
Պատմում... ծառերին:  
Ծառերը լսում,  
Գլխով են անում,  
Իբր... յաճից  
Բա՛ն են հասկանում...

05.05.82, Մարտակերտ

## ՎԿԱՅՈՒՄ-3

Պատուհանիս տակ շրշում է քամին,  
Ի՞նչ է որոնում նա այս ուշ ժամին...

10.06.82, Ստեփանակերտ

## ՎԿԱՅՈՒՄ-4

Մրում էին քարերը՝  
Զյուն էր նստել քարերին:  
Իսկ երբ ծագեց արևը,  
Հանկարծ ձյան կորստից  
Արտասովեցի՛ն... քարերը:

23.03.82, Ստեփանակերտ



## ՎԿԱՅՈՒՄ-5

Մենավոր կաղնուն կա յծակը խփեց,  
կաղնին սարսուռաց, կախեց ճյուղերը:

Սարսուռն այդ անհուն՝ մի վայրկյան տևեց:  
Հաջորդ վայրկյանին ճյուղերը ելան  
Ըմբոստ պայթյունով մի մեծ պայքարի:  
Սակայն... կա յծակն այլևս չկար:  
18.06.82, Ստեփանակերտ

## ՎԿԱՅՈՒՄ-6

Ծառը նիրհում էր  
Աչնան բյուրեղանոց տերևներն ուսած,  
Իսկ աչնան քամին  
Խաղում էր գույն-գույն տերևների հետ:

Խաղաղ էր շուրջը:  
Հանկարծ փոթորիկ բարձրացավ ուժգին:  
Ծառը ծառս եղավ,  
Ծառն ըմբոստացավ ի դեմս չարի,  
Սակայն... անգոր էր  
Տերևներն ընկան:

Ծառը նիրհում էր  
Աչնան բյուրեղանոց տերևներն ուսած...  
...Հիմա ննջում է արդեն ծերացած:  
07.02.82, Մարտակերտ

## ՎԿԱՅՈՒՄ-7

Ստառը այնքան էր գեր է հյուսել,  
Սակայն չգիտե, թե ինչպես վարվել:

Ծառերի վրա երգերը սփռել,  
Զգիտե՛ ինչպես լույս աշխարհ հանել:

...Ու կրկին հյուր եմ եկել քեզ, անտա՛ռ,  
Ուզում եմ երգդ աշխարհին տանել:  
10.06.82, Մարտակերտ

Սոս Կանգյուս

ՍՈՍ ԿԱՆԳՅՈՍ

## ՎԿԱՅՈՒՄ-8

Անտառն ինձ հեռվից ձեռքով է անում,  
Ու ես գնում եմ գիրկը անտառի:

Անտառն ինձանից խոհ է թռցնում,  
Ես թռցնում եմ հեքը անտառի:

Ու ընթերցում եմ, անտառի լեզվով,  
Հեքիաթի հրաշք գիրքը անտառի...

10.06.82, Մարտակերտ

## ՎԿԱՅՈՒՄ-9

Միշտ,  
Երբ փողոցով քայլում եմ դանդաղ,  
Ինչ-որ ձայներ են հասնում ականջիս,  
Ու նորից մարում,  
Ինչ-որ պատկեր է  
Աչքերիս առջև լուռ գծագրվում  
Ու... անհանում:

1977, Դիլիջան

## ՎԿԱՅՈՒՄ-10

Պբերգական դեպք էր այն՝  
Մեկն անգուսպ ծիծաղեց,  
Մեկը անհույս լաց եղավ:

...Ու մնացին հոգուս մեջ՝  
Մեկը՝ անգուսպ ծիծաղով,  
Մեկը՝ տխուր՝ իր լացով:

1977, Դիլիջան

## ՎԿԱՅՈՒՄ-11

Ես երազներով երբեք չեմ տարվում,  
Սակայն ապրում եմ միշտ երազելով,  
Որ կյանքում հասնեմ լավին ու բարուն:

Ու... երազում եմ այդպես օրերով,  
Օրե՛ր, ձեր կապույտ օրոր-շորորով...

05.05.82, Ստեփանակերտ

## ՎԿԱՅՈՒՄ-12

Կապույտ են լինում հորիզոնները:  
Իսկ երբ ցերեկվա հոգսերից հոգնած  
Դեպ մայրամուտ է թեքվում արևը՝  
Ինչո՞ւ են հաճախ  
Հորիզոնները կարմիրով ներկվում:

...Աշխարհը մեծ է,  
Ես ի՞նչ իմանամ,  
Գուցե ինչ-որ տեղ արյո՛ւն է հեղվում:

05.03.82, Մարտակերտ

## ՎԿԱՅՈՒՄ-13

Ինե՛ր,  
Այնպե՛ս լինե՛ր,  
Հունից շեղված առուն  
Նախկին հունը գտնե՛ր...

1977, Դիլիջան

## ՎԿԱՅՈՒՄ-14

Երբ հայ են ասում՝ քար հասկացե՛ք,  
Երբ քար են ասում՝ հիշե՛ք հային:  
Վշտի պահին ենք հաճախ ասում.  
- Հայ ես դու, պիտի՛ որ դիմանաս...

Բայց ասում ենք ու... չենք հասկանում,  
Թեև պարզից էլ պա՛րզ է հարկավ:  
Երբ քարերն անգամ չեն դիմանում,  
Վիշտ ու գրկանքի խարդավանքին  
Ինչպե՞ս դիմանա սի՛րտը մարդու...

21.03.82, Մարտակերտ

## ՎԿԱՅՈՒՄ-15

Քարերին ձյան հետքեր նկատեց  
Արևն ու տարավ:

Քարերին ջրի հետքեր նկատեց  
Արևն ու տարավ:

Քարերին մարդու հետքեր նկատեց  
Արևն ու... տանել չկարողացավ:

29.12.81, Ստեփանակերտ

## ՎԿԱՅՈՒՄ-16

Տեճերի մահով ուրախանո՞ւմ են,  
Որ մեծացել է՝ նո՞ր մահացել:  
Թե՞ տխրում են միշտ...  
Դե, ամեն դեպքում,  
Մարդ մի անգամ է ծնվում-մեռնում:  
...Մեռնողներն, արդյո՞ք, զգում են դա:  
18.03.82, Ստեփանակերտ

## ՎԿԱՅՈՒՄ-17

Տեսնես մահամերձն այն վերջին պահին  
Թախծո՞ւմ է արդյոք, և ինչի՞ մասին:  
Աչքերը դանդաղ երբ կուլ են գնում,  
Կոկորդում բառը կխսատ է մնում,  
Ու վերջին անգամ քնում է, ահա,  
Եվ նախագգում, որ էլ չի արթնանա,  
Մահվանն այդ դաժան անիծո՞ւմ է չար,  
Թե՞ այնպես բարձր ծիծաղում է նա,  
Որ մահն իրենից վախենա գոնե  
Մի ահն թարթո՞վ...  
14.04.82, Մարտակերտ

## ՎԿԱՅՈՒՄ-18

Ամպը սարին թիկնել է,  
Սարը՝ սար է, չի ճկվել...  
...Սարը ամպին սիրել է՝  
Սիրով մաքուր ու անբիծ,  
Ու երբ սերն է իր հայտնել՝  
Ամպը սարին մերժել է:  
Սարը վշտից ծերացել,  
Ամպը թողել՝ չքվել է:  
1977, Կոնոդոս

## ՎԿԱՅՈՒՄ-19

Ե է առնում,  
Թե տալիս,  
Հետո խեղճ ու թեթաթափ  
Հեռանում է աշխարհից  
Մարդը...  
01.04.82, Մարտակերտ

## ՎԿԱՅՈՒՄ-20

Քունկվե՛լ էր քամին  
Ու կրակ էր թափում,  
Ինչ գտնում էր ճամփին՝  
Առնում էր ու... լափում:

Չէր էլ ուզում լսել  
Լացն ու կոծը լույսի,  
Բայց ապրում էր լույսը  
Անուրջներով հույսի:

Մեղավո՞ր էր լույսը,  
Որ մռտում քամին,  
Մերթ ծառին էր խփում,  
Մերթ էլ... լուսնի ծամին:

Քամին լույսին տարավ  
Եվ անդունդը գցեց,  
Մթնեց աշխարհն արար,  
Մարդու սիրտը մթնեց:

Ու նա խղճաց մարդուն,  
Գնաց, բերեց լույսին,  
Եվ տուն շինեց անտուն  
Մարդը՝ շողով լուսնի:

Ու մինչ այսօր մարդը  
Հսկում է լույս աչքով,  
Որ հտանի լույսը,  
Քամին՝ ընկած քաջքով...

05.03.85, Ստեփանակերտ

## ՎԿԱՅՈՒՄ-21

Ես մ'իշտ ժպտում եմ...

Ինչ֊որ տեղ գուցե տխուր են մարդիկ,  
Ինչ֊որ երգչախումբ մահերգ է երգում,  
Եվ մահամերձը մահով աշխարհիկ  
Հանդերձյալ կյանքի լեզենդն է հերքում:

Քայլում է դանդաղ թափորը լուին՝  
Ուսերին առած մի կյանք֊մի աշխարհ,  
Հնչյունների տակ անհույս մահերգի  
Ուղեկցում նրան վերջին ճանապարհ:

Նրան տանում են փայտե դագաղում,  
Տանում են հանգիստ, ուսերին առած,  
(ժպիտ է նրա դեմքին նշմարվում,  
Ժպիտ, բայց... սառած):

Ժպիտն է նրան աշխարհում պահել,  
Ժպիտը նրան արև էր ու սեր,  
Եվ մահացել է՝ հայացքով հտպիտ,  
Սառը դեմքին մի չխամրած... ժպիտ:

Ես մ'իշտ ժպտում եմ...

Երբ֊որ ապրելը դժվար է թվում,  
Երբ նեղ է թվում աշխարհն իմ աչքին,  
Բայցև՝ ձգում է, կախարդում, թողում՝  
Ես մ'իշտ ժպտում եմ աշխարհին, կյանքին:

Եվ իմ ժպիտը դառնում է արև,  
Դառնում է կարոտ ու սեր է դառնում,  
Որով ես պիտի աշխարհում ապրեմ,  
Որով շնչում եմ, քայլում, թե առնում...

...Ու ես ժպտում եմ:

# Մարլո լոռս Մերուզայի Մեախոուրյուեր

## Տեղինակի կողմից

1973 թվական, սեպտեմբերի 13:

Վաղ առավոտվանից մարդիկ գինված կանգնել ու սպասում են: Նրանք նախագահական «Լա Մոնեդա» պալատի պաշտպաններն են:

Նրանց հետ է նաև ժողովրդական նախագահը՝ Սալվադոր Ալիենդեն՝ նույնպես ավտոմատով: Ֆաշիստական գրոհին հաշվված վայրկյաններ են մնացել...

## ՍԿԻՋԲ

Տազնապի իմ ցավը խորն է ու անամոք:  
Ափերից ելել եմ, վարար եմ, հորդում եմ:  
Ափերից ելել եմ, ինքս ինձ ուտում եմ:

Եվ էլ ո՞նց ես ցավս, մորմոքս ամոքեմ:  
Եվ էլ ո՞ւմ հասցնեմ բուռնցքված բողոքս:  
Եվ ո՞վ է մոտիկս:  
Եվ ո՞վ է ոսոխս:

...Սեպտեմբե՛ր, այս ինչքա՛ն անխիղճ ես ու դաժան:  
Սեպտեմբե՛ր, ես ինչպե՞ս մոռանամ իմ ցավը:  
(Այս ինչքա՛ն անամոթ, անխիղճ է աշխարհը)...

Մեր բաժին Աստվածն էլ քարացել՝ արձա՞ն է...  
Մեր բաժին Աստվածն էլ աստված է՛, վարձկա՛ն է:

## ԹԱՍԻԾ

Ես սիրում եմ աշխարհը լույս...  
Ես սիրում եմ փոքրիկ ու ցուրտ  
Երկիրը իմ...

Պաբլո ՆեբրոՒԴԱ

Ապրում է իմ մեջ անունդ վառման՝  
Կարո՞ղ եմ, արդյոք, մոռանալ ես քեզ,  
Ես՝ ավագ որդիդ՝ Պաբլո ՆեբրոՒզան,  
Կանգնած եմ ահա հասակով իմ վես:

Ու կարոտներով, հավատով իմ լույս  
Աշխարհներին եմ անունդ տանում,  
Քեզ ո՞նց մոռանամ, Չի՛լի, սրբահույզ  
Երկիր այրերի՝ քաջ ու աննկուն:

Քո տագնապները իմ հոգու մեջ են,  
Ապրում են ինձ հետ իմ ամեն քայլում,  
Դրանի՞ց է, որ տարերքի մեջ եմ,  
Հուզմունքից դեմ քս ինչպե՛ս է վառվում...

Քո մեծ սիրով եմ ես աշխարհ եկել,  
Ապրել իմ կյանքը՝ քո սիրով միայն,  
Չի՛լի, քո տրտունջ-տանջանքն եմ կրել,  
Քո տառապանքը աշխարհ-աշխարհ:

Եվ թեկուզ փոքր ես եղել, «ցուրտ երկիր»՝  
Քո գիրկն եմ դարձել ես ամեն անգամ,  
Սեր-հույսդ ինձ միշտ հուշել է՝ երգի՛ր,  
Ու երգել եմ ես հավատով պայծառ:

Երգել եմ սերս, հավատս անսպառ  
Ու քո քարերի մասին եմ երգել.  
«Կծնվեի բյուր անգամ, քեզ համար  
Կմարտնչեի, թե հնար լիներ»...

Ես ո՞նց կարող եմ, ես ո՞նց մոռանամ,  
Երբ արյունը քո բռունցքված է դեռ,  
Երբ որդիներդ քաջ ու անվարան  
Բյուր անգամ կուզեն քեզ համար մեռնել:

Իմ հուշերի մեջ ապրում են նրանք,  
Քո բյուր գոհերը՝ հերոս, քաջարի,  
Որ մինչև վերջին կաթիլը արյան  
Չեն գիջել երբեք դիրքը պայքարի:

Ընկել են թեկուզ, բայց չեն կորսվել,  
Կանգուն են եղել ընդդեմ հողմերի,  
Հավատով, սիրով լուռ մարտիրոսվել  
Ու ապրում են դեռ փառքով... քաջերի:

Իմ մեջ ապրում է թախիծդ անհույս,  
Թախիծդ՝ անծայր, թախիծդ անհուն...  
...Ըմբոստ շարքերով քո որդեկորույս  
Մայրերի երթն է ձգվում աննկուն:

Դեռ ողբն է հնչում քո հեզ որբերի,  
Եվ շշունջները լուռ, լալահառաչ,



Հողնած քայլերը քո որդիները՝  
Զրկված մայր հողից, զարկված, բզկտված:

Սակայն ապրում են նրանք ու դեռ կան՝  
Աննկուն կամ քով որդիները քո,  
Մի գեղեցիկ օր նրանք դեռ կգան՝  
Փրկելու և՛ տուն, և՛ երկիր, և՛ հող:

Ոտքի կելնի դեռ ժողովուրդը քո  
Ընդդեմ խունտայի՝ նենգ ու դրուժան,  
Ու նրան նորից կհաղթեմ երգով  
Ես՝ ավագ որդիդ՝ Պաբլու Ներուզան:

## ԱՐՅՈՒՆ

Ես չեմ ուզում, որ արյունը  
Նորից ծծվի մեր երգերի  
Եվ հացի մեջ...  
Պաբլու ՆԵՐՈՒԴԱ

Ես չուզեցի, սակայն այնպես  
Եղավ, որ ի՛մ արյունը հենց  
Ծծվեց իմ լույս, իմ հուզառատ  
Երգերի և ի՛մ հացի մեջ:

Ես չուզեցի... Արյուն տեղաց,  
Հողս վառվեց հրդեհներում,  
Խունտան իր կեռ ճանկը խրեց,  
Որ ծծի իմ արյունը հուր...

Ու բանավեցին ազատության  
Մարտիկները: Գլխատեցին  
ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ բառը անգամ:  
Բանավեց հողս՝ երկիրս ջինջ...

«Ես ծնվել եմ, որ միշտ երգեմ»՝  
ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ սակայն չկար...  
Շղթաների զնգոց էր լոկ  
Արգելված էր երգս կարգաբար:

Ջնջել էին անունս հուր,  
Ասելով, որ իբր էլ... չկամ:  
Բայց ես կայի, ապրում էի  
Ժողովրդիս ցավ ու հոգսում...

Հալածանքներ՝, հերյուրանքներ՝  
Ինչե՛ր չարին նրանք իմ դեմ,  
Որ մայր հողս անտեր թողած  
Լուռ հեռանամ օտար ափեր,

Ուրիշ քամու ընկեր դառնամ  
Ու մոռանամ իմ մայրենին,  
Հող-հայրենին իմ մոռանամ...  
Ինչէ՛ր չարին նրանք իմ դեմ...

Բայց ես կայի՛, ապրում էի՝  
Ժողովրդիս երազներում:

Թափառեցի ես ամենուր,  
Ուր էլ եղա՝ ինձ տանջում էր  
Ժողովրդիս ցավը խորունկ,  
Ուր էլ եղա՝ ժողովրդիս հետ էի միշտ,  
Ժողովրդիս ցավ ու հոգսից,  
Հուզումներից միշտ անպակաս:  
Ուր էլ եղա՝ մի մեծ հավատ  
Ունեի լոկ. մի օր պիտի  
Ա՛յգը բացվի երկրիս վրա՝  
ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ա՛յգը բարի...

Ես չուզեցի՛...  
Բայց արյունը մինչև հիմա  
Դեռ ծծվում է իմ երգերի  
Եվ... հացի մեջ: Ու ես... եկա:  
Եկա՝ տանս հող դառնալու...

«Ես ծնվել եմ,  
Որ միշտ երգեմ»:  
(Երգի՛ր, Պաբլո,  
Երգի՛ր, անգի՛ն)...

## ՀԱՎԱՍ

Ես հավատում եմ քեզ, Չիլի, հավատում եմ քո ապագային:  
Կլինեն մարդիկ, ովքեր կվերապրեն այս դառն ու մռայլ  
ժամանակները, և կգա այն օրը, երբ մարդն ազատ կապրի  
ու կկառուցի նոր, լուսավոր կյանք...

Սալվադոր ԱԼԻԵՆԴԵ

Ազատութ՛յան համար ընկած  
Զինվորները չեն մահանում,  
Ապրում են հար ժողովրդի  
Երազներում, հուշերի մեջ,  
Կարոտներում,  
Հույզերի մեջ...

Դու՝ զավակդ բազմաչարչար  
Ու տառապած ժողովրդիդ,

Քո մեծագնիվ ձգտումներով,  
 Նվիրական ու մեծ սիրով  
 Արյունդ հուր՝ կաթիլ-կաթիլ  
 Տվիր առանց վարանելու՝  
 Հողի՛դ,  
 Երկրի՛դ,  
 Ժողովրդի՛դ:  
 Տվիր՝ առանց վարանելու,  
 Միայն ապրեր ժողովուրդդ,  
 Ծաղկեր հողդ,  
 Հայրենիքդ:

Այդպես չեղավ կյանքում սակայն:

Հողդ վառվեց հրդեհներում,  
 Մոխիր դարձավ բախտը դաժան  
 Քո տարաբախտ ժողովրդի:  
 Հետո արդեն դու... չկայիր:  
 Քեզ հետ քանի՛-քանի քաջեր  
 Հայրենիքի, հողի համար,  
 Ժողովրդի համար ընկան:  
 Ընկան՝ առանց վարանելու...  
 Ընկան, որ միշտ ծաղկուն լինի  
 Հող-հայրենին և ազատվի  
 Ժողովուրդը տառապանքից...

Նրանք ընկան...

Քեզ հետ էին անեղ մարտում  
 Անհավասար, ու քեզ հետ էլ  
 Քաջի մահով մարտում ընկան,  
 Անմահացան՝ քաջի մահով...

Ընկան, որ վիշտ, ցավ չլինի  
 Զիլիացու ժպիտներում,  
 Վերք չլինի:

Այդպես չեղավ կյանքում սակայն...  
 Խունտան վայրի, նենգ ու դաժան  
 Մեր երկիրը ավերակեց,  
 Ազատության գինվորներին  
 Բանտեց, մորթեց...  
 Քանի՛-քանի  
 Ազնիվ սրտով,  
 Մաքուր սրտով չիլիացի  
 «Անհետ կորան»:  
 (Կորա՞ն, իրոք, թե՞ կորցրին):

Բայց նրանք կան ու ապրում են,  
Ազատութեան համար ընկած  
Զինվորները չեն մահանում,  
Երբե՛ք, երբե՛ք...  
Ապրում են հար  
Ժողովրդի երազներում,  
Ինչպես դու ես ապրում ու կաս,  
Դու՝ զավակդ՝ բազմաչարչար  
Ու տառապյալ ժողովրդիդ...

## ԲՈՒՆՑՔ

Ես սիրում եմ ազատութունը, բայց բանտից չեմ վախենում,  
սիրում եմ կյանքը, բայց չեմ վախենում մահից...

Լուիս ԿՈՐՎԱԼԱՆ

Նահատակված՝ իմ եղբայրներ,  
Մեր դործն արդար, վեհ ու բարի՝  
Զի՛ մնալու երբեք կիսատ:  
Դեռ պայքարը չի վերջացել:  
Յած չեն դրվել դեռ զենքերը  
Ու քանի դեռ ապրում ենք մենք՝  
Մեր ձեռքերը  
Պետք է փրկեն մեր ապագան:  
Ու կփրկեն միայն զենքով  
Սուրբ հավատի՛, ճշմարտութեան:  
Մեր ապագան պետք է փրկենք  
Մենք բռունցքված մեր հավատով:  
Արյունակի՛ց իմ եղբայրներ,  
Անհավասար, ահեղ մարտում  
Ե՛վ զոհվեցինք, և՛ բանավեցիք:  
Մեզ տանջեցին, բզկտեցին,  
ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ բառը սակայն  
Մեզնից վանել, մեր մարմնից  
Կտրել՝ զատել չհաջողվեց,  
Մեր սրբազան հույս-հավատից  
Զտել՝ հանել չհաջողվեց,  
Մեզ հետ բանտամենախցի  
Մի անկյունում ապրում էր այդ  
ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ բառը ազնիվ,  
Մաքրապայծառ, պայծառամեծ:

...Հիշում եմ ես՝

Քանի՛ անգամ ստիպեցին,  
Որ բաժանվես ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ  
Ազատամեծ ու լույս բառից:  
Քեզ կբանտե՛ք...

(Վախեցրին):  
 Քանի՛ անգամ դահիճներին  
 Նենդ ու դաժան դու ասացիր.  
 - Սիրո՛ւմ եմ ես ազատություն,  
 Բանտից սակայն չե՛մ վախենում,  
 Չե՛մ վախեցել կյանքում երբեք...  
 - Քեզ կմորթենք...  
 - Կյա՛նքն եմ սիրում  
 Մեժ ու անհուն,՝ ասացիր դու,  
 Մահից սակայն չեմ վախենում...

Քանի՛ անգամ քեզ բանտեցին,  
 Տանջեցին ու բզկտեցին,  
 Աննկուն էր ոգիդ սակայն՝  
 Տառապեցիր բանտախցում,  
 Բայց ապրեցիր ու հաղթեցիր՝  
 Բանտախցիդ դուռը բացվեց...  
 Մի ցավ էր լուկ հոգիդ մաշում՝  
 Դու փրկվեցիր, ժողովո՛ւրդդ  
 Սակայն մնաց բանտախցում:  
 Բանտախցում մնաց հո՛ղդ,  
 Հայրենի՛ քդ, հա՛ցդ, ջո՛ւրդ:

...Պետք էր փրկել ու տուն բերել  
 Ե՛վ ժողովուրդ, և՛ հայրենիք:

## ՆԱԽԱՎԱՐՏ

...ինչքա՞ն է տևում կյանքը մարդկային,  
 Ինչո՞ւ էն, արդյոք, մարդիկ մահանում,  
 Ես մեժ տաղնապով, զայրույթով նաև  
 Մահվան ճամփեքին թակարդ եմ լարում:

Թող դարան մտած ինչ՞որ քարայրից  
 Մահը դուրս ելնի դավին անտեղյակ,  
 Ու իմ թակարդի հպումի ցավից  
 Նա հանկարծակի ընկնի փակի տակ:  
 Եվ մահկանացու մարդիկ աշխարհի  
 Մոռանան նրան, մոռանան նրան,  
 Մարդկային կյանքում չըջադարձ լինի,  
 Էլ մահվան նշած ճամփով չընթանան:

Սակայն երբ նորից ամպերը գուժկան  
 Խաղաղ երկնքի կապույտն են ծածկում,  
 Ու երբ ինչ՞որ տեղ մարդը դրոժան  
 Իր նման մարդու ճամփան է փակում,  
 Երբ արյան ծովում խեղդվում են մարդիկ

Ու չկա մի ձեռք՝ օգնության համար,  
Երբ «վերջը միայն բարին կատարի»  
Հուսով են ապրում, հավատով անմար,

Ես ինչպե՛ս ապրեմ հանգիստ, անտարբեր  
Ու չարձագանքեմ աղմուկին դարի,  
Ինչպե՞ս չտեսնեմ տառապանքն անել  
Ու մեղսոտ խիղճը «անմեղ» աշխարհի:

Ինչպե՞ս չկանչեմ քնած աշխարհին,  
Որ այս թմբիրից մի կերպ... արթնանա,  
Որ պայթյուններին դավադիր ուումբի  
Մշտնջենապես քնած չմնա:

Մարդն ապրի կյանքում միշտ հաշտ ու խաղաղ,  
Վիետնամ, Լիբանան՝ էլ չկրկնվի,  
Եվ Արցախական հայոց աշխարհից  
Բռնակալության բռունցքը չքվի:

Չչմի մարդը՝ հոտից վառողի  
Ու կերտի նորից իր համար նոր կյանք,  
Ելնեն շենքերը Ստեփանակերտի,  
Հրաչքը կերտվի հողում ավերակ:

Եվ ինչ էլ լինի՝ մարդը մարդ մնա,  
Իր նման մարդու ձեռքով չգնա...

## ԱՎԱՐՏ

Ամերիկյան մայր՝ ցամաքի  
Կողը խրված սրի նմանվող  
Քո քարտեզի առաջ կանգնել  
Ու գլխահակ ինչ որ բան եմ  
Ես մտմտում  
Ազատության մասին նորից,  
Խաղաղության,  
Երջանիկ ու անհոգ կյանքի,  
Քո՛ երազի մասին,  
Չի՛լի...

Իմ դիմաց քո հայրենասեր  
Կանանց երթն է ձգվում նորից,  
Երթն է ձգվում մեր մայրերի,  
Մեր քույրերի...  
Խաղաղության,  
Արդարության ե՛րթն է ձգվում:  
Ե՛րթն է ձգվում տառապյալի՝

«ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ ԼՈՒԻՍ ԿՈՐՎԱԼԱՆԻՆ»...  
 Ե՛րթն է ձգվում՝  
 «ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ ՆԵԼՍՈՆ ՄԱՆԴԵԼԱՅԻՆ»...  
 Ե՛րթն է ձգվում՝  
 «ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԿԱԴԻ ՄԱՆՈՒԶԱՐՈՎԻՆ»...  
 Ե՛րթն է ձգվում՝  
 «ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ .....»

...Ապրի՛ր, Զի՛լի:

Դեռ ուտում է քո մարմինը  
 Խլուրդը նեո՝  
 Ապրի՛ր, Զի՛լի:  
 Պոկի՛ր գլխիդ կախված մահվան  
 Դաշույնը կեռ՝  
 Ապրի՛ր, Զի՛լի:  
 Դեռ ապրում է քո երազը,  
 Քո հավատը՝ հեռու մի տեղ,  
 Ապրի՛ր, Զի՛լի...

...Ամբողջովին բողոք դարձած,  
 Դարձած բռունցք մեծահզոր,  
 Հույս-հավատի ահազանգով  
 Ելել ես մեծ մի պայքարի՝  
 Ժողովրդո՛վ, հողո՛վ քո հին,  
 Զի՛լի,  
 Երկիր՝ հայրենասեր քաջ այրերի...  
 Պիտի կերտես երազը քո,  
 Ու կիսավեր հողի վրա  
 Երկնես պիտի Զի՛լի մի նոր,  
 Նորացնես մի հի՛ն երկիր...

...Ապրի՛ր, Զի՛լի:

## Տեղինակի կողմից

1973-ի սեպտեմբերի 28-ին Պաբլո Ներուզան այլևս չկար: Խունտան չհանդուրժեց մեծ բանաստեղծի գոյությունը: Ժողովրդի համար սակայն՝ մեծ կորուստ էր դա: Հրազենների փողերի տակ, սվինները ցցաչարերի միջով քայլում էին չիլիացիները՝ նրանք վերջին ճանապարհ էին ուղեկցում սիրված բանաստեղծին: Ներուզայի հուղարկավորությունը վերածվեց հուզիչ ցույցի՝ չիլիական հայրենասերների արիության, նրանց կամքի՝ դիմադրության, պայքարի ու հաղթանակի...

15-19.07.82, 15-20.08.82, Մարտակերտ  
 23.10-27.11.89, Ստեփանակերտ

ԱՐԿԱՎԻ ՄԱՆՈՒԶԱՐՈՎ

Ս Ա Մ Վ Ե Լ,  
Ս ՈՒՍ Ա Ն,  
Մ Ա Ր Ի Ա Մ Բ ա լ Ի կ ն Ե Ը Ի ս

Ես իմ մանկիկին կոչեց եմ Սասնիկը՝  
Անունով Սասնիկը Մամիկոնյանի,  
Եվ պատրաստ եմ արդ դաշունահարվելը՝  
Վաստակեմ պիտակ թե դավաճանի,  
Ու թող մեծանա իմ որդին բարուր՝  
Հայրենի հողը թուրքից պաշտպանի...

---





*Zukunft* 1982-1994  
*Landesmuseum*

---



## ԱՐՑԱՒԻ ՀԱՎԵՐԺՈՒԹՅՈՒՆԸ

(էքսպրոմտ)

**Մ**եր տան պատի տակ, մեջքս ժեռ քարին՝  
Նստել, նայում եմ ծնվող աշխարհին:

Մեր տան պատի տակ, մեջքս ժեռ քարին՝  
Նստել, նայում եմ ապրող աշխարհին:

Մեր տան պատի տակ, մեջքս ժեռ քարին՝  
Նստել, նայում եմ... անցնող աշխարհին:

01.06.88, Բաքու-Կազան (գնացքում)

## ՏՈՒՆԸ

**Ի**մ առաջին ճիչը, որ լսել է տունը,  
Իմ առաջին ճիչը վաղո՛ւց չկա,  
Բայց հիշո՛ւմ է տունը: Ու ապրո՛ւմ է տունը  
Մեր այն հեռո՛ւ գյուղում ադամանդյա:

Ու երբ ամեն անգամ ես այցի եմ դալիս,  
Եվ լուռ լռում լռած դռան առաջ,  
Տան պատերն ասես անուրջներ են լալիս...  
Ու լսվում է միշտ մի անհո՛ւյս հառաչ:

Ծանրանում են մեկեն քայլերս՝ տուն եկած,  
Ծնկներս լուռ ծալվում փլվում հողին,  
Նկարս տան պատին ծանրությո՛ւն է անում,  
Երբ ես պիտի պատին երկարվեի:

Ու կանգնել եմ շվար՝ հիմա ի՞նչ եմ, տանտե՞ր,  
Հիմա դադձն է ձգվում տանս պատին,  
Տանս անքուն պատին ձգվում եղինջն անտեր,  
Սպառնում է նույնիսկ... ժամանակի՛ն:

...Իմ առաջին ճիչը, որ լսել է տունը  
Մեր այն հեռո՛ւ գյուղում ադամանդյա,  
Հրդեհվել է տան հետ, ավերվել է, ավա՛ղ,  
Ու էլ չկա՛ տունս, ճիչս չկա՛...

17-25.12.84, 17.12.93, Ստեփանակերտ

# ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ

...Եվ ինձ նախապես աչքեր պետք չէին՝  
իմ չունեցածը տեսնելու համար:

Երբ ես ծնվեցի՝ մերկ ամբողջովին,  
իմ մերկությունը  
Ծածկելու համար ձեռքեր փնտրեցի  
Առաջին ճիչիս արձագանքներում:  
Իսկ երբ որ փնտրած-դատած ձեռքերս  
Կարճ եղան մի քիչ,  
Ու չծածկեցին մերկությունը իմ՝  
Տխուր լաց եղա:  
Եվ տխրությունս երազներ ծնեց,  
Կարոտներ ծնեց մաքուր ու բարի,  
Կարոտով լցված մի մեծ սիրտ ծնեց  
Եվ իմ ուղեղում  
Միտքս սկսեց կաթ-կաթ ծովանալ...  
Եվ միտքս երկնեց...  
Եվ ես զգացի, որ ինձնից առաջ,  
Դարեր առաջ ու հազարամյակներ,  
Իմ նախնիները  
Ձեռքեր ունեին ծնկներին հասնող,  
Իսկ իմ ձեռքերը այնքան էին կարճ,  
Որ չէին ծածկում նույնիսկ... մերկություն...  
Ու ես լաց եղա...

Այդքան ժամանակ ինձ աչք պետք չէրավ,  
Բայց երբ առաջին քա՛յլս արեցի,  
Ես նո՛ր զգացի, որ ինձ աչք է պետք՝  
Առաջին քա՛յլս տեսնելու համար:  
Եվ ես քայլեցի՝ դարերի միջով...  
Իմ ճանապարհին  
Վերելքներ եղան ու նեո անկումներ,  
Ինչքան բարձրացա՝ այնքան կորցրի,  
Ինչքան կորցրի՝ այնքան երկնեցի,  
Այնքան կերտեցի...  
Ու մի այդքան էլ... նորի՛ց կորցրի:

...Ինձ աչքեր պետք չեն՝  
իմ կորցրածը տեսնելու համար:

09.05.83, Բաքու

Գրեց՝ Լուսինե Կարամյան

# ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԻՆ

Թափո՛րն է քայլում նեղլիկ փողոցով  
Ու քայլում եմ ես այդ թափորի մեջ՝  
Հետևում թողած... դիակներ անթիվ:

...Ունկերիս մեջ դեռ զնգում է զիլ՝զանգ  
Կանչը գուժկանի.  
- Հալիձորն ընկա՛վ... Հասի՛ր, Մխիթա՛ր...  
- Հալիձորն ընկա՛վ...  
- Չընկա՛վ: Մախեցի՛ն...

Թափո՛րն է քայլում լուսձ փողոցով,  
Հետևում՝ ավե՛ր, մահ ու տարածա՛մ:  
Խարույկի միջից չեն լսվում ճիչեր:  
Խարույկից առաջ՝  
Ողջախոհութ՛յան խորհուրդն է խորին.  
- Մեզ ների՛ր, եթե կարող ես, խանում...  
- Հասի՛ր, Մխիթա՛ր...

Լուռ է փողոցը,  
Լռին քայլում է փողոցը հոգնած,  
Գնում է հեռու,  
Գնում է՝ հասնի Սաթենկան դատին:  
- Հասի՛ր, Մխիթա՛ր...

- Դու մեզ զորավիգ չեղար, հա՞, Սո՛ւրբ Խաչ՝  
Պատին է զարկվում թասը գազազած:  
Թափո՛րն է քայլում  
Տխո՛ւր ու հոգնա՛ծ...

Ողբա՛, Բարխուդա՛ր, դու քո բախտը սև՝  
Դավաճան որդի սնելու համար,  
Որդի, որ երբեք Գոհա՛ր չդառավ...  
- Հալիձորն ընկա՛վ...

Թափո՛րն է քայլում...  
- Թե Սյունիքն, Արցախն առնի օսմանլուն՝  
Կտիրի և ողջ աշխարհին հայոց...  
Կտիրի՛: Բա ո՞նց...  
- Հասի՛ր, Մխիթա՛ր...

...Մահվա՛ն թափորն է քայլում փողոցով:

# ՆԱՄԱԿՆԵՐ ԻԶԱԲԵԼԱՅԻՆ

## Ա

Դու ասում ես, որ անունդ Իզաբելա է,  
 Դու ասում ես, որ ապրում ես Բեյրութում հեռու,  
 Դու ասում ես... Ու իմ դիմաց հառնում է կրկին  
 Չմոռացվող մի հի՛ն տեսիլք մաշված շորերում:

Դու ասում ես... Ու ցնցվում է տեսիլքը մեկեն,  
 Հերոսական մի հի՛ն երկիր կանչում է ինձ տուն,  
 Չկա յացած մի երազ է մարմրում իմ մեջ,  
 Ու ծուխն է ինձ խեղդում կրկին՝ կարոտներով գուր:

Դու ասում ես... Ու ելնում են տղաները ծուռ,  
 Ելնում են, որ հայ քարերը հայ մնան կրկին,  
 Ելնում են, որ վերակերտեն ավեր տունը մեր,  
 Որ մոռացվի՛ դանթեական առասպելն այն հին:

Սակայն կրկին արյան մեջ է Հայրենիքը մեր,  
 Կրկին մահվան մահձն է պատել անպարտ Արցախին,  
 (Դանթեական մղձավանջն է ահագնանում, Տե՛ր,  
 Տե՛ր, որտե՞ղ է մեր փրկութ՛յան հնա՛րը վերջին)...

...Դո՛ւ ասացիր, ես չուզեցի վիշտդ բորբոքել,  
 Դո՛ւ ասացիր, Իզաբելա, չուզեցի՛, ների՛ր...

23. 06. 91, Երևան

## Բ

...Բայց հին երկիրը, Իզաբելա, քո՛ւյր,  
 Երևի դու չես մտաբերում,  
 Այսօր Բեյրութն է քո... հայրենիքը  
 Ու դու Բեյրութ ես շտապում, տո՛ւն:

Իսկ անդ՝ արյունով ներկված դաշտեր են,  
 Փուշ ու տատասկ է միայն աճում,  
 Մշո դաշտի մեջ, Սիփանի լանջին  
 Դեռ բորենին է վայրահաչում:

Դու մոռացել ես, սակայն քո պապը  
 Քանի ապրում էր, քանի դեռ կար,  
 Իր գույգ լծկանը, իր արտն ու կալը,  
 Իր տունն ու սարը ո՞նց մոռանար:

Հիշում էր... Ցավը նրան խեղդում էր,  
 Բայց վերջին պահին, հիշո՞ւմ ես դու,  
 Երկիր էր կանչում, չէր ուզում մեռնել  
 Այդտեղ, այդ օտար, խորթ Բեյրութում:

Մեռավ... իրողովեց, մոռացվեց, դնաց,  
 Հիմա էլ ո՞վ է հինը հիշում...

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Դո՞ւ... Ոչ: Բեյրութն է քո հայրենիքը,  
Զէ՞ որ Բեյրութ ես շտապում դու...

01.07.91, Ստեփանակերտ

Գ

Քո՛ւյր իմ, Իզաբել, քո դաշնամուրը  
Մեղմ՝ նվագում է Բեթհովեն, Բախ,  
Իսկ արցունքներդ հնչյունների հետ  
Լուռ գլորվում են քեզնից անկախ:

Դու արտասովում ես և արցունքներդ  
Հատ-հատ ընկնում են քո աչքերից,  
Դու արտասովում ես և արցունքներիդ  
Ցավն ու թախիծն են պարուրում ինձ:

Դու արտասովում ես և արցունքներդ  
Հատ-հատ ընկնում են իմ մատներին,  
Մատներս ցավից անհույս այրվում են,  
Մատներս՝ ցավիդ անհույս գերին:

Դու արտասովում ես... Իսկ հին երկիրը  
Մշուշ է թվում՝ հի՛ն ու անցած,  
Բայց անցած ցավը դեռ կրկնվում է,  
Իզաբելլա՛, քո՛ւյր, խենթ ու տխրած:

... Բայց տխուր դեմքին քո, Իզաբելլա,  
Արև ու լույս եմ ես նշմարում,  
Եվ հավատում եմ, որ քո երազը  
Զի թաղվի ո՛չ մի գերեզմանում:

15.08.91, Ստեփանակերտ

## ՏԵՐՈՒԹՅՈՒՆ

Ես ապրում եմ այսօր տառապանքի հեքով,  
Տառապանքի հեքով, նաև՝ ցավի,  
Սակայն դեռ կան մարդիկ, որ ապրում են տենդով,  
Քարանձավի տենդով, քարանձավի՛:

Եվ իրենց իսկ կերտած քաղաքները մի օր  
Հիմնահատակ գուցե ավերեն,  
Բայց և գուցե թողնեն քաղաքակիրթ մարդկանց,  
Իրենք՝ անձավներում «տնավորվեն»:

Ու մոռանան լեզուն մարդկայինի, սիրո,  
Այրեն անձավային կյանքով վայրի...  
...Ավա՛ղ, դեռ կան մարդիկ, որ ապրում են տենդով  
Քարանձավի, այն հի՛ն քարանձավի:

1991, Ստեփանակերտ

## ՇԻՐԱԶԱԿԱՆՉ

Ղարաբաղը մորս կանչն է,  
ինձ է կանչում հույսով տրտում...  
Հովհ. ՇԻՐԱԶ

Ղարաբաղը մորդ կանչն էր՝  
Մա՛յր երգեցիր շարունակ:

Երկրի ցավը հոգուդ ճիչն էր՝  
Մա՛յր երգեցիր շարունակ:

Ավեր Անին քո թախիժն էր՝  
Մա՛յր երգեցիր շարունակ:

Ծանր ցավ էր քեզ Արցախը՝  
Մա՛յր երգեցիր շարունակ:

Ունկերիդ մեջ՝ «քելե, լաո»՝  
Մա՛յր երգեցիր շարունակ:

Ուշանո՛ւմ ենք, երթա՛նք, բա՛վ է:  
...Մա՛յր երգեցիր շարունակ:

1984, Ստեփանակերտ

## ԱՇԽԱՐՀԸՆԴԻԵՄ ՀԱՌԱՉԱՆՔ

Հովհ. ՇԻՐԱԶԻ հավերժահուր հիշատակին

Խիղճդ քնած մնաց, աշխա՛րհ, խիղճդ քնած մնաց՝  
Մասիսի հեզ բանաստեղծն էլ այս աշխարհից գնաց:

էլ քո ի՞նչն էր աստվածային, աշխա՛րհ, խիղճդ մեռնի՛,  
Հայոց հույսի աստվածային բանաստե՞ղծն էլ լուի:

էլ ո՞վ պիտի աշխարհասփյուռ մեր աղոթքը կարդա,  
Սիփան, Վարագ, Անի, Արցախ, Ղարս՝ ձեր հույսը վաղվա:

Վանա ծովից փչող հովից էլ ո՞վ պիտի շիկնի,  
Հայոց Պոմպեյ-Անիի սուրբ պարսպի տակ քնի:

էլ ո՞վ պիտի հեծնի հույսի իր ոգեղեն ալ ձին,  
Թե՛ չեմ մեռնի, մի՞նչ չհասնեմ իմ ազատված Մասիսին:

Գնա՛ց... Քնա՛ծ մնաց, աշխա՛րհ, խիղճդ քնած մնաց,  
Հայոց հույսի աստվածային բանաստեղծն է՛լ գնաց:

14.04.84, Ստեփանակերտ

Գրված է լատին գրով  
ԿՐԻՍՏԻՆԱ

## ՄԻՐՈՒՄ ԵՄ ՁԵՁ...

Փայտե ձիով... տիեզերքն էլ նվաճեմ...  
Հովհ. ՇԻՐԱԶ

Սիրո՛ւմ եմ ձեզ, աշխա՛րհ, մարդե՛րկ, բոլորե՛րդ,  
Բայց պաշտում եմ Շիրագին,  
Որ փայտե ձի հեծնեմ նրա պես մի օր,  
Ու հասնեմ իմ մուրագին:

Փայտե ձիով դադաթն հասնեմ Մասիսի,  
Սարիս գլխին կանաչեմ,  
Փայտե ձիով աշխարհներս բերեմ տուն,  
«Տիեզերքն էլ նվաճեմ»:

Ազգ իմ, սուրբ է սարդ Հայկիրդ նման սուրբ՝  
Երբ էլ լինի՛ կգա տուն,  
Սակայն չար է դեռ նաչարը աշխարհում,  
Իսկ թշնամիրդ՝ դեռ արթուն:

Գուցե մի օր կհաջողվի, կտեսնենք՝  
Մարս, հողերս գալիս,  
Բայց Մասիսի գլխին բույն է դրել բուն,  
Ու դեռ... մատ է թափ տալիս...

28.03.85, Ստեփանակերտ

## ՄԵՆՔ

Մենք կարգին լեզվանի՛ չէինք,  
Բայց կարգին... համեստ ձևացանք,  
Ի՛նչ էր հին կյանք՝ ապրուստը մեր,  
Հին կյանքով ապրել՝ թերացա՛նք:

Ընտրեցինք ուրի՛շ ճանապարհ,  
Երկինքվե՛ց մեր բուռնցքոգին,  
Բայց հազի՛վ հասկացար, աշխա՛րհ,  
Թե՞ դեռ չես հասկացել կարգին:

Մենք կարգին անխելք էլ չէինք,  
Բայց կարգին... հիմար ձևացանք,  
Մեր դարում՝ կոտորած, ավե՞ր...  
Գաղթական ու գաղթ էլ տեսանք:

Եվ՝ ինչպե՞ս մենք այստեղ, այսօր  
Շրջվենք ու... միջնադար գնանք:  
...Մենք կարգին ձևավոր էինք,  
Ո՞նց կարգին... անձև ձևացանք:

1989, Ստեփանակերտ



# ԺԱՄԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Արցախյան պատերազմի նահատակ  
Արթուր ԴԱՆԻԵԼՅԱՆԻ հիշատակին



ութը թանձրացավ...  
- Դե՛ լավ, ես գնամ, - ասաց աղջիկը:  
- Մի քիչ էլ մնա, - թախանձեց տղան  
Ու բռնեց ձեռքը, - մնա՛, խնդրո՛ւմ եմ...

Մութը թանձրացավ...  
Հեռվում, ինչո՞ր տեղ, ծղրիզը երգեց,  
Մի կոտորած լուսին  
Քարափի գլխից ձորը գլորվեց:  
- Մնա՛, խնդրո՛ւմ եմ...

Քամին չէր լռում, չէր քնում քամին:  
Թվում է՝ քամու քունը փախել է՝  
Պահվել խավարում,  
Քամին ի՞նչ անի, որտե՞ղ որոնի...  
Քնել է ուզում աղջիկը ասես...  
- Մնա՛, խնդրո՛ւմ եմ...

Տղան չոյում էր վարսերն աղջկա:  
Աղջիկը խոնարհ գլուխը կախել,  
Չգիտեր գնա՞ր, չգիտեր մնա՞ր...  
Հեռվից ծղրիզի երգն աղերսում էր.  
- Մի գնա, մնա՛...

Քարափի գլխից ձորը գլորված  
Լուսինը կարծես ձորից կանչում էր.  
- Մի գնա, մնա՛...  
Քամին չէր լռում.  
- Մնա՛, - խնդրում էր:

Տղան չէր խոսում, տղան լռո՛ւմ էր...  
Աղջիկը խոնարհ գլուխը կախել,  
Չգիտեր գնա՞ր, չգիտեր մնա՞ր...  
- Մնա՛, խնդրո՛ւմ եմ...

...Աղջիկը լուռ էր:  
Հանկարծ... ի՞նչ եղավ՝ դեմքը վառվում էր.  
- Թող, ի՞նչ ես անում...  
Տղան կանգնել էր մեղավորի պես՝  
Շրթունքախառը սերը շուրթերին:  
Տղան լռո՛ւմ էր...

Աղջիկը փախավ եղնիկի նման:  
- Մնա՛, խնդրո՛ւմ եմ, - աղերսեց տղան:  
Խավարը նրան կլանեց խկուլյն...  
Ինչո՞ր տեղ իսկույն դարպասը ճռռաց.  
- Չմնա՛ց,  
Գնա՛ց...

10.04.92, Կոճորոտ

Գրական խորհուրդ  
ԿՐԻՍՏԻՆԵ  
ԿՐԻՍՏԻՆԵ

## ԼԵՌՆԵՐԸ

Ես ձեռքս պարզում եմ դեպի  
Լեռներն իմ՝ խրոխտ, աներեր,  
Ու իմ դեմ հառնում է հուլյզից,  
Երազից ծնված մի սեր...

Ես ձեռքս պարզում եմ դեպի  
Բարձունքը մարդկային հոգու  
Ու տեսնում դարերի խրթին  
Մրմունջը շուրթերին դաջված  
Ու տանջված, տառապած մեկին:

Դարերը անցել՝ գնացել՝  
Տանջանքն է սակայն մնացել,  
Ու դաջված մրմունջն անմեկին...

Ես ձեռքս պարզում եմ նորից  
Դեպի իմ հանգիստ լեռները,  
(Լեռներ, որ ելել են հիմա՝  
Մինչև վերջ պայքարեն պիտի),  
Թվում է՝ թախծում են նրանք,  
Երազում խոհերով խոկուն,  
Եվ անցած՝ գնացած դարերի  
Արցունքն ու մրմունջն են ջոկում...  
08.07.92, Ստեփանակերտ

## ԵՍ ԿՈՒՋԵՒ ԼԻՆԵԼ...

Արցախյան պատերազմի նահատակ  
Գազիկ ՊԱՏՎԱԿԱՆՑԱՆԻ հիշատակին

Ես կուզեի լինել մեր քարերի նման,  
Մեր քարերի նման հաղթ ու կանգուն,  
Լինել կուպիտ, անտաշ ու քարեղեն... հմա,  
Քարերի պես քնած, նաև ... արթուն:

Քարերի պես մամուած՝ իմաստնացած խոհով,  
Քարերի պես խոնարհ, նաև... հպարտ,  
Հողմերի դեմ ելնել աներկյուղ ու... ահով,  
Կովել՝ հաղթել, մեռնել՝ մնալ... անպարտ:

Ես կուզեի լինել մե՛ր քարերի նման...  
08.07.92, Ստեփանակերտ

## ՋՐՈՒՅՑ Պ.ՍԵՎԱԿԻ ԴԻՄԱՆԿԱՐԻ ՏԵՏ

Ես կանգնել եմ կրկին քո պատկերի առաջ  
Ու դու կրկին իմ դեմ քո մեծ սիրտն ես բացում,  
Դու խոսում ես ինձ հետ անմահների ձայնով,  
Անմահների սրտից ինձ հետ խոսում ես դու:  
Ու տանում ես դու ինձ ճանապարհով սիրո,  
Քո սիրո հետ նորից լուռ մտորում,  
Դու դառնում ես հառաչ, Կոմիտասյան մորմոք,  
Վերջում... լո՛ւյս ես դառնում,  
Որ... լո՛ւյս լինի...

Մինչդեռ հեռվից-հեռու՝ մշուշների միջից  
Ժպտում են ինձ հպարտ Մասիսները,  
Ու խշշում են հանդարտ քո հայացքի ներքո  
Մեր նախրյան կանաչ բարդիները:

(Զարմանալի բան է,  
Այս ե՞րբ, ինչպե՞ս եկավ  
Ու այս ինչպե՞ս կիսվեց գիշերը)...

Հրաժեշտ եմ տալիս ու հեռանում կամաց:  
...Գուցե քնով անցնեմ,  
Կամ էլ՝ մնամ քնած,  
Ու քեզ վաղը կրկին այցի չգամ:  
Այնժամ իմացիր, որ էլ ես... չկամ:

Իսկ դո՞ւ,  
Դու կա՛ս միշտ էլ,  
Ու կլինես դարե՛ր,  
Դու մեր հայոց բարդի, հա՛յ Մասիսներ...

23.03.84, Ստեփանակերտ

## ՊԱՏԳԱՄ ՈՐԴՈՒՍ

Սամվելիս

...Իսկ քո ծննդյան վայրկյանին, տղա՛ս,  
Մորդ սիրտն է լուկ խինդից վեր թռել,  
Ուստի՝ պարտք ես դու ողջ կյանքում նրան,  
Որ քեզ ապրելու խի՛նդ է պարզվել:

Եվ ինչ էլ լինի՝ երբեք չթողնես,  
Որ արցունքոտվեն մորդ աչքերը,  
Իմ փորձով եմ քեզ պատգամում, տղա՛ս,  
Ծա՛նր են, հավատա՛, մոր արցունքները...

13.02.93, Ստեփանակերտ

# ՏՐԻՈԼԵՏՆԵՐԻ՝ ՊԱՐԵՏԱՅԻՆ ԺԱՄԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

1

Գիշեր է՝ տասն անց տասս, ուշ է,  
Խախտված է ժամը պարետային,  
Պարետը «գիտե՞» այդ մասին,  
Գիշեր է՝ տասն անց տասս, ուշ է:

Քաղա՛ք իմ, քո օդը մաքուր  
Տասը ըոպեով «չատ» շնչեցի,  
Գիշեր է՝ տասն անց տասս, ուշ է,  
Խախտված է ժամը պարետային:

2

Հիմա՛ր է հիմա գիշերը,  
Մենա՛կ եմ հիմա փողոցում,  
Կրծում է հոգիս ու խոցում,  
Հիմա՛ր է հիմա գիշերը:

Կրծում են մարմինս ու անցնում,  
Խոցո՛ւմ են հոգիս հուշերը,  
Հիմա՛ր է հիմա գիշերը,  
Մենա՛կ եմ հիմա փողոցում:  
1991, Ստեփանակերտ

## ԱՇՆԱՆԱՅԻՆ ՊԱՏԿԵՐ

Զափչփում է խոնավ ու թաց փողոցները  
Խելառ քամին,  
Իսկ ծառերը նրա շնչից զգաստացած,  
Լուռ,  
Ամոթխած հարսի նման  
Զկամորեն մերկանում են:

Արևը լուռ հեռանում է կիզակետից՝  
Սովերները երկարում են:  
Կանգնել մայթին՝  
Սրթսրթում են ծառերը մերկ,  
Ու ծածկվում են աղձամուղձի շղարչի տակ  
Շենք ու փողոց,  
Այգի ու մայթ...

02.01.85, Ստեփանակերտ

# ՏԵՈՒՐ ՆՈՐ ՏԱՐԻ

Եղբորս՝ Անդրանիկին

Կատել է սիրտս մի հի՛ն դառնություն ու քե՛ն,  
 Եկել է չոքել է բակում Նոր տարին արդեն:  
 Եկել է չոքել, ուր-որ է՝ դուռս կբախի,  
 Սամվել տղաս կբացի դուռն առանց վախի:  
 Եկել է չոքել է, սակայն եղբայրս չկա:  
 Բայց թվում է՝ ուր-որ է, հենց հիմա կգա:  
 Կգա ու ճիշտ վայրկյանին դուռս կբացի,  
 Եվ կարոտած տանս հետ կնստի հացի:  
 Կգա: Սակայն անցնում է վայրկյանը նշված,  
 Հին է դառնում նոր տարին, տխո՛ւր ու... անցա՛ծ:  
 Ու չի գալիս եղբայրս, դառնությո՛ւն է ծով:  
 Լուռ անցնո՛ւմ են օրերս՝ տխուր ու մոլոր:  
 Լուռ անցնո՛ւմ են օրերս... Սիրտս ցա՛լ է գուր,  
 Ուրախանալ չի՛ թողնում տխրությունս լուռ:

01.01.93, Ստեփանակերտ

# ՄԻ ԿՅԱՆՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Արցախյան պատերազմի նահատակ  
Արամայիս ԳՐԻԳՈՐՅԱՆԻ հիշատակին

Ինչ աքորըր կկանչեր՝ ոտքի վրա էր արդեն,  
 Ձին հափ գցած կբերեր Շենին աղբրում ջրելու,  
 Տանձենու տակ Եվայի հանդում նա ձին կկապեր,  
 Հետո անտառ կգնար լոբու ճիպոտ քաղելու:

Հետո խաղով կտարվեր՝ կմոռանար ամեն ինչ,  
 Նորից նրան կկանչեր մայրը՝ մենակ ու հոգնած,  
 Խաղը իսկույն կթողներ, որ գնար մոր հետ ցախի,  
 Թոնրի շրթին կշիկներ հետո ինչպես... թոնրահաց:

Սակայն մի օր, մի սև օր կախվեց օդում լուրը չար,  
 Կախվեց օդում ու մնաց ու քայլերը երերուն  
 Երկար ու լուռ ծալվեցին, գիշեր-ցերեկ, անընդհատ,  
 Հոր հետ տավարն էր քշում ու չէր հոգնում քայլելուց:

Ու չէր հոգնում քայլելուց: Ու քայլում էր նա տխուր,  
 Խաչենազետը անցավ՝ լույսը դեռ լավ չբացված,  
 Լքված գյուղը ցավ էր լուռ, որ սեղմվել էր կոկորդում.  
 - Մնա՛ց Անուշ տանձենին, Խաչունց աղբյուրը մնա՛ց...

...Բակ էր իլեկ քրոջ հետ՝ քաղաքի հետ արթնացած,  
 Երբ գործարկվեց թշնամու հրետանին կատաղի,  
 Ու չզգաց էլ թե արկի բեկորից ո՛նց ընկավ ցած:  
 ...Իսկ աչքերում Ալվարդի՝ շունչն էր եղբոր ծիծաղի:

23.01.93, Ստեփանակերտ

ԳՐԱԳՐԱԿԱՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ

## ՆՎԱԳՆԵՐ ԱՐԱՐՎՈՂ ԼՈՒՅՍԻ

ալիս է գիշերը մեղմ իկ,  
Գիշերը անձրև է մաղում,  
Ու ձորի ուռենու ճյուղին  
Անձրևը շողում է շաղով:

Իսկ քամին՝ փոթորկված, հուզված,  
Ուռենու խոհերն է խառնում,  
Ուռենին՝ թեև բզկտված,  
Բայց հողին ամուր է կանգնում:

Դանդաղում, քնում է քամին,  
Ուռենին ննջում է հանգիստ,  
Բայց էլի անձրևը մաղում,  
Գիշերը լալիս է մեղմ իկ:

Գիշերվա քողի տակ, մթնում  
Քնել են աղջիկն ու տղան,  
Ինչ որ է լույսը արարվում,  
Որ նրանք հանկարծ... չարթնանան:

27.01.83, Ստեփանակերտ

## ԱՌԱՋԻՆ ՍԵՐԸ

Առաջին սերը միշտ լո՛ւռ է լինում,  
Քնքո՛ւչ է լինում սերը առաջին,  
Առաջին սերը տխո՛ւր է լինում,  
Ու հո՛ւչ է մնում սերը առաջին:

Առաջին սերը մաքո՛ւր է լինում,  
Ազնիվ, անարատ՝ սերը առաջին,  
Առաջին սերը թաքո՛ւն է լինում,  
Ազնիվ ու... հպարտ՝ սերը առաջին:

...Միրո՛ւմ են իրար ծառերն ու քամին,  
Ու նրանց սերը միշտ լո՛ւռ է լինում,  
Արևը՝ հողին, տերևը՝ ծառին  
Միշտ էլ առաջին սիրով են սիրում:

Լինում է՝ հաճախ լքում են իրար,  
Հողին՝ արևը, ծառին՝ տերևը,  
Բայց նրանց միշտ էլ դարձի է բերում  
Ու կապում իրար՝ առաջին սերը...

Առաջին սերը միշտ վե՛հ է լինում,  
Անկեղծ, անկաշառ՝ սե՛րը առաջին...  
...Առաջին սիրով ապրե՛ք միշտ կյանքում,  
Ու սիրե՛ք իրար սիրո՛վ առաջին:

## ՋԱՆԳՅՈՒԼՈՒՄՆԵՐ

Ռուզանին

Այ տղա, բարի՛ տղա,  
իմ սիրած սարի՛ տղա,  
Քո սիրուց այրվ՛ում եմ ես,  
Մի՛ գնա, արի՛, տղա՛...

- Այ աղջիկ, անո՛ւշ աղջիկ,  
իմ քնքուշ՝ անո՛ւշ աղջիկ,  
Գնում եմ, իմ սեր՝ սրտից  
Դու պահիր մի հո՛ւշ, աղջի՛կ:

Գնում եմ՝ լաց չլինես,  
Գիշերը բաց չլինես,  
Իսկ երբ որ կրկին ետ գամ՝  
Արցունքից թա՛ց չլինես:

Լա՛վ եղիր ու տա՛ք... եղիր,  
Արևից շիտա՛կ եղիր,  
Երբ կրկին գի՛րկդ գամ ես՝  
Իմ կրծքին կրա՛կ եղիր...

10.08.82, 10.06.83, Ստեփանակերտ

## ՍԻՐՈ ՏՈՂԵՐԻՑ

Մ՛տ սիրելի՛, իմ լա՛վ Ռուզան,  
Ի՞նչ ցանկանամ քեզ այսօր,  
Ասեմ՝ քո լավ օրե՞րը գան,  
Բարի լուրեր նորից՝ ո՞ր:

Թե՞ պարզապես նստեմ քո դեմ  
Եվ քո առաջ, հիացքով,  
Իմ երազի լույսը փռեմ,  
Ու... աչքերին նայեմ քո:

Թո՛ղ ամեն ինչ, նստի՛ր ինձ մոտ,  
Խոսքս թող քիչ երկարի,  
Ու մի՛ մնա հեզ կամ երկչոտ,  
Վատ մտքերին միշտ գերի:

Սիրի՛ր կյանքը՝ պարզ, թե անթո՛վ,  
Սիրի՛ր աշխարհն ու մարդկանց,  
Թե մտո՛ք են նրանք կեղտոտ՝  
Դու մաքրու թյո՛ւն տուր նրանց:

Մե՛ծ է կյանքը... Թող անհառաչ  
Ապրես օրերդ դալիք...  
Կոհակվում է, տե՛ս, քո առաջ  
Սիրտս ալիք առ ալիք...

07.11.83, Ստեփանակերտ

Գրված է լույսին  
ԿԵՂԵՆԻ  
ԿԵՂԵՆԻ

## ՊԱՊԻՍ ՀԵՔԻԱԹԸ

Պապ սիրում էր հեքիաթներ պատմել,  
Հայրս է՛ր սիրում՝ բնավ հեքիաթներ:  
Իսկ երբ մեծացա՝ պապս էլ չկար,  
Ու ես մնացի հեքիաթի ծարավ...  
...Եվ եղեմական ծաղիկը ձեռքի՝  
Հեքիաթ-գրքերում լուռ թափառեցի:  
Փնտրեցի անվերջ հավքին Հագարան,  
Որ տանեի իմ սիրած աղջկան:  
Շրջեցի անհույս սև-մուխ աշխարհում,  
Ուր գարուն էր միշտ ու միշտ... սև շորում:  
Տեսա դեերին ես յոթգլխանի,  
Աղբյուրը փակող արնոտ վիշապին:  
Ու հանդիպեցի երբ ծարավ մարդկանց՝  
Խղճահարվեցի, խղճացի նրանց:  
Փրկեցի աղբյուրն արնոտ վիշապից,  
Գարունն ազատվեց իր սև շղարչից:  
Ու դեռ շատ երկար կթափառեի,  
Սակայն լույս աշխարհ պիտի դուրս գայի:  
Եվ դուրս կգայի, իրոք, լույս աշխարհ,  
Եթե ձերմակին նստեի միայն:  
Խոյերը խելառ դեռ կովում էին,  
Երբ ընկա մի կերպ ձերմակի մեջքին...  
Ու... տուն հասա ես առանց հեքիաթի,  
Զգտած կորած հեքիաթն իմ պապի:

## SUSU

Տատս իր վերջին օրերն է ապրում,  
Տատս մահվան հետ արդեն հաշտվել է,  
Տեսնես մանկության օրե՞րն է հիշում,  
Թե՞ պատանության լույս գիշերները:  
Կամ գուցե հո՞րն է նորից վերհիշում,  
Մորը չի հիշի, մայր չի տեսել նա,  
Գուցե եղբո՞րը, քրո՞ջն է հիշում,  
Որոնցից ոչ ոք այլևս չկա:  
Թե՞ ամուսնուն է նորից վերհիշում,  
Բարի, մարդասեր այն խաչունց Անդրին,  
Ով ազնիվ գործով հայրենի գյուղում  
Վաղուց է կերտել իր վեհ կիսանդրին:  
Ու շնջում է ծանոթ անուններ,  
Որոնք եղել են ու հիմա... չկան:  
Շնջում է լուռ, նախազգում նաև,  
Որ մահը շուտով իր դուռն էլ կգա:  
...Տատս իր վերջին ժամերն է ապրում,  
Տատս աշխարհից պիտի հեռանա...  
Ես այդ կորուստը լուռ եմ տագնապում,  
Ես այդ կորստին ինչպե՞ս դիմանամ:



## ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՅՈՒՆ

Քանաստեղծություն գրելուց առաջ  
Ով իմ կրակին ոչ թե ջուր,  
Այլ ածուխ է լցնում՝  
Նրա դռանն եմ,  
Նրա գերին ու խոնարհ ծառան եմ:

Բանաստեղծություն գրելուց հետո  
Մարած կրակ եմ:

Բայց և՛ անթեղված պողերիս ուժով  
Ջերմացված սրտին  
Ու նրա բախտին տերտիրակալ եմ:

Իսկ թե ինչոր տեղ  
Ինձ չեն ենթարկվում խոհերս հոգնած՝  
Ես... բռնակալ եմ:  
02.01.85, Ստեփանակերտ

## ՀՍՎԱՍ

Ես սիրում եմ հոգնած քայլել ճամփաներով:  
Բայց թե մի օր հանկարծ ընկնեմ ճամփակեսին,  
Ես կձգտեմ կանգնել  
Ու մահանալ... կանգնած:  
Եվ, փույթ չէ,  
Թող ոտքերս մի պահ կանգնեն:  
Քանզի գիտե՛մ, գիտե՛մ,  
Որ քայլերս պիտի՛ շարունակվեն...  
13.10.84, Ստեփանակերտ

# Զայեւների Հիմնակ

## ԳԱՋԵԼ ՄՈՒՏՔԻ

Դուռը բաց է, և, ահա, լուռ մտնում եմ ներս,  
Սիրահարված քո ոգուն, սիրահարված քեզ:

Դեռ ասում են՝ դու քո դարն ապրել ես վաղուց,  
Եվ հիմա նոր օրերին էլ պետքական չես:

Այլևս չես թողում դու սրտերը մարդկանց,  
Իբր՝ էլ այն չես հիմա, իբր՝ դու այլ ես:

Իբր՝ էլ չես այրում դու, կրակ չունես էլ,  
Երախտամոռ են նրանք, դու քո բա՛խտը տես:

Կայիր դու մինչև Տերյան, Չարենց ու Շիրազ՝  
Այսօր պիտի չլինե՞ս ի՛նչ միամիտն ես:

Ինչքան ուզում են՝ ասեն՝ հնացե՛լ ես դու,  
Ապրի՛ր նախկին քո կյանքով, նոր օրերի կես:

Աշխարհի հետ սիրասթափ՝ նոր սեր կապիր դու,  
Ներիր նրան ու մնա, նա կսիրի՛ քեզ:

23.01.86, Ստեփանակերտ

## ԳԱՋԵԼ ԲՈՂՈՔԻ

Բո արածը քեզ դո՞ւր եկավ, Քրիստո՛ս,  
Իմ եղբորը դու ո՞ւր տարար, Քրիստո՛ս:

Ի՞նչ խաղ էր սա, որ խաղացիր իմ գլխին,  
Թե՞ իմ եղբոր կարիքը կար, Քրիստո՛ս:

Թե՞ իմ եղբոր պատկերն էիր ուզում դու  
Դարձնել պարզ ու աստղանկար, Քրիստո՛ս:

Ու նայում է ինձ իր պայծառ նկարից,  
Նկա՞ր, չէ, դա արցունքս է պաղ, Քրիստո՛ս:

Արցունքս է դա՛ կաթիլ-կաթիլ ծովացած,  
Պիտի խեղդի ծովն այդ քեզ, գա՛ռ, Քրիստո՛ս...

11.07.94, Ստեփանակերտ

## ԳԱՋԵԼ ՄԱՅՐԻԿԻՍ

Սիրով ու քնքշությամբ

Մայր, կուզեի եղեմի հրաշքները բերել քեզ,  
Տունդ լցնել երազով ահագնացող ծովի պես:

Թեկուզ հոգնած ու հլու, բայց համարձակ, բայց համառ՝  
Դեմ հանդիման կանգների հորձանքների չար ու... հեզ:

Իսկ դու՝ համակ տխրություն, համակ տքնանք՝ ժպտայիր,  
Ու չերևար քո դեմքին արտասուքի շիթը կեզ:

Ես կուզեի, որ քեզ հետ լիներ երազդ կյանքում,  
Որ քո որդին քո գրկում վերջին իր շունչն էլ տար քեզ:

Բայց աղմկում են էլի ալիքները փոթորկի,  
Կրկին ոտքի են ելնում ավերելու սիրտդ, տե՛ս:

Ու մոլորվել եմ այնպես, որ չգիտեմ ինչ անել,  
Փոթորկի դեմ հանդիման քեզ ո՞նց մենակ թողնեմ ես:

...Մի՞թե գնալս ես ուզում, բայց որտեղ էլ ես լինեմ,  
Թեկուզ վերջին իմ շնչում՝ պիտի կանչեմ էլի...քեզ:

18-20.11.85, Ստեփանակերտ

## ԳԱՋԵԼ ՍԻՐՈ

Կնոջս՝ Ռուզանին

Նորից գարուն էր ու նորից սեր էր,  
Սիրո բարի լույս, սիրո գեղեցիկ էր:

Մինչ կմտնեիր հյուղակը սրտիս՝  
Երջանկությունս ամպից էլ վեր էր:

Վսեմ դերերից անմասն էի ես՝  
Իմը՝ մերժվածի ու ցավի դեր էր:

Մինչև քո գալը անհույս էր սիրտս,  
Բայց սիրտս նաև հավատի տեր էր:

Որ գալու ես դու մի գեղեցիկ օր՝  
Հավատի հունդն այդ արգասաբեր էր:

Դու եկար մի օր: Թախժաբույր տանս  
Երջանկությունս արդեն տանտեր է:

Եվ բարուրում ես անմեղությունս,  
Իսկ ցավս արդեն յոթ սարից էլ դեն է:

20.01.87, Ստեփանակերտ

Գրված լույսով  
ԳՐԱՆՈՒՆԻԿ

## ԳԱՋԵԼ ՊԱՊԻՍ

Նա մեծ ապա-պապ խաչունց Անդրին էր,  
Ականջը՝ ձայնի, աչքը՝ հանդին էր:

Նա հանդի կանչը զգում էր անձայն,  
Գնում էր ճամփան հողի կանչին էր:

Բանում էր հանդում մինչև ուշ գիշեր,  
Մենակ չէր, ընկեր կար՝ Ծիր-կաթինն էր:

Լինում էր՝ հոգնած քնում էր հանդում,  
Իսկ թոռան աչքը միշտ էլ ճամփին էր:

Ե՞րբ կգա պապը, որ հանդ գնան, բայց  
Թոռան երազը հանդից անդին էր:

Պապը գալիս էր, լցվում էր թոռը,  
Բայց հանդ չէր գնում, հանդը... պապինն էր:

...Պապը աշխարհում այլևս չկա,  
Թոռը մեծացել, աչքը... հանդին է:

28.01.86, Ստեփանակերտ

## ԳԱՋԵԼ ՏՍՏԻՍ

Իմ հուշից քո անգո, ես մըսում եմ, տա՛տ, ների՛ր,  
Տե՛ս, կրկին ոտքդ եկել՝ աղերսում եմ, տա՛տ, ների՛ր:

Խոս է բուսնում քո շիրմին, այնտեղ, հեռո՛ւ մեր գյուղում,  
Իսկ ես այստեղ՝ քաղաքում, լուռ տանջվում եմ, տա՛տ, ների՛ր:

Մոռացել ես երևի չարություններս բոլոր,  
Դու ներող ես եղել միշտ, այս անգամ էլ, տա՛տ, ների՛ր:

Ասում էիր՝ կզղջաս, երբ մեծանաս դու մի քիչ,  
Մեծացել եմ արդեն, տես, ու զղջում եմ, տա՛տ, ների՛ր:

Հաճախ ցավ եմ պատճառել, հաճախ էլ՝ չեմ լսել քեզ,  
Հիմա այրող քո ցավից լուռ այրվում եմ, տա՛տ, ների՛ր:

Մնացել է քեզնից արդ անշիրմաքար մի շիրիմ,  
Ես ինձ ներել չեմ կարող, դո՛ւ ինձ գոնե, տա՛տ, ների՛ր...

08.03.86, Ստեփանակերտ

## ԳԱՋԵԼ ՄԵՂՍԱԿԱՆ

**Ս**մեն անխիղճ չարի համար մեղավորը մե՛նք ենք,  
Մեր այն խռով սարի համար մեղավորը մե՛նք ենք:

Ավերվել են մեր տները, մեր քարերը խոսուեն,  
Ամեն կորած քարի համար մեղավորը մե՛նք ենք:

Նոր դավեր են նյութվում հիմա, նոր տներ են քանդվում,  
Այս մոլեգնած դարի համար մեղավորը մե՛նք ենք:

Նոր օրերի հովով տարված, նոր անուրջներ երգող  
Անսեր երգի, լարի համար մեղավորը մե՛նք ենք:

Մեղավորը մենք ենք, որ էլ քամին սեր չի հուշում,  
Այլ դավ: Ու այդ դավի համար մեղավորը մե՛նք ենք:

Մե՛նք ենք: Մեղավո՛ր ենք: Դեմ չենք կանգնում չարին,  
Չարի հարբած գավի համար մեղավորը մե՛նք ենք:

Հավատում ենք մինչև անգամ չարի բերած... յավին,  
Մեր այս «փոքրիկ» բացի համար մեղավո՛րը... Մե՛նք ենք:

10.03.86, Ստեփանակերտ

## ԳԱՋԵԼ ՊԱՏՐԱՆՔԻ

**Է**լ չի կանչում ինձ Դեզդնգան ձորը  
Եվ իմ մանկուլթյան սիրած աղբյուրը:

Մի վերջին ճիգով քարերը լիզել,  
Ու... կտրվել է մեղրահամ ջուրը:

Լուռ քարացել է քարերի վրա՝  
Քարերին թառած ջրի փրփուրը:

Անհույս նայում եմ լռած աղբյուրին,  
(ինչ ծա՛նր է նրա այդ լուռթյունը):

Աչքերս են հանկարծ ծանրանում տխուր,  
Ու... ջուր է դառնում աչքերիս հուրը:

Եվ արթնանում են քարերը կարծես՝  
Կոտրում աղբյուրի լուռ քարուլթյունը...

Գաղտնի գրած

ԱՐԴՄԵՆ  
ԱՐԿԻ

## ԳԱՋԵԼ ՄՏԵՐՄԱԿԱՆ

Համո ՍԱՀՅԱՆԻՆ

✠ Եգ Որոտանն է տվել աշխարհին,  
Մնվել եմ ասիին ես իմ Թարթառի:

Մեր ծնունդին նույն նվազն է հնչել՝  
Միևնույն լարից միևնույն թառի:

Ես ապրում եմ իմ Արցախի սիրով,  
Դու՝ քո սիգապանծ Սյունյաց աշխարհի:

Ու նույն ոգով դեռ երգեր ենք գրում,  
Ես՝ լույս հավատով իմ լուսաշաղի,

Դու՝ իմաստնացած քո ոսկե աշնան  
Տաք կարոտներով լի մթնշաղի...

03.07.82, Ստեփանակերտ

## ԳԱՋԵԼ ՑԱՎԻ

Ընկերոջ՝ Պարզեին,

մի տխուր առիթով

Ես երանության մեջ էի երեկ,  
Իսկ իմ ընկերը՝ վշտի մեջ, երեկ:

Ու չգիտեի՝ հրճվե՞մ ինձ համար,  
Թե՞ այրվեմ նրա կրակում, երեկ:

Ես չգիտեի: Ու տալիս ծափին՝  
Ընկերս վշտում այրվում էր երեկ:

Ես դեպի նրա կրակը գնում,  
Գնում, ետ էի ընկրկում երեկ:

Քամին փչում էր, պողերս խառնում,  
Կրակս... կարգին «հրճվում էր» երեկ:

Բայց հանկարծ նորից մարում էր մեկեն,  
Ու ծուխն էր խեղդում կոկորդս երեկ:

...Եվ ոչ այրվեցի մինչև վերջ այդպես,  
Ոչ վերագտա հանգիստս երեկ:

29.03.86, Ստեփանակերտ

## ԳԱՋԵԼ ԿԱՐՈՏԻ

**Է**լ չկա, էլ չի կանաչում մեր բակի կանաչ թթենին,  
Մարել է ու էլ չի կանչում մեր բակի կարկաչ թթենին:

Մարել է՝ անհույս-անհավատ, մեր հավատն ու հույսն էր  
կյանքի,  
էլ չկա, էլ չի հառաչում մեր բակի հառաչ թթենին:

Թթենին մեր խեղճ ու կրակ՝ թողել է մեզ խեղճ ու լքված,  
Թողել ու էլ չի շառաչում մեր բակի շառաչ թթենին:

Կարոտներն ու սեր է թողել, մեր կարոտն ու սերն էր  
սակայն,  
Մարել ու էլ չի ճաճանչվում մեր բակի ճաճանչ թթենին:

Թողել է հույզեր անանուն, թողել է՝ ինչ թանկ էր իրեն:  
Թողել ու... էլ չի ճանաչվում մեր բակին ճանաչ թթենին:

...Թթենու մի շիվ է այսօր կանաչում նորից մեր բակում:  
Նա հույսի շողն է իմ տոհմի՝ հուշերիս կանաչ թթենին:

01.09.81, Ստեփանակերտ

## ԳԱՋԵԼ ՏԵՐՈՒԹՅԱՆ

Արթուր ՎԱՐԴԱՆՅԱՆԻ հիշատակին

**Ա**կնթարթներ կան քո կյանքում, որ ներկա եմ եղել,  
Կան էլ՝ ինչ-ինչ պատճառներով բացակա եմ եղել:

Հետո ինքս ինձ քարին տվել, տառապել եմ երկար,  
Քանզի ցավիդ հոգով, տենդով միշտ վկա եմ եղել:

Հետո եկել՝ հողակոշտդ ես գրկել եմ ամուր,  
Հողաչերտիդ՝ մի տխրության հուշաքար եմ եղել:

Թեև դաժան ճակատագրի մռայլ քմայքներին  
Ճարահատյալ իմ տխրությամբ միշտ անճար եմ եղել:

1990, Դուրանլար

Գրություն

ԳՐԱՆՈՒԹՅԱՆ

## ԳԱՋԵԼ ՈՐՈՆՄԱՆ

Քու առաջվա նման իմ հույզերն են հորդուն,  
Հոգուս լույսը վառող իմ սեր, երազ ու տուն:

Անըջել եմ հույսով անքուն կարոտը քո,  
Կարոտ-երազ տեսել կարոտ-աչքով անքուն:

Ու միշտ որոնել եմ, որոնել եմ երկար,  
Բայց գտել եմ միայն քեզ իմ... Հանգ ու վանկում:

27.09.81, Ստեփանակերտ

## ԳԱՋԵԼ ՄՈՌԱՑՄԱՆ

Քու՝ հի՛ն հուշ սեր իմ հրկեզ, կարո՞ղ եմ քեզ մոռանալ,  
Դու՝ իմ ամբողջ ու իմ... կես, կարո՞ղ եմ քեզ մոռանալ:

Այցելում ես, ի՛մ տեսիլք, ու լուսաստղի հետ չքվում  
Դու չխամբող հուշի պես, կարո՞ղ եմ քեզ մոռանալ:

Մոլորվե՛լ եմ աշխարհի բավիղնեքում քարքարոտ,  
Ինձ տուն կանչող իմ հյուղն ես, կարո՞ղ եմ քեզ մոռանալ:

Ա՛յլ է հիմա իմ ուղին, սակայն քայլերս երեք  
Որոնում են կրկին քե՛զ, կարո՞ղ եմ քեզ մոռանալ:

Հիմա ուրիշ մի սեր է քո հին հուշը օրորում,  
Որ մոռանամ հեքե՛ս, կարո՞ղ եմ քեզ մոռանալ:

Ա՛յլ է հիմա իմ ուղին: Եվ օրերում իմ այս կեց  
Մոռանո՛ւմ եմ արդեն, տես: Կարո՞ղ եմ... Քե՞զ... Մոռանա՞լ...

12-13.11.85, Ստեփանակերտ



# 1988, Փետրվար 27-29 ՊՈՒՆՄ

Սուսանգյուրթյան ցեղասպանութիւնի զոհերի հիշատակին

Ա

Հոգնածութիւնս զգում եմ արդեն,  
Հոգնած ոտքերս նվում են արդեն,  
Հոգնած ձեռքերս ճշում են արդեն  
-Հերիք է հոգնած օրերդ ճոճէ՛ս,  
Հերիք է... ննջէ՛ս,  
Հերիք է դու քեզ քո ձեռքով... ջնջէ՛ս,  
Տէ՛ր կանգնիր ոգուդ, հողիդ ու քարի՛դ,  
Տէ՛ր կանգնիր հոգնած, հյուճված աշխարհիդ...

Հոգնած բառերս չեն արտաբերվում,  
Տառ-տառ գալիս են, կուտակվում, պայթում,  
Քարս, անունս, հողս, կարոտս,  
Ո՞նց է՝ իրարից էլ չեն տարբերվում:  
Արցախ եմ ասում՝ կարոտ է լսվում,  
կարոտ եմ ասում՝ հող է զգացվում,  
Իսկ հող ասելիս՝ քար է հասկացվում,  
Իսկ քար ասելիս՝ հոգնում է շուրթս,  
Շանթվում է շուրթս՝ մնում եմ... թլոր:

Բ

Հոգնածութիւնս զգում եմ արդեն,  
Հոգնած օրերս նվում են արդեն,  
Հոգնած ձեռքերս ճշում են արդեն...  
...Հոգնած ոտքերս մի կերպ քարշ տալով  
Ես հավաքում եմ հուշերս անցած,  
Անցած-չկորսված,  
Ու ոխերիմին ձգտում այսօր էլ  
Ռիսով չնայել,  
Բայց միշտ ոսոխին՝ արյունով հարբած,  
Ճանապարհները իմ տունն են բերել:  
Ու գրիչ-որդիդ մատյանը թողել՝  
Զինվոր է գրվել,

ԳՐԱՆՈՒՄ  
ՄԱՐԿՆԵՐ  
ՃԱՊՈՒՄ

Ու մ'աճկալ-որդիդ լծկանը թողել՝  
Զինվոր է գրվել,  
Ու կատաղել է ոսոխն ավելի,  
Ու... ավերվել է իմ հողն ավելի,  
Ու ավարայրվել-պարտվել է էլի  
Երկիրս խուժած խուժանը խուժդուժ,  
Հեռացել անուժ:

...Բոլոր դարերում այդպե՛ս է եղել:  
Բոլոր դարերում արյո՛ւն է հեղվել:  
Բոլոր դարերում՝ կոտորած-եղե՛ռն:  
Բոլոր դարերում՝ մ'ահ-թալան-ավե՛ր:

Բոլոր դարերում հրդեհվել-վառվել  
Ու ավերվել են քարե՛րը հայոց:  
Բոլոր դարերում հրդեհվել-վառվել  
Ու ավերվել են... դարե՛րը հայոց:  
Բոլոր դարերում հայ շինականը  
Զոհել է իրեն՝ գի՛րքը փրկելով,  
Որ հարատևեն տառե՛րը հայոց:  
Այդպե՛ս է եղել բոլոր դարերում...  
Այդպե՛ս ենք ապրել բոլոր դարերում...

## Գ

Հոգնածուլթյունս զգում եմ արդեն,  
Հոգնած ոտքերս նվում են արդեն,  
Հոգնած օրերս ճոճվում են արդեն,  
Հոգնած ձեռքերս ճչում են արդեն.  
Հայ գլխին կախված դու հի՛ն արհավիրք,  
Որ ապրում ես դեռ վայրի մոլուցքո՛վ,  
Մեր դարավերջի՝  
Դարասկզբյան նորացված չարիք,  
Դու՛ հայոց բախտի փյուզում մի նոր,  
Դու՛ նորակերպված Թալեա՛թ ու Համի՛րդ:  
Ես էլ ի՞նչ սրտով դիմեմ քեզ այսօր,  
Դու ի՞նչ երեսով նայես ինձ այսօր,  
Եվ ինչպե՛ս ապրենք միասին, այսօր:  
Ես հանգիստ խղճով ապրում եմ այսօր,  
Եվ հանգիստ նայում սև կերպարանքիդ,  
Ու իմ ապրելուց դու... ցա՛վ ես զգում:  
Դու ավերում ես, իսկ ես՝ արարում,  
Իմ արարումից դու ցա՛վ ես զգում:  
Իմ արարումից գայլանում էլի,  
Իմ արարումից մոլեգնում ես դու,

Ու... որոշեցիր սպանել էլի,  
Սպանել, որ ես դեռ... Հա՛յ եմ այսօր,  
Բայց ես չմեռա,  
Ինչպես չմեռա բոլո՛ր դարերում...

Դ

...Այդպե՛ս է եղել բոլոր դարերում,  
Արյո՛ւն է հեղվել բոլոր դարերում,  
Կոտորած-եղեռն՝ բոլոր դարերում,  
Մահ-թալան-ավեր՝ բոլոր դարերում:  
Այդպես ենք ապրել բոլոր դարերում:  
Բայց մի նոր ցավով այրվում է հոգիս  
Մեր ամենդարյա ցավին լրացում՝  
Մեր դարավերջյա՛ն կոտորածներից:  
Եվ, այդուհանդերձ,  
Հպարտ եմ այսօր, որ Հա՛յ եմ այսօր,  
Անպարտ եմ այսօր, որ... Հա՛յ եմ այսօր,  
Ու թող իմ չկամն այսօր իմանա,  
Որ ինչ էլ լինի՝ չեմ... գայլանա ես՝  
Գա՛յլը մարդանա...

Ե

...Հոգնածուլթյունս զգում եմ արդեն,  
Հոգնած ոտքերս նվում են արդեն,  
Հոգնած օրերս ճոճվում են արդեն,  
Հոգնած ձեռքերս երկինք բռնենք փած  
Հոգնածուլթյունից ճչում են արդեն.  
- ԴՈՒ՝ ՀԱՅՈՅ ՎԵՐՋԻՆ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ,  
ՄԱՐԴԿՈՒԹՅԱՆ ՎԵՐՋԻՆ ՈՃԻՐԸ ԼԻՆԵՍ...  
Հոգնած բառերս չեն արտաբերվում,  
Տառ-տառ գալիս են՝  
Կուտակվո՛ւմ, պայթո՛ւմ...

13.03.88, Ստեփանակերտ

Արցախյան պատերազմի  
նահատակ համագլուղացիներին  
հիշատակին

Դուք մեզ մի՛ կոչեք անհայտ կորածներ,  
Խնդրում ենք, մարդի՛կ:  
Դուք մեզ հիշեցե՛ք:  
Մեր անունը դուք պահեք չեղ արտում  
Ու սպասեք մեզ՝  
Մենք մի օր կգա՛նք:  
Կգա՛նք,  
Չէ՞ որ մենք սպրո՞ւմ ենք ու կա՛նք...

---

---



Сурьгунб  
Дугь мнэв 2000

---

---

---

## ՈՐՊԵՍ ՍԿԻՉԲ

Եվ պիրկ ձգվում է լուսթյան ըոպեն,  
Անլուր ծանրանում հոգուս ծալքերում...  
Սիրտ է քրքրում տվայտանքի թե՞ն,  
Որ տառապանքս է անտարբեր քերում:

Տխուր եմ, ցավիս սարերն են փլվել,  
Մենակ եմ հիմա, սակայն ոչ անհույս,  
Եվ ժամանակի դավին անտարբեր  
Նոր չիվ է աճում տապալված կաղնուց:

...Թուրքը եկել է հասել Կոճողոտ,  
Մեր օջախին է տիրանալ ուզում,  
(Մ՛, ճակատագիր՝ դառն ու անողոք,  
Քմահաճորեն ո՛նց ես հանդուրժում...

Ո՛նց ես թողնում, որ սուրբ երազը մեր  
Անհույս թպրտա, կրնկահարվի,  
Եվ հագուրդ տալով կրքերին իր նեո՝  
Թուրքը լիաթոք հիանա, հրճվի):

Ու ելան անվախ տղաները մեր,  
Հոգում վառ սերը հայրենի հողի,  
Որ ավերակեն բերդերն «անառիկ»,  
Որջերը՝ մեր շենն ասպատակողի...

Ու ելան... Սակայն արյուն էր, ավեր,  
Եվ պատերազմում աշխարհակործան  
Ընկան տղերքը՝ սրտերում՝ արև,  
Սրտերում՝ դարուն, երազն՝ իրական...

- Արթուր Շուրայի Դանիելյան...  
- Ե՛ս եմ...

- Գուրգեն Շուրայի Վարդանյան...  
- Ե՛ս եմ...

- Մերուժան Սուրենի Սարգսյան...  
- Ե՛ս եմ...

- Աշոտ Ռոբերտի Ավետիսյան...  
- Ե՛ս եմ...

- Գարիկ Փարավոնի Հայրիյան...

- Ե՛ս եմ...

Կարոտե՛լ եմ, մա՛...

- Հրանտ Յուրայի Խաչատրյան...

- Ե՛ս եմ...

- Ռոբերտ Ռաչիդի Շամիրյան...

- Ե՛ս եմ...

Մայրս հիվանդ էր՝ անկողնուն գամված,

Բայց հայրենիքս թանկ էր ավելի...

Հայրս դիմանալ չկարողացավ...

Մայրս էլ գնաց...

- Մեխակ Զավենի Դանիելյան...

- Ե՛ս եմ...

- Բորիս Միշայի Սիմոնյան...

- Ե՛ս եմ...

Բալե՛քս, ո՞նց եք առանց ինձ...

- Արթուր Ռազմիկի Թադևոսյան...

- Ե՛ս եմ...

- Մանվել Արտուշի Վարդանյան...

- Ե՛ս եմ...

- Ազատ Շահենի Խաչատրյան...

- Ե՛ս եմ...

Դստրիկս ծնվեց, իսկ ես... չկայի,

Բայց ի՛մ կամքով է նա Ազատուհի...

- Կամո Ալբերտի Ադամյան...

- Ե՛ս եմ...

- Արարատ Ալեքսեյի Վանյան...

- Ե՛ս եմ...

- Անդրանիկ Արսենի Գրիգորյան...

- Ե՛ս եմ...

Ներո՞ւմ եք, որ ձեզ «խաբեցի»

Ու էլ ետ չեկա...

Ներո՞ւմ եք, ասե՛ք, թե՞ խռով եք դեռ:

...Ընկան, որ մնան,

Ընկան, որ հիշվեն:

Որ սերունդները մի՛շտ հպարտանան:

...Իսկ երկարում է լռության ըրոպեն:

# ԵՎ ԴԱՆԻԵԼՅԱՆ ԱՐԹՈՒՐԸ ՀԱՆԿԱՐԾ ԱՌԱՋԻՆՆ ԱՅՍՊԵՍ ԽՈՍԵԼ ՍԿՍԵՑ.

ԿԱՐՃ ՏԵՂԵԿԱՆՔ.

Արթուր Շուրապի Դանիելյանը ծնվել է 1966-ի փետրվարի 11-ին: Միջնակարգն ավարտելուց հետո սովորել է Երևանի թիվ 11 պրոֆտեխնուստամրաբանում՝ տիրապետել լուսանկարչական արվեստին: Այնուհետև գորակոչվել է Խորհրդային բանակի ծառայել որպես զենիթահրթիռային կայանքի հրամանատար: Երբ սկսվել է Արցախյան համազգային շարժումը՝ բոլորանվեր ձուլվել է սրբազան պայքարին: Զոհվել է 1992-ի մարտի 10-ին, Սրխավենդի անհավասար մարտում:

*- Առաջին շարքում ե՛ս պիտի լինեմ,  
Ես պիտի լինեմ մարտո՛ւմ առաջին:*

*Առաջին մարտում, ինչ էլ որ լինի,  
Ես պիտի կռվեմ շարքո՛ւմ առաջին:*

*Իսկ թե առաջին մարտում պիտ ընկնեմ՝  
Թող ընկնեմ միայն շարքո՛ւմ առաջին...*

# ԵՎ ԳՈՒՐԳԵՆՆ ԱՍԱՑ.

ԿԱՐՃ ՏԵՂԵԿԱՆՔ.

Գուրգեն Շուրապի Վարդանյանը ծնվել է 1968-ի մայիսի 18-ին, Մինգչաուր տեղափոխված կոնդոտոցու ընտանիքում: Ավարտել է Երևանի մեքենաշինական տեխնիկումը, իսկ 1986-88-ին ծառայել Խորհրդային բանակում: Զորացրվելուց հետո վերադարձել է հայրենի գյուղ, ամուսնացել ու որոշ ժամանակ անց տեղափոխվել Ստեփանակերտ, աշխատանքի անցել կոնդենսատորների գործարանում: 1991-ից Արցախյան շարժումն իր արիքները մեջ առավ նաև նրան: Զոհվել է 1992-ի հունիսի 10-ին, Չարեքտարում:

*- Երջանկուլթյունս, իմ Արցա՛խ աշխարհ,  
Քո անունն է լույս՝ իմ բախտի սյունը,  
Ապրել քեզ համար, կռվել քեզ համար,  
Զոհվել քեզ համար՝ երջանկուլթյուն է:*

*Ապրում եմ կյանքում միշտ քո հավատով,  
Ու քո՛ սիրով եմ շնչում ես կյանքում,  
Քայլում լուսաշող քո՛ ճանապարհով,  
Արցախյան երկրի հանրապետուլթյուն:*

*Դժվար է ապրել առանց հավատի,  
Հավատը պետք է դրոշ դարձնել,  
Հավատով հաղթել նենգին, տմարդին,  
Եվ անհավատին հավատքի բերել:*

*Երջանկուլթյունս հենց այս է, որ կա,  
Երջանկուլթյունս ազատ ապրելն է,  
Երջանկուլթյունս կյանքն է արևկա  
Ու մարդկանց ճամփին միշտ արևելն է:*



*Դու՛ ես, Արցախ իմ, երջանկութ՝ յունս,  
Սե՛րս, երա՛զս, հավատս դո՛ւ ես,  
Ես՝ ի՞նչ՝ նույնիսկ կես ակնթարթ չկամ,  
Իսկ դու մի ամբողջ հավերժութ՝ յո՛ւն ես...*

### ՄԵՐՈՒԺԱՆՆ ԱՍԱՑ.

ԿԱՐՃ ՏԵՂԵԿԱՆՔ.

Մերոժան Աուրենի Սաբաթյանը ծնվել է 1966-ի հուլիսի 31-ին: Միջնակարգն ավարտելուց հետո ծառայել է խորհրդային բանակում, աճյունահետև աշխատանքի անցել Մարտակերտի թիվ 28 շրջիկ-մեքենայացված շարասյունում: 1990-ից գյուղի ֆիդայական ջոկատի կազմում էր Պահակութ՝ յունս է արել սահմանային գոտում, մասնակցել մի շարք մարտերի: 1992-ի հունիսի 10-ին վիրավորվել է Ջափարում, մահացել է Երևանի Նոր-Նորքի 3-րդ զանգվածի հիվանդանոցում հունիսի 21-ին:

*- Ես մարտի կելնեմ առավոտ ծեղին,  
Իմ ընկերներով կգնամ առաջ,  
Իմ ընկերները արծիվներ արի,  
Չգիտեն անկողմ, չգիտեն նահանջ:*

*...Իսկ թե ինչ որ տեղ ինձ դարանակալ  
Մահն է սպասում ժանիքը սրած՝  
Թող շատ չչտապի՝ պարտք ունեմ ես դեռ,  
Պարտքս կատարեմ՝ թող գա ինձ այցի...*

*(Կարծում եք՝ պարտքս լա՞վ կատարեցի):*

### ԱՇՈՏԸ ՇԵՇՏԵՑ.

ԿԱՐՃ ՏԵՂԵԿԱՆՔ.

Աշոտ Ռոբերտի Ավետիսյանը ծնվել է 1967-ի սեպտեմբերի 3-ին, Մարտակերտ քաղաքում: Սովորել է Ներքին Հրոսթաղի թիվ 120 պրոֆտեխնոսումնարանում, ծառայել խորհրդային բանակի տանկային գործերում: Շարժման սկզբից ընդգրկվել է Մարտակերտի ինքնապաշտպանական ջոկատի կազմում: Որպես տանկի նշանառու մասնակցել է չըջանի մի շարք գյուղերի ազատագրման համար մղված մարտերին: Ձոհվել է 1992-ի հուլիսի 15-ին, Մաղավուզի բարձունքներում ծավալված մարտում:

*- Մենք մարտերի մեջ կոփված  
Եղբայրու՛թ յո՛ւնն ենք սիրում...*

*Երբ որ տված ուսուցի  
Մարտնչում են քաջարի  
Ընկերները դիրքային,  
Նրանք կարող են հաղթել  
Նույնիսկ գորեղ թշնամուն:  
...Ու ելնում ենք քաջաբար*

*Թուրքերի դեմ մոլեզնած:*

*Թող չկարծեն իմ երկրի  
Չարեկամները բոլոր,  
Թե քնած ենք մենք այստեղ,  
Նրանք թող լավ իմանան՝  
Գիշերները չի քնում  
Հայրենիքի գինվորը,  
Զգոն աչքով հսկում է  
Խաղաղությունն Արցախի:  
Մենք պայքարով ձեռք բերված  
Խաղաղությունն ենք սիրում:*

*...Այո՛, ապրում եք այսօր  
Խաղաղ կյանքով, առանց... մեզ,  
Եվ ոչ ոք չի՛ խանգարի  
Ձեր այս խաղաղ երթը, ձե՛զ:  
Բայց թե հանկարծ թուրքը սև  
Բանակներով նորից գա  
Մենք գինավառ կնետվենք՝  
Գոցենք երախը նրա:*

*Որ արյունով ձեռք բերված  
Խաղաղությունը մնա...*

## ԵՎ ԳԱՐԻԿՆ ԱՍԱՑ.

ԿԱՐՃ ՏԵՂԵԿԱՆՔ.

Գաբիկ Փարավոնի Հայրեկանը ծնվել է 1971-ի հոկտեմբերի 9-ին: Միջնակարգն ավարտելուց հետո անմիջապես ընկել է Արցախյան շարժման հորձանուտը, միաժամանակ սովորել Մտեփանակերտի գյուղատնտեսական տեխնիկումում: 1989-ին գորակոչվել է խորհրդային բանակի շարքերը: Ձորացրվելուց հետո գյուղի Փիղալյան ջոկատի կազմում մասնակցել է Մարտակերտի, Հասանդալայի, Մարդալայի, Բաշֆյունեփալայի և Սրխավենդի մարտերին: Զոհվել է 1992-ի հուլիսի 30-ին, Չափար գյուղի պաշտպանութան համար մղված թե՛ մարտում:

*- Մեր հի՛ն հողի վրա թուրքի հետքե՞ր,  
Մեր հի՛ն գյուղում հիմա թո՞ւրքն է նստել,  
Մենք քնո՞վ ենք անցել՝ հնչե՛ք, զանգե՛ր,  
Թե արթուն ենք՝ ո՞ւր է կռիվը մեր:*

*Հնչե՛ք, զանգե՛ր, հնչե՛ք, գնանք ի մարտ,  
Հնչե՛ք, զանգե՛ր, քանի ջահել ենք մենք,  
Հնչե՛ք, զանգե՛ր, էլի թող շատանանք,  
Հնչե՛ք, զանգե՛ր, մենք դեռ պետք է կռվենք:*

*Մեջքը մեր չի ճկվի երբեք մ'արտում,  
Մենք դեռ պետք է կռվենք, պետք է կռվենք,  
Ծունկ չենք չոքի երբեք, զանգակատո՛ւն,  
Զա՛նգ հնչեցրու, գնանք կռվենք-մեռնենք:*

*Գնանք կռվենք-մեռնենք, հաղթենք ու դա՛նք,  
(Եվ կսազի՞, արդյոք, մեզ պարտութ՞յուն,  
Մենք եղե՛լ ենք անպարտ, եղե՛լ ենք, կա՛նք),  
Զա՛նգ հնչեցրու, գնանք, զանգակատո՞ւն...*

## ԵՎ ՀՐԱՆՏՆ ԱՍԱՑ.

ԿԱՐՃ ՏԵՂԵԿԱՆՔ.

Հրաման ֆուրբի ինչատրյանը ծնվել է 1971-ի փետրվարի 21-ին: Ավարտել է գյուղի միջնակարգ դպրոցը, ծառայել խորհրդային բանակում, այնուհետև սովորել Ներքին Հոռաթաղի թիվ 120 պրոֆեսիոնալնարանում: 1992-ից, գյուղի ֆիդայական ջոկատի կազմում մասնակցել է մի շարք ռազմագործողութ՞յունների (Աղբաբան, Բարվաճառ, Մարտակերտ, Կիչան, Զափար): Զոհվել է 1992-ի օգոստոսի 22-ին, Դրմբոն գյուղի մերձակայքում:

*- Ինձ ցավ տուր,  
Ես ցավը հեշտ եմ տանում:  
Տառապանքը, որ ծնվել է սիրուց,  
Իմ սիրտն է:  
Իսկ առանց սրտի՝  
Մեռնելը դժվար է խիստ:  
...Ապրե՞լը  
Անիմաստ ու սին:  
  
...Իսկ տառապանքս՝  
Իմ Արցախն է հեզ...*

## ՌՈՒԲԵՐՏՆ ԸՆԴՀԱՏԵՑ ՀՐԱՆՏԻՆ, ԱՍԱՑ.

ԿԱՐՃ ՏԵՂԵԿԱՆՔ.

Ռոբերտ Ռաշիդի Շամիրյանը ծնվել է 1967-ի փետրվարի 12-ին: Սովորել է գյուղի միջնակարգ դպրոցում, ծառայել խորհրդային բանակի շարքերում: Երբ սկսվել է Արցախյան ազգային ազատագրական շարժումը՝ անմիջապես անդամագրվել է գյուղի նոր կազմավորված կամավորական ջոկատին: Մասնակցել է մի շարք մարտերի: Զոհվել է 1993-ի հունվարի 20-ին, հայրենի գյուղի պաշտպանութ՞յան համար մղված հերթական մարտում, հակառակորդի օդուժի ուժեղացումից չստանալով:

*- Արցախը հեզ չէ,  
Ոսոխին տեզ է,  
Ոսոխի սրտին՝ սուր ու դանակ,  
Արցախը հուր է,  
Թշնամուն՝ սուր է,*

Հայրենի  
ԿԱՐՃ  
ՏԵՂԵԿԱՆՔ

*Թշնամու մուխը մարող բանակ:*

*Անհո՛ւն է, ինե՛նթ է,  
Բռո՛ւնցք է, զե՛նք է,  
(Արցախում՝ կռի՞վ, ավեր՝ավա՞ր...):  
Եվ նա չի՛ պարտվի,  
Ոնց Ավարայրի  
Մեր այն հի՛ն կռվում օրհասական:  
Ո՛չ, նա չի՛ պարտվի,  
Կկանգնի ոտքի՛,  
Կկապի որդու՝ Դավթի՝ \* գոտին,  
Որ գետնի նրան  
Մի ակնթարթում՝  
«Յոթ-միլիոնանոց» իր ոսոխին...*

*...Տեսա՞ր, ոնց գետնեց ու չոքեց բկին:  
Ասում էի, չէ՞...*

## **ՄԵԽԱԿԸ ԽՈՍԵՑ ՍԱՐԵՐԻ ՄԱՍԻՆ, ԱՍՑ.**

ԿԱՐՃ ՏԵՂԵԿԱՆՔ.

Մեխակ Զավենի Դանիելյանը ծնվել է 1960-ի հոկտեմբերի 18-ին: 1978-ին ավարտել է գյուղի միջնակարգ դպրոցը, 1980-82-ին՝ ծառայել Սորհրդային բանակի շարքերում: Զորացրվելուց հետո ավարտել է Մարտակերտի ավտոդպրոցը, ախատանքի անցել շրջկենտրոնի շինարարական բրիգադում: 1990-ից նվիրվել է Արցախյան ազատագրական պայքարին, իր ազատամարտիկ ընկերների հետ մասնակցել մի շարք մարտերի: Զոհվել է 1993-ի փետրվարի 4-ին, հայրենի գյուղի ազատագրման համար մղված հերթական մարտում:

*- Մեր սարերը վեհ սարեր են,  
Հրաշքներ են մեր սարերը,  
Մարմնավորված երազներ են,  
Մուրազներ են մեր սարերը:*

*Մեր սարերը վահաններ են,  
Մերկ թրեր են մեր սարերը,  
Մեզ համար են հավերժ կանգնել  
Մեր թև-թիկունք՝ մեր սարերը...*

## **ԲՈՐԻՍԸ ԽՈՍԵՑ ՔԱՐԵՐԻ ՄԱՍԻՆ, ԱՍՑ.**

ԿԱՐՃ ՏԵՂԵԿԱՆՔ.

Բորիս Մելայի Աբմունյանը ծնվել է 1958-ի դեկտեմբերի 19-ին: Գյուղի ութամյա դպրոցն ավարտելուց հետո, 1974-77-ին, սովորել է

\* Հեղինակը նկատի ունի հայկական էպոսի գլխավոր հերոս Սասունցի Դավթին:

Ներքին Հոռաթաղի թիվ 120 պլոմֆոն խուսուժմանը մեխանիկապես լի բաժնուժ, 1977-79-ին՝ ծառայել խորհրդային բանակի շարքերում: Զորացրվելուց հետո ամուսնացել է և անմիջապես աշխատանքի անցել հայրենի գյուղի տնտեսութ յունում ու մինչև Արցախյան շարժման սկիզբը կատարել տրակտորիստ-կոմբայնավարի պարտականութ յունները: Շատերի պես նվիրվել է համաժողովրդական պայքարին: Զոհվել է 1993-ի ապրիլի 14-ին:

- Քարե՛ր իմ, հայրենի՛ քարեր,  
Ես ինչպե՞ս խոսեմ ձե՛ր հանդեպ ունեցած  
Իմ ապրումների, խոհերի մասին:  
Բայց ինչպե՞ս լռեմ,  
Չասե՞մ՝ առանց ձեզ չեմ կարող ապրել...  
Որ ձե՛ր սիրով եմ շնչում, թե՛ առնում,  
Իմ լեռնաշխարհը հողուս հետ կապող  
Հայրենի՛ քարեր...

## ԻՍԿ ԹԱԿԵՎՈՍՅԱՆ ԱՐԹՈՒՐԸ ԱՍԱՑ.

ԿԱՐՃ ՏԵՂԵԿԱՆՔ.

Արթուր Ռազվիկի Թադևոսյանը ծնվել է 1975-ի մարտի 1-ին, Մարտակերտ քաղաքում բնակութ յուն հաստատած կոնտրոլոցու ընտանիքում: Սովորել է տեղի թիվ 1 միջնակարգ դպրոցում: Ընտանիքով կոնտրոլ տեղափոխվելուց հետո 1992-ին ավարտել գյուղի միջնակարգն ու անմիջապես էլ զինվորազրվել տեղի կամավորական շրջանում, մասնակցել բազում մարտերի: Զոհվել է 1993-ի ապրիլի 15-ին:

- Եվ հավերժութ յան խորհուրդն է ահա՛  
Մեզնից առաջ են լեռներն այս ծնվել  
Ու մեզ հետ ապրում, կանգուն են հիմա,  
Մեզնից հետո էլ դեռ պիտի ապրեն  
Դարերում գալիք՝ հավիտյան անմահ:  
...Մենք՝ մահկանացու, բայց անմահացանք  
Մահով իմացյալ...

## ԻՍԿ ՄԱՆՎԵԼՆ ԱՍԱՑ.

ԿԱՐՃ ՏԵՂԵԿԱՆՔ.

Մանվել Աբաուշե վարդանյանը ծնվել է 1974-ի սեպտեմբերի 23-ին: 1981-ից հաճախել է դպրոց, սովորել մինչև 7-րդ դասարանը: 1992-ից ծառայութ յան է անցել «Միլուքի» (Ռաֆիկ Սալյան), իսկ այնուհետև «Սալատոյի» (Արկաղի Շիրինյան) դումարտակներում, կատարել բոլոր առաջադրանքները: Զոհվել է 1993-ի հուլիսի 5-ին, Մաղավուզի բարձունքներում մղված հերթական մարտում:

- Մերանում են լեռները մեր,  
Կծերանանք նաև մենք,  
Բայց կանգուն են լեռները դեռ,  
Իսկ մենք մեկ-մեկ գնում ենք:

Հայրենի  
ԿԱՐՃ  
ՄԱՆՎԵԼՆ

Հրաշք լիներ, այնպես լիներ՝  
Մենք էլ հավերժ մնայինք,  
Մեր լեռներին թիկն տված  
Կյանքում անվերջ ապրեինք:

...Բայց չտրվեց ինձ ծերանալ,  
Ընկա մարտի թեժ պահին,  
Որ բարի օր, բարի գարուն  
Բացվի Արցախ աշխարհին...

## ԻՍԿ ԱԶԱՏՆ ԱՅՍՊԵՍ ԽՈՍԵԼ ՍԿՍԵՑ, ԴԻՄԵԼՈՎ ԿՆՈՋՆ՝ ԻՐ ԹԵՐԵԶԱՅԻՆ.

ԿԱՐՃ ՏԵՂԵԿԱՆՔ.

Ազատ Շահենի Խաչատրյանը ծնվել է 1970-ի փետրվարի 5-ին: Ավարտել է հայրենի դպրոցի միջնակարգ դպրոցը, աճուհեակ ձեռք բերել վարձավիճի մասնագիտություն: 1988-90-ին ծառայել է Խորհրդային բանակում: Ձրաջրվե լուց հետո ամուսնացել ու տեղափոխվել է Ստեփանակերտ: Չինվորագրվել է ռազմական տեխնիկայի նորոգման վերականգնման առանձին գումարտակում, մասնակցել Ղազանչի, Չլբաբան, Կիչան և այլ գյուղերի համար մղված մարտերին: Չոհվել է 1993-ի հոկտեմբերի 17-ին, «Ցեխ»-ը որոնում:

- Կարծես թե երբեք ինձ չես տեսել,  
Չենք սեղմվել իրար երբեք կյանքում,  
Բայց... հանդիպում եմ քեզ հետ միշտ էլ  
Երազներիդ մեջ՝ քուն, թե արթուն:

Շրջում ենք մեկտեղ գիշերօցերեկ  
Մեր Կոճողոտում՝ Աստծո թաս,  
Ես պատմում եմ քեզ մարտերից թեժ,  
Բայց արթնանում ես՝ թախծում՝ «չկա ս»:

Իսկ ասում են, թե Ցեխ-ձորում, ես...  
Իբր... զոհվել եմ արկից այն կույր,  
Մի՞ թե ճիշտ է դա, ճի՞շտ է, թե՛րե՛զ,  
Դու մի՛ հավատա երբեք կյանքում:

Ես ապրո՞ւմ եմ, կա՛մ, ես չե՛մ զոհվել,  
(Ստո՞ւմ են նրանք, ստո՞ւմ, անգի՛ն),  
Ես հանդիպո՞ւմ եմ քեզ հետ միշտ էլ  
Քո երազների ճանապարհին...

...Բայց մոռացա՛ քեզ հիշեցնել,  
Որ... լա՛վ նայես մեր երեխային...

## ԵՎ ԽՈՍԵՑ ԿԱՄՈՆ.

ԿԱՐՃ ՏԵՂԵԿԱՆՔ.

Կամո Ալեքեանի Ազամ յանը ծնվել է 1959-ի Հոկտեմբերի 4-ին: Ավարտել է Ստեփանակերտի գյուղատնտեսական տեխնիկումի հաշվապահական բաժինն ու աշխատանքի անցել հայրենի գյուղի տնտեսութունում: Արցախյան շարժման գինված պայքարի փուլն սկսվել լուսն պես նաև հայտնվել է համապատասխան ազատամարտիկների շարքերում: Եղել է Վանք գյուղի պաշտպանական դիրքերում, Գարվաճառի շրջանում: Զոհվել է 1993-ի դեկտեմբերի 27-ին, Մաղավուզի մատույցներում:

- Իմ վիրավոր աչքերի մեջ  
Քո պատկերն է, հայրենի՛ք,

Քո անուկը իմ շուրթերին  
Դարձել է թո՛ւյլ թիթեռնիկ:

Թպրտում է, թևահարում,  
Մղձավանջ է, և կարծես,  
Մթնում է լուսն աշխարհն իմ դեմ  
Ու... փլվում եմ հողին ես:

Բայց՝ մի վայրկյան: Մթափվում եմ  
Եվ հրազենը ձեռքիս՝  
Ոտքի ելնում՝ նետվում առաջ՝  
Ընկերներիս ետևից...

## ԵՎ՝ ԱՐԱՐԱՏԸ.

ԿԱՐՃ ՏԵՂԵԿԱՆՔ.

Աբարատ Ալեքեանի Վանյանը ծնվել է 1971-ի փետրվարի 2-ին: Հայրենի գյուղի միջնակարգն ավարտելուց հետո սովորել է Ստեփանակերտի գյուղատնտեսական տեխնիկումի անասնաբուժական բաժնում, 1989-91-ին՝ ծառայել խորհրդային բանակի շարքերում: Զորացրվելուց հետո գյուղի ֆերմայական ջոկատի տղաների հետ մասնակցել է շրջանի մի շարք գյուղերի ազատագրմանը: Զոհվել է 1993-ի դեկտեմբերի 27-ին, Մաղավուզի մերձակայքում, ականի պայթյունից:

- Թեժ մարտերի մեջ կոփված  
Տղաներով մենք արի  
Կրկին ելնո՛ւմ ենք, ահա,  
Թուրքերի դեմ կատաղի:

Կրկին ելնում ենք, ու թող  
Լա՛վ իմանա թշնամի՛ն,  
Որ ինչքան էլ համառի՝  
Զի՛ տիրանա Արցախին:

Մինչև շո՛ւնչը մեր վերջին,  
Վերջին կաթի՛լը արյան,  
Հանուն մեր լույս գալիքի՝  
Կմարտնչե՛նք անվարան...

ԱՐԴՆ ԱՐՄԵՆԻ  
Հասցիան քայտ

# ԻՍԿ ԱՆԴՐԱՆԻԿԸ ՀՐԱԺԵՇՏ ՏՎԵՑ ԻՐ ԾՆՈՂՆԵՐԻՆ, ԳՆԱՑ՝ ԱՍԵԼՈՎ.

ԿԱՐՃ ՏԵՂԵԿԱՆՔ.

Անդրանիկ Աբունի Գրեգորյանը ծնվել է 1967-ի հունիսի 8-ին: Հայրենի գյուղի միջնակարգ դպրոցի 8-րդ դասարանն ավարտելուց հետո ներքին Հոռաթաղի թիվ 120 պրոֆսոսեխուսումնարանում ստացել է կեկտրատեխնիկոսի մասնագիտություն, բայց խաղաղ աշխատանքով զբաղվելու բախտը վիճակված չէր նրան: Արցախյան շարժման հորձանուտում էր հենց առաջին օրերից: Տիրապետում էր գեներալ բոլոր տեսակներին: Մասնակցել է Քեյրաջարից մինչև Ղուբաթ լու մղված ռազմական բոլոր գործողություններին: Վերափոխվել է բազմաթիվ անգամ: Զոհվել է 1994-ի ապրիլի 18-ին, Հասանդալայի համար մղված կատաղի մարտում:

- Ընկերներս այնտեղ՝  
Մարտադաշտում ահեղ,  
Ես չե՛մ կարող մնալ,  
Ես գնո՛ւմ եմ, մայրի՛կ:

Ձնեղանա՛ս ինձնից,  
Որ թողի քեզ մենակ,  
Ես դեռ կգա՛մ մի օր,  
Ես դեռ կգա՛մ:

Դու սպասի՛ր հույսով,  
Դու սպասի՛ր, մայրի՛կ,  
Հաղթանակի՛ն մեր մեծ  
Ու քո որդուն:

Ես դեռ կգա՛մ մի օր,  
Ես դեռ կգա՛մ:  
Իսկ թե հանկարծ...  
Հանկարծ եթե... չգամ՝

Դու չլացե՛ս, մայրի՛կ,  
Դու կսպասես հույսո՛վ,  
Ես դեռ կգա՛մ,  
Կգա՛մ,  
Կգա՛մ,  
Կգա՛մ...



## ...ՈՒ ԵՍ ԱՅԼԵՎՍ ՉՏԱՄԲԵՐԵՑԻ.

- «Կգա՛մ»... Չեկա՛ր սահայն:  
 Բայց նեղացա՞նք քեզնից,  
 Խռովեցի՞նք քեզնից, եղբա՛յր, զինվո՛ր...  
 Ո՛չ, սիրեցի՞նք մենք քեզ,  
 Սպասեցի՞նք միշտ քեզ՝  
 Հուշաքարի տեսքով եկար մի օր:

Եկար ու կանգնեցի՛ր:  
 Եկար ու... հառնեցի՛ր:  
 Եկար ու մնացի՛ր երազիս մեջ:  
 Եկար՝ անխոս ու լուռ,  
 Դու՛ իմ ցավի մրմուռ,  
 Որ տառապեմ երկա՛ր, անհո՛ւյս, անվե՛րջ...

Եկա՛ր, դու, իմ կարո՛տ,  
 Չգալ չէ՛իր կարող,  
 (Չգա՞լ, ինչպե՛ս եմ ես... համարձակվում)...  
 Դու կե՛սն ես իմ սրտի,  
 Իմ մեջ ապրե՛ս պիտի,  
 Ինձ հետ քայլե՛ս պիտի իմ օրերում...

## ՏԵՏԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՈՎ

...Եվ դադարում են «ընդհատումները»,  
 Տղաները էլ ոչինչ չեն «ասում»,  
 Իմաստազուրկ են թվում բառերը,  
 Որ... նահանջում են, քաշվում, նվազում:

Ու տղաները դնում են նորից,  
 Որ ամուր պահեն իրենց... դիրքերը,  
 Իսկ անդառնալի կորստյան ցավից  
 Դեռ մղկտում են հարազատները:

«Կանգնած են» տղերքն՝ անհողողող, անքեն,  
 Որ կայուն լինի խաղաղությունը...  
 ...Եվ ավարտված է լուսթյան ընթացքը,  
 Բայց լուսթյունը շարունակվում է:

2000, Ստեփանակերտ

Անչափ համակրեւելի օրիորդ Մովսէս Բինարին

Այնպէս լաւ եւս ինչ ծպտում,  
Ասեա կ'իկա... դո՛ւ լինես:  
Ես կ'կորչե՛մ քո գրկում,  
Բէ գրկի՛ս դու լինես...


---




One/and/many/  
Gift 2000-2002

---

## ՆԱԽԵՐԳ

 յնպես լա՛վ էս ինձ ժպտում,  
Ասես... կի՛նս դու լինես,  
Ես կկորչե՛մ քո գրկում,  
Թե գրկի՛նս դու լինես,  
Համակ սե՛ր էս ու հուզո՛ւմ,  
Սիրո կարոտ, սիրո ցավ...  
...Ու այնպե՛ս եմ էս ուզում՝  
Միչտ մտքի՛նս դու լինես:  
09.10.00, Ստեփանակերտ



 աղկանց փո՛ւնջ էս, կոկոն վարդ էս,  
Ով քեզ քաղի՛ կրծքին զարդ էս:

Վարդն ի՛նչ է, որ չափվի քեզ հետ,  
Իսկ ե՞ս... Սերս կորչի՞ անհետ:


Նազերիդ մեջ կա՞ն կորածներ,  
Արդյո՞ք էս էլ... Անհետ... Իմ սե՛ր...

Բուպեաչափ սիրո՞ թարթ էս...  
...Դու աստղաչո՛ւրթ, աստղազա՛րդ էս:

29.08.00, Ստեփանակերտ

## ՌՈՒԶԱՆԻՆ

Տրիոլետ՝ քեզ՝ Մարտի 8-ին:  
Նան՝ երեք մեխակներ...

 ու արժանի էս ավելիի՛ն,  
Քան մեխակներն այս գունագեղ,  
Բայց գուցե թվան դրանք տգե՞ղ՝  
Դու արժանի էս ավելիի՛ն:

Քո քայլքո՛վ, վարքո՛վ, տեսքո՛վ շքեղ՝  
Շա՛տ էս նման այս մեխակներին,  
Եվ՝ արժանի՛ էս ավելիի՛ն,  
Քան մեխակներն այս գունագեղ:

08.03.00, Ստեփանակերտ

## ԹՎԱԲԱՆԱԿԱՆ ՍԵՐ

Մեր երազները իրար գումարենք,  
Դրանից հոգնած ցավերը հանենք,  
Հրճվանքն ու խինդը տանք ու բաժանենք,  
Իսկ թե կմնա՝ քիչ էլ մեզ պահենք:

Եվ մեր իղձերը մենք բազմապատկենք՝  
Նպատակակետ ընտրելով բարին,  
Ու, բան է, եթե տեղ էլ հասնենք՝  
Մեր սերը նվեր կմնա դարին:

11.11.00, Ստեփանակերտ

## 3 x ... ՆՈՒՅՆԻՆ

Ան՝ էլ է շշուկը այնպես,  
Նայվածքը՝ նազանք է համակ,  
Նազո՞ւմ են շուրթերը անտես,  
Անունն ինձ սե՛ր է ու հավատ:

Այնպե՛ս եմ նրան կարոտել,  
Նայում եմ՝ հեռո՞ւ է այնքան,  
Նազո՞ւմ է՝ կտեսնե՞մ մեկ էլ,  
Անհո՞ւյս եմ ես սիրում նրան:

Ասում են ինձ՝ զո՞ւր ես թախծում,  
Նորից քո հին օրը կգա՞...  
Նորից ինձ նույն միտքն է տանջում,  
Անցնում է գիշերն ու... չկա՛:

03.08.01, Ստեփանակերտ



Ող այսպես լինի, գոնե ա՛յս անգամ,  
Այս 2001-ըդ տարում,  
Իսկ թե երբ է քո օրը ծննդյան՝  
Ներիը, բայց ես դա չեմ կարևորում:

Կարևոր է, որ ապրում ենք էլի,  
Սիրում ենք իրար՝ սա է կարևոր...  
Իսկ այս հերթական տարեմուտը քո  
Թող շնորհավոր լինի ա՛յս ձևով:

17.01.01, Ստեփանակերտ

## ՈՒՐԻՇԻ... ՍԵՐ

Սիրտս բացել եմ քո առաջ նորից,  
Վախենում եմ բայց՝ նորի՛ց կմերժես,  
Ես հանգիստ չունեմ՝ հանդիպման պահից,  
Տարփահեղձ սիրտս, զգույշ, չկոտրե՛ս:

Անհո՞ւյս եմ խնդրում՝ գոնե մի համբո՛ւյր՝  
Յասամանաբույր շուրթերին քո բաց...  
Ի՞նչ է ուզածս, խոստացա՛ծ դ տուր:  
Նորի՞ց մերժեցիր, թե՞ ինձ էր՝ թվաց...

...Սիրտս բացել եմ, բայց ո՞նց նվիրեմ,  
Երբ ցնձո՛ւմ ես դու գրկում ուրիշի,  
Արհամարհո՛ւմ ես իմ սերը, գիտեմ,  
Սիրելի՛ չէ՞... Գոնե ցավո՛վ մի հիշիր...

15.05.02, Ստեփանակերտ



Ռ ու քնե՛լ ես հոգնած,  
Իսկ ես արթուն եմ, տե՛ս,  
Քո նկարի առաջ  
Կանգնել նայում եմ քե՛զ:

Այնպես ժպտո՛ւն ես դու,  
Այնպես տխուր եմ ե՛ս,  
Հիմա քնա՛ծ ես դու,  
Իսկ ես փնտրո՛ւմ եմ քեզ:

15.09.00, Ստեփանակերտ

## ՊԱՏԱՀԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Մի անձանոթի

Ք եզ բարևեց այդ աղջիկը,  
Իսկ ինձ՝ անգամ չնայեց,  
Բայց այդպես էլ չհասկացար՝  
Նա քե՞զ, թե՞ ինձ հմայեց:

Իսկ իրերի ընթացքը պարզ  
Չարգելակես դու հանկարծ,  
Թող իր ճամփան շարունակի  
Չհասկացված մի հայացք:

29.09.01, Ստեփանակերտ



Ես ի՞նչ անեմ քո պատկերը՝  
Մթնաշղարչ ակնոցով,  
Դու ցույց տուր ինձ քո աչքե՛րը,  
Քո աչքերը՝ ջինջ ու ծով:

Թող այդ ծովի մեջ խեղդվեմ ես,  
Ափ չհասնի թող հոգիս,  
Միայն ինձ հե՛տ սերդ կիսես,  
Քե՛զ ունենամ միշտ կողքիս:

15.09.00, Ստեփանակերտ



Միայն դո՞ւ տեսար ոսկին արևի՝  
Արհամարհելով վտանգը մահվան:

Բոպեական այդ պահին երևի  
ինձ ձգի կարո՞տն անսահման ու թյան...

Նայի՛ր, թախի՛ծ է կաթում երկնքից,  
Երկնահաս Տերն է՝ կարոտե՛լ է ինձ:

03.12.00, Ստեփանակերտ



Այրո՞ւմ է կարոտդ, հուզո՞ւմ,  
Խոչանո՞ւն, թախձաբո՞ւյր իմ սեր...

Մարմինդ հագնե՛լ եմ ուզում,  
Թույլ տուր քեզ մինչև վերջ խժուել...

Նազանքդ ո՞ւմ մահն է գուժում,  
Կարոտի իմ դաժա՛ն ստվեր...

22.07.01, Ստեփանակերտ



Լուսինեին

Լո՛ւյսն ուղեկից լինի քեզ...  
Ու թե բան է, կհոգնես՝

Սրտանց կարդա տողերն այս,  
Իսկ ես նայեմ թող կողքանց:

Նստենք այսպես, հիացքով,  
Ես, դու, գիրքը՝ երեքով...

08.11.02, Երևան-Դպրաբակ (ալտորուսում)



Ծաղկանց փո՛ւնջ ես, կոկոն վա՛րդ ես,  
Ով քեզ քաղի՛ կրծքին զա՛րդ ես...



Բեզ «քաղե՞լ» են արդեն,  
Թե՞ դեռ անքաղ ես դու:

Քեզ շահե՞լ են արդեն,  
Թե՞ դեռ անդաղ ես դու:

Սպանե՞լ ես դու ինձ,  
Բայց դեռ անթա՞ղ եմ ես:

Անթաղ դիա՞կ եմ ես,  
Իսկ դո՞ւ՛ զազա՛ղս... դո՛ւ...

02.10.00, Ստեփանակերտ



Ղարձնե՞ս սիրտս զերիդ,  
Անվերջ նայե՛մ թող աչքերիդ:

Բոպեաչափ այս լավ պահին  
Ինձ զգում եմ Աստծո գահին...

Նվե՛ր տուր քո ժպիտը ինձ՝  
Երկինք խմեմ քո աչքերից:

26.12.00, Ստեփանակերտ



Նունդ է՛ռք է տալիս ինձ,  
Բոպեի կորո՛ւստը սգում...

Մագերիդ քնքուշ հպումից  
Ինձ այնպե՛ս ես լավ եմ զգում...

Նայում ես ու քո աչքերից  
Երկնային լո՛ւյս է ճառագում...

17.08.01, Ստեփանակերտ



### ԲԱՌԱԽԱՂ - 1

Ակրոստիքոս՝ Թերապևտ Անահիտին՝  
պրոֆեսոր Բողբան Վերդյանի թոռնուհուն

Ակրոստիքոսը ի՛նչ տեսակ «քոս» է՝  
Նրանից վախի վարակ չկա:  
Անուշ չափածոն հար մշտահոս է՝  
Հիասքանչ խոսք է մշտավկա,  
Իսկ քեզ՝ ասում եմ՝ սիրտդ ափսոս է,  
Տե՛ս, չվարակվես, փրկվել է չկա՛...

16.11.00, Ստեփանակերտ

### ԲԱՌԱԽԱՂ - 2

Ողնենք գինին  
Թախծի՞ թատում,  
Եվ դա մի՞ թե  
Մեզ կսազի:  
  
Իսկ քածե՞րը՝  
Նազ են ծախում,  
Սակայն...  
«Փոխկերքն էլ են ուազի»:

30.07.00, Ստեփանակերտ

### ԲԱՌԱԽԱՂ - 3

Կրժ քածալ,  
Կրժ քախալ,  
Կրժ քախաղ՝  
Խելքամաղ:  
  
Կրժ քակալ՝  
Բացվող ծալ,  
Կթողնե՞ս  
Մտնեմ ներս...

18.09.00, Ստեփանակերտ



Ես այդ գիշեր մենակ չէի՝  
Ինձ հետ չէի՞ր միթե դու...

... Հույսն էր այրում իմ հոգու մեջ  
Քո պատկերը լուսատու:

15.09.00, Ստեփանակերտ

## ԱՆՈՐՈՇՈՒԹՅՈՒՆ

Անշա՛րժ է, անխո՛ս է պատկերդ,  
Դու հիմ՛ա հեռու ես, շա՛տ հեռու,  
Փայլո՛ւմ են սակայն դեռ աչքերդ՝  
Օրերիս տխո՛ւր այս գիշերում:

Չգիտեմ՝ կցրվի՞ մշուշը,  
Խավարը կձնի՞ նոր լուսայգ,  
Թե՞ ինձ հետ պիտի քո այս հուշը  
Տառապի՛ օրերում խավարած:

...Իսկ պատից կախված է նկարդ,  
Եվ անհույս խոստանում է գալդ...

17.01.01, Ստեփանակերտ

## ԸՆԴԱՄԵՆԸ՝ ՑԱՆԿՈՒԹՅՈՒՆ

Իմ նոր ծանոթ Մարինեին.  
- Թող ես նայեմ քո աչքերին,  
Բայց չդառնամ... նրանց գերին...

Մի՛ դարձրու ինձ քո գերին,  
Մի՛ կապիր ինձ քո աչքերին:

Բայց նայո՛ւմ եմ քո աչքերին՝  
Թույլ տուր դառնամ նրանց... գերի՛ն:

Գուցե չքնաղ քո աչքերից  
Բաժին հանես դու նաև... ի՛նձ...

14.06.00, Ստեփանակերտ

## ԱՆՔՆՈՒԹՅՈՒՆ

Դիշերը՝ անքուն, անդադրում, անվերջ,  
Քունը կոպերիս նինջ էր քարոզում,  
Իսկ ե՞ս՝ դեմքդ էի ուզում նկարել  
Սավանի վրա, ինչպես երազում:

Քունս չէր տանում... Բարձս գիշերվա  
Կարոտն էր թախժում քո վերադարձի,  
Բայց դու չեկար ե սավանի վրա  
Արտապատկերվեց... նկարը... բարձի:

25.07.01, Ստեփանակերտ

# ՀՐԱԺԵՇՏԻ ՓՈԽԱՐԵՆ

**Պ**նացել ես: Ես գիտեի,  
Որ հրաժեշտ չես տալու,  
Այնպե՛ս արի... Բայց ես գիտե՞մ՝  
Մեկ էլ երբ ես դու գալու:

Ամեն անցնող վայրկյանն ասես  
Հարյուր տարի է, հազար,  
Անհամբե՛ր եմ, չե՛մ կարող ես,  
Չե՛մ սպասում ես երկար:

Նույնն էլ գուցե դո՞ւ մտածես,  
Կամ էլ թե չէ՝ չգիտեմ,  
Ես այսպես եմ, սրտիս շատ եմ  
Մոտ ընդունում հարգ ու... քե՛ն...

01.01.01, Ստեփանակերտ



**Պ**ու տանը մենա՞կ ես հիմա,  
Հիմա քեզ ոչ-ոք չի՞ լսում,  
Չի՞ ազդում լուռ-թյունը քեզ,  
Ի՞նչ է այդ խորհուրդը հուշում:

Ինչո՞ւ ես պատրանքներ հեղում,  
Իզո՞ւր ես տանջում նվաստիս,  
Այսպես զուր մեխվել եմ տեղում՝  
Ընկալուչը սեղմած ականջիս:

15.09.00, Ստեփանակերտ



## Սուսանին

**Ս**իրո տողերն այս՝ քեզ նվեր:  
Ու թե դեռ չես սիրահարվել՝  
Սրտիդ դուռը միշտ բաց պահիր:  
Այնպե՛ս սրտանց սիրահարվիր  
Նոյն իր ցեղով խելագարվի՛ր...

25.11.02, Ստեփանակերտ

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՓՈԽԱՐԵՆ

## ԱՐԻ...

Խնչո՞ւ դու ինձ չես հայտնվում երազում,  
Չէ՞ որ քեզ եմ գիշեր-ցերեկ երազում:

Չէ՞ որ դու ես օ՞րս, կյա՛նքս, արև՛ս,  
Բայց լուռ ես դու, և ... անամո՞ք է սերս:

...Ես զանգեցի, իսկ դու քնած էիր դեռ,  
Երբ արթնացար՝ ձայնդ չա՛տ էր անտարբեր:

Ու թվաց, թե մոռացել ես արդեն ինձ,  
(Մի՛ նեղանա, չե՛մ խուսափի քո պատժից):

էլ չզանգե՞մ, դու քնած ես լինում միշտ,  
(Ո՞նց տարբերեմ՝ ո՞ր խոսքդ է կեղծ, որը՝ ճիշտ):

...Չէ՛, չե՛մ ուզում, որ երազս դառնանա,  
Ի՛մ այգին եկ, արի ու մի՛ հեռանա:

02.10.00, Ստեփանակերտ

## ՉԳԱ՝Ս... ԿԳԱ՝Ս...

Եթե չգաս՝ կմոխրանամ կարոտից,  
Եթե չգաս՝ հետո էլ ո՞նց նայես ինձ:

Չգա՛ս, եթե հենց այնպես ես դու գալու,  
Չգա՛ս, իսկ ես քեզ էլ բարև չեմ տալու...


Չգա՛ս... Ցավի ճիչ է՝ սիրտս չցավի՞,  
Չգա՛ս... Իմս քի՞չ է՝ քո՞նն էլ գումարվի...

Չգա՛ս... Լա՛վս... Սի՞րտս... սիրով լի՛ է նա...  
Կգա՞ս, ցա՛վս: Արի՛ խինդս լիանա՛...

Դե, մի՛... Ժպտա՛... Ես քեզ ե՞րբ եմ վատ ասել...  
Արի ու տես, թե քեզ ո՞նց եմ սպասել...

11.11.00, 14.09.01, Ստեփանակերտ

## ՉԱՓԱԾՈՆ ԲԱՑԻԿ՝ ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

 աղկած իծա՛ղ Մովինար,  
Ահա, քեզ՝ մի երգաչար,

Ուր դու ա յնպե՛ս ես «փայլում»,  
Որ... աշխա՛րհ ես հմայում:

Բայց... հեռո՛ւ ենք իրարից,  
Մոռացե՛լ ես գուցե ինձ...

...Յհանդիպո՛ւմ, քա՛ղցր քույր,  
Դու պա՛րաք ես ինձ մի... համբույր:

Վստահի՛ր ինձ՝ քանի կամ:

Քո՛

«Հեռավոր բարեկամ»

22.10.00, Ստեփանակերտ

...Կորեղ են հույզ, անըջանք  
թախիծն ո՞ւմ կարոտն է քաշում,  
Երբևէ կհասկանա՞նք,  
թե այս ի՞նչ օրեր եմք մաշում:

---



*Mundubjung* 1986-2012

---

# Յայրենի Գարգավ

Մի հայրեն ասեմ ես էլ,  
Իմ անցած օրերին ասեմ...

Համո ՍԱՀՅԱՆ



Ալեհուլյոյ, լուսեղ աչքերում  
Հմայք է՝ մաքուր կանացի...  
16.11.00

Անպէ՛ս է անուշ դերում՝  
նազանքով քնքուշ-առնացի,  
Ալեհուլյոյ-հուր աչքերում  
հիացք է, սեր-կիրք կանացի,  
Իսկ ի՞նչ է բախտն ինձ բերում՝  
տանջամահ լինելուց բացի,  
Տանջահար իմ այս... դերում  
վախենամ սի՛րտը չբացի:

16.02.01, Ստեփանակերտ



Վարդաբույր շուրթերդ կեզ  
Այրվում են շուրթերիս վրա:  
24.09.01

Անունդ՝ երազ տխուր,  
լուսեղեն թախի՛ծ է անկեզ,  
Վարդաբույր շուրթերդ տուր,  
այրվո՛ւմ են շուրթերս հրկեզ,  
Ապրո՛ւմ եմ աղոթքով լուս՝  
դողդոջուն հույսի՛կ տա մի հեզ,  
Օտար մի՛ ձևանա գուր,  
սիրո՛ւնս, սիրո՛ւմ եմ ես քեզ...

24.09.01, Ստեփանակերտ





«Մովածաղկի աչքեր»-ից)

Մի անծանոթի

Քեզ բարևեց այդ աղջիկը,  
Իսկ ինձ՝ անգամ չնայեց...

29.09.01

Բարևեց աղջիկն այդ քեզ,  
Իսկ իմ կողմն անգամ չնայեց,  
Հասկացա՞ր գոնե մի պահ՝  
Նա քե՞զ էր, թե՞ ինձ հմայեց,  
Հասկացա՞վ աղջիկն այդ, որ  
մոլորված թողեց մի հայացք,  
Դու հասի՞ր նրան, գնա՞,  
մի՛ թող, որ ետ նայի հանկարծ...



«Մովածաղկի աչքեր»-ից)

-Ես միշտ ժպտա՞մ քեզ,-  
դո՛ւ ասացիր...

28.09.00

Ինձ այնպես լա՛վ ես ժպտում,  
Թվում է՝ դու ես իմ... կի՛նը,  
Կործանվե՞մ թող քո գրկում,  
կլի՛նե՞ս դու իմ գրկինը,  
Հուզո՞ւմ ես համակ ու սեր,  
կարոտիս ցավն է քո... գինը,  
Որքա՛ն եմ, գիտե՞ս, ուզում՝  
դու՛ լինես միշտ իմ մտքինը:  
09.10.00, Ստեփանակերտ



Քո թախծոտ աչքերում երազ կա վայրի,  
Ես ինչպե՞ս թողնեմ քո թախիծն ինձ այրի...  
17.07.01

Կարոտ կա աչքերիդ մեջ,  
աչքերիդ ցոլանքը վայրի  
Ես ինչպե՞ս ներս թողնեմ գա,  
բա որ գա ու սիրտս այրի՞,  
Իսկ հետո՞, ինչպե՞ս ապրեմ:  
Մի՛ ստիպիր, որ սիրտս գայրի...  
...Ի՛նչ հեշտ ես դու մարտում, թո՛ւղթ,  
գովեստն ու... հեզնանքը սայրի:  
17.07.01, Ստեփանակերտ

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ  
ԳՐԱՆՎԱԿ  
ՊՐԻՆՏ



Ասա՛, ինչո՞ւ ես ի՛նձ աչք ածում,  
 Երբ ժպտում ես ու... աղոթք հայցում...  
 24.08.03

Պո՛ւր եկար կնոջս դու՛  
 Հարցնո՛ւմ էր անվերջ քո մասին:  
 -Ո՞վ էր այդ աղջիկին,-ասաց,-  
 որ ժպտում էիք միասին,  
 Թե՞ ուրիշ աչքով նայող  
 չունի, որ քեզ է աչք ածում...  
 ...Ի՞նչ ասեմ, որ ճիշտ դուրս գամ,  
 Հարցո՛ւմն է պատասխան հայցում:  
 16.03.03, Ստեփանակերտ



Դու ի՞նչ ես ուզում ինձանից,  
 Բաց թող ինձ՝ գնամ ես, թախի՛ծ...  
 17.07.01

Պա՛վեր ես նյութում, թախի՛ծ,  
 բայց էլի գոհ եմ քեզանից,  
 Քեզ ե՞րբ եմ վատ խոսք ասել,  
 խիղճ ունե՞ս դու գոնե մի քիչ:  
 Սիրոս քեզ երգ է տալիս,  
 իսկ դու միշտ ցա՛վ ես բերում ինձ,  
 Հոգնել եմ, բաց թող՝ գնամ,  
 տարփածու՛տնավե՛ր թախի՛ծ...  
 27.07.01, Ստեփանակերտ



Ես ուզում եմ ցմրուր  
 Քո թովչանքը ճաշակել...  
 19.07.01

Նի՞նչ, որ սիրագարված  
 աչքերի ցոլանք տվեցի,  
 Ժպտա՛, թող աշխարհը քեզ  
 չթվա դատարկ մի խեցի,  
 Թե՞ իզուր երազս ես  
 քո առաջ այսպես ինկեցի,  
 Ե՞րբ սիրո վայելք տեսա,  
 այսքան շուտ ինչո՞ւ ծնկեցի:  
 21.04.01, Ստեփանակերտ



Ո՞ւր ես հիմա՝ չգիտեմ,  
Արի՛, լա՛վս, քեզ գգվեմ...  
07.07.01

Անվե՛րջ եմ քեզ սիրելու,  
գալո՞ւ ես ինձ մոտ դու նորից,  
Որ փնտրեմ աչքերիդ մեջ  
երազներ, կարոտ ու թախիծ,  
Գրկեմ քո ուսերը մերկ  
ու քամեմ գինին շուրթերիդ,  
Արի՛, քեզ սիրո՞ւմ եմ ես,  
աչքերդ թող մ'իշտ ժպտա՛ն, ի՛նձ:  
28.09.01, Ստեփանակերտ



Կնացի՛ր ինձ, իմ լա՛վս,  
Ես պաշտո՞ւմ եմ քեզ...  
01.08.01

Սալտո՞ւմ ես նորից, սիրո՞ւն,  
ամա՛ռ ես, ա՛լ ես դու ու կեզ,  
Ուզո՞ւմ եմ քո ժպիտը,  
ափսո՞ս է, որ ինձ նվիրես,  
Աչքերդ հուր են ցալում,  
օրերդ խինդ են ու հրկե՛զ,  
Կնացի՛ր, լա՛վս, դու ինձ,  
սիրո՞ւմ եմ՝ պաշտո՞ւմ եմ ես քեզ...  
26.05.04, Ստեփանակերտ



Երազը՝ սուրբ, նաև սուտ է, նաև՝ խաբկանք,  
Այնպես արա, որ չդառնաս... երազախաբ...  
24.08.03

Ենության ուշ գիշեր էր,  
երբ նրան այցի գնացի,  
Ուզեցի շուտ ետ դառնալ,  
բայց գիշերն այնտեղ մնացի,  
Եվ հետո... այնպե՛ս լավ էր,  
որ, անկեղծ ասած, գղջացի,  
Թե ինչո՞ւ մ'ինչ այդ նրան  
չտեսա՛, չճանաչեցի՛...  
25.02.03, Ստեփանակերտ

Իմ համար քեզ համար  
Կարգադրված  
Կարգադրված



Այն Ձոյային, ում Շիրազը կոչեց Ձվարթ...  
-Գե՞մ ես՝ պահիր անվան երկու ձևերն էլ այդ...

22.03.03

Պայտառ է, զվարթ է նա,  
    ու այնպես լավ է հիշելում,  
Ոչինչ չի կորչի նրա  
    պահած ու փայած հուշերում,  
Բայց այնպե՛ս չվար է, որ  
    պահվելով կյանքի փշերում,  
Մի շունչ ու մի տուն է, և  
    հուշերի հետ է գիշերում...  
16.02.01, Ստեփանակերտ



Եղե՞լ եմ ես դրախտում...  
Հիշե՞լ եմ քեզ դրախտում:  
17.07.04

Մի՛ գոցիր, բա՛ց արա, թող  
    արևի շողն ընկնի վրան,  
Չե՛մ տեսել երբեք կյանքում  
    այդքան մեծ հատիկներ նռան,  
Բա՛ց արա դրախտդ գոց՝  
    մրգերիդ բույրով արբենամ,  
Եղե՞լ եմ, գուցե կասեմ,  
    դրախտում ես էլ մի անգամ:  
17.07.04, Ստեփանակերտ



Ծոցիդ մեջ մի գույգ գերված  
    սեկտուց ճերմակ աղավնի  
Ուզում են դուրս պրծնել, որ  
    վայելեն համբույրն արևի...  
27.07.04

Անդակված-գերված մի գույգ  
    սեկտուց ճերմակ աղավնի  
Ուզում են դուրս թռչել, բայց  
    ամուր են կապանքներն էլի,  
Սեղմվել են պատերի մեջ՝  
    քնքշանքի՛ կարոտ, արևի՛...  
...Կրճկալիդ պայթյունը լուկ  
    կփրկի նրանց երևի:  
13.07.04, Ստեփանակերտ



Ինչ ասես-չասես՝ մեկ է,  
 ուրազն իր արածն է անում...

16.09.03

Մի՛ եղիր ուրազի պես,-  
 Հին առածն այսպես է հուշում,-  
 Դու մեկ՝ այս, մեկ՝ այն, իսկ նա  
 միշտ դեպի իրեն է տաշում...  
 ...Կորել են հույզ, անըջանք՝  
 Թախիծն ո՛ւմ կարոտն է քաշում,  
 Երբեք կհասկանա՞նք,  
 Թե այս ի՛նչ օրեր ենք մաշում:  
 29.09.01, Ստեփանակերտ



Տխո՛ւր եմ բաժանման օրից,  
 Հույս չունեմ, թե կգաս նորից:

16.03.10

Դնացել ու չես գալիս,  
 Հեռու ենք արդեն իրարից,  
 Մոռանալ չեմ կարող քեզ՝  
 չես հիշում երևի էլ ինձ,  
 Ուրա՞խ ես, անհո՞գ, իսկ ե՞ս՝  
 տխուր եմ բաժանման օրից,  
 Թախիծն է սիրտս պատել՝  
 Հույս չունեմ, թե կգաս նորից:  
 16.03.10, Ստեփանակերտ



Արևը սարի ուսին  
 կրակն իր մարեց ու գնաց,  
 Արևից սարի ուսին  
 շողերի մի խրճիկ մնաց...

30.03.03

Եկել եմ, նստել այստեղ,  
 նստել եմ լուռ ու մնացել,  
 Արևն էլ սարի ուսին  
 կրակն է մարել-գնացել,  
 Իսկ սարի ուսից կարճ իր  
 շողերի մի փունջ է կառչել...  
 ...Նստել եմ լուռ ու մենակ,  
 չգիտեմ, թե ինչ մտածել:  
 12.09.05, Ստեփանակերտ



Արի՛, մի՛ գնա,  
Եկե՛լ ես՝ մնա՛...

Փող. Երգից

Չգիտեմ՝ գնա՞մ, մնա՞մ,  
ո՞րն է ճիշտ և որը՝ սխալ,  
Մնալս՝ անհեռատես,  
գնալս՝ անհեռանկա՞ր,  
Անիմաստ ու անտեղի՞,  
մնա՞լս՝ մշուշվե՛լ-միտա՞լ...  
Ի՞նչ ասեմ... Բայց մարդ ենք, չէ՞,  
գալուն էլ... գնա՛լն է ախար...

30.05.03, Ստեփանակերտ

# Մայրս Իջանիս

## ՔՈ... ՇՔԱՆՇԱՆԸ

...ինչքան էլ ես քո մասին խորհեմ, եղբա՛յրս,  
թեև հեռվում՝ անկասկած ներկա՛ ես տանս...

Դու դեռ մանուկ օրերից եղել ես արի,  
Խորթ են եղել քեզ անկուշտ բարքերը դարի,  
Իսկ երբ ծագեց լուսարփին Արցախյան շարժման,  
Ամանացորդ արվեցիր քո կամքով նրան:

Քեզ կոչել են անունով քաջ Զորավարի  
Որ չլքի երբեք քեզ ոգին պայքարի:

Ծանր էր սակայն, մենք՝ անփորձ, թշնամին՝ ուժեղ,  
Ցավ էր դառել ոսոխը, մեր տունն էր խուժեղ,  
Գետաչենը դատարկվեց, Շահումյանն ընկավ,  
Մարտակերտը պինդ էր դեռ՝ թեև արնաքամ...

...Քո զնդացրով անվարան նետվեցիր առաջ,  
Որ թշնամին ճողոպրի քեզնից ահառած:

...Անունդ միշտ հավատքով կրեցիր կյանքում,  
Հերոսի պես կռվեցիր դու ամեն մարտում,  
Եվ իմացյալ՝ զնացիր մահվան հանդիման,  
Ազատագրած հողերդ են քեզ շքանշան:

18.02.00, Ստեփանակերտ

ՄԱՐՏ ԿԱՆՈՒՄ ԿՐԻՍՏՈՍ

## ԷՔՍՊՐՈՍՏ

Իմ չորս բալիկներին,  
Հուլյու ու գալիֆներին...

Ես առաջնեկիս կոչել եմ Սամվել՝  
Անունով Սամվել Մամիկոնյանի,  
Եվ պատրաստ եմ արդ դաշունահարվել՝  
Վաստակեմ պիտակ թե դավաճանի:

Երկրորդին՝ Սուսան, երրորդին՝ Մարիամ,  
Որ ազնիվ լինեն ու աստվածասեր,  
Զորրորդին՝ Անդրանիկ, եղբորս նման,  
Որ եղբայր լինի ինձ, նաև ընկեր...

...Իմ բալիկները թող շուտ մեծանան,  
Հայրենյաց հողի պաշտպանը դառնան...

14.05.99, Ստեփանակերտ

## ԵՂԲԱՅՐԱ, ԱՐԻ...

18 ապրիլի 1994 թ., Հասանդայա:  
Կատաղի մարտում արիաբար զոհվել է  
գնդացրորդ եղբայրս՝  
Անդրանիկ Արսենի ԳՐԻԳՈՐՅԱՆԸ:

Իչեր է, Ամանոր, իսկ դու դեռ... չկա՛ս,  
Բայց թույլ մի զգացում հուշում է՝ կգա՛ս:

Կգա՛ս ու աղմուկով դուռս կբացվի,  
Կունկնդրես կարոտած պատերիս լացին:

Կգա՛ս, որ կարոտած սիրտս ջերմանա,  
Երազս թողնես ինձ, թախիծս գնա՛:

Կգա՛ս, որ էլ իրար չմնանք ծարավ...  
(Երա՛զս, կարո՛տս, թախիծս տարա՛ր):

Ի՛նչ «անխիղճ» տղա ես, եղբա՛յրս, արի՛,  
Որ ուրախ սկսվի գոնե ա՛յս տարին:

Այստեղ էլ ձյուն տեղաց կարոտիս սրտին...  
Բայց ինչ էլ լինի՝ քեզ սպասե՛նք պիտի:

Բայց ինչ էլ լինի՝ դու անպայման կգա՛ս,  
Որ օ՛րս, արև՛ս, գալի՛քս դառնաս...

31.12.00, Ստեփանակերտ





Արցախյան պատերազմի նահատակ, անվեհեր դիպուկահար  
Մարգարիտ Վարդանի ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Իսկ առավոտն այս չքնաղ թող ցնծու թյամբ ճառագի,  
Ապրի մեր մեջ ու մեզ հետ խաղաղության իղձը վառ,  
Եվ թող հիշենք միշտ նրանց, ովքեր հանդուժն ճարակի՝  
Ելան արի, անվարան ու զոհվեցին մե՛զ համար...  
...Եվ՝ քեզ, որ չե՛ս երկնհե՛լ, չե՛ս զգացել սրտի դող:


Այս նոր օրը նո՛ր շնչով, նո՛ր երանգով բացվի թող...

22.02.00, Ստեփանակերտ

## ՓՈՔՐԻԿԸ

2 փետրվարի 1995 թ., Սեյտուլան:

Դավադիր ականի զոհ է դարձել  
լեզենդար Փոքրիկը՝ Արթուր Օհանյանը:

 Փոքրիկը պառկել է դազաղում,  
Դազաղը Փոքրիկին չի սագում:

Փոքրիկին սագում են դիրքերը,  
Կռիվը, պայթարը, զենքերը:

Փոքրիկն ո՛ւր ասես՝ չի եղել,  
Փոքրիկն ի՛նչ ասես՝ չի տեսել:

Շահե՛լ է նա բոլոր մարտերը,  
Սարսե՛լ են Փոքրիկից թուրքերը:

Բայց հիմա պարտվե՞լ է Փոքրիկը,  
Ականը պայթե՛լ ու... մոտի՞կ էր:

Մոտիկ էր ու հիմա... դազա՛ղ է:  
Դազաղում Փոքրիկը խաղա՛ղ է:

...Փոքրիկն իր կռիվն արել է,  
Սակայն մեր հողում դեռ կռիվ է:

Ու ելնում են տղերքը կրկին՝  
Սրտերում վրեժը Փոքրիկի...

04.02.95, Գյուլիշա (ԿՊՇ, գործող բանակ)

ԳՐԱՆՈՒԹՅԱՆ  
ՄԱՐԿԱՆՆԵՐԻ  
ՍԵՐԻԱ

# ՍԵՅՍՈՒԼԱՆԻ ԱՎԵՐԱԿՆԵՐՈՒՄ

Թուրքն է անցել այստեղից...  
Վիկտոր ՀՅՈՒԳՈ

Նորից՝ արյուն, նորից՝ թալան,  
Նորից՝ մամուած տուն ու քարեր,  
Դժո՞խքն է սա դանթեական,  
Թե՞ «այստեղով թուրքն է անցել»:

Ուր քայլում ես՝ պատեր փլված,  
Ուր նայում ես՝ մահվան հետքեր,  
Քո ճակատին ա՞յս էր գրված...  
Չէ՛, այստեղով թուրքն է անցել:

Քանդված տներ, քանդված դպրոց,  
Պղծված հին-նոր գերեզմաններ,  
Ջարդված այգի ու օրորոց...  
Չէ՛, այստեղով թուրքն է անցել:

Թուրքն է անցել, սակայն այսօր  
Սեյսուլանում մե՛նք ենք կանգնած,  
Որ ոչ մի քար չպակասի  
Ու ետ չգա թուրքը հանկարծ:

Մե՛նք ենք կանգնած, որ ետ չգան,  
Ավերակներն էլ չպղծեն,  
Որ չենանան օջախները,  
Օրորոցներն աղմկե՛ն...

17.02.95, Սեյսուլան (ԿՊՇ, գործող բանակ)

## ՃԱԿԱՏԱԳԻՐ

Կոմիտասին ու Նունեին՝  
անապական սիրով...

Նա պահում է ափը՝ մոմակալ է ասես,  
Իսկ դու մոմ ես՝ վառվող աչքերի մեջ նրա,  
Ամբանալու համար դեռ չա՞տ պիտի «լացես»,  
Կատարյա՞լ չէ ափը, կասկածո՞ւմ ես, տղա՛...

Ու՛ կաթում ես, կաթ-կաթ, տե՛ս, արցունք է ափին,  
Տե՛ս, կարոտիդ՝ նրա երազանքն է ծալվում,  
Մոմակալը թախծի աչքն է հառել ճամփին...  
...Մո՛մ, հերի՛ք է, այդպես մինչև ո՞ւր ես հալվում:

16.04.01, Ստեփանակերտ

## ԿԱՐՃԱՏԵՎ ՄԱՐՏ

8 հունվարի 1994 թ., Ներքին Սեիդահմեդլի:  
 Մանր վիրավորվել է 4-րդ վաչտի քաջարի հրամանատար  
 Ժիրայր Սլավիկի ՄԿՐՏՈՒՄՅԱՆԸ,  
 գոհվել՝ դասակի հրամանատար  
 Կարո Արտեմի ՄԻՔԱՅԵԼՅԱՆԸ  
 և շարքային Արմեն էդուարդի ԲԱԲԱՅԱՆԸ:  
 Հրազենային ծանր վնասվածք են ստացել  
 ևս 8 զինծառայող:

Տ՛մ դեմ դաշտն է աղմկոտ՝  
 Մա՛հ, կոտորած, արյո՛ւն,  
 Ձեռքերն իրար են խառնվել  
 Անհավասար մարտում:

- Արմենն ընկա՛վ,- Կարոն էր,-  
 Իսկույն առաջ նետվեց:  
 Հրազենից այդ պահին  
 Մի կարճ կրակահերթ  
 Նրան գետնին տապալեց  
 Ու նա պառկեց հանգիստ՝  
 Անէացած աշխարհի  
 Աղմուկից ու... բախտի՛ց:

Տղաները վազեցին.  
 -Նահանջո՛ւմ են, հասե՛ք...  
 -Լրբի լակո՛տ,-Ժիրայրի  
 Հրազենը խոսեց,  
 Ու փռվեցին թուրքերը,  
 Սակայն վերջին պահին  
 Վիրավորեց նռնակը  
 Հրամանատարին:

... Քիչ անց մարտն ավարտվեց,  
 Մի կարճ խաղաղություն  
 Մթնշաղի հետ ծածկեց  
 Այգի, փողոց ու տուն:

23.07.95, Ստեփանակերտ (ԿՊՇ, գործող բանակ)

# ՊԱՏԳԱՄ ՀԱՅՐԱԿԱՆ

Սամվել որդուս

Այրվում է այստ՝ քո տղայական համբույրից այս տաք,  
Ողջագործման պահն անցած է, իսկ ե՞ս տխո՞ւր եմ, հպա՞րտ:

Գիտե՞մ սոսկ՝ պիտի չընկրկես, լինես աննահանջ, արի՛,  
Որ ընտրած ուղիդ միշտ կանաչ լինի, միշտ լինի բարի:

Այսօր սանիկ ես դու վարժարանի, իսկ վաղը՝ զինվո՞ր,  
Քո վաղվա օրը իմաստավորի՞ր այստե՛ղ ու այսօ՞ր:

Երբեք մի՛ ցանկա հարթված-տրորված ուղիով քայլել է,  
Հույսդ դո՛ւ եղիր, դու սովորիր քո՛ ամբույթյամբ փայլել:

Թույլ չէ՛ս եղել դու, գիտե՞մ ես, ոգին քո չի՛ թուլանա,  
Բայց այնպես արա՛ քունը քեզ հաղթել չկարողանա՛:

Ամո՛ւր եղիր միշտ, ինչպես պողպատը, որ ինչքան ծեծվում,  
Այնքան ավելի կարծրանում է՝ նա, ու այնքան թրծվում:

Իմաստություն և ուսում ձեռք բեր, ու՛ կկարողանաս,  
Դու պարտավո՞ր ես այս թոհուբոհում դիմանալ, տղա՛ս:

Իսկ թե թույլ եղար՝ վատ սովորույթ է գութ աղերսելը,  
Սիրիր քո գործն ու պատի՛վ համարիր զինվոր լինելը:

Մատս՝ ձգանին, կսպասեմ մինչև առնականանաս,  
Հերթս կփոխեմ այնժամ, երբ որ դո՛ւ հերթափոխի գաս:

Հայրենյաց պաշտպան զինվորը դառնաս՝ ապավինենք քե՛զ,  
Բայց ինչ էլ լինի՛ թշնամու առաջ երբեք չընկրկես:

Եվ հիշի՛ր քո քաջ հորեղբոր կամքը ու ոգին տոկուն,  
Որ ոսոխի դեմ՝ երբեք չծնկեց, ընկավ թե՛ մարտում:

Գումարի՛ր դու դա՝ քո ոգուն, տղա՛ս, եղի՛ր աննահանջ,  
Հաղթության կանաչ ճանապարհներով քայլի՛ր միշտ առաջ:

...Աղոթո՛ւմ եմ ես Աստծո ամեն օր քեզ համար, տղա՛ս,  
Որ այնպես ապրես՝ մահին էլ հաղթել դու կարողանաս...

29-30.08.01, Ստեփանակերտ

# ՋԻՆՎՈՐԱԿԱՆ ԽՃԱՆԿԱՐ

## 1. ԱՅՍ ԳԻՇԵՐ

Օ՞րերտ կլիինի այս գիշեր,  
 Անձրև՝ կգա երևի,  
 «Սիփան-7»-ի դիրքերում  
 Մեր տղաներն են էլի:

Քամին պոկվում է տեղից,  
 Մեծում քարերը սարի:  
 -Պի՛նդ կանգնեցեք, տղանե՛ր,  
 Բաճկոններդ չտանի՛ր...

Ծիծաղում են տղերքը,  
 Ու սաստկանում է քամին,  
 Իսկ քամու հետ անձրևը  
 Հորդ թափվում է գլխներին:

Շրջում եմ ես դիրքից՝դիրք,  
 Խրամատից՝խրամատ,  
 - Չե՛նք լքի մեր դիրքերը,  
 Պարո՛ն ավագ լեյտենանտ...

- Կդիմանանք,- ասում են,-  
 Չենք կորչի այս ցրտերում,  
 Հայրենական օջախի  
 Մե՛րն է վառ մեր սրտերում...

...Տեղատարա՛յի է, անձրև՛,  
 Սարը ծափի՛ն է տալիս,  
 Իսկ թշնամու դիրքերից  
 էլ ձեն-ծպտուն չի գալիս:

07.06.95, «Սիփաններ» (ԿՊՇ, գործող բանակ)

## 2. ԴԱԴԱՐԻ ՊԱՀԻՆ

Ռուզանիս

Միշտ եղիր այդպիսին՝  
 Անկաշառ ու բարի,  
 Ծանրաբեռ՝ հոգսերով  
 Այս խելառ աշխարհի:

Մարտի 30-ին  
 ԿԱՐՆԱԿԱՆ  
 ԿՈՄԻՏԵ

Իսկ եթե հոգսերդ  
Սկսեն քեզ նեղել,  
Դու տոկա, զի կյանքում  
Հպարտ ես միշտ եղել:

Ու մնա՛ այդպիսին,  
Միշտ՝ սրտիս բարձունքում,  
Որ այնտեղ մեն՝մենակ  
Փայփայյեմ քեզ թաքուն...

23.06.95, Ստեփանակերտ (ԿՊՇ, գործող բանակ)

### 3. ԼԵՅՏԵՆԱՆՏ ՀՐՈՆ, ԳԵՂԱՄԸ, ԳԻՆՈՍՅԱՆԸ ԵՎ ՄՅՈՒՄՆԵՐԸ

Մար է բռնում կարտոֆիլը վառարանի վրա  
Ու Գեղամն է ձեռքը տանում կրկին վառարանին.  
- Հենց գալիս եմ պահակակետ՝ մտքով տանն եմ էլի,  
Ի՞նչ գործ ունեմ ես բանակում՝ զնայի իմ բանին,  
Պառկում էի բազմոցին ու հեռուստացույց նայում,  
Կամ ողջ օրը թրև գալիս մեր Չարբախում մենակ:  
- Ի՞նչ ես գլուխ տանում իզուր: Արտա՛կ, ի՞նչ ես անում,  
Փոխարինիր Գինոսյանին, նախաճաշը սառավ...

Արտակն իսկույն առնում է զենքն ու վռագ դուրս վազում,  
Գինոսյանը ներս է մտնում ամբողջովին կապտած:  
- Հը՛, սառե՞լ ես դրսում, «կիչկա՛», - լեյտենանտն է էլի:  
- Գինոսյան, դո՞ւ ինչ ես հիշում, - զրույցին եմ խառնվում:  
- Պարո՛ն ավագ լեյտենանտ, ես... - կմկմում է մի քիչ,  
Ու ձեռքն առնում ճաշով լցված կաթսայիկը իսկույն:  
- Իսկ ի՞նչ հիշի Գինոսյանը՝ ոչ խելք ունի, ոչ դարդ, -  
Կատակում է Գեղամն էլի:

...Քիչ անց «Ճ»-ն է կապվում.  
- «Ճ2», հերթափոխ է, տղաներին հանի՛ր...  
Եվ լեյտենանտ Հրոն իսկույն հրաման է տալիս.  
- Երկրորդ դասա՛կ, երեք շարքով իմ ետևից շարվի՛ր...

Մեքենաներն աղմկելով շտապում են առաջ  
Ու բազա են վերադառնում տղաները հոգնած:

7-18.02.95, Սեյսուլան (ԿՊՇ, գործող բանակ)

#### 4. ԶԻՆՎՈՐ ԹՈՓԱԼՅԱՆԸ

Դաշտային ելքում

*Էնց որ կրկին հավաքվում ենք սպաներով մեկտեղ՝  
Սպայական վրան է վազում զինվոր Թոփալյանը:*

*- Ո՞վ է էլի քեֆիդ դիպել, «խելագարի» մեկը...  
Ու կախում է գլուխը լուռ՝ զինվոր Թոփալյանը:*

*Իսկ թե ձայնդ բարձրացրիր՝ սկսում է վայել,  
Հետո էլ թե՛ «մե՛ջքս է ցավում»՝ զինվոր Թոփալյանը:*

*Ո՞վ է վրանը ջուր բերում, վառում վառարանը,  
Ե՞ս՝ չէ, դո՞ւ չէ, նա՞ չէ, բա ո՞վ՝ զինվոր Թոփալյանը:*

*Հիշում է իր սեղանիկը ու ա՛խ քաշում մտքում,  
Երևանի Ավանից է զինվոր Թոփալյանը:*

*Երազում է շուտ ավարտել ծառայութ՛յունը,  
Ու ետ դառնալ նախկին կյանքին՝  
զինվոր Թոփալյանը:*

12.02.95, Գյուլիշա (ԿՊՇ, գործող բանակ)

# 40-րդ Ինչպե՞ս

## ՎԱՂՎԱ ՄԱՍԻՆ, ԵՎ՝ ԱՅՍՕՐՎԱ

40-ամյակիս նախօրյակին

Ես վաղը դառնում եմ քառասուն տարեկան,  
Իսկ այսօր դեռ փոքր եմ, քառասուն դեռ չկամ:

Քառասուն՝ զարմացած հայացքս մաղում է,  
Կրծքիս տակ արյունս թվում է՝ պաղում է,  
Ջարկերը դառնում են չափավոր ավելի,  
Ես այս 6՞րբ՝ քառասուն, գժվե՞լ եմ, երևի՛...

Ատո՛ւմ եմ ես թիվը, տարիքը՝ առավել,  
Ասում եք, որ հասուն տղամա՞րդ եմ արդեն:

Ուզում եք, որ չափե՞մ, հաշվարկե՞մ քայլերս,  
Խոհե՞րս, գիշե՞րս, ցերե՞կս, ցավե՞րս:  
Չե՛մ ուզում, չե՛մ կարող հաշվարկել տարիքս,  
Տվա՛ծս, առա՛ծս, պարտքե՛րս, տալի՛քս...

...Քառասուն տարեկան դեռ վա՛ղն եմ դառնալու,  
Իսկ հիմա դեռ փոքր եմ, գնում եմ... խաղալու:

Անհոգ եմ, օրերս օրորի թող քամին,  
Եվ նման այն խիզախ, անձնագոհ տղային,  
Որ ընկավ՝ տասնութը դեռ հազիվ բոլորած,  
Ու փրկեց մեր ոգին, անունը մեր կորած...

09.06.99, Երեկո, Ստեփանակերտ



Երբ յուր ճակատին ստվեր կար ամպի,  
Արևը երգել երգն իր կարապի,  
Գնում էր՝ օրվա հոգսերից հոգնած,  
Ժայռածերպերում հանգստանալու:

Այնպես էր գնում,  
Ասես էլ երբեք ետ չի դառնալու...

03.11.00, Ստեփանակերտ



## ԽՈՍԵՆՔ ՇՇՈՒԿՈՎ

Մի քիչ կամա՛ց,  
Այնպե՛ս խոսիր, որ չարթնանամ,  
Բայց հարցրու, թե երազում  
Ի՞նչ եմ տեսնում ես այս անգամ:  
Եվ կամ էլ՝ ո՞ւմ:  
Գուցե մեկը քեզնից ծածուկ  
Մտել է իմ երազի մե՞ջ,  
Բա չիմանա՞ս:  
Բա՛, կիմանա՛ս...

Տխրությունս թաց է այնքան,  
Որ թե մզեմ՝  
Չոր օրերս  
Անշուշտ պիտի խոնավանան:  
Բայց ո՛չ դարնան անձրևներից:  
Գարուններս երանի՛ թե  
Միշտ մնային ջրոտ-կանաչ՝  
Անձրևային-արևային...  
Տաք օրերս դարնան նման  
Ժամանակի՛ն ժամանեին:  
Գայի՛ն:  
Գայի՛ն...

...էլ չի լսվում շշուկը քո՛  
Քնո՞վ անցար:  
Դե, օրորի՛ր՝ ես էլ քնեմ:  
Մի՛ խանգարի՛ր:  
Մի՛ փախցրու քունս իզուր:  
Ի՞նչ, չքնե՞մ...  
Բա երազիս մյո՞ւս կեսը...  
Ո՞ւմ վստահեմ:  
Մի՞ թե... նրան:

06.06.02, Ստեփանակերտ

## ՃԱՆԱՊԱՐՏԻՆ...

Այնպես ստվա՛ր է ծառերի շարքը,  
Այնպես ամո՛ւր են իրար գրկել,  
Որ ոչ մի սամու՛մ, ոչ մի փոթորիկ  
Չի՛ կարողանա նրանց ծնկել:

Անհանգիստ թարթառն արդեն հանգիստ է,  
Լենկթեմուրները կարող են գալ,  
Բայց թող չփորձեն, հիմա դժվա՛ր թե  
Նրանք մեզ հաղթել կարողանան:

Ձորը լցվե՛լ է, մշո՛ւշ է, մե՛զ է,  
Ձորից բարձրացող մուժը բարակ  
Եկել լցվե՛լ է, շուրջը դարձրել է  
Աստղահանդեսի համաճարա՛կ:

...Իսկ կողքիս նստած այս աղջնակը  
Ամուր գրկել է իր փոքրիկին:  
Այնպե՛ս մատղաշ է նագուկ էակը,  
Որ դժվա՛ր նրան համարես կին...

24.06.01, Կոճողոտ-Ստեփանակերտ (ավտոբուսում)

## ԲԱԺԱՆՎՈՒԻՄ ԷԻՆ...

Բոլորն իրարից բաժանվում էին:  
Անձրեն էր անվերջ ծեծում վերևից,  
Քարափը՝ ամպից, ծառը՝ կեղևից,  
Անցավ, անաղմուկ բաժանվում էին:

Այնպե՛ս տխուր էր այդ տարածամին,  
Նույնիսկ թախծում էր կարապը անբառ,  
Նա, որ երգում էր միայն մի անգամ,  
Այն էլ՝ վերջին օրն ու վերջին ժամին:

Բոլորն իրարից բաժանվում էին...  
Խորհրդավոր էր ցավն էլ, թախիծն էլ,  
Բաժանվո՛ւմ էին... Բաժանվելիս էլ՝  
Նրանք միացման խորհուրդն ունեին...

03.11.00, Ստեփանակերտ

## ԳԱՐՆԱՆ... ՓՈԽԱՐԵՆ

Պարունը նոր է հունի մեջ մտնում,  
 Բայց ի՞նչ՝ ոչ աշուն, ոչ էլ ամառ է,  
 Մառախուղ-անձրև օրն է լուռ մթնում,  
 Արևն՝ անզիջում-այրող-համա՛ռ է:

Հավատի որմին թախիժը թառել՝  
 Մահվան կորստից փրկվել է ուզում,  
 Իր համար մի պուտ արև է ճարել,  
 Ու էլ աշխարհի ցավից չի հուզվում:

Երեկոն կախվել օձիքից օրվա,  
 Ողջ վաստակածը խլում տանում է,  
 Իսկ մնացածը, բաժինքը նրա,  
 Գիշերը առել ու կլանում է:

19.05.01, Ստեփանակերտ

## ԱՅԼԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Մտելայային՝ հոր՝ բազմավաստակ մանկավարժ  
 Սերգեյ Գրիգորյանի հիշատակի համար

Աչքերիս առջև հեթանոսափայլ քո մարմինն է, Տե՛ր,  
 Տխուր նայում եմ՝ մարմինը կորցրած նրա աչքերին,  
 Պառկած է՝ մարմինն անզգա, անէ, իսկ աչքերն ամպել,  
 Ոչինչ չեն տեսնում, չեն զգում ոչինչ...

Մարմինն՝ անզգա, ամպոտ աչքերով նայում է հեռուն,  
 Ափսոսանքի թույլ մի շի՛թ է կախվել հայացքից նրա,  
 Հիմա նրան ա՛յլ հեռաստանների թովչանք է գերում,  
 Եվ դեռ ափսոսա՞նք՝ թողածի՞ վրա...

Մարմինն՝ անզգա, իսկ հոգին արդեն սլանում է վեր,  
 Հոգին ազատ է, մարմին-պատյանի կարիքն էլ չկա,  
 Գալի՛ս է: Դու քո արքայութ՜յունում պատվի՛ր նրան, Տե՛ր...  
 Գալիս է՝ որպես Սուրբ Դարձի վկա՛:

14.08.00, 03.07.02, Ստեփանակերտ

## ԵՐԿՐԱՇԱՐԺ

«Հոռոզյան կոթողը» կինոնկարը դիտելիս ակամա հիշեցի  
 1988-ի դեկտեմբերյոթյան Սպիտակը, Գյումրին, Ստեփանավանը...

Սյուները էլ չեն դիմանում,  
 Սյուները տեղի են տալիս,  
 Պատերը ճոճվում են օդում,  
 Պատերը իրար են գալիս:

Օդ ու ջուր խառնվել են իրար,  
 Արհավիրք-աղմուկ է չորս դին,  
 Մթնել է օրը ցավազար  
 Ու չոքել աշխարհի բկին:

15.09.00, 20.03.02, Ստեփանակերտ

ՄԱՐԿՆԵՐ 40-ԻՆ ԿԵՐ

# ԼԱՎ ՄԱՐԴՈՒՆ՝ ԲԱՐԻ ՑԱՆԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ

Ուշացած խոսք՝  
Բազրատ Մկրտումյանին

... Իսկ ծերուկ թյունն իրեն զգացնել է տալիս,  
Իսկ ծերուկ թյունն արդեն անում է իր սև գործը:  
Իսկ փողոցը բանուկ է՝  
Գալիս են, գնում են,  
Խմբերով, մեկ-մեկ, երկու-երկու,  
Ամեն մեկն իր գործով,  
Իր հոգսով ծանրաբեռնված:

Քայլում է Բազրատ Մկրտումյանը

Հարևան մայթով:

Քայլում ու չի էլ նկատում

Հակադարձ մայթով քայլողներին,

Ծանոթներին նույնիսկ:

Դե, ի՞նչ անես, ճակատագիրն անողոք է,

Ուզես՝չուզես:

Իսկ Բազրատ Մկրտումյանը երիտասարդ է դեռ՝

Ընդամենը... վախսուն և մի քանի տարեկան:

07.07.90, Ստեփանակերտ

## ԲԱՅՑ՝ ՈՉ ԱՓՍՈՍԱՆՔ

Եղին ծաղիկներ ես քեզ բերեցի,  
Ի նշան՝ սիրո, ոչ առելու թյան,  
Բայց դու նվերս արհամարհեցիր  
Ու նախընտրեցիր սիրո մեջ նրան:

Դասավորվեցի՞ր, չգիտեմ... Ի դեպ՝  
Քեզ կորցնելուց չեմ տուժել բնավ,  
Բախտը շուտ է եղել իմ հանդեպ,  
Ինձ նվիրել է մի չքնաղ Ռուզան:

Կյանքի ժխորում աղջամուղջային  
Հաճախ անհարկի գրկանք ենք կրել,  
Սակայն տոկուն ենք եղել ավելի,  
Եվ ստիպված ենք եղել համառել:

... Իսկ քեզ՝ հիշեցի ոչ հանուն ցավի,  
Թող սպիացած վերքս չնվա,  
Եվ թող քո հիշվող թովչանքը ծավի  
Ինձ ափսոսանքի պատրանք լիվա...  
23.09.00, Ստեփանակերտ

# ԱՆԱԿՆԿԱԼ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Դիլիջանյան օրերի լավ ընկերոջս՝  
Աշոտ ԱՍԼԱՆՅԱՆԻՆ

Ինչո՞ւ են պատանեկան  
Մեր օրերն այսպես անցել...  
Ցրվել ենք տարբեր կողմեր՝  
Անանուն ու անհասցե:

Ցրվել ենք... Բայց զիտեի՞,  
Որ մի օր ինձ կգտնես,  
Եվ հուզմունքն այսքան տարվա  
Կպռթկա հանդիպելիս:

Տխրության նման մի բան  
Կաթում է դեմքիս նորից,  
Երեսուն տարի հետո  
Այս ինչպե՛ս հանդիպեցինք:

Երեսուն տարին՝ ասես  
Մի երկա՛ր դասամիջոց,  
Կտրել է մեզանից մեզ,  
Թողել ենք դաս ու դպրոց:

Թողել ենք՝ ինչ ունեինք,  
Կարոտներ, սեր ու թախիժ...  
Մեր ապրած լավ օրերի  
Հուզմունքն է խեղդում նորից:

Ուզում եմ... Մակայն ինչպե՞ս  
Անցյալը վերադառնա,  
Մեր տարիքն այդ՝ տեսնում ենք  
Մեր որդոց դեմքի վրա:

Հասակ ենք առել արդեն,  
Մեծ ենք մենք՝ տուն՝տեղ դրած,  
Բայց հոգով ջահել ենք դեռ  
Կնճռազարդ ու ճերմակած...

...Նայում ենք իրար դեմքի՛  
Անցյալի սրտով կարոտ,  
Այս ինչքա՛ն ցավ կար կյանքում,  
Որ տարանք մենք անտրտունը...

29.05.07, Ստեփանակերտ

հասցե  
ԿՐԻՍՏՈՒՆ  
ԲՈՒՆՆԵՐ

# ՄԱՂԹԱՆՔ ՎԵՐՋԻՆ ԶԱՆԳԻ

Մարիամիկ դասրիկիս

Իմ սրտի ջերմ խոսքն եմ բերում  
Գարնանային այս լավ տոնին,  
Ասում սրտանց՝  
Շնորհավո՛ր դողանջյունը  
Վերջին գանգի:

Վերջին գանգի տոնն այս պայծառ  
Թող ջերմութ՛յամբ սիրտդ լցնի:  
Քեզ ամենայն լավն եմ մաղթում,  
Բարեմաղթում ամեն բարին,  
Որովհետև հո՛ւրը սրտիդ՝  
Լույս է կյանքի ու ջերմութ՛յուն,  
Երջանկութ՛յան նշան բարի...

...Թող ամենայն լավն ու բարին  
Լինեն կյանքիդ ճանապարհին...

25.05.07, Ստեփանակերտ

# ՀԱՐՄԱՐ ԱՌԻԹՈՎ

Նրան, որ... է՛ր, բայց դարձավ... ՈԶԻՆԶ...

Բամահրվա՞ծ են քո նկարները,  
Բայց ե՞րբ ենք կրկին համակրելու,  
Ինչո՞ւ դու, ասա՛, չդարձար մերը,  
Զո՞ւր չէր վճիռը քո՝ լքելու...

Մենք ուզում էինք, և հավատալը  
Այնքան դյուրին էր ու այնքան հեշտ,  
Բայց վրա հասավ հարմար այդ պահը,  
Որ լքի քեզ քո վարքը պարկեշտ:

Քո հեռանալու «մեղավորները»...  
Դու չե՞ս վախենում միթե Աստծուց:  
...Աստվա՞ծ իմ, ինչո՞ւ այս «ներոնները»  
Չեն խորշում սուտ աստվածանալուց:

18.10.01, Ստեփանակերտ

# ԵՐԵՒԱՆԵՐԸ ՍԵՎԱՆՈՒՄ

*Միշտ Անտոնյանին*

*Դիլիջանը մնաց ձորում,  
Վեր բարձրացանք կեռամաներով,  
Ծովագյուղը մեր առջևում  
Բռնկվել էր... ծովի... հրով...*

*Չ*ուրը սառն է Սևանի,  
Բայց Սամվելը ի՞նչ անի,  
Որ չլողանա,  
Անհանգիստ է, վազում ափ,  
Ու հենց այնպես, հապշտապ  
Ջուրն է նետվում նա:

*Անդրանիկն էլ է ուզում,  
Բայց մայրը շատ է հուզվում՝  
Հանկարծ կմրսի...  
Արևը կախ է ընկել,  
Օրը իրեն սպառել  
Գնում է... ննջի:*

*Միշտ քեռին Սևանում  
Ակրորատ է ձևանում,  
Գրգռում է մեզ,  
Ջուրն է նետվում և Լիզոն,  
Ու հենց այնպես, շորերով,  
Լողանում է, տե՛ս...*

*Սևանը տաք է, հանգիստ,  
Իսկ դրսում ցուրտ է սաստիկ,  
Ջրից ո՞նց դուրս գանք,  
Լավ չէ՞ թողնենք ամեն ինչ,  
Ե՛վ հոգս, և՛ ցավ, և՛ թախիծ,  
Ու... ջրում մնանք:*

20.08.00, Սևանա լիճ

## ՄԵՐ ՀԻՆ, ՀՆԱՄՅԱ...

**Մ**եր հի՛ն, Հնամ յա՛, մեր երկի՛ր Հայոց,  
Չես դառնա երբեք այլևս վայոց:

Չե՛ս անթեղվի էլ մոխիրների տակ,  
Չե՛ս եղեռնվի էլ կարմիր թե ճերմակ:

էլ զո՛հ չե՛ս գնա նախճիրին վայրի,  
էլ կու՛լ չե՛ս գնա երախում գայլի:

Ոսոխն էլ հազի՛վ կգա քեզ վրա,-  
Ջարդեցի՛նք մարտում մռուլթը նրա:

...Մեր հի՛ն, Հնամ յա՛, երկի՛ր մեր Հայոց,  
էլ չե՛ս կորչի դու ոտքի տակ այլոց:

13.05.09, Երևան

## ՀԱՎԱՏՈ ՀԱՆԳԱՆԱԿ

Կանադայի Վանկուվեր քաղաքում ապրող  
իմ անվանակից Արիս Գրիգորյանին

**Ե**կե նավը մեր կենաց չի էլ խորտակվել,  
Բայց տառապյալ մեր հոգին այլ ափ է նետվել:

Եվ ի հեճուկս չարի՛ այսօր ես ու դու  
Նույն անունն ենք կրում դեռ, ազգանունը նույն:

Ու դեռ կապրենք մենք այսպես,  
կապրենք շարունակ,  
Նույն երազով, նույն ցավով՝ նույն արևի տակ:

Թեև՝ հեռու իրարից, իրար անծանոթ,  
Բայց իրար հետ, իրար մեջ ու միշտ իրար... մոտ:

18.05.93, Ստեփանակերտ



# Չարկած Տրուարյուն

## ՀՈՐՍ ՀԻՇԱՏԱԿԻՆ

✠ ո գնալուց հետո  
Իմ ու մահվան միջև  
Սահմանը բաց մնաց...

Հա՛յր, նման եմ հիմա  
Այն մենավոր ծառին,  
Որ կանգնել բաց դաշտում  
Եվ օրորվում է  
Թույլ քամիներից անգամ...

20.04.04, Կոճողոտ

## Ո՞ՒՐ ԵՍ, ՀԱՅՐԻ՛Կ

✠ ո ծաղկած դեմքին  
Գարո՛ւն էր, հայրի՛կ,  
Բայց դու... հո՛ղ դարձար  
Հունդերին գալիք...

Պահը հավերժ է,  
Կյանքը՝ անցողիկ,  
Անցյալը հուշ է,  
Անհունը՝ գալիք...

Քո ծաղկած դեմքին  
Գարունն է նիրհում,  
Իսկ դո՞ւ... դու... չկա՛ս  
Այս ծաղկանիբհում...

26.01.05, Ստեփանակերտ

# ԵՄ ՔՈ ՈՐԳԻՆ ԵՄ ՆՈՐԻՑ ԼԻՆԵԼՈՒ...

2008-ի մայիսի 21-ին դատան մահով նահատակված սիրասուն մորս Ելենա (Լենա) Ներսեսի Գրիգորյանի (Մակյանի) անմար հիշատակին, անամոք ցավով

1

Ես կհամբուրեմ, մայր իմ, ձեռքերդ,  
Երբ հորիզոնը աչքիս դեմ մ'թնի,  
Երբ հոգնած միտքս հանգիստն իր գտնի՝  
Ես կհամբուրեմ, մայր իմ, ոտքերդ:

Ամեն ինչ ունայն, դատարկ է, թերի,  
Անգամ... ածխացած ակնախորշերդ,  
Ես կհամբուրեմ, մայր իմ, աչքերդ,  
Երբ հորիզոնը աչքիս դեմ մ'թնի:

2

Երբ հորիզոնը աչքիս դեմ մ'թնի՝  
Ես ո՞ւմ որդին եմ, ասա՛, լինելու,  
Ե՞րբ ես ինձ նորից անուշ ժպտալու,  
Երբ հորիզոնը աչքիս դեմ մ'թնի՞...

Մթուժյան միջով երբ քայլեմ հեռու՝  
Ինձ քո երազը նորից կգտնի՞,  
Երբ հորիզոնը հանգիստն իր գտնի,  
Մայր իմ, բա ինձ հետ ի՞նչ է լինելու:

3

Մայր իմ, բա ինձ հետ ի՞նչ է լինելու,  
Կվազեմ նորից գիրկդ երևի  
Կորչեմ օղակում քո գիրդ ձեռքերի,  
Այնպե՛ս ամուր ես դու ինձ գրկելու...

...Մեզ էլ ոչ մի ուժ չի բաժանելու՝  
Քո գրկի մեջ թող մանկանամ կրկին,  
Կարոտ չմնամ մայրական գրկի,  
Ես քո՛ որդին եմ նորից լինելու...

4

Ես քո որդի՛ն եմ նորից լինելու՝  
Ինչքան էլ բախտը մեր լինի դատան,  
Ինչքան էլ, մայր իմ, Աստված անարժան  
Հնար որոնի կրկին պատժելու:

Վաղ թե ուշ, մեկ է, քո գիրկն եմ գալու,  
Կտեսնե՞մ նորից աչքերդ բարի,

Որ գգվի խինդդ ինձ մ'այրավարի,  
Թե՞ մենք այլևս... չենք հանդիպելու...

5

Թե մենք այլևս չենք հանդիպելու՝  
էլ չե՞մ նայելու աչքերիդ թովիչ,  
ինձ աչքերիդ մեջ փնտրելու եմ միշտ՝  
Թեև էլ երբեք քեզ չեմ տեսնելու:

Մի՞թե էլ երբեք քեզ չեմ տեսնելու,  
Կպահվենք տարբեր պարունակներով...  
...Առանց քեզ, մ'այր իմ, ինչպե՞ս եմ ապրում,  
Ե՞րբ եմ քեզ կրկին որդի լինելու...

14.04.2012 թ., Ստեփանակերտ

**ԾՆՆԴՅԱՆ ԱՎԵՏԻՍ**

(Հատված չգրված պոեմից)

Եղբորս հիշատակին

...Քաղար իննհարյուր վաթսուներկու թվի  
Հունիսի ութի վաղ առավոտյան  
Դեռ քնաթաթախ գյուղի ականջում  
Հնչում է մի ձայն:

Եվ կիսամութում ձայնն այդ ալիքվում,  
Պատեպատ խփվում, փնտրում բաց դռները -  
- Լսե՛ք, մեր Լենան մի ոսկեզանգուր  
Տղա է բերե՛լ...

Ձա՛յնն է ալիքվում մոր աչքերի մեջ:  
Երկունքի ցավից կարծրացած-լցված  
Երկու պիրկ կաթիլ իրար հրելով  
Գլորվում են ցած...

Ձա՛յնն է ալիքվում...  
Ու հայրը տուն է շտապում կրկին,  
Հայրը խնդուկյան պարկը շալակած  
Շտապում է տուն, որ իր բալիկին  
Տեսնի ժամ առաջ:

Իսկ մանկիկն անհոգ վերուվարում է  
Ու ու թաթերի կապանքները պինդ,  
Ու նայում, նայում մի լուռ հայացքով՝  
Աչխարհին անհայտ...

12.05.94, Շուրաբադ (ԿՊՇ, գործող բանակ)

## ԿԳԱ

Գաղթի օրերից

**Տ**եսնես որտե՞ղ է հիմա փոքրիկ Նելսոնը,  
Դպրոցի զանգն էլ նրան դասի չի կանչում,  
Մարտակերտում ավեր է դեռ իրենց տունը,  
Մարտակերտում՝ դեռ կրակ, ավար ու արյուն:

Բայց ետ կգա նա մի օր՝ ինչ էլ որ լինի,  
Ինչ էլ լինի՝ նա հեռվում երկար չի մնա,  
Կգա, որ շեն պահի իր տունը հայրենի,  
Մարտակերտի նորակերտ հավատը դառնա...

15.09.93, Ստեփանակերտ

## ԽԱՂԱՂ ԷՐ ՊԱՏԸ...

Քրոջս առաջնեկի՝  
Նելսոնի թարմ հիշատակին

**Օ**տար ձեռքը քեզ ճի՛շտ դեղ էր տալիս,  
Բայց սրտիդ ցավը... սրտիցդ էր գալիս:

Եվ հիվանդության անունն էր... կարոտ...  
Ու հեռվում մնալ էլ չէիր կարող:

Եկա՛ր... Երկիրը շատ էր բարեհաճ,  
Մարտակերտը՝ շեն, խաղաղ, բարգավաճ:

Սակայն... կարոտդ տանջանք էր դառել,  
Եվ այնպե՛ս էր քեզ մահը ծարավել...

Իսկ դու, որ պիտի դառնայիր գալիք,  
Հողեղեն էիր՝ հո՛ղ դարձար, բալի՛կ:

Ասոված քեզ սիրեց ու տարավ իր մոտ,  
Կբուժվի՛ այնտեղ սիրտդ հիվանդոտ...

16.02.02, Ստեփանակերտ

# ԿԱՐՈՏԻ ԱՆՐՁԱՆՔ

## 1. ԱԿՐՈՍՏԻՔՈՍ՝ ԵՂԲՈՐՍ

Այնպե՛ս տխուր, հանգիստ ու լուռ  
 լայում ես դու աշխարհին,  
 Բողում է սիրտն իմ անհագուրդ,  
 Բոպեն թվում է տարի,  
 Անցնում ես ու... ինձ չես նայում,  
 Նայի՛ր, սրտիս պաղ ալիք,  
 Ինձ թվում է՝ խաղ ես անում,  
 Այա՛նքս դարձրած խաղալիք...

18.02.86, Կոնոդոս

## 2. ԱՆԱՀԻՏԸ

Միշտ թեքվում էր Անահիտը եղբոր սնարին,  
 Օրորում էր, որ քնեցնի, բայց ինքն էր քնում,  
 Հիմա քնած է եղբայրը, տես, քանի՛ տարի,  
 Հիմա անհույս ցավից քրոջ քունը չի տանում...

## 3. ԱՆՈՒՇԻԿԸ

Լետամուտ էր Անուշիկին ցավը խելագար,  
 Այն աստիճան՝ նույնիսկ եղբոր գերեզման չկար,  
 Հեռուներում էլ չէր կարող, մի օր էլ եկավ,  
 Գերեզմանից գոհված եղբոր կարոտը առավ...

20.12.01, Ստեփանակերտ

## 4. ԱԼՎԱՐԴԸ

Նու եղբայրը՝ միշտ միասին,  
 Թախծում է անվերջ եղբոր մասին,  
 Իսկ եղբայրն՝ անմասն այս ամենին...  
 Տխո՛ւր են անցնող օրերը սին:

## 5. ԱՐԵՎԻԿԸ

Արևիկն էլ է թախծում անվերջ,  
 Եղբայրացավը կրում իր մեջ,  
 Մակայն... մեկնել է հեռո՛ւ, հեռո՛ւ,  
 Թվում է՝ էլ չենք հանդիպելու...

## 6. ԾՆՈՂՆԵՐԻ ՑԱՎԸ

Նկարին է նայում որդու՝  
 Գուցե խոսի՞ մոր հետ թաքուն,  
 Հայրը գիտե՛ որդին չկա,  
 Ու... ծերանում են ակամա:

ՆԱԿԱՐՈՍՏԻ ԿԱՐՈՏԻ ԱՆՐՁԱՆՔ

## 7. ԵՎ... ԵՍ

Օրի՛ր մշուշ իմ սրտից  
Դառնու՞թյուն ու վիշտ,  
Թե եղբայր ես եղել ինձ՝  
Եղբայր եղիր միշտ:

Ճակատագրով դառնացած  
Քո եղբայրն եմ ես,  
Ինչ էլ լինի՝ ինձ երբեք  
Մտահան չանե՛ս...

19.04.93, Ստեփանակերտ

## ԵՂՔՈՐՍ «ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԻՑ»

1. Դեռ պատանյակ՝ այս նկարում,  
Բայց հայացքից հուր է ցայում:
2. Քեզ թվում է՝ մեծ ես արդեն,  
Բայց ինձ համար շատ փոքր ես դեռ:
3. ...Որպես մի վերջին՝ լուսանկար՝  
Հայացքը խոսուն, իսկ հույսը՝ մա՛ն:

## ԱՅԼ... «ՊԱՏԿԵՐՆԵՐ»

1. Մեր ավեր տունը՝ կոճողոտում  
Դեռ հուշն է պահում քո մանկության,  
Իսկ սիրտս ցավի որդն է ուտում,  
Որ չկաս էլ դու, իմ լա՛վ եղբայր:
2. Թուրքը տեսել է մեր գյուղը ծաղկուն,  
Թուրքը տեսել է Մռավն հաղթապանձ,  
Հրճվել է վայրի հողին վաչկատուն,  
Բայցև ... չքվել է նա անվերադարձ...
3. Այստեղ ես հանգչում: Դիրքավորված՝  
Ընկերներիդ հետ՝ երկու շարքով,  
«Գրաված» վերջին բարձունքից այս՝  
Հսկում եք կրկին քուն ու անդորր...

1997, ամառ, Ստեփանակերտ

# ՏԵՈՒՐ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Մոխրաթաղցի Սլավիկին

Լավ առիթով չէր մեր հանդիպումը,  
Ասաված կպարզի ողջ իսկությունը:

Դու անհիշաչար տար այս նոր դավը,  
Քո բարությունը կմեղմի ցավը:

Բայց մեղք ունեիր՞ երեխաները,  
Եվ մի՞թե այդքան անկար էր... Տերը...

04.11.00, Ստեփանակերտ

# ԿԱՐՈՏԻ ԼԵԶՎՈՎ

Իսկ մանկության ընկերներս  
ապրում են դեռ երազներ մեջ...

Տխրում եմ միշտ՝ հիշելով մանկությունը մեր,  
Միշտ թվում է, թե անհոգ երեխա ենք դեռ...

Թվում է, թե ուր որ է՝ զանգը դպրոցի  
Հին ու ծանոթ դողանջով մեզ ներս կկանչի:

Թվում է, բայց մեծ ենք արդ ու մեր հարկերում  
Մեր փոքրերի մանկական խինդն է մեզ գերում:

...Բայցե կամա՞ական կանչում են կրկին  
Մեզ մանկության ոսկեգույն երազները հին:

11.05.93, Ստեփանակերտ

ՄԱՐԿ ԿՐԿԻՐ  
ՕՍԿԱՐ ՎԻՐԱՊԵՆ

# Մտերմիկ Տողեր

ՄԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
զբի վրա



Գեղանկարիչ Լավրենա ՂԱԼՅԱՆԻՆ

Դրքիս վրա ի՞նչ մակագրեմ,  
Ի՞նչ բառ ընտրեմ, որ չզգաս թերին,  
Դու այս ինչպե՛ս ես գունազարդել,  
Որ ինչ գրում եմ՝ քիչ է էլի...



Մանկագիր Գուրգեն ԳԱՐԻԵԼՅԱՆԻՆ

Խոսքի մեջ չուայլ չեմ,  
Խնդրո՞ւմ եմ, ների՛ր,  
Առաջին գիրքս է՝  
Նվեր ընդունիր...



Տպագրիչ Վլադիկին

Ող «ճաքի» ամեն լուռ թյուն,  
Ու անգամ քա՛րը թող խոսի,  
Քո ձեռքերի մեջ թուղթը թող  
Գիրք դառնա ու սրտեր հուզի...

19.04.93, Ստեփանակերտ



Դիրքս՝ բժիշկ ԱԴԱՄՅԱՆԻՆ:  
Թող աշխարհում լինի բարին,  
Արև՝ լինի, գարո՛ւն լինի  
Միշտ Ձեր կյանքի ճանապարհին...



Բելա ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆԻՆ

Իսկ դու շարում ես կրկին տողը տողին, բառ առ բառ,  
Ու երգերս քո ձեռքում դառնում են... «կիրթ» ու բարի,  
Թող ուղեկցի քեզ բարին, երազներդ՝ ի կատար,  
Այնպես ապրես՝ քո շնչից պակասի ցա՛վն աշխարհի...

02.05.00, Ստեփանակերտ



✂  
Ռուսը ցուրտ է, ներսը՝ տաք,  
Որ... ծիծաղե՛ս շարունակ:

✂  
Իմ անծանոթ ու իմ... ծանոթ ԻԶԱԲԵԼԱՅԻՆ՝  
Սիրով, ցավով ու տխրութ՜յամբ, կարոտներով մեծ:  
  
Ապրի՛ր, սիրի՛ր... Ու միշտ հիշիր դու ամեն վայրկյան,  
Որ հիշում է քեզ արցախցի մի հայ բանաստեղծ...

✂  
Ռենտգենոյով վլադիկ ենԳԻԲԱՐՅԱՆԻՆ  
Լոսպիտալում քիչ հանդիպենք,  
Մարտադաշտում միշտ շա՛տ լինենք,  
Որ թշնամուն մեր բարբարոս  
Ժամանակից շո՛ւտ ջախջախենք...

✂  
Աշոտ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ  
Իրքս՝ նվեր Աշոտին,  
Այն «բերանը ճաշոտին»,  
Որ... դժգոհում էլ է դեռ.  
- Ես այնքա՛ն եմ ծառայել,  
Բայց... Արի՛սն է սպա դառել...

✂  
Ինքչազին Աստղիկին,  
Դեռ ոչ կին Աստղիկին,  
Կուզեի տեսնել կին,  
Աստղիկին՝ աստղի՛ կին:  
02.10.08, Ստեփանակերտ

✂  
Ասում են՝ Անո՛ւշն ես դու,  
Չգիտեմ՝ անո՛ւշն ես դու,  
Քանի դեռ չեն համտեսել  
Ի՞նչ գիտեն անո՛ւշն ես դու:  
08.11.08, Ստեփանակերտ

✂  
Իննային  
Իսկ դու գարնան ծաղիկ ես գառ,  
Նայվածքով՝ նուրբ, առնացի,  
Նազիկ-մազիկ դյուլթո՛ւմ ես մառ՝  
Անո՛ւշ հմայք կանացի...  
1993-2002, Ստեփանակերտ - Մարտակերտ - Կոծողոտ  
- Երևան - Նոր Հաճըն - Ստեփանակերտ

... երբ հերթս հասավ՝ մնացի մտքոր,  
Վերջացել էին «հինգերը» բոլոր:  
Ոչինչ, կշգտեմ ես այս հունվարին  
Բոլորից էլ շուտ հասնել «հինգերին»...

---



Группа  
Мульти  
1977-2008

---

# Հյուպատրուս Փարվանա

(PARODIA-ներ ԱԺ-ային եղանակով)

## ԱՌԱՋԻՆ ԵՌՕՐՅԱ

### Օր առագիծ

Խոսնակ.

Մերկայացնում եմ այս եռօրյայի թեման:  
Բոլորս քաջ գիտենք Փարվանայի պատմու-  
թյունը: Գիտենք իր երազային ասպետին սպա-  
սող երազանուշ այն աղջկան, «չտապելուց թե  
առած» ու «թեթե թիթեռներ դառած» Փարվա-  
նա կտրիճներին, որ... «Չանք է անում ամեն մի-  
նը, շուտով տանի, տիրանա, ու այրվում են,  
այրվում անվերջ»...

Բայց, պատկերացնենք, որ աղջիկը «սեր-ըն-  
կերից իր կյանքի» պահանջում է ոչ թե անշեջ  
հուր, այլ... երգ:

Մեր բանաստեղծներից ամեն մեկը երևի  
յուրովի կմեկնաբաներ դա:

Եվ, այսպես, ուշադրությո՛ւն, միացնում եմ  
առաջին խոսափողը: Ուզում եմ նախ խոսքը  
տանք հանճարեղ «Փարվանայի» հանճարեղ հե-  
ղինակին:

## ԳՈՒՍԱՆՆԵՐԸ ՓԱՐՎԱՆԱ

...**Ս**տում են՝ էն գուսանները,  
Որ գիշերվան խավարում  
(Երբ խրախճանք ու սիրո երգ,  
Սիրո մեջլիս է լինում),

Հավաքվում են, շուրջը պատում  
Երգ-նվագով խելագար,  
Եվ ասում են, թե Փարվանա  
էն գեղուհու սիրով վառ

Ջանք է անում ամեն մինը՝  
Շուտով տանի, տիրանա,  
Ու երգում են, երգում անվերջ  
Գուսանները Փարվանա:

Սակայն սիրո երգը անշեջ  
Երբեք չկա, ա՛խ, չկա,  
Ու այրվում է, այրվում անվերջ  
Սիրտն էն դժբախտ աղջկա...

26-27.08.82, Մարտակերտ

## ԳՈՒՍԱՆՆԵՐԸ ՍԻՐԱՏԱՐՎԱԾ

1

Լեռ՛ւ, մոտի՛կ գոլասաններին, աշխարհներին՝, արևներին,  
Հրանման հոգիներին:  
Բոլո՛ւր նրանց, ում՝ որ հոգին վառվում է վառ՝  
Փարվանա կույս գեղեցկուհու սիրո համար:  
Եվ անչե՛ջ երգ որոնող մեր գոլասանների  
Ողջակիզվող հոգիներին՝ ողջո՛ւյն, ողջո՛ւյն:

2

Իրիկուն էր, հրակարմիր մի իրիկուն:  
Արևը բորբ լուռ մայր մտավ արևմուտքում:  
Դաշտի վրա կամաց-կամաց լուռ համբացան  
կարմիր փայլով վերջին շողերն արեգական,  
Ու մութ փովեց դաշտի վրա արյունամած,  
Մութ ու մշուշ բորբ արևի լույսից քամված:  
Ծո՛վ էր կարծես դաշտն անսկիզբ ու անսահման,  
Ծո՛վ էր անհուն՝ տարված երգով գոլասանական:

3

Արևի տակ իրիկնային, իրիկնային հրով վառված,  
Այդ հին դաշտում մրցում էին գոլասանները սիրահարված:  
Քաղաքներից ու գյուղերից, կալված քներից հեռու ու մոտ  
Եկել էին նրանք նորից հուսավառված ու կրակոտ:  
Համակ հույզ էր սերը կույսի, որ դարձրել նրանց գերի,  
Նետել էր կույր քմայքներին ու հույզերին երազների:  
Ու մրցում են գոլասանները հանուն կյանքի, հանուն սիրո,  
Գեղեցկուհու սիրո հանդես տածած քնքուշ երազներով:  
Այստեղ բերել երգը անչե՛ջ ու բավիղում ճանապարհի՝  
Նենդ դեներին պահ է տվել տիրակալը մուլթ աշխարհի,  
Ինքը՝ չփվել գաղտագողի: Դեռ մրցում են գոլասանները,  
Ով որ անչե՛ջ երգը բերի՝ նա է կույսի սրտի տերը:

4

Մրցում էին ու մրցելով երգում էին նրանք արի՛  
Նման քնքուշ սեր՝սրտի տեր մի դեռահաս սիրահարի:  
Ե՛րգ էր սիրտը ամեն մեկի, երգ էր՝ հայացք, երգ էր՝ կարո՛տ,  
Վառվում էր սիրտն ամեն մեկի՝ որպես կարմիր մի առավոտ:  
Երգ էր կարծես արևն էլ հին՝ այդ հին՝ դաշտում արյունամած,  
Ու երգելով մրցո՛ւմ էին գոլասանները սիրահարված:

5

...Գիշերի դեմ լո՛ւյս է պայծառ՝ լուսապայծառ նրանց հոգին,  
 Որ կարոտով մի կրակոտ սպասո՛ւմ է առավոտին:  
 Երգ է ու սեր սիրտը նոցա, և այդ երգում անծա՛յր, անծի՛ր,  
 Երկինքնե՛ր կան կապուտաչյա, հորիզոննե՛ր անծայրածիր:  
 Նրանց ձգված մկաններում ուժն է նստել խոնավ հողի:  
 Եթե ուզեն՝ երգով կառնեն անգամ ճամփան հարթագողի,  
 Եթե ուզեն՝ մուժ աշխարհի տիրակալին դեերի հետ  
 Կչպրտեն՝ երկինքն ի վեր՝ փրկած անչեջ երգը հավետ:  
 Եթե ուզեն՝ Փարվանա կույս գեղեցկուհու սիրով վառված՝  
 Ինչե՛ր միայն չեն կատարի գուսանները սիրահարված:

6

...Լուսաբացին, երբ կարմրածուփ հորիզոնում արևատես  
 Երևում էր դաշտը բոսոր՝ կարմիր վառված արևի պես,  
 Նոր հույզերով, երազներով, ձգտումներով վառված՝ տարված,  
 Դո՛ւրս նետվեցին թաքստոցից գուսանները սիրահարված:  
 Դեմը՝ դաշտն էր անծայրածիր, ճանապարհը արևագույն,  
 Որ նիրհում էր՝ քնաթաթախ առավոտի մարմանդ միգում:

Հեռվից՝ հեռու՝ բավիղներում այդ հեռահար ճանապարհի,  
 Երևում էր դեերի հետ տիրակալը մուժ աշխարհի:  
 Արշավում են գուսանները դեպի կռիվ ու հաղթանակ,  
 Իրենց երգով կործանելով թշնամական քանի՛ բանակ:  
 Շուրջը՝ մահ է, ավեր, արյուն, բայց գնում են նրանք էլի՛  
 Նվաճելու նոր հաղթանակ, տիրելու նոր բարձունքների:  
 Գնում են, որ հուր-հավիտյան ճանապարհը փակեն չարի՛  
 Մահին տալով դեերի հետ տիրակալին մուժ աշխարհի:  
 Գտնեն նորից անչեջ երգը և Փարվանա կույսին տանեն,  
 Որ տիրանան կույսի սիրուն՝ գուսանները մեր հանճարեղ...

24.10.82, Մարտակերտ

Այսպսպում Փարվանա

ԱՐԴՆ ԱՐԴՆ

Երրորդ խոսափող՝ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶ

## ԳՈՒՍԱՆԱԿԱՆ

Եվ երգն այն է, որ ծնվում է  
ակնթարթում իմաստուն...

Երբ անհայտ ոգին՝ աշխարհն արարող,  
Որ Աստված կոչվեց դարեր ու դարեր,  
Ստեղծեց երկինք, արև, ծով ու հող,  
Ստեղծեց համայն տիեզերքը մեր,  
Եվ ծեփեց մարդուն կոշտ կավահողից,  
Մեկ-մեկ բաժանեց բարիքը անհուն,  
Փարվանա կույսին՝ երբ աշխարհ բերեց՝  
Նոր զգաց՝ երգ է հարկավոր մարդուն:  
Ու նա ստեղծեց գուսաններ բազում,  
Որ գնան անշեջ երգը որոնեն,  
Բայց... չէր ստեղծել դեռ երգը անշեջ,  
Էլ գուսանները որտեղի՞ց գտնեն:  
Ու չգիտեին գուսանները դա,  
Ու փնտրում էին անշեջ երգն անվերջ,  
Փնտրում լեռներում, երկնքում, ծովում:  
Փնտրում էին... Ու չկար երգն անշեջ  
Ո՛չ երկրի վրա, ո՛չ երկնի մովում:  
Ու տարակուսած Աստծո մոտ եկան:  
-Դու անշեջ երգը դեռ չե՞ս ստեղծել,  
Թե ստեղծել ես՝ որտե՞ղ է, չկա՛,  
Թե ստեղծել ես՝ ո՞վ է թռցրել...  
Ու Աստված քահ-քահ ծիծաղել է, հա՛,  
Միամիտ մարդու խելքին միամիտ.  
-Այս երկնքի տակ անշեջ բան չկա՛,  
Մի՛ հավատացեք, միամի՛տ մարդիկ...

21.09.94, Ստեփանակերտ



### ՅՈՒԹ ԳՈՒՍԱՆՆԵՐԻ ԲԱԼԼԱԴԸ

Երանի՛ նրան, ով ծերացել է  
Ու սիրահար է մնացել դեռ...

1

Յոթ օր խորհեցին երագին հլու,  
 Ու հեծան յոթ ձի՛ յոթ արի գուսան,  
 Յոթն էլ՝ վառ սիրով չքնաղ տիրուհու,  
 Յոթ երագներով յոթ ճամփա ընկան:  
 Յոթ օր, յոթ գիշեր ճամփա գնացին,  
 Յոթ մագե կամուրջ, յոթ մահով անցան,  
 Յոթերորդ օրվա իրիկնաժամին  
 Յոթգլուխ դեի դղյակին հասան:  
 Յոթգլուխ դեը յոթ անգամ հագաց,  
 Յոթ անգամ ուխը բացուխուփ արեց,  
 Յոթ գլուխներին իջավ յոթ հարված  
 Ու յոթգլխանին յոթ շունչն էլ փչեց:  
 Նորից յոթ լուսե երագով գերված՝  
 Յոթ ճանապարհով առաջ սլացան,  
 Բայց անչեջ երգը չկա՛ր ու չկա՛ր...  
 Եվ դատարկաձեռն ետ վերադարձան:

2

- Անչեջ երգը չկար: Շատ փնտրեցինք՝ չկար:  
 Որտեղ եղանք չկար: Ում հարցրինք չկար:  
 Լուսաբացին՝ չկար: Երեկոյան՝ չկար:  
 Արդեն յոթը գիշեր ու յոթ օր էր՝ չկար:  
 Կորել էր ու չկար: Կորե՞լ, ասեղ հո չի՞,  
 Տեսնված բա՞ն էր, արդյոք, անչեջ ե՞րգն էլ կորչի...  
 ...Պարսպի մոտ խմբված իշխանական մեծ տան՝  
 Գանգատվում են իրար յոթ հանճարեղ գուսան:

3

Ու լսում է նրանց լուռ  
 Փարվանա կույսը տխուր՝  
 Սիրտն արյուն-լաց էր.  
 -Ո՞ւր մնացին, գուսաններ՛ր,  
 Չորութ յունն ու ձիրքը ձեր՝  
 Երբ աչքս թաց է:  
 Մի՞թե չկա անչեջ երգ,  
 Ու չէք կարող դուք երբեք

ԱՐԴՆ ԱՐՆԱԿ  
Մարտիկյաններ

Փակ սիրտս բացե՞լ...

...Ու թախծում է այսպես լուռ  
Փարվանա կույսը տխուր...

4

...Եվ ասում են՝ շատ դարեր  
Սպասում է կույսը դեռ:

Գուցե ինչ որ մի լավ օր  
Գուսանները ձիավոր  
Վերադառնան ավարով՝  
Բերեն անշեջ երգն ու տան  
Այդ լուսեղեն աղջկան,  
Որ այդ երգի հաճույքից  
Նրա փակ սիրտը բացվի,  
Աչքը ժպիտ տեսնի միշտ՝  
Արյուն-լացից չթացվի...

03.10.82, Ստեփանակերտ

Հինգերորդ խոսափող՝ ԳԵՎՈՐԳ ԷՄԻՆ

## «ՓԱՐՎԱՆԱ» ԼԵԳԵՆԴ

Եվ գուսանն ինչքան էլ ցանկավի,  
Անշեջ ե՛րգն է թանկագին, դու գիտե՛ս...

Ով գտնի ու բերի անշեջ երգը սիրո  
Ու գերի իմ սիրտը երգով այդ,  
Ես նրան կընծայեմ իմ թագը մեծ սիրով  
Ու կօծեմ արքա՝արքայաց...

...Գուսանը չգնաց անշեջ երգ գտնելու,  
(Իե, սիրտն իր երգով վարարուն է),  
Աներեր է կամքը Փարվանա տիրուհու,  
Գուսանը հանկարծ... վարանո՞ւմ է:

Գուսանի սագի պես հուզված է խիզանը,  
Հուզված է տիրուհին Փարվանա,  
Երգում է իր կարոտն ու սերը գուսանը,  
Որ երգով իր սիրուն տիրանա:

Ով գուսան, անշեջ երգ չգտար թեկուզ, բայց  
Սագը սիրտս հիմքից շեղե՛լ է...

...Ու հիմա չգիտեմ՝ «Փարվանա» լեգենդն այս  
Լեգե՞նդ է արդյոք, թե՞ եղել է...

# Օր Երկրորդ

Առաջին խոսափող՝ ՎԱՐԴԱՆ ՀԱԿՈՒՅԱՆ

## ԱՆԼՍԵԼԻ-ԱՆՊԱՏՄԵԼԻ

Իսկ անչեջ երգը գտնելու համար  
Դուք այն միշտ փնտրեք վաղվա՛ աչքերով...

Անգնել, ահա,  
Գովքն եմ լսում ֆարվանա կույս գեղեցկուհու՝  
Պապիս պապի նախապապի գուսան քեռուց:  
Պատմում է նա գեղեցկուհու  
Անլսելի-անպատմելի գեղեցկության,  
Նրա հանդեպ տածած անկեզ սիրո մասին.

-Փնտրել եմ ես գիշերօցերեկ, փնտրել եմ ես երկար-երկար,  
Բայց ոչ մի տեղ, ոչ մի երկրում երբեք անչեջ երգը չկար,  
Այնպես լինե՞ր՝ անչեջ երգով քեզ հարս տանել կարենայի,  
Անչեջ երգին սիրահարված գեղեցկուհի Փարվանայի:

Ուչք ու միտքդ անչեջ երգին, ամեն, ամեն ինչ մոռացած,  
Քանի՛ գուսան ուղարկեցիր, սպասում ես դեռ դալկացած,  
Ես էլ գնամ... Շա՛տ կուզեի անչեջ երգով գիրկդ գայի,  
Անչեջ երգին սիրահարված գեղեցկուհի Փարվանայի:

Ես առանց քեզ ինչպե՞ս ապրեմ՝ իմ արևը, շունչը դու ես,  
Գնամ գտնեմ: Երգը անչեջ մեկ ուրիշը երբ բերի քեզ՝  
Չեմ դիմանա, քեզ կորցնելու միտքը անվերջ սիրտս կայրի,  
Անչեջ երգին սիրահարված գեղեցկուհի Փարվանայի:

...Շա՛տ փնտրեցի, քանի՛ աշխարհ, քանի՛-քանի երկիր մտա,  
Քանի՛ չքնաղ գեղեցկուհի, քանի՛ սեր ու երազ գտա...  
Բայց ուր եղա դու աչքիս դեմ, դու մտքիս  
մեջ միշտ էլ կայիր,  
Անչեջ երգին սիրահարված գեղեցկուհի Փարվանայի:

Այնպե՛ս լինե՞ր՝ ե՛ս գտնեի... Ես երջանի՛կ կլինեի,  
Երբ գտնեի անչեջ երգն ու իսկույն այն քեզ նվիրեի,  
Դու ժպտայիր ուրախ ու գոհ... Գրկիս մեջ քե՛զ ունենայի,  
Անչեջ երգին սիրահարված գեղեցկուհի Փարվանայի:

ԱՆՍԵԼԻ ԱՆՊԱՏՄԵԼԻ ԱՊՐԱՅԻՆ ՓԱՐՎԱՆԱ

Երկրորդ խոսափող՝ ՀՐԱԶՅԱ ԲԵԳԼԱՐՅԱՆ

## ԱՄԵՆԻՑ ԱՌԱՋ...

Ամենից առաջ,  
Ամենից առաջ,  
Խոհեմ եղիր քեզ,  
Եվ ուրիշ ոչինչ...  
Բռնիր դու ձեռքից այն կույր ծերունու,  
Որ գուցե իսկի գուսան էլ բնավ,  
Բայց թառ ու սազ է նվագում կարգին:  
Գիտե նաև ոնց տիրել սրտերին,  
Հատկապես՝ կնոջ:  
Իսկ Փարվանա այն տիրուհու մասին  
Արի չխոսենք:  
Բան ու գործ թողած  
Ես չեմ ընկնելու սարեր ու ձորեր,  
Թե ինչ է՝ անչեջ երգն եմ փնտրելու,  
Ուրիշ գործ չկա...  
Չկա...  
Դու առի՛,  
Ես գործ կճարեմ...

Երրորդ խոսափող՝ ԴԱՎԻԹ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

## ՓՐԿԱՆՔ

Անգնել եմ Փարվանա տիրուհու առաջ:  
Ծաղկած բալենի է հիշեցնում նա,  
Իսկ շփոթահար իմ հայացքից  
Թախիծ է ծորում անըմբռնելի, անվերժանելի...  
Այս ո՞ր գուսանը նրան  
Բերեց անչեջ երգը սիրո:  
Թե՞ դեռ կարգին չայրացած  
Արևորդուց առաջին համբույրն ստացավ  
Ու մայրացավ անմիջապես,  
Իսկ ո՞ւր մնաց սերը:  
Խաբվել է, երևում է,  
Որ մենակ է հիմա,  
Եվ խեղճ ու անօգնական է զգում իրեն:  
Հեռվում նորից ձյունել են սարերը,  
Իսկ ծաղկած բալենի-փարվանուհու սրտում  
Գարունն ու ձմեռը միախառնվել են իրար...  
...Փարվեմ փարվանուհուն՝  
Գուցե մի քիչ զգա սիրո հրապույրը:

Չորրորդ խոսափող՝ ԿԻՄ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

### ԺՊԻՏԴ ԵՐԳ Է ԱՆՇԵՋ...

Ես անձրև չեմ ուզում,  
Եվ ոչ էլ ուզում եմ իմանալ  
Գույնն անձրևի:  
Ես քո ժպիտն եմ ուզում,  
Իսկ քո ժպիտը երգ է,  
Գուցե՛ն ոչ անչե՛ջ...

... Թե չես կարող գտնել  
Անչե՛ջ երգը սիրո  
Ու բերել ինձ նվեր՝  
Գոնե՛... ժպտա...

### Օր երրորդ

Առաջին խոսափող՝ ԷՌՆԵՍՏ ԵՍԱՅԱՆ

### ՏԻՄԱ ՏԱՔՍԻ ԿՎԱՐՁԵՄ...

Լիմա տաքսի կվարձեմ ու դուրս կգամ քաղաքից...  
Կհեռանամ աղմուկից ու գրկում մայր բնութ՛յան,  
Կփնտրեմ ես անդադար, մինչև գտնեմ՝ ու տանեմ  
Անչե՛ջ երգը ես նրան՝ այն գեղուհուն Փարվանա:

Ես կվազեմ դեպի այն արևագույն բաշով ձին,  
Կհամբուրեմ աչքերը այն ձիապահ աղջկա,  
Կգրկեմ բաշը ձիու և սրբնթաց վարդելով  
Կանցնեմ սարեր ու ձորեր՝ անչե՛ջ երգը գտնելու:

Ու կգտնեմ երգն անչե՛ջ ես հանդերուժ մեր խոլոր,  
Մեր սարերում ուրցաբույր, անտառներում կուսական,  
Ու Փարվանա կույսի հետ անտառամերձ բացատում  
Խոտերի մեջ բուրավեա՝ հաղթանակս կտոնեմ:

Հիմա տաքսի կվարձեմ ու դուրս կգամ քաղաքից...

Երկրորդ խոսափող՝ ՌՈՐԵՐՏ ԵՍԱՅԱՆ

### ՃԱՆԱՊԱՐՀԱ...

Ճանապարհս՝ քո երազով եմ հյուսել ես,  
Որ միտվել է հորձանքի մեջ ապագայի,  
Ես միտք չունեմ հեք որսալու և ոչ էլ... սեր:  
Այլ՝ անչե՛ջ երգ,  
Այլ՝ անչե՛ջ երգ...

Մարտիկացիներ  
ԿՐԻՍ ԿՐԻՍԻ

Ես ճանապարհ ընկա՝ լույսը դեռ նոր բացված,  
Ոչ մի գուսան չէր երևում դեռ ճամփեքին,  
Ու գնացի երկա՛ր, երկար որոնելու՝  
Անշեջ մի երգ,  
Անշեջ մի երգ...

Փնտրում եմ ես իմ հուշերի լուսանցքներում,  
Անշեջ երգը սակայն չկա, ես չեմ գտնում:  
Ուր գնում եմ՝ քո ստվերն է ինձ հետևում...  
Օ՛, գեղուհի,  
Փարվանուհի...

Երրորդ խոսափող՝ ԱՐԻՍ ԱՐՄԵՆԻ

## ԱՆՇԵՋ ԵՐԳԻ ՄԱՍԻՆ, ԵՎ՝ ԿՈՒՅՍԻՆ ՓԱՐՎԱՆԱ

Քառնալու եմ մի օր ես գուսան իսկական,  
Որ գտնեմ անշեջ երգ, տանեմ այն աղջկան:

Անհամբե՛ր եմ այնպես՝ դառնալու եմ գուսա՛ն,  
Իսկ հիմա՞, դեռ փո՞քր եմ, գուսանի չափ չկա՞մ:

Եվ մնում է՝ գնամ դեռ բախում խաղալո՞ւ...  
Ոչ, վաղն անպայման գուսան եմ դառնալու,  
Որ գնամ ու երգն անշեջ գտնեմ ու տանեմ  
Փարվանա այն չքնաղ գեղուհուն ընծայեմ,  
Որ տա ինձ սերն իր նա,  
Տիրակալը դառնամ տիրուհու Փարվանա...

16.04.08, Ստեփանակերտ

### Խոսնակ.

- Մեկնաբանությունները, կարծում եմ, ավե-  
լորդ են:

Միայն ավելացնեմ, որ էլույթների «ձայ-  
նագրման գործը» շարունակվում է: Եվ ում  
այս եռօրյայի ընթացքում խոսափող չտրա-  
մադրվեց՝ թող շատ չտխրի, գինվի համբերու-  
թյամբ ու սպասի...

Իսկ հերթը, հուսով եմ, շատ չի ուշանա...

Հաջողություններ եմ մաղթում բոլորիդ:

Կհանդիպենք հաջորդ եռօրյայի ընթաց-  
քում:

# Էպիգրամներ Տեխնիկներ

## PARODIA ՀՈՎՏ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ «ԵՐԿՈՒ ՇԻՐԻՄ ԻՐԱՐ ԿԻՑ...» ՔԱՌՅԱԿԻ

Էյ, շիրիմներ իրար կից,  
Հավերժական լուռ դրկից,  
Ի՞նչ էք թախծում դուք այդպես՝  
Թե ի՞նչ տարաք աշխարհից:  
Լավ է՝ խորհեք ա՛յն մասին,  
Թե ձեք թողած աշխարհից  
Ի՞նչ է, արդյոք, մնում ինձ...  
07.09.82, Ստեփանակերտ

## ԷՊԻԳՐԱՄ-ՁՈՆ

Հերիքնազ Հայրապետյան (ք. Երևան).  
- Խմել եմ «Լուսաստղ» օղի, շահել... ավտոմեքենա...  
(Հ1 հեռուստաալիքի եթերից)

Հայրապետյան Հերիքնազ,  
Հերիք՝ այդպես... պարծենաս,  
Որ խմում ես դու օղի՝  
«Լուսաստղ», թե՛ խաղողի:  
Նույնիսկ... ավտո՞ ես շահել՝  
Էլ ինչո՞ւ միշտ չխմել,  
Անվերջ շահով չտարվել...  
Իսկ վերջո՞ւմ... ի՞նչ... վթարվե՞լ...  
Արդեն ո՞ւշ է խելքի գալ,  
Թե՞ չես ուզում հավատալ՝  
Օղի կոնծելուց բացի  
Շա՛տ գործեր կան կանացի...  
17.09.02, Ստեփանակերտ

# ԼԵՆԻՆԻ ԺՊՏԱՑՈՂ ԴԻՄԱՆԿԱՐԻ ԱՌԱՋ

Կատում ես՝ ժպտա,  
Ժպի՛ տղ բարի,  
Խղճո՛ւկ խեղկատակ  
Մեր թշվառ դարի՛...  
1989, Ստեփանակերտ

## ԲԱՅՑ՝ ՀԱՎԱՏՈՒՄ Է...

Սեղճ Քաջ-Նազարն էլ կոմունիստ գրվել,  
Դրոշը փոխել, ընկել է ճամփա,  
Շատ է գնացել, թե քիչ՝ ո՞վ գիտե,  
Բայց կոմունիզմը չկա ու չկա:

Չկա ու չկա: Բայց գնում է դեռ՝  
Հյուսիսում է Նազարն, հյուսիսում է էշը,  
Եվ... հավատում է, որ... տեղ կհասնի,  
Թեև չի անցել դեռ... ճամփակեսը...  
1990, Ստեփանակերտ

## ԲԵՄԻ ՎՐԱ

(Ֆելիետոնի փոխարեն)

Բեմի վրա համբուրվեցին աղջիկն ու տղան՝  
Եվ պտտվեց բամբասանքը բերանից բերան:  
Ու մի գիշեր նրանք ծածուկ գյուղից հեռացան,  
Հեռու ու մեծ մի քաղաքում դարձան դերասան:

Իսկ երբ մեկ-մեկ գյուղ են գալիս կարոտով անհուն,  
Եվ գյուղի հետ նախկին սիրով լուռ «ողջագուրվում»,  
Գյուղը հրճվում ու ծփում է սիրով անսահման,  
Չէ՞ որ արդեն ունի հայտնի երկու դերասան...  
20.08.82, Ստեփանակերտ

## ՏՐԻՈԼԵՏ-ԱՆԿԱՍ

Մի ինքնագոհ «խայամամուլի»

Ինչո՞ւ գայթի նա՛ քեզ, ոմն՝ Օմար,  
Թեկուզ հանճար լինի, Խայամ՝ անգամ,  
Երբ մենք Չարե՛նց ունենք պայծառ այսքան,  
Ինչո՞ւ գայթի նա՛ քեզ, ոմն՝ Օմար...

Թեկուզ անցնի միլիոն տարի անգամ,  
Պիտի ապրի այսպես անհաս ու հար...  
...Ինչո՞ւ գայթի նա՛ քեզ, ոմն՝ Օմար,  
Թեկուզ հանճար լինի, թեկուզ՝ Խայամ:



# ԲՐԻԳԱԳԱՎԱՐԻ ՄԵՆԱՄՈՍՈՒԹՅՈՒՆԸ

(Աճացման հանրահայտ տարիների հուշ)



Ըրչկենտրոնի պետտնտեսությունում եմ աշխատում,  
Շատ բանվոր է հիմա ինձ մոտ օրվա հաց վաստակում:

Բրիգադավար եմ կարգին, դե, դեկավար մարդ եմ,  
Ո՞վ կարող է իմ հասցեին ասել կոպիտ բառեր:

Մեր բարեխիղճ աշխատանքով անուն հանել մարգում,  
Հեշտ ենք մենք լավ աշխատանքի արդյունքները մարտում:

Բանվորներս թող աշխատեն՝ նրանց փառք ու ծափեր...  
Իսկ ես նստեմ հաշտ ու հանգիստ՝ առանց քրտինք թափել:

Մեկ է, լինեմ թե չլինեմ՝ գնալու է գործը,  
(Այդ է ցուցում իմ մի քանի տարիների փորձը):

Նստեմ հանգիստ, տեսեմ ինչպես բանվորներին խաբեմ,  
Կտրեմ նրանց կոպեկները ու... ճաղատո շփեմ:

Շատ եմ ատում կարգացողին ու նախանձում թաքում  
Նրան, ով իմ բրիգադում գրքով աչք է բացում:

Ու... չեմ ներում ընչաքաղցին՝ սնանկությունն հոգու,  
Բայց ծննդյան իմ օրվանից ունեմ երկու... անուն:

Երկու անունն ինչի՞ս է պետք, չէ՞ որ մեկն էլ բավ է,  
Մեկ լավ անունն երկու վատից հազար անգամ լավ է:

Բայց ի՞նչ արած՝ անձս, խիղճս ես տանուլ եմ տվել  
Այն ժամանակ, երբ մեկի տեղ երկանուն եմ առել:

Ու, չգիտեմ, (պատասխանե՛ք, խնդրում եմ, իմ հարցին),  
Ընչաքաղց եմ թեև մի քիչ ու սնանկ եմ կարգին,

Ե՛վ մեքենա, ե՛ փող ունեմ ազնիվ (°) աշխատանքով,  
Ասացե՛ք ինձ, խնդրում եմ, ես երջանի՞կ եմ արդյոք...

15.08.82, Ստեփանակերտ

Լայպրամներ եմ քննարկներ  
ԿՐԻՍ ԿՐԻՍ ԿՐԻՍ

## ԷՊԻԳՐԱՄ-ՊԱՏԱՍԽԱՆ

Ֆ.Կ.-ին

Պո՛ւր ես դու արևի հետ  
Վիճում, խե՛ղճ ճրագ...

Քանի՛-քանի ճրագներ են  
Վառվել ու մարել,  
Իսկ արևը, դե՛ տեսնում ես,  
Ապրո՛ւմ է դարեր:

1977, Դիլիջան

## «ՈՒՍՈՒՑԻՉԸ»

(Ֆելիետոնի փոխարեն)

Երկու ամիս էր՝ ինչ ավարտեց,  
Գործուղվեց դպրոց՝ աշխատանքի:  
Դպրոցը մեծ էր,  
Զգտումը՝ մեծ:  
Առաջին անգամ մտավ դպրոց,  
Եվ հենց առաջին դասաժամին,  
Դասագրքերը երբ ուր տեսավ,  
Վերցրեց, թերթեց անմիջապես:  
- Այս ի՞նչ գրքեր են՝ գեղեցիկ, լավ,  
Վրա տվեց նա չտեսի պես,  
Այսպիսի գրքեր եթե կային՝  
Ինչո՞ւ բուհում մեզ չէին տալիս:  
Նման գրքերով բուհն անպայման  
Մենք կավարտեինք... կես ժամ կետում:  
Եվ այս գրքերից կարելի է  
Կշտանալ... նույնիսկ դեռ չընթերցած...  
- Ի՞նչ,

Այդպե՞ս,  
Մի՞թե...

Ասացե՛ք, ինդերեմ,  
Գիրքն... ուտելի՞ք է, թե՞ գիտելիք...  
Նա կմկմում է, բայց չի կարմրում:  
- Դե, ինչպե՞ս ասեմ,  
Դա՛՝ արդեն... նայած գրքին...

17.03.82, Ստեփանակերտ

## ԻԲՐԵՎ ԽՈՐՀՈՒՐԴ

Իրք ունենալը ոչինչ չի հուշում:  
Սովորել է պետք:  
Երբ գիրքը ունես դու,  
Բայց չես բացում՝  
Էլ ունենալդ պե՞տք է արդյոք...

17.03.82, Ստեփանակերտ

## ԷՊԻԳՐԱՄ-ՏՐԻՈՒԼԵՏ

Հուսով եմ՝ դու քեզ ճանաչեցիր...  
 Չէի՛ մեղանչի ես քո առաջ,  
 Թեկուզ լինեի՛ր դու գեներալ,  
 Եվ դեռ... կուզեիր ընկե՞ր մնալ՝  
 Չէի՛ մեղանչի ես քո առաջ:

Դու նե՛նգ ես, ագահ ու ոխակա՛լ,  
 Գոռո՛ղ ես, դաժա՛ն, բռի՛ ես՝ ա՛րջ,  
 Չէի՛ մեղանչի ես քո առաջ,  
 Թեկուզ լինեիր և... գեներա՛լ...

24.03.96, Ստեփանակերտ

## ԷՊԻԳՐԱՄ

N-ին

Ի՛նչ ես անվերջ մտածում,  
 Տխուր ես ու գլխիկոր,  
 Նրա մասի՞ն ես թախծում  
 Այդպես անվերջ, օրերով:

Քեզ թվում է, թե նրա  
 Արատները կհիմանան...  
 Ձգվելի է ողջն այս, գա՛ղջ,  
 Դժվար թե քեզ հասկանան...

15.07.93, Ստեփանակերտ

## ՊԱՐԶԱՄԻՏ ԶՐՈՒՅՑ

- Արդեն մի ժամ է՝ կանգնել ես լուռ,  
 Ո՛ւմ ես դու այդպես լուռ սպասում...  
 - Սպասում եմ ես իսկ նա չկա,  
 Սակայն անպայման պիտի որ գա:  
 - Բանաստեղծո՞ւմ ես...

- Հեչտ է սսել,

Հապա մի փորձի՛ր բանաստեղծել...  
 - Ու ապրում ես դու միայն հանգո՞վ...  
 - Նախ՝ կյանքում պետք է ապրել... կյանքով,  
 Նոր միայն հանգի մասին խորհել,  
 Կյանքը հանգի հետ համատեղել:  
 Թող աշխարհն ապրի հանգ ու վանկով,  
 Իսկ մենք՝ այսօրվա մեր այս կյանքով:  
 «Բանաստեղծելը»... Հեչտ է սսել,  
 Սակայն... դժվար է բանաստեղծել...

...Ու, ընթերցո՛ղ իմ, մի գարմանա,  
 Որ մեր առօրյա հոգսը թողել,  
 Անգամ գրույցը այս պարզամիտ  
 Ես որոշել եմ... հանգավորել...

21.06.82, Ստեփանակերտ

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ  
 ԿՐԻՍՏՈՍԻԱՆՍԿԻ  
 ԿՆՅԱՆՍՏԱՆԻ  
 ԿՆՅԱՆՍՏԱՆԻ

## «ԱՆՏԱՄԲԵՐԸ»

**Բ**րսից ինչ որ մեկը կրկին  
Բախում է իմ լուսամուտը,  
Լուսամուտից սակայն դեռ չեն  
Տարբերակվում լույսն ու մութը:

Ու չգիտեմ՝ թողնեմ նե՞րս գա,  
Թե՞ սպասեմ լույսը բացվի,  
Սակայն մինչև լուսանալը  
Նա դռան մոտ լուռ կսպասի՞:

Ի՞նչ իմանաս, գիշերվա մեջ  
Ի՞նչ է կորցրել, որ չի գտնում,  
Լույսը բացվի գնամ փնտրեմ,  
Էլ ի՞նչ է գուր գլուխ տանում:

...Չի համբերում սակայն... քամին,  
Հա բախում է լուսամուտը:  
Իսկ իրարից դեռ բաժանվել  
Չեն կամենում լույսն ու մութը:

25.07.93, Ստեփանակերտ

## ՄՏԱՏՈԳՈՒԹՅՈՒՆ

**Ի**նչ է կարգվում քո աչքերից տխրածոր,  
Ո՞վ է գողի «գողացածը» գողանում,  
Եվ ինչո՞ւ է՝ քեզ են նայում կասկածով,  
Երբ ուրիշն է գողոնն ազատ գրպանում:

Ո՞վ է հայտնում հազարների մասին կեղծ  
Ու նայում քո աչքերի մեջ անվարան...  
...Ինչպե՞ս գտնել արդարացման ելևէջ,  
Ինչպե՞ս գտնել արդարացի պատասխան:

08.07.93, Ստեփանակերտ

# ՂԱՐԱՔԱ՝ ՂԱ...

Բարբառային տարբերակ

Գրել եմ արցախյան առաջին հանրահավաքների անմիջական  
տպավորութունների տակ, ժողովրդիս պարզ  
մտածողությամբ, որ եթե խնդրենք՝ Մոսկվան անմիջապես  
Արցախը կմիացնի Մայր-Հայաստանին: Չէինք ակնկալել  
այսօրվա պատերազմը...

Հեղինակ  
27.02.94, Ստեփանակերտ

Ղարաբաղը հայոց վէղն ա,  
Հայոց աչկէն մաշի յէղն ա,  
Հայոց անթէղ կրակ-պօղն ա,  
Ամմա հայոց մաշկէն հօռւը  
Նրա տօղն ա:  
Հի՞նչ անե խեղճ Ղարաբաղը՝  
Լյուզին՝ օրիչ,  
Խօսքը՝ օրիչ,  
Հայոց սրտէն էնքան մօտէ,  
Բայց հայ տանան հեռու տէ՛ղ ա:

Ու հրվաքվեց ժողովուրթը՝  
Միտինգ ըրեն մեծ ու կյուճուը,  
Բանվօր,  
Քաղվօր,  
Թա՛ բօլ-հէրիք:  
Յեկէք յմինին դարկէնք Մոսկօվ:  
Յէր կաց քյինա՛, Գա՛բօ ապա,  
Մոսկօվու մեծ թաքավերեն  
Մեր դյարդերը պատմե մին-մին,  
Թող ճար անէ...

...Գա՛բօ ապան քեցալ Մոսկօվ,  
Մոսկօվու մեծ թաքավերեն  
Ասեց.  
- Տյու մեր թաքավերնը՝  
Կյանքըս հազար տարավ ինի,  
Տիյեր Աստուծ, տուվեր տյուվըս,  
Ղարաբաղցուն հույսը տյուվըս:  
Ժողովուրթես տեղը նեղ ա,  
Լյուզին՝ օրիչ,  
Խօսքը՝ օրիչ,  
Հայոց սրտէն էնքա՛ն մօտէ,  
Բայց հայ տանան հեռո՛ւ տէղ ա:  
Ղարաբաղըս օ՛րիչ վէղ ա...

ԱՐԴՆ ԱՐՆԱԿ  
Լայկերաձներ եւ յեկեգուձներ

Ղարաբաղըս անթէղ-պօղ ա,  
Քանի՞ մընա մօխրեն տակեն,  
Քանի՞ մընա տյօղը սըրտում՝  
Օրիչ խօսքավ,  
Օրիչ լյուզվավ:  
Յէ՛ք, Մոսկօ՛վու մեծ թաքավեր,  
Մեր էս դյարդան մեզ ըզադէ,  
Մոււնք մեր վէդէն տարը տյէռնանք,  
Մոււնք մեր թանէն,  
Մեր թըցանէն տարը տյէռնանք,  
Վէր մեր հացը օրիչ չօտէ,  
Ժողովուրթըս էլ լյաց չօտէ...

Մոսկօվու մեծ թաքավերը ասէց-  
- Գաբո ապա, բօ՛լա,  
Յէս տէղյակըմ էտ պենէրան,  
Տա էն Ըստալին-գյօռբագյօռիւն  
Փռնած պենն ա:  
Քյինա ա՛սէ ժողովուրթէտ՝  
Թօղ տէմ կէնա,  
Հէսա կյամում՝ իմ զորքավըս  
Ղարաբաղըտ օրիչ լյուզվա,  
Օրիչ խօսքա ազադ անէմ:  
Թօղ հայ խօսքը թէվ յօր օնէ՝  
Ղարաբաղա սարէրըն իննի,  
Հինչ տէղ ցավ կա՝ դա՛րման անէ,  
Հինչ տեղ չօռ կա՝ քըշի տա՛նէ...

17.02.88, Ստեփանակերտ

# Վնասանքներ, Քե՞... քե՞ էլ այստե՛նք

(Ուսանողական հումորեսկներ)

Համակուրսեցիներին՝ մշտավառ սիրով

## ՆԱԽԵՐԳ

Մոռացած տարիք, կյանք ու ժամանակ,  
Սրտերում մեր՝ սեր սուրբ ու անարատ,  
Գրքերին գերի, գրքերով տարված,  
Գիտության աշխետ նժույզներն հեծած՝  
Առաջ ենք սուրում փութով՝ շտապով,  
Նոր բարձունքների տենչով՝ փափագով,  
Մինչդեռ... մենք կյանքից շատ ենք ետ մնում,  
Թեկուզև փութով առաջ ենք սուրում:

## ԼԵՆՍԵՐԻ ԴԱՍԸ

Լենսեր ՂԱՐԱԽԱՆՅԱՆԻՆ

...Մռաջին հերթին խոսենք Լենսերից:  
Ամուսնացած է, թող որ՝ հետո՞ ինչ:  
«Երեկո»-ներում այնպե՛ս է պարում,  
Ասես գեռ նոր է իր սերը ճարում:

Կինը չի խանդում. ի՞նչ կա, թող պարի՛,  
Միայն մի պայման՝ իրեն չզավի՛:

Լենսերից պիտի օրինակ առնել  
Ու նրա նման սիրել սովորել:

...Սիրելը՝ սիրել,  
Բայց այնպե՛ս անենք,  
Որ նաև... սիրվենք...

## ՊԱՐԳԵՎՆ ՈՒ ՆԻՆԱՆ

Պարգև ԱՂԱԲԵԿՅԱՆԻՆ  
Նինա ՆԱԼԲԱՆՅԱՆԻՆ

Ա՛խ, եթե սիրեր Նինան Պարգևին՝  
ես նրանց սի՛րտս կպարզեի:

Երկուսին էլ շատ լավ եմ ճանաչում,  
Ազնիվ փափագով սիրում ու պաշտում:

Պարգևին գիտեմ, քաջ տղա է նա,  
Եթե պետք լինի՝ սարեր շուռ կտա:

Նինան էլ լավն է, համեստ է, պարկեշտ,  
էլ ինչո՞ւ իրար մերժեն այդքան հեշտ:

էլ ինչո՞ւ ապրեն իրարից խուով,  
Իրար կարոտով և ոչ թե սիրով:

## ՄԵՐ ԶԻՆԱՆ

Զինա ԶԻՎԱՆՅԱՆԻՆ

Մեղրավանի վերին թաղի մեր Զինան  
Պատրաստ է միշտ սեմինարի, քննութ՛յան:  
Սակայն ունի իր հոգու մեջ մի լուռ բաց՝  
Այն, որ մինչև հիմա մարդու չգնաց:  
Ինքն էլ հալվեց գրքի ձեռքին՝ մոմ դառած:

Բայց մոմի լույսն անվերջ պիտի բոցկլտա,  
Մինչ երազի իր ասպետը երևա...

11.04.86, Ստեփանակերտ

## ԱՇԱՆԻ ՀՄԱՅՔԸ

Ամալյա ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

Ա՛շանից մի աղջիկ սովորում է մեզ հետ,  
Ուշ՝ ուշ ենք տեսնվում, մի կուրսում ենք թեպետ:

Հմայի՛չ է այնպես, հայացքով գեղեցիկ,  
Իսկ երբ որ խոսում է իր ձայնով երգեցիկ՝  
Թվում է՝ աշխարհում արև է, գարո՛ւն է:  
Սակայն նա սիրում է Աշանի... աչո՛ւնը:  
Իսկ հետո էլ սիրեց մի սևաչ տղայի  
Ու փախավ շատ հեռու իր սիրած Աշանից:

Մեզ էլ է նա ուշ՝ ուշ այցելում, ի՞նչ անենք,  
Բայց ինչքան հեռանա՝ նրան միշտ կհիշենք  
Աշանը, աշունը ու մենք...

15.12.84, Ստեփանակերտ



# ՄԵՐ ԱՆԱՏԻՏՆԵՐԸ

Անահիտ ԽԱՉԻՑԱՆԻՆ  
և մյուս երկու Անահիտ ՀԱՐՈՒՅՈՒՆՅԱՆՆԵՐԻՆ

Անահիտները այնքան շատ են մեր՝  
Մարդ չգիտե, թե ում մասին գրեի:

Մի Անահիտի անվանում ենք «Ժ»,  
Մյուսին էլ՝ «Դ»:  
Երբորդը «Խ» է, Անո Խաչիյան,  
Անուն-ազգանուն մաքուր հայկական:  
(Երևի պապը Խաչ է գողացել,  
Անունն էլ... Խաչիպապ է մնացել):  
- Չէ՛ մի...

...Լա՛վ, թողնենք նրան իր հոգսին  
Ու վերադառնանք Անահիտ «Ժ»-ին:

## ԱՆԱՏԻՏ «Ժ»-Ն

Եվ հրաժեշտից մինչ նոր հանդիպում՝  
Ապրում ենք հուշով նախորդ հանդիպման,  
Բայց տարին, ինչքան դասերը գերում,  
Երկու անգամ ենք այցելում իրար:  
Այցի ենք գալիս իրա՞ր, թե՞ իրավ  
Կան այցելելու առիթներ հարմար:  
Դե, իհարկե, կան: Ու հավաքվելով՝  
Գզվում ենք իրար մենք... Հայացքներով:  
Ու թե պատրաստ չենք քննություններին՝  
Թող ների դա մեզ մեր կուրսի... «ներին»:  
Իսկ Անահիտ «Ժ»-ն պատրաստ է ամեն  
Քննության: Ու՛ միշտ:  
Սակայն սիրում է շրջել քաղաքում,  
Այնքան, մինչև որ գիշերը կիսվի  
Ու հաջորդ օրը նորեն սկսվի...  
...Բայց մի անգամ նա «Չյորտվի մոստից»  
Ընկավ: Քիչ մնաց... ուշքը գար... փոստից:  
Ու... մնում է դեռ նա փոստի հույսին՝  
Բա դա վայել է, արդյոք, մեր կուրսին:  
22.06.85, Ստեփանակերտ

ԱՐԴՄԵՆ  
ԱՐԴՄԵՆ  
Մասնակցի, բե... թե էլ պատեմ

## ԱՆԱՏԻՏ «Դ»-Ն

Առաջին անգամ, երբ տեսա նրան՝  
Ասի աղջիկին այս ինչի՞ է նման...  
- Դե, կապիկ հո չի՞, աղջիկ է էլի,-  
Վրա տվեցին այս ու այն կողմից:  
- Լա՛վ աղջիկ է նա,- Պարզեն ասաց,- տե՛ս,  
Զլինի՞ հանկարծ... սիրահարվել ես...

Այդ մասին, սակայն, դեռ չգիտեի,  
Բայց այնպե՛ս լինե՞ր... սիրահարվելի՛...

...Լա՛վ, ասենք՝ թե ես սիրահարվեցի,  
Բայց սիրտս ինչպե՞ս դռներն իր բացի:  
Թե սերս հայտնեմ մի քանի տողով,  
Կհասկանա՞ նա ու կապրի՞ սիրով:  
Իսկ թե չընդունի՝ գրողը հետը,  
Թող գնա ընկնի Ախուրյան գետը:

...Պահը հարմար էր, նա դաս էր պատմում,  
Իսկ ես՝ ինչ որ բան թղթին խզեցում:  
Նա «Բայ» էր պատմում, բայի սեռերից՝  
«Կրավորական», «չեզոք»... Իսկ ինձ ի՞նչ՝  
Ես լսում, ոչինչ չէի հասկանում,  
Մինչդեռ... իմ սիրո տողե՛րն են ծնվում:

...Պու բայի սեռի մասին ես պարմում,  
Ես լսում եմ ու... բա՛ն չեմ հասկանում:  
Պու մի նեղանա՞ չե՞մ հասկանա ես,  
Ինչ ուրի՜շ հարց է հույում պարզապես:  
Պու պարմիր, պարմիր «Քայ», թե «Վոյական»,  
Խակ ես լսեմ ու... բա՛ն չհասկանամ...

...Պարզե՞ր թուղթը երբ նրան տվեց՝  
Կարդաց ու... «էլի կբերես», - խնդրեց:

Բայց... չհասկացավ: Գրողը հետը:  
Թող գնա՛ ընկնի... Ախուրյան գետը...

## ՀԻՄԱ Ի՞ՆՉ ԱՆԵՆՔ...

**Հ**իմա ի՞նչ անենք, ընկերներ՛ր, ասե՛ք,  
 Մեզ ընկերական մի խորհու՛րդ տվե՛ք:  
 Գործը թե այսպես մինչև վերջ գնա՝  
 Վերջը զգո՞ւմ եք, թե ինչ կդառնա:  
 Սպասե՞նք: Դե, լավ, սպասենք մի քիչ:  
 Կյանքն առջևում է, չի փախչում, ոչ ի՛նչ...  
 11.03.82, Մարտակերտ

## ՄԵՐ ՍՊԱՍՈՒՄԸ

**Մ**եր սպասումը երկար չտևեց:  
 Մենք ամուսնացանք: Մեր բախտը բերեց:  
 Մենք մտանք կյանքի իսկական ուղի,  
 Փնտրեցինք գոտանք մե՛զ սիրողներին:  
 Այդ սերը բերեց մեզ երգ ու բերկրանք՝  
 Կյանքի կոչելով տենչ ու երազանք:  
  
 ...Մեր սիրո համար հուր է ու գինի՛  
 Մեզ վրա ազդած դասը Լենսերի...

## ՄԵՆՔ ԱՄՈՒՄՆԱՆԱՆՔ, ԴՈՒՔ ԴԵՌ ՍՊԱՍԵ՞Ք...

...եվ՝ մյուսներին

**Մ**ենք ամուսնացանք: Օրերի փոշին  
 էլ չի աղտոտում մեր կյանքի ուղին:  
 Ու պիտ ծերանանք մեկտեղ, մի բարձի,  
 Իսկ մի «երկրորդ բարձ» եթե սեր հայցի՞...  
 Երբե՛ք: Քանզի դուք սիրում ենք նրանց՝  
 Ամուսնյակներին ձեր, մենք՝ մեր կանանց,  
 Որոնց մեր կուրսում պիտի չընդունենք,  
 Սակայն միշտ պիտի պաշտենք, գուրգուրենք:  
 Քայլենք միասին, մեկ ճանապարհով,  
 Ապրենք, որ սերը ապրի՛ ապահով:

...Բայց մենք ունենք և ... չամուսնացածներ,  
 Իսկ դա պատիվ չի բերում կուրսին մեր...

Ասացե՛ք, ինդերեմ, հիմա ի՞նչ անենք,  
 Մենք ամուսնանանք, դուք դեռ սպասե՞ք...

22.06.85, Ստեփանակերտ

Կարմրակապույտներ

ԿՐԻՍՏԻՆԵ  
ԿՐԻՍՏԻՆԵ  
ԿՐԻՍՏԻՆԵ

## ՊԱՐԳԵՎԻ «ՏԻՆԳԵՐԸ»

Տարօրինակ է մեր այս Պարգևը՝  
Իրար է խառնել օրվա ժամերը:  
Գիշերը մինչև լույս դաս է սերտում,  
Ցերեկը հոգնած ու դադրած՝ ննջում:

Իսկ երբ օրերն են հասնում քննության.  
- Անպայման պիտի «հինգեր» ստանամ...  
Բայց... տուն է գալիս «չորսեր» ստացած  
Ու գրքին թեքվում աչքերով հոգնած:

- Ի՞նչ ես ստացել,- հարցնում են տանը:  
- Է՛, ի՞նչ ասեմ ձեզ, անիծվի չարը,  
Երբ հերթս հասավ՝ մնացի մոլոր,  
Վերջացել էին... «հինգերը» բոլոր:  
Ոչինչ, կձգտեմ ես այս հուսովարին  
Զինայից էլ շուտ հասնել «հինգերին»:

- Ա՛յ Պարգև, ի՞նչ ես «ախ ու վիշ» անում,  
Դատարկ բաներով իզուր վշտանում:  
Քառասուն տարվա բանաստեղծներ ենք,  
Նոր պիտի նստենք ու դաս սովորե՞նք...

- Ե՛վ բանաստեղծ ես դու քեզ համարում,-  
Կարենն է հանկարծ գրույցին խառնվում...

- Ի՞նչ, մի՞թե, իրո՞ք, դու դեռ չգիտես,  
Որ ինձ բանաստեղծ չեմ համարում ես:  
Երբ հարցնում են՝ բանաստեղծ ես դու,  
Ասում եմ՝ չէ՛ մի, բանաստեղծացո՛ւ...

10.08.82, Ստեփանակերտ

## ԱՆՁՐԵՎԻ ՏԱԿ

Քայլում ենք նորից հոգնած փողոցով  
Ես ու Պարգևը: Պարգևի ձեռքին  
Լ. Հովակիմյանի «Բարի անձրևն» է:  
Բարի՞ անձրևը...  
Իսկ չա՞րս... որն է:  
Անձրևը...

Հանկարծ խենթ որոտներով  
Մթազնում է երկինքը խաղաղ,  
Անձրև է տեղում,  
Անձրև՝ հորդ ու խենթ...  
- Վազե՛նք...

Վազում ենք,  
Ու մայթերը թաց  
Լուռ մտմտում են մեր ոտքերի տակ,  
Իսկ անձրևն անգութ  
Շարունակում է քրքրել նորից  
«Բարի անձրևի» թրջված էջերը:  
Ի՛նչ է մտածում այդ անիծյալը,  
Մի՞ թե նա «բարի անձրևին» անգամ  
Հանգիստ չի տալու:  
Ո՛ւր մնաց՝ «չարին»:  
Կամ էլ՝ գուցե... մեզ:  
Կամ էլ՝ գուցե  
Ինքն է «չար անձրև» կոչեցյալը հենց:

- Վազե՛նք...  
Վազում ենք,  
Ու մայթերը թաց  
Լուռ մտմտում են մեր ոտքերի տակ:  
Գրախանութի շենքի մոտ ենք ու...  
- Մտնե՛նք,- ասում եմ...  
- Ի՛հ, այս խելագար ու խենթ անձրևին  
Ի՛նչ գիրք գնելու ժամանակ է ո՛ր...  
- Մտնե՛նք,- նորից եմ համառում,-  
Մտնե՛նք...  
Մտնում ենք: Վերցնում  
Մովսես Յախշունցի «Անձրևից հետոն»  
Ու նորից փողոց՝  
«Անձրևից հետոն»  
Հորդ անձրևի տակ թերթելու համար:  
Թող տեսնի խենթը ու քիչ մեղմանա,  
Թող զգա, որ ինքն ինչքան համառի,  
Ինչքան նենդ լինի՝  
Հիմա անձրև է՝  
Հետո... «անձրևից հետո» կլինի...

### ԽՈՐԵՆԱՑՈՒ «ՏԵՏ»

✠ առասու՛ն տարի՛ առա՞ջ էր: Ե՞րբ էր...  
Գրախանութում  
Խորենացի էր վաճառվում նորից՝  
«Հայոց պատմություն»:  
Իսկ մենք զբաղված՝ մի օր՝ ստուգարք,  
Մի օր՝ սեմինար, մի օր՝ քննություն,  
Ու չհասցրինք:  
Իսկ մի օր էլ, երբ ժամանակ գտանք

Մենք գրախանութ մ'տնելու համար՝  
Խուլ դարակներում  
Սուրբ Խորենացու «Հայոց պատմութ յունն»  
Մատյանը չկա՛ր...

...Անցել է ուղի՛դ... քառասո՛ւն տարի:  
Գրախանութում  
Հիմա էլ նորից  
Խորենացի է վաճառվում...  
- Պարզե՛,-  
Ասում եմ,- գնա՛նք ու Խորենացի գնենք...

Պարզեն էլ:  
- Ձբաղված եմ, է՛, հետո՛ կգնենք...  
- Հետոն գալիս է,- ասում եմ,- այո՛,  
Բայց ո՛ւչ է գալիս:  
Հիմա էլ եթե չգնենք՝ պիտի  
Սպասենք հետո՛ գնելու համար,  
Քառասո՛ւն տարի հետո, լսո՛ւմ ես:  
Քառասո՛ւն տարի՛...

## ԳՐԱԽԱՆՈՒԹԻ ՄՈՏ

Ե ու Պարզեն ենք:  
Գրախանութի մ'ոտ կանգնել ենք լուռ  
Ու սպասում ենք՝  
Կարենն, ուր որ է, պիտի երևա...

Հանկարծ մի աղջիկ  
Երկու գրքույկ է ձեռքին  
Դուրս գալիս գրախանութից:  
Այստեղ Պարզե՛րը չի դիմանում ու...  
- Օրիո՛րդ, մի վայրկյան կարելի՞ է Ձեզ...  
- Ձէ՛, չի կարելի՛ ո՛չ մի վայրկյան էլ...  
- Բայց ես անպայման պիտի ասեմ, որ...  
- Դե, լա՛վ, ասացե՛ք,- տեղի է տալիս:  
- Գրքերից բացի դուք պետք է նաև  
Ակնո՛ց գնե՛իք:  
- Ինչո՞ւ,- հեզնախառն ժպիտն է կախվում  
Հարցումից նրա:  
- Դե, որովհետև... կարճատես եք Դուք...  
- Ինչի՞ց իմացաք...  
- Գրախանութում «Տերյան» կար, ազատ,  
Իսկ Դուք թողել ու... այդ ի՛նչ եք գնել...

ՀՐԱԺԵՇՏԻ ԽՈՍՔ  
ԿԱՄ՝ PARODIA ՀԱՄՈՒ ՍԱՀՅԱՆԻ  
«ԱԽՐ ԵՍ ԻՆՀՎԵ՞Ս...»  
ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅԱՆ

Ախր ես ինչպե՞ս թողնեմ ու գնամ,  
Ախր ես ինչպե՞ս ուրիշ տեղ մնամ:  
Ախր ուրիշ տեղ տաղնապներ չկան,  
Ախր ուրիշ տեղ ստուգարք չկա,  
Ախր ուրիշ տեղ քննաչըջանում  
Կամ ա՛ակամա խորովվել չկա,  
Ախր ուրիշ տեղ  
Սեփական բախտից խռովել չկա:

Ախր ես ինչպե՞ս թողնեմ ու գնամ,  
Ախր ես ինչպե՞ս ուրիշ տեղ մնամ:

Ախր ուրիշ տեղ Նինաներ չկան,  
Սեղաներ չկան, Զինաներ չկան,  
Ու «պտտորված» Մարինե չկա:  
Ախր ուրիշ տեղ  
Մեզ թև ու թիկունք Լենսերներ չկան,  
Գայանե չկա, Մարիետա չկա,  
Ժ ու Դ չկա:

Ախր ուրիշ տեղ՝ տեղահան եղած՝  
Եկած՝ ուսերով մեր կուրսին հենված  
Ուրիշ կուրս չկա:  
Ախր ուրիշ տեղ, մեր դասախոսներ,  
Զեզ նման բարի, անշահախնդիր,  
Պարզ ու հասարակ էակներ չկան:

Ախր ես ինչպե՞ս թողնեմ ու գնամ,  
Ախր ես ինչպե՞ս ուրիշ տեղ մնամ:  
Ախր ես ինչպե՞ս ապրեմ առանց ձեզ...

10.04.86, Ստեփանակերտ

Կարակոչյաններ

ԿՐԻՄ  
ԿՐԻՄ  
ԿՐԻՄ

Երբ որ մի թիչ մեծանամ,  
Ես էլ դպրոց կգնամ՝

Տասինս ակնոցը դնեմ,  
Դպրոցում լավ սովորեմ,  
Կարդամ պատիս գրքերը,  
Որսամ նրա մտքերը...

---





**Քաղաքի կենտրոնի  
Մոլորակաբանություն 1989-2012**

---

# Ինչ էն պարտուած Քոթրիկները

## ԵՐԵՒԱՆԵՐԸ ԳԱՆՁԱՍԱՐՈՒՄ

Այսօր, ահա, մտնում ենք մենք  
Մկրտուածի յան ավազան,  
Մեր ճակատը սուրբ մեռնող  
Օծի՛ր, Պարգև Սրբազան:

Օծի՛ր, մենք էլ հայ մկրտվենք  
Մեր հայաշատ օջախում,  
Հայ մկրտվենք, որ հայ մնանք  
Ու գորանանք Արցախում...

## ՍԱՄՎԵԼԻԿԻ ՊԱՏՄԱԾԻՑ

Իմ հորեղբայր Անդրանիկը  
Շատ է սիրել Հայրենիքը:

Երբ Արցախ է թուրքը մտել՝  
Նա գինվոր է իսկույն գրվել:  
Գնդացիին իր ուսն է առել  
Ու Մարտակերտ իսկույն հասել:

Մերթ՝ Մաղավուզ, մերթ՝ Մոխրաթաղ,  
Մեծչեն, Օմար ու Գյուլաթաղ,  
Ուր եղել է՝ կռվել է նա,  
Ուր կռվել է՝ հաղթել է նա:

Ու պարտվել է թուրքը նորից,  
Փախել մեր շեն Կոճողոտից...

24.05.94, Շուրաբաղ (ԿՊՇ, գործող բանակ)

## ՍՈՒՍԱՆԻԿԻ ՊԱՏՄԱԾԻՑ

Իմ հորեղբայր Անդրանիկը  
 Զոհվել է մարտում,  
 Պաշտպանելով Հայրենիքիս  
 Մահմաններն անքուն:

Քա՛ղ է եղել մարտի դաշտում՝  
 Գնդացրորդ արի,  
 Կռվել է, որ հի՛ն Արցախիս  
 Ծուխը չմարի:

Կռվել է ու... հաղթել թուրքին՝  
 Զոհվելով անգամ,  
 Ու գրկել է սիրող մոր պես  
 Մայր հողը նրան...

20.05.94, Շուրաբադ (ԿՊՇ, գործող բանակ)

## ՄԱՐԻԱՄԻԿԻ ՊԱՏՄԱԾԻՑ

Իմ հորեղբայր Անդրանիկը  
 Ինձ Մարիամ է անվանել,  
 Պաշտել է շատ Աստվածամորն  
 Ու Աստծուն է նա պաշտել:

Բայց եղել է կռիվ մի մեծ,  
 Ավեր, արյուն ու թալան,  
 Ու նետվել է նա թե՛ մարտի.  
 - Տեր Աստվածն ինձ պահպան'ն...

Աստված, սակայն, չի պահպանել՝  
 Նա զոհվել է այդ մարտում,  
 Իր արյունով փրկված հողը  
 Հայավարի է ծաղկում...

...Երբ խաղում ենք ընկերներով՝  
 Սուտ չեմ խոսում ես բախում,  
 Միշտ երգվում եմ՝ «Աստված վկա»,  
 Ու երգումս չեմ խախտում...

ՊԱՏՄԱԾԻՑ  
 ՓՈՒԿԻՆԵՐԻ ԵՂՅԱՆԻ

## ԱՆԴՐԱՆԻԿԻ ՊԱՏՄԱԾԻՑ

Իմ հորեղբայր Անդրանիկը  
Ինձ իր անունն է թողել,  
Մեկ էլ՝ փրկված Հայրենիքը,  
Որը նա շատ է սիրել:

Եվ զոհել է կյանքը ջահել,  
Որ ապրի Հող-Հայրենին,  
Ու միշտ պարտվի թուրքը վայրի՝  
Մեր ոխերիմ թշնամին:

...Ես էլ շուտով կմեծանամ,  
Իսկ թե կրկին թուրքը դա՝  
Չեմ երկնչի մարտի դաշտում  
Լինել քեզ պես, հորեղբայր...

## ՉՈՐԱՅՐԻ ՊԱՏՄԱԾԻՑ

Կարմիրավանի ավերակները  
սպասում են իրենց ազատարարներին...

Մենք թոնի՛ր ենք ունեցել,  
Մի երա՛զ թոնի՛ր,  
Իսկ թոնի՛րը՝ տաք կողեր  
Ու հույսեր կարմիր:

...Թուրքը եկավ ու մեր շեն  
Գյուղը ավերվեց,  
Եվ արյունից թոնի՛րը  
էլի՛ կարմրեց:

Գյուղը քանդվեց, չմնաց  
Քար-քարի վրա,  
Ավերակներ են այնտեղ  
Ու մահ է հիմա:

Բայց միշտ կա իմ հուշերում  
Թոնրատունը տաք՝  
Որպես անցած օրերի  
Հուշ ու հիշատակ...

# ՆՈՐԱՅՐԻ ՊԱՏՄԱԾԻՑ

Եվ կգա այդ օրն ու դպրոցական Նորայր Բաբայանն իր  
քրոջ՝ Ռեգինայի ու եղբոր՝ Ջորայրի հետ  
կրկին կվերադառնա Կարմիրավան...

Ի՞նչ ո՞ւմ ես, Ջորայր, դու մեր տունը,  
Թե ո՞նց էր հաչում բակի շունը:

Կչկչան հավը ածում էր ձու,  
Որ առավոտյան ուտենք՝ ես, դու:

Մեր տունը ո՞նց էր կահավորված՝  
Քո մահճակալը, բազմոցը բաց:

Հեռուստացույցը, որ հայերեն  
Բառ անգամ չէր էլ արտաբերել:

Փոքրիկ, անվավոր արկղիկը,  
Ուր պահում էինք խաղալիքը:

Այն, որ պոկվել էր կափարիչը,  
Քեռին նորոգեց, հիշում ես, չէ՞:

Իսկ պահարանը խոհանոցի,  
Ուր խաղում էինք պահմտոցի:

Ուր մտնում էինք՝ փակվում ներսից,  
Որ երբ թուրքը գա մեզ չտեսնի...

Թուրքերը եկան, տունը թողինք,  
Մի կերպ փախանք ու ազատվեցինք:

...Չի էլ մ'իմնում, որ շուտ էլ քնենք,  
Գոնե երազում տունը տեսնենք:

Տեսնենք՝ դեռ տե՞ղն է ամեն ինչը,  
Չի՞ պոկվել արկղի կափարիչը:

Մեր հավը էլի ձո՞ւ է ածում,  
Բայց առավոտյան ո՞վ է ուտում:

ԱՐԴՆ ԱՐՄԵՆԻ  
ԻՐԱՆ ԵՆ ԿԱՐՄԱՆԱԿՔԻՆԵՐԸ

## ՀԱՅԿԻ ՊԱՏՄԱԾԻՑ

Մոավ սարը մեր չքնաղ՝  
Հայացքը երկինք հառած,  
Ջարդարում է Արցախիս  
Հող ու քարերը ծաղկած:

Մոավ սարը մեր սիրուն՝  
Ինչէ՛ր ասես՝ չտեսավ,  
Հայրենիքս ծիծաղկուն՝  
Ավերված էլ նա տեսավ:

Մոավ սարը մեր բարի՝  
Պահապանն է պատմության,  
Մեր դարավոր հառաչի  
Ու տրտմության լուռ վկան:

## ԱՐԵՎԻԿԻ ՊԱՏՄԱԾԻՑ

Սուտասան է Գայանեն,  
Սուտ է ասում ամեն օր.  
- Էլ չե՛մ հրի դուռը ձեր  
Ու չեմ փախչի, Մարիամի՛կ:

Սակայն հաջորդ օրը հենց՝  
Նույնն է անում Գայանեն,  
Դուռը հրում մինչև վերջ,  
Ու փախչում, որ չբռնեն:

Իսկ քիչ անց ետ է գալիս  
Ու՛ թե.  
- Մարիա՛մ, եկ՝ խաղանք...  
- Բա չե՞ս ասել, Գայանե՛,  
Էլ չե՛ս հրի դուռը մեր...

- Մեղավո՛ր չեմ, Մարիամի՛կ,  
Որ հրել եմ դուռը ձեր,  
Կարիճեն է ասել ինձ՝  
Հրի՛ր, բացի՛ր՝ շուտ փախչե՛նք...

### ԱՆՈՒՇԻԿԻ ՊԱՏՄԱԾԻՑ

Քամին սարերն է ընկել՝  
 Պահմտոցի է խաղում:  
 Երկինքն իր գույնը փոխել՝  
 Ճերմակ գույն է ստանում:  
 Առուն ո՛նց է հորդացել՝  
 Երկինքը լաց է լինում:  
 Ամպը ձորերն է լցվել՝  
 Ձորերը չեն երևում:  
 Սարերը պար են բռնել  
 Իմ հայրենի Արցախում...

### ՍՈՒՐԻԿԻ ՊԱՏՄԱԾԻՑ

Մնա՛ս բարով, Մասիս սար,  
 Ես գնում եմ Գանձասար...

Ստեղծավտոն՝ տուն էր գնում  
 Երևանից Սանասարը,  
 Իսկ ավտոյի պատուհանից  
 Երևում էր Մասիս սարը:  
 Սլանում էր ավտոն առաջ,  
 Գալիս էր և Մասիս սարը,  
 Նայում, անխոս հիանում էր,  
 Հրճվում էր լուռ Սանասարը:  
 Բայց որտեղից-որտեղ՝ մի ամպ  
 Եկավ ծածկեց Մասիս սարին,  
 Մի տխուր ցավ, մի լուռ տագնապ  
 Պատեց փոքրիկ Սանասարին:  
 Իսկ երբ ամպը անցավ նորից՝  
 Հանկարծ լսեց Սանասարը.  
 - Տեսա՞ր, էլի հասա ես քեզ-  
 Հպարտ ժպտաց Մասիս սարը:

### ԱՎԱՐԴԻԿԻ ՊԱՏՄԱԾԻՑ

Ես փոքրիկ է Լիլիթիկս՝  
 Հագիվ երկու ամսական,  
 Կծկվում է ցավից սիրտս,  
 Երբ լացում է այնպես շատ:  
 Կչկչում է մեկ էլ հանկարծ,  
 Բայց նորից է նա լացում,  
 Երբ տեսնում է իր ծծակը  
 Արմանիկի բերանում:

## ՍԻՐԱՆԻԿԻ ՊԱՏՄԱԾԻՑ

Փաթիլները լուռ իջնում են՝  
Այնպե՛ս հանգիստ,  
Այնպե՛ս դանդաղ,  
Կարծես նրանք  
Երա՛զ լինեն խորհրդավոր,  
Որ իջնում են  
Լուռ... պարելով...

Փաթիլները լո՛ւռ են իջնում  
Ու ներկում են  
Դաշտ ու անտառ՝  
Միայն  
Ճերմակ երանգներով:

## ԳՈՏԱՐԻԿԻ ՊԱՏՄԱԾԻՑ

Չլուռն հավիեց,  
Առուն լցվեց,  
Առուն տարավ գետակին,  
Իսկ գետակը  
Շնկչնկալով  
Վազեց գետը մոտակա:

Գետը տեսավ,  
Ուրախացավ,  
Փարվեց սիրով գետակին,  
Իսկ գետակը  
Ուրախությամբ  
Փարվեց գետին մոտակա:

Ուրախության  
Արցունքն աչքին  
Գետը հասավ ծովերին:  
Ձնծաղիկն էլ  
Հողից ելավ՝  
Գարո՛ւն բացվեց աշխարհին...



## ՌՈՒՋԱՆԻԿԻ ՊԱՏՄԱԾԻՑ

Ի՞նչ է, արդյոք, պատահել  
Անդրաճիկին, չգիտեմ,  
Ո՛չ խնդում է, ո՛չ խաղում,  
Ո՛չ թռչկոտում, ո՛չ պարում:

Հոպ, հոպ՝ այդպես, դե՛ խաղա,  
Սիրտս սիրուց թող դողա,  
Խնդա՛, խաղա՛, լա՛վ բալիկ,  
Սիրտս ձեռքիդ խաղալիք:

## ՆԵԼՍՈՆԻ ՊԱՏՄԱԾԻՑ

Գարո՛ւն է եկել,  
Վարդ ու ծաղի՛կ է բերել մեզ համար,  
Ցող ու շաղի՛կ է բերել մեզ համար,  
Երգ ու տաղի՛կ է բերել մեզ համար:

Գարո՛ւն է եկել,  
Մեզ համար թովիչ երա՛գ է բերել,  
Մեր սուրբ իղձերին բարի կատարում  
Ու ջերմ սրտերին բերկրա՛նք է բերել:

Բերել է՝ ինչ որ ունի նա պահա՛ծ,  
Մեզ համար ինչ որ ունի նա շահա՛ծ:  
Մի ամբողջ տարվա կարոտից ծնված  
Գարո՛ւնն է եկել...

# Իմ պապը Գնալուսեց Անդրիե է

## ԻՄ ՊԱՊԸ

Իմ պապը խաչուց Անդրին է,  
Ականջս նրա կանչին է:

Փոքրիկ չեմ, ես մեծ եմ արդեն,  
Ու պապիս տեղն էլ լավ գիտեմ:

Անտառն է գնացել՝ փայտի,  
(Անտառի տեղն էլ է հայտնի):

Գնացել ու ետ չի գալիս՝  
Ձեն ու ձուռն չկա անտառից:

Ի՞նչ անեմ, սպասե՞մ, կգա՞,  
Թե՞ գնամ պապիս ետևից:

## ԱԿԱՄԱ ՊԱՏԱՍԻԱՆ

- Ասա՛, Մարիա՛մ,  
Թե քեզ տամ  
Երկու խնձոր,  
Երեք տանձ,  
Երկու տանձը  
Ետ ինձ տաս:

Քեզ քանի՞ սը  
Կմնա...

- Վա՛, երկուսը  
Ետ քեզ տամ,  
Որ մի հա՞տը  
Ինձ մնա...

## ՍՈՒՍԱՆԻ «ԱՐԴԱՐԱՅՈՒՄԸ»

Սոլսանը ծամոն ծամելիս  
Նայում ես՝ ծիծա՛ղդ է գալիս.  
Մամ ում ու շուտ կուլ է տալիս:

Նայում է Սամվելը նրան ինթ,  
Իսկ քույրը՝ թե.

- Ի՞նչ է, եղբա՛յր,

Մնոտս մեղքդ չի՞ գալիս...

## ՍԱՄՎԵԼԻ ՀԱՆԵԼՈՒԿԸ

- Շ առի վրա՝ Երեք ճյուղ, Ամեն ճյուղին՝ Երեք շյուղ, Ամեն շյուղին՝ Երեք ծիտ, Բոլորն իրար Շատ մոտիկ:	Ծիտ մ'նաց... Հաշվեց Սուսանն Ու ասաց.  - Ես դա գիտեմ, Սամվելի՛կ, Ծառին մ'նաց Իննը ծիտ...
Երկու ճյուղի Ծտերը Թռան իրենց Բները:	...Ինչպե՞ս հաշվեց Սուսանը, Երբ դեռ փակ էր Մառանը, Իսկ մռռանը՝ Դռռանը...
Ծառին քանի՞	

## ԱՌԱՋԻՆ ՈՒՍՈՒՑՉՈՒՏՈՒՏ

Կոճողոտի ութամյա դպրոցի դասվար  
Նորա ՂՈՒԼՅԱՆԻ հիշատակին

Փոքրիկ էի, անհոգ մանկիկ,  
Երբ ինձ դպրոց բերին,  
Դու քո սրտի հուրը տվիր  
Իմ՝ դեռ մանուկ սրտին:

Թևեր առել քո տվածով՝  
Հեռուներ եմ թևել,  
Իմ առաջի՛ն ուսուցչուհի,  
Իմ կենսատո՛ւ արև...

## «ՄԻԱՄԻՏ» ԱՐԵՎԻԿԸ

Օ ուրա է դրսում,  
Բա չե՞ն մրսում ծառերը,  
Չարմանում է  
Չարածճի Արևը:

Դե, ծառերը  
Ինչպե՞ս կարող են մրսել,  
Չէ՞ որ ճերմակ  
Չյունե մուշտակ են հագել...

12.07.93, Ստեփանակերտ

## ՀԱՄԼԵՏԻԿԸ

Անուշ Իսրայելյանի հիշատակին

Մեկ ամսական Համլետիկը  
Այդպես էլ բան չհասկացավ,  
Թե ո՞նց հանգավ իր տատիկը,  
Թե ո՞նց կյանքից նա հեռացավ:

Դեռ կպատմի Համլետ պապը,  
Երբ մեծանա թոռը մի քիչ,  
Թե ինչպես էր Անուշ տատը  
Սիրում, պաշտում Համլետիկին...  
10.11.06, Ստեփանակերտ

## ԴՊՐՈՑԱԿԱՆԸ

Էլ փոքրիկ չէ Նորիկը, իզուր դես-դեն չի ընկնում՝  
Դպրոց է նա հաճախում, Շարում է իր գրքերը,  
Եվ չի ցավում փորիկը, Նստում մինչ ուշ երեկո՝  
Երբ խակ խաղող չի ուտում: Սովորում է դասերը:

21.03.93, Ստեփանակերտ

## «ԱՄԱԶԿՈՏ» ԱՐԱՐԱՏԸ

-Մեծ տղա է դառել արդեն  
Մեր հարևան Արարատը,  
Բայց անցնելիս չի բարևում,-  
Դժգոհում է Արշակ պապը:

- Ո՞նց բարևի, քեռի՛ Արշակ,  
Ամաչում է նա երևի,  
Քաղել է ձեր խաղողը խակ՝  
Ի՞նչ երեսով էլ բարևի...

21.07.93, Ստեփանակերտ

## ՍՈՍԻ ՑԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ

Ող հավերժ կանաչ լինի  
Առվա՛կ իմ, քո եզերքը:

Ու թող քո երգին խառնեմ  
Իմ փոքրի՛կ սրտի հեքը:

Ախր ինձ կախարդում է  
Քո քնքո՛ւշ-անուշ երգը...

## Ի՞ՆՉ Է ՍԻՐՈՒՄ ՌԵԳԻՆԱՆ

Ես գարո՛ւնն եմ սիրում,  
Ես կանա՛ջն եմ սիրում,  
Սիրում եմ, երբ հանդում  
Գարունը ծաղկո՛ւմ է:

Երբ ծաղկո՛ւնքն է բուրում,  
Երբ կանա՛ջն է բուրում՝  
Իմ հոգին դյուրթվո՛ւմ է,  
Իմ հոգին ժպտո՛ւմ է:

Սիրո՛ւմ եմ, սիրո՛ւմ եմ,  
Երբ անհուն երկնքից  
Ժպտո՛ւմ է, հրճվո՛ւմ է  
Մայիսյան արևը:

...Ես գարո՛ւնն եմ սիրում,  
Ես կանա՛ջն եմ սիրում:

### ԹԱՐԹԱՌ

Ու գալիս ես հեռուներից  
Ու խոսում ես, խոսում անվերջ  
Հպարտ ու վեհ մեր լեռներից՝  
Քո քչքչան երգերի մեջ:

Ու բացվում է, ահա, քո դեմ  
Իմ հայրենի դյուղը ծաղկուն,  
Քեզնով է նա, ես այդ գիտեմ,  
Շնչում, ապրում իմ Արցախում:

21.03.93, Ստեփանակերտ

## ԷԳՈՒԼԻԿԻ ԽՈՐՏՈՒՐԴԸ

Իտեմ, որ շատ  
Չար մարդիկ կան  
Այս աշխարհում,  
Բայց ուզում եմ  
Բարի մնալ  
Ես իմ կյանքում:

Դու է՛լ  
Բարի եղիր, Գևո՛րգ,  
Բարին արա,  
Որ բարի գործ  
Սիրողը քեզ  
Չմոռանա:

## ՀՐԱԺԵՇՏԻ ԶԱՆԳ

Լավաքվել ենք դասարանով,  
Դպրոց եկել նորից,  
Բայց այս անգամ մեր սրտերում  
Տիրութունն է, թախիժ:

Զանգն է հնչում հրաժեշտի,  
Հուզվում ենք ու տխրում,  
Մեր համատեղ վերջին պահն է  
Զանգն այս ազդարարում:

Հնչիր ուժգին, զիլ ղողանջիր,  
Դպրոցական մեր զանգ,  
Քո ղողանջի ներքո այսօր  
Մենք մտնում ենք մեծ կյանք:

Սահայն ուր էլ, ուր էլ լինենք՝  
Քո ղողանջում միշտ կանք...

21.01.12, Ստեփանակերտ

## ՍԱՄՎԵԼԻ ԵՐԳՈՒՄԸ

Անանային այս  
Սուրբ առավոտյան  
Երգվում եմ, որ միշտ  
Ու հավատարիմ  
Պիտի ծառայեմ  
Իմ Հայրենիքին:

Ու թե հարկ լինի՝  
Ես քաջի մահով  
Նաև կգոհվեմ,  
Միայն թե հավերժ  
Գարնան կարկաչով  
Ու խինդով օժվեն  
Արցախիս  
Կապու՛ղյտ առավոտները...

# ԽՃ ԲՈՒՆԻԿՆԵՐԸ

## ՔԱՂՅՐԻԿԸ

*Մորս չքնաղ անունն առած  
քաղցրիկ թոռնուհուս*

**Ք**աղցրիկն արդեն մեծացել  
Ու քայլում է արդեն, տես:

*Մի քայլ անի՝ դեպի ետ,  
Մի քայլ անի՝ դեպի ինձ,  
Քայլ-քայլ դա ու մոտենա,  
Կատարեմ՝ ինչ կամենա,  
Նստի՝ ձիու պես քշի,  
Կամ՝ մագերից քաշքշի,  
Բոլոր ցավերը տանեմ,  
Ու... նույնիսկ ձայն չհանեմ,  
Որ... նախանձող չլինի,  
Աչքով չտան հանկարծ... մեզ:*

*...Փոխարենը՝ նաև ձեզ:  
25.02.11, Ստեփանակերտ*

## ԱՅՍՊԵՍ ԽՈՍԵՑ ՔԱՂՅՐԻԿԸ

**Ե**րբ որ մի քիչ մեծանամ,  
Ես էլ դպրոց կգնամ:

*Տատիս ակնոցը դնեմ,  
Դպրոցում լավ սովորեմ,  
Կարդամ պապիս գրքերը,  
Որսամ նրա մտքերը...*

*...Քաղցրիկն եմ ես, Քաղցրիկը,  
Պապիս անուշ բալիկը:*

*20.01.12, Ստեփանակերտ*

ՄԵՐԱ ԱՐՄԵՆԻ ՓՈՊԻԿՆԵՐԻ ԵՎՐՈՊԵԱԿԱՆ ԵՎ ԵՐԱՆԵՎԵՐ ԵՎ ԵՐԱՅՄԵՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

## ԻՆՉ Է ԳՐՈՒՄ ՔԱՂՅՐԻԿԸ

Հապա նայե՛ք Քաղցրիկին՝  
Ո՛նց է հակվել սեղանին,  
Գրիչը ձեռքն է առել,  
Թղթերն իրար է խառնել:

Կողքից փորձում եմ նայել,  
Բայց դեռ բան չեմ հասկացել՝  
Թղթին ի՞նչ է խզբզում,  
Նկարո՞ւմ է, թե՞ գրում:

Իսկ Քաղցրիկն էլ:  
- Հապա տե՞ս,  
Նման չե՞մ ես մի՛թե քեզ,  
Ես ուզում եմ սովորել,  
Եվ անունս ճիշտ գրել:

Տե՞ս, գրել եմ ես, ապա\*,  
Իմ գրածը ճիշտ կարդա:

30.03.2012, Ստեփանակերտ

## ՓՈՔՐԻԿ ԱՆԻՆ

33 օրական թոռնուհունս՝ Անիին

Եռ բարուրում է փոքրիկ Անին,  
Ու չգիտե նա դեռ ոչ մի բառ,  
Կարողանում է միայն նայել,  
Կարողանում է միայն ժպտալ:

Ու երբ մեկ-մեկ էլ լաց է լինում՝  
Եղբայրը պիտի դառնա հենակ,  
Գարիկը մոտից չի հեռանում,  
Քրոջը ինչպե՞ս թողնի մենակ:

12.01.12, Ստեփանակերտ



## ԵՂԲԱՅԻՐԸ

Մայրը չգիտեր, թե ինչ անի՝  
Հիվանդացել էր փոքրիկ Անին,  
Ցավը սեղմել էր մեծ ու փոքրին,  
Գարիկը եկավ, կանգնեց կողքին,  
Ու քրոջը՝ թե՛ մի վախենա,  
Բժիշկը ծակի՝ անցկկենա:

12.01.12, Ստեփանակերտ

## ԵՍ ՍԻՐՈՒՄ ԵՄ ՄԱՅՐԻԿԻՍ

Ինչպես լուսինն ամպերում՝  
Թաքնվում է մոր գրկում:

Պապն է քաշում՝ չի գալիս,  
Տատն է կանչում՝ չի գալիս:  
Մորաքույր ու մորեղբայր,  
Ամեն մեկը՝ իր համար,  
Շա՛տ են նեղում Գարիկին:  
Իսկ Գարիկը մայրիկին  
Պինդ պահում է իր գրկում.  
- Ես ոչ մեկիդ չեմ ուզում,  
Ես մայրիկիս եմ սիրում...

12.01.12, Ստեփանակերտ

## ԵՐԲ ՊԱՊԻԿ ԵՍ ԴԱՌՆՈՒՄ...

Երբ պապիկ ես դառնում՝  
Մանկանում ես մի քիչ,  
Թոռնիկներիդ հետ ես  
Կյանքդ կապում:

Մանկանո՞ւմ ես իրոք:  
Հասկանո՞ւմ ես արդյոք՝  
Դու հիմա էլ...  
Ինքդ քեզ ես խաբում:

07.03.2012, Ստեփանակերտ

Արցախի գրական ընտանիքը եթե  
հասկանաւոր լինենք պարտեցի հետ, Արիսն  
այդ պարտեցում ոչ հուրիսան վարդ, և ոչ էլ  
անցորդների ուշադրությունն իր վրա  
հրավիրող-կանչող մեխան է, նա հասկանա  
մանուշակի բուրումնապետ թուփ է, որին շատ  
հաճախ չեն նկատում մարդիկ...

ՍԻԼՎԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

---



Երկ  
Չբխ 1978-2011  
Չերգում...

---

... Կրայսպրահումներ Էնդեխակ Տախի

## ԲԱՐԻ ԼՈՒՅՍ

**Ա**րիս Գրիգորյանը 18-ի մեջ է, մասնագիտությամբ՝ դերչակ: Սակայն նրա մեջ նստած է որոնողը, բանասարեղծը: Մորի թրթռով կազմել է իր առաջին ժողովածուն (չեռագիր) ու վերնագրել «Բարչունք փանոզ արահեպով»: Իրոք, բանասարեղծական է: Անպաճույճ փողեր են, պարզ պարկերներ, ամենագլխավորը՝ մաքրամաքուր զգացումներ: Հայրենի եզերքի լեռն ու դաշտը, գեղն ու առվակը, անշուշտ, Արիսի բանասարեղծական աշխարհի հիմնական բնակիչներն են: Սակայն մի զարմանալի ու շնորհաշար երակով են փրփում նրա գործերը: Դա մարդու հանդեպ ունեցած սիրտ արտահայտությունն է: Արիսը բանասարեղծել գիտե ու նաև բնության շայնը ունկնդրել: Ուժեղ ու փայլորիչ է երկրորդի դեպքում: Պարզ է, երբ ցանկանում է բնօրինակել, նմանվել՝ թուլանում է, կորցնելով ասելիքի փուլը: Նրա բանասարեղծական աշխարհը հագեցած է Արամայիս Սահակյանով ու Համո Սահյանով: Սակայն բոլոր գործերում էլ ունի սեփական ոտնահետք, կածան: Յանկանք, որ նրա արահետը սկիզբ առնի մարդու սրտից և չզվի բարձունքներ:

**«Բարեկամություն» (Օրգան Աղբյուրանի ԿԿ Մարտիկերդի շրջկոմի և աշխարավորների դեպուտատների շրջակների գործկոմի), № 6 (1611), 12 հունվարի 1978 թ. (էջ 4)**

## ԿԱՐԾԻՔՆԵՐ

**Հ**ամար է, կարգապահ, պարսմանաչ փոքրիկ Արիսը: Հաճախ իր համեմատության ու փոքրիկ հասակի համար նրա ներկայությունը չի զգացվում դասարանում: Դասարանի ամենալավ աշակերտներից մեկն է: Պարիկ է, բայց ճարիկ է:

**Նորա ՂՈՒՅԱՆ, գ. Կոճողոր  
Առաջին ուսուցչուհի  
Առաջին դասարանի փարեվերջյան բնութագրից, 30 մայիսի 1967թ.**

**Կ**արդավով Ձեր բանասարեղծությունները՝ ես գերագույն հաճույք պարսցա: Նրանցում արտահայտված փրամադրություններն անչափ հոգեհարազատ քվագին ինչ: Շնորհավորում եմ Ձեզ: Դուք հաջողության կհասնեք պոեզիայի բնագավառում: Ցանկանում եմ Ձեզ արեղծագործական նոր բարձունքներ:

**Նարինե ԳԱՍՊԱՐՅԱՆ, ք. Աբովյան  
1983 թ., սևառ**

**Ա**յսօր «Բարեկամությունը» բարեկամաբար, հոգաբարդրեմ, մեծ սիրով ու պատասխանատվությամբ իր շուրջն է համախմբել մեկ փանելյակի հասնող երիտասարդ արեղծագործողների, որոնցից գրական որոշակի հույս են ներշնչում Վերա Մեհնյանը (արդեն գրքի հեղինակ), Մլախիկ Հարությունյանը, Արիս Գրիգորյանը, Նինա Ավանեսյանը, Ալեքսանդր Սարգսյանը, Ամալյա Համբարձումյանը և ուրիշներ:

**«Բարեկամություն» (Օրգան Աղբյուրանի ԿԿ Մարտիկերդի շրջկոմի և աշխարավորների դեպուտատների շրջակների գործկոմի), № 16 (4968), 5 փետրվարի 1983 թ. (էջ 2)**

«Աքսած լռություն» բանաստեղծությունների ժողովածուն Արիս Գրիգորյանի անդրանիկ գիրքն է: Այն լույս է տեսել Սյրեփանակերպրում՝ «Արցախ» հրատարակչության կողմից:

Բանաստեղծը զգացմունքային, նուրբ քնարական շնչով է երգում հայրենիքի սերը, արցախահայության ազգային ազատագրական պայքարը, հայրենի հրաշագեղ բնությունը:

«Ուրբաք» (հասարակական-քաղաքական, մշակութային անկախ շարքաբերք), ք. Երևան, քիվ 29 (165), 30 հունիսի 1993 թ. (էջ 5)

Ես օրհնում եմ իմ հոգեորդու՝ Արիսի առաջին գիրքը և ուրախ եմ, որ նրա կյանքում ունեն իմ վաստակը:

Գուրգեն ԳԱՔՐԻԵԼՅԱՆ, ք. Սյրեփանակերպր  
17 ապրիլի 1993 թ.

## ԳՐՈՂՆԵՐԸ ՊՈՒՂՈՒ ԹԱՌԻՆ

(Արիս Գրիգորյան)

Անդրին իմ պապն է,  
Հանդրին է Անդրին,  
Հանդում երբ փապ է,  
Նա մոտ է աղբրին:

Անդրու թռուն եմ ես,  
Իմ պապն է Անդրին,  
Ես երգով կերպել եմ  
Իմ պապի... անդրին:

Հրայր ԲԵԳԼԱՐՅԱՆ, ք. Սյրեփանակերպր  
«Պըլը-Պուղի» (ԼՂՀ Գրողների միության ամենամյա երգիծական հանդես),  
քիվ 1-2, 1993 թ. (էջ 7)

Իմ քրի վեցում...  
ԱՐԻՍ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Արիս Գրիգորյանի գրիչը խուլաններ է հերկում, այսպես ասած, հերկված դաշտերում, հասարակելով, որ նորույթը ասելիքի մեջ է, որ ասելիքն է կարևորում քեմայի հրատարակչությունը: Եվ դրա գեղեցիկ վկայությունը Արցախի մատրական կյանքը պատկերող նրա գուլալ երգերն են:

Վարդան ՀԱԿՈՔՅԱՆ, ք. Սյրեփանակերպր  
Արցախի գրողների միության վարչության նախագահ  
(Արցախի գրողների երկրորդ համագումարի հաշվետու գեկուցումից)  
«Եղիցի լույս» (ԼՂՀ Գրողների միության քերք),  
քիվ 2 (20), 2001 թ. (էջ 2)

Արիս Գրիգորյանը հավատարիմ է հայ ավանդական բանաստեղծության քնարականությանը:

Ժաննա ԲԵԳԼԱՐՅԱՆ, ք. Սյրեփանակերպր  
Բանաստեղծուհի, դոցենթ  
«Ազատ Արցախ» (ԼՂՀ Ազգային ժողովի և կառավարության  
պաշտոնաբերք), քիվ 1, 6 հունվարի 2004 թ. (էջ 2)

**Լ**ույս է տեսել Արիս Արսենիի (Գրիգորյան) բանաստեղծությունների ու պոեմների նոր ժողովածուն, որ կոչվում է «Համանվագ»: Անմիջական, անպաճույճ տողերով ու չափով՝ հեղինակը անդրադառնում է ներկա ու մտք ժամանակների իրադարձություններին, խորհրդածում մեր ժողովրդի ճակատագրի մասին, սիրտ խոստովանություններ ափռում նվիրական անուններով: Բանաստեղծական պարզ լեզուն ու անկեղծությունը համախո են կաշառում ընթերցողին, շոշափելի դարձնում հեղինակային մարդամոտությունն ու արտացավությունը:

«ԳԵՂԱՐՄ» թ. Սյրեհանահերոյ  
թիվ 29, հունվար-փետրվար, 2006 թ. (էջ 10)

**Չ**եր գրվածքները շար հավանեցի: Արտակարգ բնակարաններ, անասնի քարմություն ու անմիջականություն է ծորում յուրաքանչյուր տողից: Չեր հայրենի գյուղի պարկերն այնքան լավ եք վրձնել, որ մենք՝ ընթերցողներս, սկսամայից դառնում ենք Չեր խոհերի կրողը:

Միրո մեղեդին շար ուժգին եք հնչեցնում, այնքա՛ն ուժգին, որ ընթերցողն էլ է ուզում սիրել Չեզ պես: Շար շնորհակալ եմ, պարոն Գրիգորյան, իրոք, արտակարգ զգացողություններ պարգևեցիք, սրիպեցիք վերասարել անցյալում թողած քաղցր հուշերս:

Տարեիկ ՉՈՒԼՀՎԳՅԱՆ, թ. Սպիտակ  
23 հոկտեմբերի 2011 թ.

## ՆՎԻՐՈՒՄ

Գրել եմ քեզ համար,  
նվիրում եմ քեզ,  
Արիս Արսենի...

**Ս**իրեցի երգերիդ քննությունը,  
Երազներդ՝ չքնաղ ու նրբին,  
Երբ բացվեց հոգուս փակ դուռը՝  
Լցվեցին քո երգերը անգին:

Ինչպես դու, ես էլ աշխարհում այս  
Ապրում եմ՝ երգերն իմ սրտում,  
Ինչպես դու, ես էլ մորբերով իմ  
Միշտ հեռուն, հեռուն եմ տենչում:

Քո մասին է հիմա իմ երգը  
Նա շար մեղմ է այսօր նվագում,  
Դու լսիր, դու զգա նրա շայնը,  
Նա քեզ համար է քննչորեն հնչում...

Ռուզաննա ԲԵՉԱՆՅԱՆ, թ. Երեան  
«Նոր Շահումյան» (ԼՂՀ Շահումյանի շրջանի վարչակազմի  
պաշտոնաթերթ), թիվ 16 (135), 16-31 օգոստոսի 2012 թ. (էջ 4)

# ՄԵԿ ՀԱՐՑ ԲԱՆԱՍՏԵՂԾ ԱՐԻՍ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

-Ի՞նչ դեր ունի բանաստեղծությունը Ձեր կյանքում:

**Լ**րագրողական աշխատանքի բերումով հաճախ ինքս եմ հարցեր առաջադրում գրուցակիցներիս: Այսօր սակայն սրիպված եմ ե՛ս պատրաստիանել:

Ի՞նչ է իսկապես բանաստեղծությունն ինչ համար: Գիրե՞ք, հաճախ եմ ինքս ինչ նույն հարցն առաջադրել, բայց, պատկերացրեք, դժվարացել եմ գրելն ճիշդ պատասխանը: Բանաստեղծությունն ինչ համար հա՞ց է, շո՞րք, օ՞ր՞ գուցե շարերը չհավասարն, բայց որ յուրաքանչյուր անգնող ակնթարթին առանց բանաստեղծության չի պարկերանում ինչ՝ ինչպե՞ս ասեմ, որ հավասար: Որովհետև դա, իրոք, այդպես է:

Հաճախ եմ լրակյաց մարդուն ինքնամիտի համարում: Ես էլ համաշայն եմ նման շևտերայման հետ: Որոշ (և՛ լուրջ) վերապահումով սակայն, որովհետև ես էլ՝ «լրակյացությամբ ախարահարվածս» բոլորովին էլ «ինքնամիտի» չեմ, այլ՝ «ներամիտիված եմ բանաստեղծության մեջ» և անիմաստ է այլևս քացազարման սահման կամ սահմանագիծ փնտրելը: Մարդկային կյանքի յուրաքանչյուր պահը մի ուրույն արեղծագործություն է, էթե ընկալվում է: Իսկ անկարար անցնող վայրկյանները մեր կորուսարներն են, որ չենք զգում, կամ՝ զգում ենք ուշացումով: Գժվար է, անշուշտ, բոլորը նկատելը, այստեղից էլ՝ «ներամիտիվածության» փոխարեն օգտագործվող «ինքնամիտի» շատ հաճախ րեդիկն թվալը:

Իսկ ճշմարիտ բանաստեղծը միայն մեկ ցանկություն պիտի ունենա՝ ԼԻՆԵԼ և ոչ թե՛ ԹՎԱԼ:

«Եղիցի լույս» (ԼՂՀ Գրողների միության քերթ),  
թիվ 7 (25), 2001 թ. (էջ 1)

## ՀՈՒԲԵԼՅԱՆ

**Լ**րացավ բանաստեղծ, լրագրող, Հայաստանի և ԼՂՀ գրողների և Արցախի ժուռնալիստների միությունների անդամ ԱՐԻՍ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ (ԱՐԻՍ ԱՐՍԵՆԻ) ծննդյան 50 ամյակը:

Ծնվել է 1959-ի հունիսի 10-ին Արցախի Մարտակերտի շրջանի Կոնոպուր գյուղում: 1966-74-ին սովորել է հայրենի գյուղի ութամյա (այժմ՝ միջնակարգ) և Մարտակերտի միջնակարգ-գիշերօթիկ (1971-73) դպրոցներում:

1977-ին ավարտել է Գիլիջանի թիվ 12 միջնակարգ պրոֆրեհուտունարանը՝ արանալով դերձակի մասնագիտություն և միջնակարգ կրթություն, իսկ 1986-ին՝ Մրեհիանակերտի պետական մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետը:

1978-80-ին ծառայել է Խորհրդային բանակում:

Աշխատանքային գործունեությունն սկսել է Մարտակերտի խաղողագործական պետրոկոնսոբությունում, այնուհետև րեդախոխվել է Մրեհիանակերտ, աշխատել որպես մարզային րպարանի գրաշար (1983), Արցախի հեռուարարտության թղթակից (1988-90, 1996), «Արցախ» գրական-գեղարվեստական, հասարակական-քաղաքական հանդեսի ավագ խմբագիր (1990-93):

Արցախյան ազգային ազարագրական շարժման մասնակիցներից է, 1990-91-ին Գավիթ Ջրաբերդ կուսակցական ժածկանունով իմքագրել է «Պայքար» (ընդհարակյա) հասարակական-քաղաքական, մշակութային պարբերականը՝ այն ժամանակ ՀՅԴ-ի միակ խոսնակն Ար-

ՄԻՆ ԱՐՄԵՆԻ ... Դրացարտականներ ենցիւնայէ Ժայէ

ցախում: 1993-ի սեպտեմբերի 24-ից մինչև 2009-ի հուլիսի 21-ը ծառայել է ԼՂՀ Պաշտպանության բանակի շարքերում, եղել է Կենդրոնական պաշտպանական շրջանի (ԿՊՇ) երկրորդ հրաձգային գումարակի 4-րդ, իսկ այնուհետև՝ 6-րդ վաչարի հրամանատարի տեղակալը, մասնակցել է Ջաբրայիլի, Ադդամի, Ֆիզուլու և Մարտակերտի շրջաններում տեղակայված բջնամական կրակակետերի վնասագործման համար մղված մի շարք ռազմագործողությունների ու պաշտպանական մարտերի, վիրավորվել է 1994-ի հունվարի 15-ին Ֆիզուլու շրջանի Վերին Մեհրահանդի գյուղի մերձակայքում մղված պաշտպանական մարտում: 1995-ի հուլիսի 1-ից մինչև Չինված ուժերի պահեստագործ ուղարկվելը (1 օգոստոսի 2009 թ.) ծառայությունը շարունակել է բանակային «Մարտիկ» թերթի խմբագրությունում՝ որպես զինվորական լրագրող:

ԼՂՀ կառավարության Եղիշեի անվան («Լրագրության բնագավառ», 2004) և Արցախի ժուռնալիստների միության («Զինվորական թեմաներով լավագույն հրապարակումների համար», 2005) ամենամյա մրցանակների դափնեկիր է:

Պարգևատրվել է ԼՂՀ «Մայրություն» հիմնադրամի «Մայրական երախտագիրություն՝ Արցախի քաջորդիներին» (2008) և ՀՀ պաշտպանության նախարարության «Անբասիր ծառայության համար» առաջին աստիճանի (2006) մեդալներով, ՀՀ մշակույթի նախարարության (2008), ԼՂՀ Պաշտպանության բանակի հրամանատարության (2001) և ԼՂՀ պաշտպանության նախարարության (2006) պարտիզներով: Հրատարակել է մեկ տասնյակից ավելի գրքեր (չափածո և արձակ):

Շնորհավորում ենք հոբելյարին և մաղթում արեղծագործական նորանոր լիցքներ:

**«Քաղաքացիական ծառայություն»  
(ԼՂՀ Քաղաքացիական ծառայության**

**խորհրդի պաշտոնաթերթ), թիվ 6 (35), նոյեմբեր, 2009 թ. (էջ 4)**

Հ. Գ.

Արիս Արսենի Գրիգորյանը ԼՂՀ նախագահի 2012 թ. մայիսի 4-ի ՆՀ 26-Ս հրամանագրով պարգևատրվել է «Մարտական ծառայություն» մեդալով՝ «մարտական առաջադրանքների կատարմանը նպաստող հմուտ, համարձակ գործողությունների, գործերի մարտական պատրաստվածության ապահովման, երկրի սահմանները պաշտպանելիս ցուցաբերած արիության համար և Հաղթանակի օրվա, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության բանակի կազմավորման ու Շուշիի ազատագրման 20-րդ տարեդարձի կապակցությամբ»:

**Լ**րացավ բանաստեղծ Արիս ԳՐԻԳՈՐՅԱՆԻ (Արիս Արսենի) ծննդյան 50-ամյակը: Տարիքային մի հերթական հանգրվան, որից հետո սովորաբար բանաստեղծի համար «գրական այգեկուտի» ժամանակաշրջանն է սկսվում: Բայց եթե ընդհանրական գնահատելու լինենք Արիս Գրիգորյանի գրական ժառանգությունը, սպաս պիտի հարկանշենք նաև նրա ուրույն վասպակը լրագրության մեջ, քանզի տեղական ժամանակ նա իրեն նվիրել է ժուռնալիստիկային՝ աշխատելով «Արցախ» հանդեսում, Արցախի հանրային հեռուստատեսությունում և վերջապես՝ «Մարտիկ» բանակային թերթում: Այս վերջին պարագան կարելի է դիտարկել իբրև ազգայնամարդիկ-բանաստեղծի կենսագրության մարտական ուղու շարունակություն: Չենք կրկին փոխարինելով գրչով՝ նա հայրենի Արցախին ծառայելը արժեկորում է նաև այս կերպ՝ հայ սպայի հպարտ ուսանողիների տակ պահպանելով բանաստեղծի զգայուն հոգին: Արիս Գրիգորյանը ներկայիս գլխավորում է ժուռնալիստական թոշակառու է, և համոզված ենք, իր վաստակած հանգիստը դարձյալ կնվիրաբերի Գրչին: Այս համոզմունքով էլ նրան շնորհավորելով հոբելյանի առթիվ՝ արևադարձային մաղթենք ու արեղծագործական նոր վերելքներ:

**«Լուսարար» (գիտակրթական թերթ),  
թիվ 34 (219), 12 դեկտեմբերի 2009 թ. (էջ 8)**



# ԱՐՑԱԽԵԱՆ ԻՆՔՆԱՃԱՆԱԶՄԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆԸ

(հայրվածներ)

Գրական Ղարաբաղ: Ղարաբաղի ինքնավար մարզի երիտասարդ գրողների այնամասի (գրքի 32-38 էջերում տեղ են գտել Արիս Գրիգորյանի յուսանկարը, կենսագրությունն ու բանաստեղծությունները): Երևան, «Սովետական գրող» հրատ., 1988, 264 էջ, ԿԶ 5000 օր.:

## ՍՈՒՏՔ

...**Վ**երջին քսանի մը տարիներուն արցախեան գրական հրատարակիչն վրայ երեւցան բոլորովին նոր ու երիտասարդ անուններ: Անոնց ծանօթացանք «Սովետական Ղարաբաղ» մարզային օրաթերթէն, շրջանային այլ թերթերէ հասած կրօններէն եւ հայրենի մամուլէն, բայց մանաւանդ «Սովետական Գրող» հրատարակչութեան 1988-ի ամբողջ յուլիս ընծայած «Գրական Ղարաբաղ» ժողովածոյէն: Վերջինս հասկաբաղ մըն է արցախցի երիտասարդ տասնչորս բանաստեղծներու եւ հինգ արշակագիրներու, որոնք մենք մասամբ 20-30 տարեկան են, քսանի մը հոգին՝ մինչեւ 40: Ասով՝ արցախեան գրականութիւնը, այս պարագային անոր ամէնէն երիտասարդ սերունդը, առաջին անգամ ըլլալով մէկ կողքի տակ հրատարակուելու բախարհն կ'արժանանար հայրենիքին մէջ: Արցախեան գրականութեան մէջ ամէնէն ատելի մշակուած սերը կը շարունակէ մնալ բանաստեղծութիւնը:


Այս նոր անունները ունին խառնուածքի, տարաբանի, աշխարհահայեացքի եւ ներշնչումի տարբերութիւններ, տարբեր են քերթողական արտեստիպով, տարբեր՝ մանաւանդ հայրենի գրականութեան մեծերէն եկած ազդեցութեան չափերով, բայց այս բոլոր տարբերութիւններուն դիմաց կը նշյնական խորքային գիտատր նպատակակէտով մը: Արիկա՝ բնական միջավայրի, տոհմի ու ցեղի արմատներէն մարդուն փոխանցուող անխուսափելի ազգային ինքնութեան մը ճանաչումն է եւ անոր բացայայտումը:

Ասով՝ այս երիտասարդ բանաստեղծներու երգերուն մէջ կը ստեղծուի արցախցի հայ մարդուն տրիպարը, քնարական հերոս մը, որ հոգեկան եւ իմացական խոր ու բուռն բախումներէ վերջ, «արարումի դանդաղ կորուսեանք եւ ինքնաճանաչման այրումով» իր ներաշխարհին մէջ կը յայտնաբերէ ինքզինք, ազգային իր ինքնութիւնը եւ զայն կազմող տարրերը վճռական կերպով պաշտպանելու կեցուածք կ'ամրապնդէ իր մէջ:

Անիկա ժամանակի մը վկայութիւնն է նաեւ:

Մշակց այս համընդհանուր ինքնաճանաչումին հասնելու՝ կարելի պիտի չըլլար հատկերացնել 1988-ի Փետրուարէն ծայր առած Արցախեան Շարժումը:

Մասապիկ՝ բովանդակութեան այս բանչը եւ ընդհանուր գիծով է,



ԱՐԻՍ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒՄԸ...

որ արցախեան երկիրասարդ բանասարեղծութիւնը կը գրաւէ ընթերցողին ուշադրութիւնը:

Մեր ըրածը այսրեղ պիտի ըլլայ ասոր հասարարումը: Բանասարեղ-ծութիւններու առաջնորդութեանը մենք պիտի մըրենք այդ քնարական հերոսի ներաշխարհէն ներս ու փորշենք ցոյց տալ, թէ ինչպէս եւ ինչո՞ւ կը սկսի ինքնաճանաչման այս յեղադարձ ճանապարհորդութիւնը, եւ թէ՛ ներքին գործողութիւններու եւ բախումներու ինչ հանգրուաններէ անցնելով՝ ան տակաւ առ տակաւ կը վերադառնայ իր եսին, կը գտնէ ինքզինք, կը կապուի իր արմարներուն ու կը գրկընդիսառնուի իր ազգային ինքնութեան հետ:

Եւ ասիկա՝ խօսելու եւ գործելու համար ոյժ մը ըլլալէ առաջ անշուշտ:

## **ԱՐՏԱՀՈՍՔԻ ՄԸ ԱՐՉԱԳԱՆՔԸ**

«Պապիս Գագել», Արիս Գրիգորեան  
(Ծն. Մարտակերտի Կոճողոտ գիւղ, 1959)

**Նա մեծ պապ-ապա Խաչունց Անդրին էր,  
Ականջը՝ ձայնի, աչքը՝ հանդին էր:**

**Նա հանդի կանչը զգում էր անձայն,  
Գնում էր ճամփան հողի կանչին էր:**

**Բանում էր հանդում մինչեւ ուշ գիշեր,-  
Մենակ չէր, ընկեր կար՝ Ծիր-Կաթինն էր,-**

**Պատահում էր եւ՛ քնում էր հանդում,  
Իսկ թռան աչքը միշտ էլ ճամփին էր.**

**Թէ կգայ պապը, հանդ կը գնան, բայց  
Թռան երազը հանդից անդին էր...**

**Պապը գալիս էր, լցում էր թորը,  
Բայց հանդ չէր գնում, հանդը... պապինն էր:**

**Պապը աշխարհում այլեւս չկայ,  
Թորը մեծացել, աչքը... հանդին է:**

Այս թռան պապը կամ Խաչունց Անդրին այս հանդի տէրն էր: Պապի աչքը միշտ հանդին էր, իսկ հանդի քերքերէն ու պապի գրոյցներէն կշտացած թռան երազը հանդէն անդին էր...

Չիմս պապը չկայ, իսկ թորը մեծցած է:

Մանուկ թռան աչքը հանդէն անդին էր, իսկ մեծցած թռան աչքը... հանդին է: Ինչ է, թորը պա՞պ դարձաւ, հանդին տէր դարձա՞ւ, թէ...

Թորը հիմա հանդէն անդին իր հեռուներուն մէջ կամ «մոլորած է աշխարհի բախղներում քարքարոյր» կամ ալ գտած է «ինչ գտած ենք հաշուն ու ինչ հաշուն ենք սեփական»:

Բայց ամէն պարագայի՝ աչքը... հանդին է:

Իսկ ասիկա ափսոսանք է:

Չնո նսխ՝ բաժանում մը կայ:

\*\*\*

Այս խորհուրդը իրականութիւն մը կը ցուցնէ: Գիղը կը պարպուի, նորերը քաղաք կը խուժեն, «խոպան» կ'երթան: Սակայն ասիկա միայն արցախեան երեւոյթ մը չէ: Բնակչութեան փեղաշարժերն ու արտագաղթը մեր դարը յուզող խնդիրներ են: Կենցաղային, ընկերային եւ տնտեսական աննախանձելի պայմանները կը սրեղծեն զանոնք: Լեռնա-

յին Ղարաբաղի Ինքնավար Մարզի պարագային ասոնց կ'առելնան ազգային, վարչական ու քաղաքական բնոյթի անելի սուր դրդապատճառներ: Մարզային կեանքին ամբողջապէս Պաքուէն կախեալ ըլլալը եւ վերջինիս կանխակալ փրամադրութիւնները մարզի հայ բնակչութեան նկատմամբ՝ կ'արագացնէին արդարահոսը, որ երբեմն փախուստ էր: Արցախեան Շարժումը երեսն հաւնեց, թէ հակրապետական եւ մարզային իշխանութիւնները ինչպէս գրկած են մարզը փրկեալական առողջ վերելքէ: Կենցաղային պատաստիման կենսական ծառայութիւններէ, իսկ ազգային, հոգեւոր եւ մշակութային կեանքի մէջ գործադրած են ամէն փեսայի սեղմումներ, ճնշում, հալածանք եւ բռնութիւն: Հոն փիրած է ազգային խորականութեան եւ հայ փարբի բնաջնջման քաղաքականութիւն:

Արցախեան այս բանաստեղծութեան մէջ արդագաղթի դրդապատճառներուն մասին գրեթէ խօսք չկայ: Պատճառը երբեք նպատակ չէ այս բանաստեղծութեան համար: Հոն հեռացում մը, լքում մը կայ, լքումը կորուստ մը կը ստեղծէ, հեղուսարար՝ լքումը յանգստի է: Իր բնօրրանէն մարդու հեռացումը, գայն լքելը ընկերային ու մանաւանդ ազգային գեղեցկներու վրայ աղէտի մը վերածուելէ առաջ՝ անձնական ողբերգութեան մը սկիզբն է:

**ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆ ԵՆ ՍԿԻԶԲ Է  
 ԿԱՄ  
 «ՓՐԿՈՒԹԻՒՆ ԵՆ ՄԵՉԲԸ ԾՈՒՍԾ ՅՈՒՇ Է»**

Թռռան աչքը հանդիս դարձած է հիմա:  
 Ասիկա կորուստին գիտակցութիւնն է:  
 Անշուշտ բռն աչքը հանդիս պիտի չդարձնէր, կորուստին անդրադարձումը պիտի չունենար՝ եթէ չըլլար յիշողութիւնը:  
 Անդրադարձումը պիտի գայ միայն յիշողութեան միջոցով: Յիշողութիւնը պէտք է արթննայ մարդու մէջ, մարդ պէտք է յիշել կարողանայ...  
 ...Նախ՝ յիշել:  
 Փրկութիւնը կը սկսի յուշերու ծանր բեռով մը:  
 Արցախեան ինքնաճանաչման բանաստեղծութեան մէջ յիշողութիւնը սկիզբ է...  
 ...Նախ՝ խոռվք մըն է: Յուշի ծուէններ հաւր-հաւր, ապա երամ-երամ պիտի խուժեն երեսակայութեանը մէջ, պիտի խանգարեն քունը, փազնապով լիցնեն հոգիդ: Մտքի ամէն կայծ, հոգեկան ամէն խորտում, մարմնի ամէն շարժում պիտի գրգռեն յիշողութիւնը: Խուսափիլ կարելի պիտի չըլլայ: Յիշողութիւնը այն փոշին է, որ քանի թօթուես՝ այնքան պիտի բանջրանայ ու փրարածուի, քանի անկէ փախիլ ուզես՝ այնքան անելի ոյրնաւորներդ վեր պիտի ելլէ ու պլլուի փէշերուդ: Միտքդ պիտի փանջուի խոհերով, հոգիդ պիտի ալեկոծի յոյզերով:  
 Խիղճդ արդէն անհանգիստ է:

«Գիշերային Նուագ», Արիս Գրիգորեան

... Գիշեր է:  
 Հանգիստ չեն տալիս ինձ յուշերս,  
 այրում է իմ հոգում կարոտի գիշերս:  
 Ու սիրտս լցում է տագնապով մի յետին,  
 (Օ՛, ինչ ծաւր է նստում գիշերն իմ արտին):  
 Փողոց եմ դուրս գալիս, որ ցրեմ յուշերս,  
 ու քամու հետ կիսեմ խոհերս, յոյզերս,  
 բայց քամին գնում է՝ ինձ լսել չի ուզում,  
 յուշերիս հետ նորից մեռակ եմ ես մնում...

Վերջապես պիտի վառին «խաւարած յոյսերը»: Յոյսը անդորր պարգևող փուն է: Հոն յուշը պիտի դառնայ «արեւոյր հնչան» մը, ուրիշ բռիչք պիտի առնեն երազն ու կարօյր ու քեզ ազարեն «գիշերէր», յոյսին հեյր քու սէրդ քեզի բերելով: Դուն ու սէրդ յոյսին մէջ պիտի մնար:

Յուշերը ինչպէս խռովքի ու խղճահարութեան, այդպէս ալ կարօյրի ու քաղցր երազի աղբիւր պիտի դառնան:

**Գիշեր է...**

**Խաւար է:**

**Վառում եմ լոյսերը:**

**Թող լոյսի հետ վառուն խաւարած յոյսերս:**

**Իմ յոյսը իմ տունն է՝ սերաշխարհս անծայր,**

**ինչքան էլ նենգ լինի գիշերս ու խաւար:**

**Եւ թէկուզ մենակ եմ, բայց նորից իմ տանն եմ,**

**իսկ յուշս իմ հոգու արեւոտ հնձանն է,**

**նրանից եմ առնում երազս, կարօտս,**

**եւ արեւ նկարում նրանով մինչեւ լոյս,**

**որ խաղա՞ դ, անաղմո՞ւկ լուսանա գիշերը**

**լոյսի հետ տունս գայ ու մնայ իմ սէրը:**

**... Իսկ հիմա դեռ մութ է, հիմա դեռ գիշեր է,**

**Բայց... տանն մենակ չեմ, ինձ հետ են... յուշերս...**

Երազը հոս յուշի պատարհիկներով սրեղծուած էութիւն մըն է՝ յուշ – սէր մը, իսկ կարօյրը՝ անոր միանալու չգրտմը:

## **ՀԱՅՐԱԿԱՆ ՏԱՆ «ՎԵՐԱՍԱՐՔՈՒՄԸ»**

Ընարական հերոսին առջեւ հերզհեպտէ կերպարանք կը սրանայ իր քաղցր երազին կամ յուշ-սիրոյ պատկերը: Արիկա Մանկութեան Երկրին ֆիզիքական պատկերն է, որ կազմուած է մանկութեան փարիկները լեզունդ երեւոյթներով, գոյներով, բոյրերով ու համերով: Երեսակայութեան մեջ կը յառնեն հայրական փունը, հանդ փանող կածանները, թթեւին, սօսին, բալենին, աղբիւրը, վանքը...

Ամենէն առաջ եւ ամենէն շատ՝ հայրական փունը:

Կարօյր կը «վերասարքէ» հայրական փուն պատկերը, կ'օժտէ զայն գերբնական փոկունութեամբ, հեքիաթային գիծերով...

... Հայրենի փունը միայն սիրելի յուշ մը չէ, որով կարելի է լեցուիլ, յուզուիլ, մոռնալ առօրեան ու փախչիլ անկէ. այլ մանաւանդ՝ ապրող ու շնչող հեպ մըն է: Յիշել հայրենի փունը՝ կ'ենթադրէ մրախոգուիլ անոր այսօրով, ճակատագրով, փազնասիլ անոր համար: Ընարական հերոսը հեռացած է հայրական փունէն, խզուած է իր արմատներէն, ինք իրմէ եւ հիմա մոլորած է «աշխարհի բախիկներում քարքարոյր»: Ինչո՞ւ այս խաժամուժը: Որովհետեւ նոր քախպ գրկելու հրամայականին առջեւ՝ անոր համար մրաստեւեռում ու փազնասի դարչաւ հայրական փունը: Օտարութեան մէջ զգաց, որ իր ինքնութիւնը ամբողջութեամբ անոր կը պատկանի, բայց հեռացումով ամբողջութիւնը դարչաւ երկու կէս: Ինքնաբերաբար պիտի ծնին զոչոյրը, յանցանքի զգացողութիւնը, կորուստի ցար էւ ամբողջանալու կարօյրը:

Պարզ է, թէ անհնար է հայրական փունը «փռելից պոկելը», իսկ մարդու խզումը անկէ՝ անհարական կեանքի ողբերգութիւն է:

**«Գազէ Մոռացման», Արիս Գրիգորեան**

**Իմ հի՛ն յուշ – սեր երակէզ, կարո՞ղ եմ քեզ մոռանալ,  
Դու՛ իմ ամբողջ ու իմ... կէս, կարո՞ղ եմ քեզ մոռանալ:**

Այցելում ես հանց տեսիլք ու լուսաստղի հետ ջբում,  
Գ-ու՝ չխամբող յուշի պես, կարո՞ղ եմ քեզ մոռանալ:

Մոլորունել եմ աշխարհի բախղներում քարքարոտ,  
Գ-ու՝ ինձ կանչող հիւղ ես մի, կարո՞ղ եմ քեզ մոռանալ:

Ա՛յլ է հիմա իմ ուղին, սակայն քայլերս երեք  
Որոնում են կրկին քե՛զ, կարո՞ղ եմ քեզ մոռանալ:

Մինչդեռ կինս ու տղաս քո հին յուշն են օրորում,  
Որ մոռանամ հեւքդ ես, կարո՞ղ եմ քեզ մոռանալ:

Ա՛յլ է հիմա իմ ուղին: Եւ օրերում իմ այս կեզ  
Մոռանում եմ արդէն, տես:

Կարո՞ղ եմ... Քե՞զ... Մոռանա՞լ:

*Սակայն անկախ այն բանէն, թէ «մանուկները» զիրակցօրէն կը հե-  
ռանան թէ ոչ, կը հիշեն, կը կարօպնան, կը զոջան թէ կը րագնասպին իր-  
մով, հեռուն, Մանկութեան Երկրին մէջ բաժանումին դառնութիւնը ապրող  
մէկը կայ: Մէկը, որ կ'ուզէ ընդվզիլ այս անիմաստ բաժանումին համար,  
ձչալ, եր կանչել...*

*...Ու վերջապէս րունը, հայրական րունը, որ կ'ապրի դեռ ու կը պա-  
հէ մեր մանկութիւնը: Որդեկորոյս մօր մը անմխիթարութիւնը կը ծորի  
պատերէն: Վայրի խորերը գրկած են անոր մարմինը: Պատէն կահու-  
ած իր հին մէկ նկարը կը շարունակէ տիրութիւն ընել այս լքուածութե-  
ան...*

«Տունը», Արիս Գրիգորեան

Իմ առաջին ճիշը, որ լսել է տունը,  
Իմ առաջին ճիշը վաղո՞ւց չկայ,  
Բայց յիշում է տունը: Ու ապրում է տունը  
Մեր այն հեռո՞ւ գիւղում աղամանդեայ:

Ու երբ ամէն անգամ ես այցի եմ գալիս  
Եւ լուռ լուռ լռած դռան առաջ,  
Տան պատերը ասես անուրջներ են լալիս,  
Ու լսում է միշտ մի անյոյս հառաջ:

Ծանրանում են մէկէն քայլերս՝ տուն եկած,  
Ծնկներս լուռ ծալում փլում հողին,-  
Իմ նկարն է տանն այս լոկ տիրութիւն անում,  
Մինչդեռ ինքս պիտի տանտը լինէի:

Ու մնում եմ շուար: Հիմա ի՞նչ եմ, տանտե՞ր,  
Հիմա դադձն է ձգում տանս պատին,  
Տանս անքուն պատին ձգում եղինջն անտը,-  
Սպառնում է անգամ... ժամանակին:

*Տուն եկած մարդու քայլերը ինչո՞ւ պիտի ծանրանան, ծունկները իյ-  
նան գետիկն, ինչո՞ւ պիտի փլի մարդը:  
Որովհետեւ արդէն գիտէ իր մեղքը.*

Իմ նկարն է տանն այս լոկ տիրութիւն անում,  
Մինչդեռ ինքս պիտի տանտը լինէի:

*Հոս կ'աւարովի ինքնանաւանշման առաջին հանգրուանը. փրկութե-  
ան ելքը արդէն որոշ է:*

## «ԱՅՍ ՄԵԾ ՃԱՆԱՊԱՐՀԸ...»

Արցախցին իր հիդընը, շրջապատը, իր րոհմանային գրոյցներն ու պայքարներն արպարելով կ'երակոտի ապրող ու մեռած իր բոլոր ազգակիցներուն եւ հողային եզերքներուն հետ հայերէնով, իսաջարով, նոյն հավատով ու երազով, Հայկ Նահապետով, Սուրբ Գրիգոր Լուսաւորիչով, Սուրբ Մեսրոպով, Ասարայրով: Հասկնալի է, որ ասունք մեր ժողովուրդի էութիւնն իսկ են, Հայաստան աշխարհի ու հայ ժողովուրդի «յիշողութիւնը» կազմող հիմնական փարբերը: Արցախցին այսպէս է, որ հայութեան կրողը կը դառնայ, իսկ Արցախը՝ Հայաստանի մէկ մասը: Միայն այս բնորոշումներով է, որ արցախեան ներշնչում ըլլայ թէ Միւսեաց աշխարհի, Թարթառի ափին վարարող հաւաքի երգ ըլլայ, թէ Ռոբոյանի ափին հոծող կարօտի երգ՝ նոյն նուազն է՝ «միեւնոյն լարից միեւնոյն բառի»:

### «Գագել Մտերմական» (Համօ Սահեանին) Արիս Գրիգորեան

**Քեզ Ռոտանն է տունէ աշխարհին,  
Իսկ ես ծնունէ եմ ափին Թարթառի:**

**Մեր ծնունդին նույն նուազն է հնչել-  
Միեւնոյն լարից միեւնոյն բառի:**

**Ես ապրում եմ իմ Արցախի սիրով,  
Դու՝ քո սիգապանձ Միւսեաց աշխարհի:**

**Ու նույն ոգով դեռ երգեր ենք գրում,-  
Ես՝ լոյս հավատով իմ լուսաշաղի,**

**Դու՝ իմաստնացած քո ոսկէ աշնան  
Տաք կարտուներով լի մքնշաղի...**

Մայր ժողովուրդի բոլոր հայրուածներուն ու մայր երկրի բոլոր եզերքներուն միջեւ սրեղծուած «հաշտութիւնը» լիովին գիտակցական կը դառնայ:

Ըայց հիշողութեան, ապրումի եւ մտածումի սահմաններէն դուրս, իր այսօրուան վիճակին մէջ, հաշտութեան փոխադէն քիրտ խզում մը կայ, ջեփ եւ բովանդակութեան բռնագրօսիկ փարսնջարում մը, որ անելի բան դաժանութիւն է...

...Իր ինքնութիւնը «կորստի կարմիր խորխորապէն» ու «մոռացման վիճէն» դուրս հանած, «առուի ոսրայնէն» վեր քաշած, «կորտութնէն» լոյսին բերած Արցախի հայութիւնը իր այդ մեծ անսպարհիկ վրայ պիտի չիյնայ ամենէն առաջ հաւարքի ոյժով: Հաւարքը սնունդն է այս հայուն, իր լեռներուն շափ մեծ ու յստիքական, լեռնացած հաւարքը...

...Ըսենք նաեւ, որ Արցախեան ինքնաճանաչման բանաստեղծութիւնը այս խորունկ ու մեծ հավարքին երգն է միեւնոյն արեւն:

**Յակոբ ՉՈՒԱՔԵԱՆ**  
**Արցախեան ինքնաճանաչման բանաստեղծութիւնը, մենագրութեան**  
**(հարվածներ), Սիրիա, Հայեպ, Կապրան Արևելք, 1990**  
**(էջ 6-15, 17-19, 26-27, 67-69, 79, 80)**

**Տե՛ս նույնի Արցախեան հայ գրականութիւնն այսօր, դասախոսութեան,**  
**Հակոբի Համագրայինի Ն. Աղբալյան Մշակութային փուն, 5 սարկիի 1989 թ.**

# ԳԻՐՔՆ ԻՔՐԵՎ ՀՈՒՇԱՐՁԱՆ


Արիս ԳՐԻԳՈՐՅԱՆ, Լուրջյան թոպե: Պոեմ: Սրեփանակերպ.  
«Ազար Արցախ» հրատ., 2000, 24 էջ, րպ. 500 օր:

Ընդամենը՝ 24 էջ: Ժանրը՝ պոեմ: Նաև՝ մեր հնարավորություններին անհարիր՝ գեղեցիկ շեղումով: Կարևորը, այդուհանդերձ, լավ կամ վատ փայտագրական որակը չէ, Արիս Գրիգորյանը ցայսօր այդպիսի 5 գրքույկ է փայտագրել, բայց հազիվ թե այս «Լուրջյան թոպեի» հրատարակման քերկրանքը երբևէ սպասած լինի:

Պոեմը մկիրված է հայրենի Կոճողոպ գյուղի 15 անհարակներին: Ժանրային առանձնահատկություններին ոչ փիպական, յուրաքանչյուր անհարակի առանձնահատուկ մի բանաստեղծություն է, մի խոսարվանդություն: Մի բնավորություն: Ըստ Լուրջյան Արիսի իր համագյուղացի զինակիցներին հարազատորեն զիպեր, մանկության փառ հուշերով էր կապված: Ամենակապողը, քերևս, այն է սակայն, որ Արիսի՝ թշնամու գեղակից խոցված ուրքի վիրավոր արյունը խառնվել-փարբալուծվել է համագյուղացի անհարակների քափած արյանը: Արիսի վիրավոր ուրքը հիմա սպաքինվել է, և ևս դարձյալ շարունակում է ինքնասպարադրոքեն զինվորական համագեայր կրել: Ծառայում է միաժամանակ Բանակին և Գրչին: Բայց մի վերք վայ թե չի բուժվել դեռ՝ զինակիր հարազատների կորստի վերքը: Հեևց այդպես էլ կա:

Չդիպեմք, ուրեմն, այդ վերքին, զինսպա-բանաստեղծին ողջություն ու առողջություն մաղթենք: Եթե այս ևորընձա, փայտագրահույրը դեռ վրան գրքույկը հանկարծ չեռքներս ընկնի, կանխակալ մտայնությամբ բարձր գեղարվեստ չփնտրենք միայն: Մարտիկ-բանաստեղծի՝ սեփական միջոցներով կերպած հուշարձանն է իր ամենահարազատների հիշատակին:

Իսկ հուշարձանի առաջ միայն գլուխ եև խոնարհում:



## Սվեպյանա ԽԱՉԱՏՐՅԱՆ

«Եղիցի լույս» (Արցախի գրողների միության գրական, գիտամշակութային հասարակական ամսաթերթ), թիվ 5, 2000 թ. (էջ 2)

... հրատարակմանը եղելով հայր

ՄԱՐԿՈՍ ԿՐԻՍՏՈՍ

# ԱՐԻՍ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ

Արիս ԳՐԻԳՈՐՅԱՆ, ճարած լուրջուն: Բանաստեղծություններ: Սյրեփանակերպ, «Արցախ» հրատ., 1993, 48 էջ, փպ. 500 օր:

Արիս ԳՐԻԳՈՐՅԱՆ, Անդրանիկ, այսինքն առաջամարտիկ: Ալեհարկ նամակով ու բանաստեղծություններով միահյուս: Սյրեփանակերպ, «Հորիզոն» հրատ., 1997, 32 էջ, փպ. 1000 օր:

Արիս ԳՐԻԳՈՐՅԱՆ, Լռության թույն: Պոեմ: Սյրեփանակերպ, «Ազատ Արցախ» հրատ., 2000, 24 էջ, փպ. 500 օր:

Սեղանիս Արցախի գրական ընդանիքի համեստ գրիչներից մեկի՝ Արիս Գրիգորյանի «Ճարած լուրջուն», «Անդրանիկ, այսինքն առաջամարտիկ» և «Լռության թույն» գրքույկներն են: Սկզբից ևեթ ասենք, որ Արիս Գրիգորյանը դասական շնչի արեղծագործող է և նրա ոչ մի փողոմ չկան ճիգեր՝ բարդ ու խրթին երևալու: Ինչպես կյանքում, իր գրքերում էլ նա պարզ ու հասարակ է, ազնիվ ու անմիջական, ընթերցողին իսկույն զգում է, որ գործ ունի մաքուր հոգու հետ, որի ցուանքները րեսուում ենք փարբեր փարիների գրած նրա չափածո և արշակ երկերում: Արցախի գրական ընդանիքը եթե համեմատելու լինենք պարբերի հետ, Արիսն այդ պարբերում ոչ հորհրան վարդ, և ոչ էլ անցորդների ուշադրությունն իր վրա՝ հրավիրող-կանչող մեխակ է, նա համեստ մանուշակի բուրումնավեր թուփ է, որին շար հաճախ չեն նկատում մարդիկ...



Արիս Գրիգորյանը գրչի այն մարդկանցից է, ովքեր հայրենիքի սուկ երգիչներ չեն, զինվոր են ամենից առաջ և հարկ եղած դեպքում գրիչը կարող են փոխարինել զենքով: Նա րեսեղ է պատերազմի դժնդակ դեմքը և ունեցել բանկ կորուստ՝ 27-ամյա եղբայրն է զոհվել, ուն էլ նվիրված է նրա «Անդրանիկ, այսինքն՝ առաջամարտիկ» գրքույկը: Եվ պատահական չէ, որ Ա. Գրիգորյանի արեղծագործության մեջ առյուծի բաժին է կազմում հայրենիքի և հայրենասիրության թեման:

Եղբորը՝ Անդրանիկին նվիրված գրքույկում, ուր չափածոն և արշակը հաջորդում և միահյուսված են իրար, իշխողը կորստի կակիծն ու կարոտի կանչն է:

**...Ու չի գալիս եղբայր: Գառնուրջուն է ծով:  
Լուռ անցնում են օրերս՝ տխուր ու մոլոր:**

Թարմ ու յուրօրինակ է մտրեցման շեր, եղբորը նվիրած գրքում իր փոքրիկի լուսանկարն է և թոթովանքը.

**Իմ հորեղբայր Անդրանիկը  
Ինձ իր անունն է թողել,  
Մեկ էլ փրկված Հայրենիքը,  
Որը նա շատ է սիրել:  
...Ես էլ շուտով կմեծանամ,  
Իսկ թե կրկին թուրքը գա՝**



**Չեմ երկնչի մարտի դաշտում  
Լինել քեզ պես, հորեղբայր...**

«Ես այս գործին չեռնամուխ եղա միայն ու միայն մոռացության մշուշը քո հիշապատկից ցրելու նպատակով: ... Կան փղաներ, որոնց մասին երկու փող անգամ չի գրվել: Այդ գործում այսօր մեծ է մեր՝ սպորողներիս դերը, և մենք պետք է գրնվենք մեր բարձրության վրա, այլապես՝ վաղը ոչ է լինելու...»,- գրում է Արիս Գրիգորյանը: Այսինքն, սպորողներս պետք է ներկա և գալիք սերունդներին պարմենք այն կորիճների մասին, որոնց արյան գնով Արցախի աշխարհը թոթափեց բռնության շղթաները: Դա մեր սրբազան պարտքն է, քանզի սպրելու մեր իրավունքը մայրենի հողի վրա նրանք են նվաճել իրենց իսկ արյամբ: Եվ ի հասարակությունն իր ասածի, հրապարակում է հաջորդ գրքույկը՝ «Լռության բույե» պոեմը, նվիրված «այն զեղեցկադեմ փղաներին, ովքեր գնացին ու այլևս չվերադարձան»: Պոեմը բացվում է «Իբրև սկիզբ» վերնագիրը կրող սքանչելի հարվածով:

**Տխուր եմ, ցավիս սարերն են փլվել,  
Մենակ եմ հիմա, սակայն ոչ անհույս,  
Եվ ժամանակի դավին ամտաբեր  
Նոր շիվ է աճում տապաված կաղնուց:**

**...Թուրքը եկել է հասել Կոճողոտ,  
Մեր օջախին է տիրանալ ուզում...**

Անվեհեր փղաները մարտի են ներսում և հավերժանում... Գրական հեղաբարձի հնարանքի է դիմել Արիս Գրիգորյանը: Բոլոր նահապատկները հերթով ներկայանում են ընթերցողին՝ մենախոսությանը (լուսանկարով ու կարճ կենսագրականով):

Մհավասիկ՝

**ԵՎ ԳՈՒՐԳԵՆՆ ԱՍԱՅ.**

- Երջանկությունս, իմ Արցախ աշխարհ,  
Քո անունն է լույս՝ իմ բախտի պունը,  
Ապրել քեզ համար, կովել քեզ համար,  
Չոհվել քեզ համար՝ երջանկություն է...

Կամ՝

**ԵՎ ԳԱՐԻԿՆ ԱՍԱՅ.**

- Մեր հի՛ն գյուղում հիմա թուրքի կող՞ունկ,  
Մեր հի՛ն հողի վրա թուրքի հետքե՛ր...

Կանչե՛, կոռ՞ունկ, կանչե՛, զնանք ի մարտ,  
Կանչե՛, կոռ՞ունկ, քանի ջանել ենք մենք...

Եվ այսպես, մեկ-մեկ «խոսում են» բոլոր նահապատկները Ա. Գրիգորյանի փողերով, որոնք բնական ու անմիջական են: Իսկ վերջում հրաժեշտ է փայլիս Անդրանիկը՝ հեղինակի արի երեսյորը, հավաքացնելով, որ անպայման հաղթանակով կվերադառնա...

Գրքույկը, նվիրված համագյուղացի նահապատկներին, եզրափակում է «Հեղաբարձության կարգով» վերնագիրը կրող հարվածը:

**...Եվ դադարում են «ընդհատումները»,  
Տղաները էլ ոչինչ չեն «ասում»,  
Իմաստագուրկ են թվում բառերը,  
Որ... նահանջում են, քաշվում, նվազում:  
Ու տղաները զնում են նորից,  
Որ ամուր պահեն իրենց... դիրքերը.**

ԱՐԻՍ ԳՐԻԳՈՐՅԱՆ  
Իմ ցփի վերջում...

**Իսկ անդառնալի կորստյան ցավից  
Գեռ մղկտում են հարազատները:**

*Բովանդակությամբ՝ հազեցած և չևով՝ հիմնականում ներդաշնակ՝ Արիս Գրիգորյանի չափածոն սրանում է նոր իմաստ ու նոր երանգներ, երբ հնչում է գոհվածների շուրթերից: Անշուշտ, օրինակելի և քաջալեռանքի արժանի գործ է կատարել Արիսը: Մեր սուրբ հողի համար նահատակվածների թեման միշտ էլ առաջինն է և մնալու է առաջինը: Այդ թեման անսպառ է և միշտ արդիական, ոչ միայն այն պատճառով, որ մեր կոռիլը դեռ չի վերջացել: Եվ ամենաճշմարիտ ու առաջին դասը, որ մենք պիտի ուսուցանենք բոլոր սերունդներին, նահատակվածներին՝ իրենց իսկ կյանքով հաստատված դասն է: Այս կենսական գաղափարն է արտահայտում Արիս Գրիգորյանն իր երեք գրքույկներում, գրված փարբեր փարբիներին:*

*Ի դեպ, շրապենը իրագեկել նրա ընթերցողներին, որ փայագրության պատրաստ են հեղինակի «Ապրած օրերի արչագանքումներ» (գիրք առաջին և երկրորդ), «Անպառի չայնից ինչու եմ հուզվում», «Արի սիրենք մենք մեկմեկու...», «Իմ պապը Խաչունց Անդրին է» (մանկական բանաստեղծություններ) և «Նամակ, որը դու երբեք չես կարդալու» (սկանարկներ) գրքերը: Կանաչ ճանապարհի ստորեկը Արիսի նոր գրքերին:*


**Սիլվա ԽԱՉԱՏՐՅԱՆ**

**Բանասիրական գիտությունների քեկնածու, դոցենտ  
«Եղիցի լույս» (ԼՂՀ Գրողների միության քեթթ), քիվ 6, 2001թ. (էջ 3)**

## «ՀԱՄԱՆՎԱԳ»

Արիս ԱՐՄԵՆԻ, Համանվագ: Բանաստեղծություններ և պոեմներ:  
Ստեփանահերպ, «Վաչագան Բարեպաշտ» հրատ. «Գիգակ պլյուն»  
հրատ. Կապաբան, 2005, 96 էջ, րպ.: 250 օր.:

Դեռևս «Գրական Ղարաբաղ» տարեգրքի քանաստեղծություններով հեղինակը Արիս Արսենին, արեղծում է ջերմ, հուզական մթնոլորտ, որը նկատում է տարեգրքի խմբագիր Արմեն Շեկոյանը՝ արտահայտելով այն կարծիքը, որ քանաստեղծի պոեզիան գրավիչ է իր պարզությամբ ու անմիջականությամբ: «Համանվագ» գիրքը, որը լույս է բնծայել «Վաչագան Բարեպաշտ» հրատարակչությունը, ավելի է ընդլայնում քանաստեղծի արեղծագործական դաշտը: «Գազել»-ը, իբրև քանաստեղծական կառուցվածք ու արտահայտման միջոց, նորովի է կիրառվել քանաստեղծի ստեղծագործական մղումներում: Ահա պապը՝ Խաչունց Անդրին.



**Նա հանդի կանչը զգում էր անձայն,  
Գնում էր ճամփան հողի կանչին էր:**

**Բանում էր հանդում մինչև ուշ գիշեր,  
Մենակ չէր, ընկեր կար՝ Ծիր-Կաթինն էր:**

**...Պապը աշխարհում այլևս չկա,  
Թոքը մեծացել, աչքը... հանդին է:**

«Գազել պատրանքի» քանաստեղծության մեջ հեղինակը կերպավորում է մասկոտրյան հիշողությունները, «ժամը լուրջությունից» հանում հոգու մաքրամաքուր նվազները, ամբողջացնում մարդկային չգրումները:

**Լուռ քարացել է քարերի վրա՝  
Քարերին քառած ջրի փրփուրը:**

**Աչքերս են հանկարծ ծանրանում տխուր,  
Ու... ջուր է դառնում աչքերիս հուրը:**

**Եվ արթնանում են քարերը կարծես՝  
Կոտրում աղբյուրի լուռ քարույունը...**

Շահեն Օհանջանյանը 1978 թ. «Բարեկամություն» թերթում գրել է. «Անպանծույճ րոդեր են, պարզ պատկերներ, ամենագիտավորը՝ մաքրամաքուր զգացումներ: Հայրենի եզերքի լեռն ու դաշտը, գետն ու առվակիր, անշուշտ, Արիսի քանաստեղծական աշխարհի հիմնական քնակիչներն են: Սակայն մի զարմանալի ու շնորհաշար երակով են արտփում նրա գործերը: Դա մարդու հանդեպ ունեցած սիրտ արտահայտությունն է: Արիսը քանաստեղծել գիտե ու նաև քնության շայնը ունկնդրել:»

Սիրո թեման մշտապես հուզում է քանաստեղծին: Նա թախանցում է երազի խորքերը և հանում այնպեղից ապրումի ու հույզի պարտեր:

**Դու ինձ աչքերիդ կապույտում քաղիր,  
Թաղի՛ր շուրթերիդ աղամանդ ծովում,  
Քո երազները ինձ համար պահիր,  
Քո երազները ինձ շատ են զովում:**

Սերը վերափոխում է քանաստեղծի հոգեաշխարհը, պատերը դարձնում ավելի զգայուն ու թրթռուն: Այն, ինչ որ փնտրում է երա-

... Դրաստեղծություններ երգեհոսի Ժամբ  
ԱՐԻՍ ԱՐՄԵՆԻ

գող քանաստեղծը, պահվում է ամենախորքում: Զգրե՛լ, հասնե՛լ, լինե՛լ դա են հուշում սիրո ներաշխարհի զգայարանները.

**Դու իմ աչքերին բնավ մի՛ նայիր,  
Դու խո՛րքը նայիր իմ խռով հոգու,  
Ուր կրակված են և՛ սեր, և՛ երազ,  
Ուր կարոտո՞ւմ են աչքերս անքուն:**

Գրականագետ Միլվա Խաչատրյանը գրում է. «Արիս Գրիգորյանը դասական շնչի սրեղծագործող է և նրա ոչ մի տողում չկան ճիգեր՝ քարոչ ու խրթին երևալու: Ինչպես կյանքում, իր գրքերում էլ նա պարզ ու հասարակ է. ազնիվ ու անմիջական, ընթերցողին իսկույն զգում է, որ գործ ունի մաքուր հոգու հետ, որի ցոլանքները տեսնում ենք փարթեր փարթիների գրած նրա չափածո և արձակ երկերում»:

Պարերազմի հրով անցած գրողը սրեղծում է մաքառումի ու պայքարի տեղիս, որտեղ ոգին հաղթում է մահին: Խրամայրները երկրի սահմաններն են, որոնք նաև զոհված ազապամարտիկների հուշարձաններ են: «Ցավն ու կսկիծը, վիշտն ու մոռնոքը հեղինակի գրչի փակ դարձել են նամակ ու դիմում, քանաստեղծական տող ու հուշապատում. նկատել է Նորայր Ավերիսյանը»:

«Մայրս՝ ձգանին» շարքում Արիս Արսենին արվահայտել է հոգու խռովքն ու հուզումները, սրեղծել կարոտի և մաքառումի պարկերներ, որոնք հուզիչ են և գրավիչ, ինչպես ժամանակի շնչառությունը:

**Նորից՝ արյուն, նորից՝ քայան,  
Նորից՝ մամռած տուն ու քարեր,  
Դժո՛խքն է սա դանթեական,  
Թե՞ «այստեղով թուրքն է անցել»:**

Պարերազմը մի չարիք է, որ ավերում է երազի դեմքը, ուրևաբակ փալիս ժամանակի ավանդույթներն ու սրբությունները.

**Քանդված տներ, քանդված դպրոց,  
Պղծված հին-նոր գերեզմաններ,  
Չարդված այգի ու օրորոց...  
Զէ՛, այստեղով թուրքն է անցել:**

Չոհված ազապամարտիկ-քանաստեղծ Կոմիտաս Հակոբյանին և նրա սիրած աղջկան՝ Նունեին նվիրված տողերում քաբախում են հիշաբակի լույսն ու կարոտի թրթիռները, հիշողության ափի մեջ շողշողում է սիրո արցունքը.

**Նա պահում է ափը՝ մոմակալ է ասես,  
Իսկ դու մոմ ես՝ վառվող աչքերի մեջ նրա,  
Ամբանալու համար դեռ շա՞տ պիտի «լացես»,  
Կատարյա՞լ չէ ափը, կասկածո՞ւմ ես, տղա՞...**

**Ու՛ կաթում ես, կաթ-կաթ, տե՛ս, արցունք է ափիդ,  
Տե՛ս, կարոտիդ՝ նրա երազանքն է ծավլում,  
Մոմակալը թախծի աչքն է հառել ճամփիդ...  
...Մո՞մ, հերի՛ք է, այդպես մինչև ո՞ւր ես հավում:**

Արիս Արսենին իր «Համակվազ» ժողովածոում անդրադառնալով ժամանակի իրադարձություններին՝ յուրովի խորհրդածություններ է անում մեր ժողովրդի ճակատագրի մասին, պայքարի ու մաքառումի պարկերներով հարաբացնում ընթերցողի հոգեաշխարհը:

**Ռորերտ ԵՄԱՅԱՆ**

**Քանաստեղծ**

**«Ազապ Արցախ» (հանրապետական թերթ),  
թ.142 (1957), 28 նոյեմբերի 2006 թ. (էջ 7)**

# ԱՊՐՈՒՄ Է ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ, ՈՐՊԵՍ ՄԻՋՈՑ ԼՈՒՅՄԻ

Արիս ԱՐՍԵՆԻ, Արի սիրենք մենք մեկմեկու... Բանաստեղծություններ: Մտեփանասկերպ. «Պոլիգրաֆ» ՓԲԸ, 2008, 136 էջ, ցուպ՝ 500 օր:

Վերջերս Արիս Արսենին ընթերցողի սեղանին է դրել մի նոր գիրք՝ «Արի սիրենք մենք մեկմեկու...» խորագրով: Գրքի կազմը շնավորել է նկարիչ Լիանա Քոչարյանը, ում ուրույն արեղծագործությունները խոստով կերպով ու ներքին դրամատիկանով բնորոշում են արցախցի հեղինակների (Կավիթ Միրայելյան, Անահիտ Զոչարյան) գրքերի էությունը: Գրքի համակարգչային շնավորումը կատարել է հեղինակի դուստր՝ Մարիամը, և պիրի ասեմ, որ նրան հաջողվել է այդ գործում «ընդգծել իր ասելիքը»:



Մերը այնպիսի մի թեմա է, որը երբեք հնարավոր չէ սպառել, հասնել վերջին շերտին... Որովհետև այդ մթնոլորտը հոգու ուժ ունի և երկնային շնչառություն: Մահը թեև ուղեկից է սիրո ճանապարհին, բայց նրա ներկայությունը բանաստեղծությունից դուրս է... Բանաստեղծի բառերն ասպետներ են, որ սիրո կրակից վառվելով, անխոնջ որոնում են այն բարձունքները, որտեղ բուսնում են երազի ծաղիկները: «Արի սիրենք մենք մեկմեկու...»,- սա բանաստեղծի չայն է, որ փորձում է բացել մի նոր ասպարեզ լույսի, հավասրի և սիրո համար: Գիրքը նվիրված է սիրելի կնոջը՝ Ռուզանին, ով ոչ միայն բանաստեղծի կյանքի ընկերն է, այլև խոհակիցն ու մտերիմը: Արիս Արսենին փորձում է «կոնկրետացնել և իմունավորել» այն զգացողությունը, որը անսահման է, անասի և անասհման...

ԱՐԻՍ ԱՐՍԵՆԻ Իմ գրքի վերջում...

**Իմ սիրելի՛, իմ լա՛վ Ռուզան,  
Ի՞նչ ցանկանամ քեզ այսօր,  
Ասեմ՝ քո լավ օրե՛րը գան,  
Բարի լուրեր նորից-նո՞ր:**

**Թե՞ պարզապես նստեմ քո դեմ  
Եվ քո առաջ, հիացքով,  
Իմ երազի լույսը փռեմ,  
Ու... աչքերին նայեմ քո:**

Աչքերին նայելը խորհրդավոր արարողություն է, որը հյուսվում է ծիսաժամի գույներով, հուշի և սպրումի թելերով, մրքի ճառագայթներով, որոնցով ջերմանում է հոգին և կառչում... Անհայրի խոստով արձագանքից:

**Քո աչքերը առանց կրակ ինձ վառո՞ւմ են,  
Մոխրանո՞ւմ են,  
Ու... աշխարհից վերանո՞ւմ են:**

Բանաստեղծը սիրած էակին ուզում է փաթաթել իր երազներով: Միաժամանակ կարիք է զգում, որ իրեն փայտիայեն թեկուզ... պար-

բանքի քներով: «Դու ինչ աչքերիդ կապույտում քաղիք»: Միրո հրավերն է արթնանում օդում: «Ես քո մաքրության // Վկա՛ն եմ միակ»,- մրմնջում է հենվից: Հեռուն դառնում է ընդհանրացում.

**Գնո՛ւմ եմ մենակ  
Իմ երազ-հեռուն,  
Ուր դու անընկեր  
Ինձ ես երագում...**

Միրը դառնում է Լսարված և լուսավորում նաև այն ճանապարհը, որը աշխարհից դուրս է, ապրում է Ոգու փարածքում, որպես սրբագործություն:

**Եվ ուխտավորի մոլեռանդությամբ  
Որերորդ անգամ խոնարհվում եմ լուռ  
Քո առաջ, ահա,  
Ու լուռ աղոթում,  
Դու՛ երագակերտ իմ սրբապատկեր,  
Դու՛ իմ լուսաշխարհ,  
Իմ Աստված, իմ Սե՛ր...**

Հեղրո բանաստեղծը լուռ աղոթում է, առանց բառերի: Շուրթերը շշմում են՝ ների՛ր... Լռության մեջ արթնանում են չկատարված երագները և կապույտով ներկվում... բարսխող խոսարումները, որոնք շրջանցում են բառերի պապյանները և մուտք գործում հնոցը զգացմունքի:

**Շոցիդ մեջ մի գույգ գերված  
սևկտուց ճերմակ աղավնի՝  
Ուզում եմ դուրս պրծնել, որ  
վայելեն համբո՛ւյրն արևի...**

Միրո այս գիրքը ընթերցվում է... առանց արհեստական միջամտությունների: Տողերը քեժ են ու կենսունակ: Բառային մթնոլորտը հագեցած է կյանքային ազդակներով: Մեզ մնում է միայն շնորհավորել բանաստեղծին՝ այս նոր գրքի կապակցությամբ, և մաղթել սրեղծագործական նորանոր հաջողություններ: «Արի սիրենք մենք մեկմեկու»: Ընթերցողի սեփականությունն է արդեն: Ոգու ճանապարհ: Եթե սիրենք՝ կփրկվի՛ խիղճը մեր... Կասարի փարածությունը, որպես միջոց լույսի:

**Ռորերդ ԵՄԱՅԱՆ**  
Բանաստեղծ  
«Մարտիկ» (ԼՂՀ ՊՔ պաշտոնաթերթ), քիվ 33 (794),  
16-23 օգոստոսի 2008 թ. (էջ 6)

# ՋԵՐՄ ՈՒ ԱՌԻՆՔՆՈՂ ՔՆԱՐԵՐԳՈՒԹՅՈՒՆ

(ԱՐԻՍ ԱՐՍԵՆԻ-50)

**Մ**եծանուն Հ. Մահյանն իր «Կյանքս դժվար է» քանասարեղծության մեջ կատարում է այսպիսի փոխառության ընդհանրացում. «Կյանքս դժվար է մրկում րոտի մեջ, // Տոբս կյանք մրկել չի կարողանում»: Անմահ արվեստագետը դրանով ընդգծում էր այն իմաստությունը, որ րոտը, երգը սպրտում են միայն այն դեպքում, եթե դրանք բիտում են սրբից՝ ժամանակի հրամայականով և շոյում են սրբերը կյանքի հարուցած բոլոր պահերին՝ ուրախության և տխրության, մաքառան և արարման, կարտրի և հույսի: Նա ոչ միայն մատնացույց է արել այս ճշմարտությունը, այլև ինքը՝ իր փառանքի լուսարձակներն ուղղել է ժամանակի և ժամանակակցի պահանջներին ու իրական կացությանը, հյուսել այնպիսի քնարերգություն, որով դարձել է Աստուծո քարտուղարն ու ժողովրդի պարզամտախոր, ինչպես նաև դաս ու դպրոց սրբեղծագործող նոր սերունդների համար: Եվ այդ նոր սերունդների ներկայացուցիչներից Արիս Գրիգորյանը (Արսենի) հենց էն գլխից հասկացել է կյանքի և արվեստի փոխկապակցության սահյանական պահանջը՝ գրելով մեծ քանասարեղծի մի խրված «Գագել մրերսոբյան» երգը.

**Քեզ Որոտանն է տվել աշխարհին,  
Իսկ ես ծնվել եմ ափին Թարթառի:**

**Մեր ծնունդին նույն նվազն է հնչել,-  
Մինև նույն լարից մինև նույն թառի:**

**Ես ապրում եմ իմ Արցախի սիրով,  
Գու՛ք քո սիգապանձ Սյունյաց աշխարհի:**

**Ու նույն ոգով դեռ երգեր ենք գրում,-  
Ես՝ լույս հավատով իմ լուսաշաղի,**

**Գու՛ր իմաստնացած քո ոսկե աշնան  
Տաք կարոտներով լի մթնշաղի:**

Եվ Արիսն ընթացավ՝ հավատարմով իր լուսաշաղին, թիկունքին միշտ զգալով Մեծն Մահյանի տաք շունչը:

Արիս Արսենիի լուրջ հանդիպումը իսրայապահանջ ընթերցողի հետ րեդի ունեցավ 1988 թվականին՝ Երևանում փյապրված «Գրական Ասարթաղ» ավանախում գեյրեղված քանասարեղծական շարքով: Արձազանքը դրական էր թե՛ արմանախի և թե՛ Արիսի երգերի մասին: Առաջին գրախոսներից մեկը ես էի, որ երիտասարդ քանասարեղծի երգերի շարքում րեսա սահյանական ավանդույթին հեյրևող, բայց պարկերամիտության իր երանգներն ունեցող խոսարունակից րտրիին:

Հայրենի րան հանդեպ ունեցած կարտրի և հեռացումի պարունառած ցավի քանասարեղծականացումը այնքան անմիջական և հոգեբանական այնպիսի խորությանը են բացահայրված «Տունը» հյուսվածքում, որ մնում էր միայն ողջունել նրա մուրքը և հավայր ընծայել պոետական նոր հունչքի հանդեպ: Այդ սրեղծագործությունը սովորական համարել չի կարելի: Դա ոչ միայն կարտրի ճիչ է, այլև արմարների երկանչ, որի արանքում րառապում է որդու սիրտը, կրակվում րուն անունով

... Դրասարթաղներ երգեմսիկ Տաթևի ԱՐԻՍ ԱՐՍԵՆԻ

ծնողների հոգին: Հենց այդ երկկողմանի հրդեհված հոգիների շխամբող ճիչն է, որ էլնում է քնարական հերոսի սրտից.

**Իմ առաջին ճիչը, որ լսել է տունը,  
Իմ առաջին ճիչը վաղո՞ւց չկա,  
Բայց հիշո՞ւմ է տունը: Ու ապրում է տունը  
Մեր այն հեռո՞ւ գյուղում աղամանդյա:**

Տան հիշողությունը գրկված մեկրաֆոր է, որդուն այցի կանչող տե-  
սիլը, որ իրական է, շոշափելի, բայց և անհասանելի, որ դարձել էր Ար-  
ցախյան գյուղերի ճակատագիր, փանձ անուրջները լացող պատեր,  
«միջր մի անհոռյա հառաչ»:

Քնարական հերոսի ցավը խորն է, որ իր փոխարեն իր «նկարն է  
փանն այս լոկ տիրություն անում»: Գրկված պատկեր է, որ ճշմարտա-  
ցիորեն ներկայացնում է Լեւինի և Մրախիկի կողմից նորաքուխ Ադրբե-  
ջանի հայակույլ երախը ներված արցախյան գյուղի ճակատագիրը, որ  
խոցում է փանտրիոջ սիրտը.

**Ու մնում եմ շվար: Հիմա ի՞նչ եմ, տանտե՞ր,  
Հիմա դադձն է ձգվում տանս պատին,  
Տանս անքուն պատին ձգվում եղինցն անտեր,-  
Սպառնում է անգամ... ժամանակին:**

Եվ ժամանակները դաժան էին: Այդ ծանր ժամանակներից վրեժ առ-  
նելու ելք է որոնում բանաստեղծը և ինչ-որ չափով գրկում՝ «Գագել պա-  
պիս» երգի մեջ: Դա պապի կերպարն է, նրա թողած ավանդն է: Հայկ  
Նահապետի ժամանակներից սկսած հայր իր կյանքի ճանապարհն  
ապահովել է հայկյան նկրի ուժով, հարարելել հայրենի հողի սիրտը շո-  
շելով ու բարիքներ սրելով: Այդպիսին էր նաև բանաստեղծի պապը՝  
Խաչունց Անդրին: Բայց նա միայն Արիսի պապը չէ, իմ պապն է, քո  
պապն է, նրա պապն է, Արցախի հավերժախոս ավանդույթն ու ներկան  
է: Նա գրողի անչնական և անանչնական մտորումների խորացումն է:  
Բանաստեղծությունը զաղափարի և կատարման առումով հոգիներ  
շարժելու, անցյալի հրաշալիքներն ի տես բերելու ուժ ունի: Պոետը նախ  
ժանոթացնում է իր պապ-հերոսին.

**Նա մեծ պապ-պա Խաչունց Անդրին էր,  
Ականջը ձայնի, աչքը հանդին էր:**

**Նա հանդի կանչը զգում էր անձայն,  
Գնում էր՝ ճամփան հողի կանչին էր:**

Այստեղ խոսուն մեկրաֆորներ են հանդը, հողը, ճամփան, որ փոշուում  
էր պապի ուրբերի փակ: Բակ այդ ճամփան արարման և հացի ուղեցույց  
էր, որի հեղադարձը ուղիղ տուն էր բերում: Պապը՝

**Բանում էր հանդում մինչև ուշ գիշեր,-  
Մեռակ չէր, ընկեր կար՝ Ծիր-կաթինն էր,-**

**Պատահում էր և՛ քնում էր հանդում,  
Իսկ թռռան աչքը միշտ էլ ճամփին էր:**

Պապի փունդարձին սպասող թռռը սակայն խզում է կապը հագա-  
բանյակների ավանդույթ դարձած պապի հույսից. «Թռռան երազը հան-  
դից անդին էր...»: Պապի գալուստով թռռն իրեն երջանիկ էր զգում,  
«բայց հանդ չէր գնում, հանդը... պապինն էր»:

Բանաստեղծության ավարտը ևս գյուտ է՝ հողապաշար անցյալի և հո-  
ղից խոռված ներկայի ընդգծումով.

**Պապը աշխարհում այլևս չկա,  
Թողը մեծացել, աչքը... հանդին է:**



Ասել է քե՛ թողը կարող է պատի ավանդած հանդիմ, որ միայն հանդ չէ, պատարայր կենցաղ է, արմարապահ գիրկ, կարողի ցավ, երդարչի կանչ:

Հայրնի համոզմունք է, որ երգը ծնվում է կարողից: Մակայն ավելացնենք, որ կարողից հյուսվում են րեսիլքն ու պարանքը՝ ոչ վերացական, այլ շոշափելի ու կունկրեպ՝ ակունքված բանաստեղծի և՛ արեղծագործական նախափրոթյուններից, և՛ անմարում կարողից: Կարողածին պարանքի և րեսիլքի պոետական հնարանքը հարուն է նաև Արիսի պոեզիային: Վկան՝ նրա «Գագել պարանքի» պարկերը: Բանաստեղծը մենախոսում է՝ կուպերի րակ հայրենի րնաշխարհը, որրեղ «էլ չի կարկաչում Գնդնգան չորը» և իր «մանկության սիրած աղբյուրը»: Չկա «մեղրահամ ջուրը»: Աղբյուրը լուռ է: Բայց խոսքը միայն աղբյուրի մասին չէ, այլ նրա կարկաչի հեղ երագ դառած մանկության: Քնարական հերոսին մի պահ պարտում է անոտությունը, սակայն պարանքը սփոփում է նրան: Դա վերացական հույզերի ծիանք չէ, այլ մանկության րևորանը, հայրենի եզերքը շենացնելու երազանք:

**Վնույս նայում եմ լած աղբյուրին  
(Ի՛նչ ծանր է նրա այդ լուրջունը):**

**Աչքերս են հանկարծ ծանրանում տխուր,  
Ու ջուր է դառնում աչքերիս հուրը:**

**Եվ արթնանում եմ քարերը կարծես,  
Կոտրում աղբյուրի քար լուրջունը:**

Պարանքի րելերից են հյուսված նաև «Գիշերային նվագ» բանաստեղծությունը, որրեղ պարկեր-կերպարներ են պոետի **հուշերն ու գիշերը**: Հուշերը անչնամկորված են, հանգիստ չեն րայիս րնարական հերոսին, որին չեն օգնում փողոցն ու քամին: Մակայն նա մենության խավարը գրելու համար վառում է լույսերը, որ «լույսի հեղ վառվեն իսպարած հույսերը»: Բանաստեղծության ընդհանրացումը, որ հրաշալի մի պարկեր է, ասես հյուսված է Մեծ Լոռեցու խորհուրդով, որ րվել է նա 1917թ. սկսնակ բանաստեղծներին, որ երեք չհուսալքվեն, լույս երգեն ու արև:

Թունանկայի այդ խորհուրդը հայ րոլոր պոետրները չեն մոռացել երեք, և այդ թունանկայական լավատեսությունը զգում ենք նաև Արիսի «Գիշերային նվագի» մեջ, որ ավարվում է այսպես.

**Իմ հույսը իմ տունն է՝ սերաշխարհս անծայր,  
Ինչքան էլ նեմզ լինի գիշերս ու խավար:  
Եվ թեկուզ մենակ եմ, քայց նորից իմ տանն եմ,  
Իսկ հուշս իմ հոգու արևոտ հեմանն է,  
Նրանից եմ առնում երագս, կարոտս,  
և արև նկարում նրանով մինչև լույս,  
որ խաղա՞ղ, անաղմո՞ւլ լուսանա գիշերը,  
լույսի հետ տունս գա ու մնա իմ սերը:**

**...Իսկ հիմա դեռ մութ է, հիմա դեռ գիշեր է,  
Բայց... տանս մենակ չեմ, ինձ հետ են... հուշերս:**

ԿԻՆ ԱՐԻՍԻ Իմ գրի վեցում...

Այսպես, Արիս Արսենին գրական աշխարհ մրավ հայ դասական պոետգիայի լավագույն ավանդույթների լույսով ջերմացած՝ աչքը հայրենի հողին, սկանջը նրա կանչին, երագը հյուսած երգին, ու Արցախյան ազգային ազարագրական պայքարին զինվորագրվեց առանց երդումի, որովհետև հայրենիքի պարկերը նրա արյանն էր անցել մոր կաթի հեղ: Նս գեմը վերցրեց, սպայի սարդեր կրեց ուներին, գրիչը ցած չորեց, որպեսզի ամբողջությամբ զինվորյալ դարչած ժողովրդի հեղ մեկրեղ վերականգներ հավարը՝ Արցախը փրկելու և անկախ ու ազար սարե-

լու վճռակատարությամբ: Արիսը ևս, ինչպես Ն. Գասպարյանը, Հ. Ալեքսանյանը, Ժ. Բեգլարյանը և այլ երիտասարդներ, Գ. Գաբրիելյանի, Վ. Հակոբյանի, Հր. Բեգլարյանի, Ա. Հովհաննիսյանի, Ս. Խանյանի, Ն. Ավագյանի և մյուս աննաշված պոետների հետ ծառայելիս Արցախը մայր Հասարակնի վերամիավորելու արագան գաղափարին ու գործին:

Չինվոր-լրագրող-բանասարեղծ Ա. Արսենին կանգնեցրեց պոետական իր շենքը ամուր հիմքերի վրա: Նկարի են առնում նրա բանասարեղծությունների վերնվշտ մնայուն արժեք ներկայացնող շարքը: 1993թ. նա ընթերցողի սեղանին դրեց «Ծաքած լռություն», 1997-ին՝ «Անդրանիկ, այսինքն՝ առաջամարտիկ», «Ուշացած երկխոսություն Արարատ Դազարյանի հետ», 1998-ին՝ «...Եվ այսպիսի անկարագիր», 2000-ին՝ «Ղողանջ հիշարարկի», «Լռության թույն», 2001-ին՝ «Ծովածաղկի աչքեր», 2003-ին՝ «Անյառի շայնից ինչու են հուզվում», 2005-ին՝ «Համանվագ», 2007-ին՝ «Ախ», 2008-ին՝ «Արի սիրենք մենք մեկմեկու...», «Չափածո և արշակ երգիծանք» գրքերը:

Արիսն սառնում էր նկարելիորեն՝ նույն արեղծագործական խառնվածքով, նախասիրություններով, բազմազան բեմաների մեջ՝ քնարական շնչով, միշտ որոնումների ու գրկումների ծարավով:

Բազմազան բեմաների դաշտում Արիսը, առաջին հերթին, հայրենասեր է: Եվ դա բնական է: Արցախում արեղծվող գրականությունը 1988-ից սկսած, առաջին հերթին ազարաբաղջ ոգու արտահայտություն է, երկիրը ազերի-թուրքերից փրկելու կոչ, ի հարկե, գեղարվեստական արցախապարկեր հնարանքներով: «**Ծաքած լռություն**»- վերնագիրն անգամ խոսում է իր մասին: Նրանում հեղինակը զեպրեղել էր և՛ «Գրական Դարաբաղ» այնուհետև փրկագրված երգերը, և՛ նոր արեղծագործությունները՝ նվիրված մեր ժողովրդի անցյալին ու ներկային: Այս առումով հարկանշական է «Հայ ժողովրդի անկարագիր» բանասարեղծությունը: Բնութագրական բնոգծումներով բանասարեղծը ուրվագծում է մեր ժողովրդի և՛ ծանր անկարագիրը, և՛ կամքի անսպառ ուժը: Դրա շնորհիվ է, որ նրա «փոխություն երագներ» է ծնել, կարտյուններ եղել են «մաքուր ու բարի», սիրտը՝ մեծ, միտքը՝ ծովածուխ: Միաժամանակ նշում է, որ մեր «նահանգները չեռքեր ունեին ծնկներին հասնող», բայց, ավաղ, դարերի հետ փոխվել է ամեն ինչ, սակայն չեն փոխվել հարարելու նրա վճռակատարությունն ու արարելու ծարավը, և օրինակակա հայարությունքամբ ատում է.

**Իմ ճանապարհին  
Վերելքներ եղան ու նեո անկումներ,-  
Ինչքան բարձրացա՝  
Այնքան կորցրի,  
Ինչքան կորցրի  
Այնքան երկնեցի,  
Այնքան կերտեցի...**

Կերտելուն հաջորդել են նոր կորուստները, նոր անկումներն ու հառնելու փենչը: Եվ բանասարեղծը կրկին անդրադառնում է Հայոց պարսունությանը, դիմում Միխիթար սպարապետին, կոչ անում, որ նոր Հայիշորները այսպեսնեկ դավաճաններին, որ Սյունիքն ու Արցախը չառնի օսմանուն: Պարսունությունը շարունակվում է, բայց այս անգամ բախտը ուրիշ անակնկալներ է մարտցում՝ ելել են Արցախն ու Սյունիքը, ամբողջ հայությունն է ուրքի ելել՝ փրկելու ազգային արժանապատվությունը: «Բզաբելլային» բանասարեղծության մեջ՝ գրված 1991թ., Արիսն բնդհանրացնում է.

**Դու ատում ես... Ու ելնում են տղաները ծուռ,  
Ելնում են, որ հայ բարերը հայ մնան կրկին,**

**Ելնում են, որ վերակերտեն ավեր տունը մեր,  
Որ մոռացվի դանթեական առասպելն այն հին:**

Արիսի պոետական երևակայությունը մատուցներ է փնջում աշխարհասպիտու հայության երազներից, ցավից ու արցախաածուսի հուլիսից: Այդ են վկայում բեյբութցի դաշնակահար Բզարեյլային նվիրված երգերը, որոնցում ծփանք են առել Հայոց նոր ազատամարտի կոչերն ու հորդորանքները: «Կանչե, կռունկ» բանաստեղծությունը յուրօրինակ կոչ է՝ ուղղված մարտի ելնող քաջազուններին.

**Կանչե, կռունկ, կանչե՛ գնանք ի մարտ,  
Կանչե, կռունկ՝ քանի ջահել ենք մենք...  
...Մեջքը մեր չի ճկվի երբեք մարտում,  
Մենք դեռ պետք է կռվենք, պետք է կռվենք...**

«Ճարած լռություն» գրքի հեղաբրքի էջերից է «Շիրազական» շարքը, որտեղ առաջին հերթին ընդգծվում է մեծ բանաստեղծի շիրազված հայրենասպարումը, որի փառավոր նմուշներից է «Հարաբարդի ողբը» սրեղծագործությունը: Մեջբերելով Շիրազի հայրենաշունչ, քնավոր արտահայտությունները, Արիսը անմահ պոետի հավաքով նշում է.

**Իմ ազգը հեզ չէ,  
Ոստխին տեզ է,  
Ոստխի արտին սուր ու դանակ,  
Իմ ազգը հուր է,  
Թշնամուն՝ սուր է,  
Թշնամու մուխը մարող բանակ:**

Ապա մեջբերելով Արցախում ընթացող գոյամարտը, Արիսը հավաքով բացականչում է.

**Ոչ, նա չի պարտվի,  
Կլանգնի ոտքի,  
Կկապի որդու Դավթի գոտին,  
Որ գետնի նրան  
Մի ակնբարթում-  
«Յոթ միլիոնանոց» իր ոստխին:**

Անկախության շրջանի հայ պոեզիայում, որ սկսվում է 1991թ. սեպտեմբերից, մեծ փեղ են գրավում մեր սուրբ ևսաստեղծներին շունված բանաստեղծությունները, պոեմները, լեզենդներն ու ասքերը: Արիս Արսենին ևս անմասն չի մնացել նման երկերի սրեղծման գործընթացից: Մարտական սրորաբաժանման կազմում, որպես վաշտի հրամանատարի փեժ կետերում, իսկ այնուհետև, հրադարարի հասարակումից հետո, զինծառայությունը շարունակելով որպես զինվորական քթակից, նա մտփկից խնացել է ոչ քիչ քաջազունների, ունեցել է մտերիմ ընկերներ, որոնց մի մասը հայրենիքի ազատությանն է նվիրել ամենաբանկրկյանքը: Արիսի սրեղծագործության մեջ մի առանձին բաժին են կազմում գոհյալների հիշարակին նվիրված երգերը: Դրանցից են «Ես կուզեի լինել», «Տամադրություն», «Երջանկություն», «Դու սպրում ես» հյուսվածքները՝ ընծայված Գագիկ Պարպակյանի, Արթուր Դանիելյանի, Գուրգեն Կարոսյանի, Արթուր Խաչատրյանի սուրբ հիշարակին: Արիսի արտի մեջ կայծակել է նաև անհուն մի ցավ, երբ գոհվել է նրա կրթներ եղբայրը՝ Անդրանիկը: 1993թ. նոր տարվա առաջին օրը գրված «Տնուր նոր տարի» բանաստեղծությունը սրտառուչ մի ընթվիտ է, որ յուրաքանչյուր գոհյալի հարազատ կարող է այն համարել իր ցաված արտի խոսքը: Այն հոգեհարազատ է նաև ինձ, որովհետև իմ

ԿՐԻՄ ԱՐԻՍԻ ... Գրադարաններ եղեկակի Տափն

ավագ եղբայրը՝ բանաստեղծ Սուրեն Խսանյանը, նահապարկվել է Մեծ հայրենականում՝ գերմանական ֆաշիզմի դեմ մղված կռիվներում: Արիսն ասես հենց իմ անունից է գրել այդ երկի տողերը, որ արտահայտում են անչնական և անանչնական ցավ ու կարոտ:

Պատերազմի բեման պոեզիական պարկերների բարմությամբ լայն տեղ գրավ նաև «**Համանվագ**» ժողովածուում: Մի ամբողջ շարք են կազմում հայրենասիրական սրեղծագործությունները, խմբված՝ «Մարտ՝ չգանկին» վերնագրի տակ:

Արիս Արսենին այստեղ արդեն խոսում է և՛ ավագ, և՛ նոր սերնդի անունից: Որպես բնաբան բերված է հոր խոսքը՝ հերթափոխի սպասող որդուն.

**Մատս ձգանին՝  
Կսպասեմ, տղաս,  
Առնականանաս:  
Հերթս կփոխեմ այնժամ,  
Երբ որ դո՛ւ  
Հերթափոխի գաս:**

Ծարբը ոչ միայն բանաստեղծական զգացումների հաջող փունջ է, այլ նաև յուրովի մի փարեգրություն: Այսպես, որպես «Կարճարև մարտ» երգի բնաբան՝ կարդում ենք. «1994-ի հունվարի 8: Ներքին Մեխահնեղի: Ծանր վիրավորվեց 4-րդ վաշտի քաջարի հրամանատար Ժիրայր Մկրտումյանը, զոհվեցին դասակի հրամանատար Կարո Միքայելյանը և շարքային Արմեն Բաբայանը»: «Փոքրիկը» երգի բնաբանն ազդարարում է. «1995-ի փետրվարի 2, Սեյտուլան: Դավադիր ականի զոհ դարձավ լեգենդար Փոքրիկը՝ Արթուր Օհանյանը»: «Եղբայրս, արի...» երգի բնաբանը հայտնում է. «1994-ի ապրիլի 18, Հասանդայա: Կարաադի մարտում հերոսաբար զոհվեց գնդացրորդ եղբայրս՝ Անդրանիկ Արսենի Գրիգորյանը»: Կգանկանայի բանաստեղծությունը բերել ամբողջությամբ.

**Գիշեր է, Ամանոր, իսկ դու դեմ... չկա՛ս,  
Բայց թույլ մի զգացում հուշում է՝ կգա՛ս:  
Կգա՛ս ու աղմուկով դուռս կբացվի,  
Կունկնդրես կարոտած պատերիս լացին:  
Կգա՛ս, որ կարոտած սիրտս ջերմանա,  
Երագս թողնես ինձ, թախիծս գնա՛:  
Կգա՛ս, որ էլ իրար չմնանք ծարա՛վ...  
(Երա՛գս, կարո՛տս, թախիծս տարա՛ր):  
Ի՛նչ «անխիղճ» տղա ես, եղբա՛յրս, արի՛,  
Որ ուրախ սկսվի զոնե՛ ա՛յս տարին:  
Այստեղ էլ ձյուն տեղաց կարոտիս սրտին...  
Բայց ինչ էլ լինի՝ քեզ սպասե՛նք պիտի՛:  
Բայց ինչ էլ լինի՝ դու անպայման կգա՛ս,  
Որ օ՛րս, արև՛ս, գալի՛ քս դառնաս...**

Արիսը ցատուսի չափածո իր խոսքն է ասել Մունգալիթյան ցեղասպանության դեմ: Հինգ մասից բաղկացած բնաբանական սրեմում արտահայտվելով իր զայրույթն ու ցավը, բանաստեղծը բնութագրում է հայոց դարերը և ճշում.

**Դու՛ հայոց վերջին ցեղասպանություն,  
Մարդկության վերջին ոճի՛ ըր լինես...**

Արիս Արսենին բանաստեղծական շեղի մեջ միշտ անհանգիստ է, որոնում է խոսքն ասելու բարձ միջոցներ, և նշեմ, որ հաջողվում է գրվել: Որպես օրինակ կարելի է բերել «Լռության րոպե» պոեմը, որը նվիրել է իր հայրենի Կոնոդոր գյուղի զոհված ազաբանարիկների հիշա-

յրակին: Պոեմի վերնագիրը «Լռության թուփ» է կոչվում, սակայն գոհ-  
յալների շրթերին հնչում է հավերժության ձայնը՝ իրենց անունից, անու-  
նից ժողովրդի և նոր սերունդների: Այդ գաղափարը բանաստեղծն ընդգ-  
ծել է պոեմի վերջում՝ «Հեղձրության կարգով» վերտառությամբ.

**Ու տղաները գնում են նորից,  
Որ ամուր պահեն իրենց... դիրքերը,  
Իսկ անդառնալի կորստյան ցավից  
Գեռ մղկտում են հարազատները:  
«Կանգնած են» տղերքն անհողորդ, անքեն,  
Որ կայուն լինի խաղաղությունը...  
...Եվ ավարտված է լռության թուփն,  
Բայց լռությունը շարունակվում է:**

\*\*\*

Կյանքին սիրահարված բանաստեղծի համար սերը աստվածային  
պարզ է, առանց որի՝ մարդ արարածը չի կարող համարես անել երջան-  
կությունը, չի կարող երջանկացնել նույնիսկ հարազատներին, վերջա-  
պես, առանց սիրո քաղցր զգացումի՝ համ չի ունենա նրա սերը՝ կյանքի,  
մարդկանց, երկրի, աշխարհի, տիեզերքի հանդեպ: Նման զգացումի ար-  
տահայտություններ են համաշխարհային պոեզիայի դասական ներկա-  
յացուցիչների սիրային երգերը:

Արիսը միշտ է ընկալել Աստծո պարզած սիրո էությունը դեռևս գրա-  
կան-ստեղծագործական առաջին քայլերը կատարելիս: Այդ են վկայում  
«Գրական Դարաբաղ» այմանահում զեպեղված այն երգերը, որոնք պա-  
րաննական ազնիվ սպրտանների խոստովանություններ են: «Գագել սիրո»  
ստեղծագործությունը սիրո նվազների հրաշալի մի նմուշ է: Արիսի սիրային  
բանաստեղծություններում սիրո էակը ներկայացվում է որպես երջանկա-  
բեր Դիցուհի, որպես հոգու սյուն, ընդհանրիք ճրագ: Դեռ ավելին, գարունը  
քնարական հերոսի համար ամբողջ էությամբ սեր է, «Սիրո բարի լույս ու  
սեր գիշեր է», առանց սիրո նա չի պարկերացնում, թե ինչ է բերկրանքը,  
իրեն անենուրեք զգում է մենակ ու մերժված: Բայց և այնպես՝ նա հավա-  
րում է սիրո այցելությանը, նրա պարզած հրաշալիքներին, ու, երբ գրկում  
է իր սերը, ցնծությամբ բացակասնում է.

**Դու եկար մի օր: Թախծարույր տան  
Երջանկությունն արդեն տանտեր է:  
Եվ բարուրում ես անմեղություն,  
Իսկ ցավս արդեն յոթ սարից դեն է:**

Արիսի երգերում բացառված է սիրո մոռացումը, քանզի ըստ նրա՝  
սերը ամբողջացնում է սիրողի աշխարհը և ներկայացնում որպես «կան-  
չող հյուղ»: Հավատարմության խոստովանություններ են Արիսի սիրա-  
յին նվազները: Բանաստեղծն այստեղ իրեն ներկայացնում է որպես  
արցախցի՝ պատկենական ավանդույթներին հավատարիմ: Բերենը  
«Նվազ հավաստիացնանս» երգը.

**Ինձ քո աչքերի կապույտում՝ թաղիր,  
Թաղիր շուրթերիդ աղամանդ ծովում,  
Քո երագները ինձ համար պահիր,  
Քո երագները ինձ շատ են թովում:**

**Քեզ հետ՝ աշխարհը հրաշք է ասես,  
Առանց քեզ՝ հողմ է, քամին է լալիս,  
Քեզ հետ՝ մի խենթ եմ, և գիշերս ի լույս  
Քունը կոպերիս այցի չի գալիս...**

Գրքից-գիրք Արիսի սիրերգությունն ավելի հարստացավ ու հա-  
ստնացավ: Այն չեքք բերեց և՛ հոգսի, և՛ նվիրումի երանգներ: 2001թ.

ԱՐԻՍ ԱՐԻՍԻ Իմ գրի վեցում...

հրապարակված «**Ծովածաղկի աչքեր**» գրքույկը ամբողջությամբ կազմված են սիրո երգերից: Այստեղ Սերը ներկայանում է «ասպրաշուրթ ու ասպրղագարը» րեւոքով, որին, ամեն դեպքում, փնտրում է քնարական հերոսը, և երագում, որ նրան միշտ ունենա իր կողքին: Դա միայն երագ է, որովհետև վախենում է, որ սիրտը չբացի: Քնարական հերոսը րենչում է, որ սիրած էակը միշտ ժպտա իրեն, աչքերի հուրը նվիրի:

«Ծովածաղկի աչքեր» գրքույկի ընդհանրացումը փոխադարձ սիրո քաղցանք է.

**Եթե չգաս՝ կմոխրանամ կարոտից,  
Եթե չգաս՝ հետո էլ ո՞նց նայես ինձ:**

**Զգա՛ ս... Ցավի ճիչ է՝ սիրոս չցավի՞,  
Զգա՛ ս... Իմս քի՞չ է՝ քո՞նն էլ գումարվի...**

Աշխարհի քոյր սիրերգակները ասովածանվեր իրենց սիրո զգացումները արտահայտել են կոնկրետ՝ այն էակի անունով, ում հետ կապել են իրենց ձակարագրերը: Սակայն նրանց խոսքը անչնական շրջանակներից դուրս է եկել ու դարձել անանչնական: Ասել է թե՛ քանասրեղծն իր «ես»-ի միջոցով արտահայտել է սիրո այն քնույթը, որ հարույ է քոյրին և քոյրի անունից է: Այս առումով որոշակի արժեք ունի սիրո երգերի այն շարքը, որ Արիսը նվիրել է իր կնոջը՝ Ռուզանին: Ծանոթանալով այդ երգերին, ասարում ես մաքոր ու անքիծ մի զգացում՝ քո սիրելիի հանդեպ, ում հետ անցել ես և անցնելու ես կյանքի քո ուղին, ում հետ րուն ու րեղ ես դրել, ուրահացել երեխաներիդ ճիշով, պահել-շահել ու նվիրել ժողովրդին:

Վերջին հաշվով, երբ գննում ես Ասրծո որդիների՝ Ադամի և Եվայի աշխարհ գայն ու մարդկության կյանքի լուսավոր ուղին օրհնելով սիրո խորհուրդով, գալիս ես մի եզրակացության, որ անհրաժեշտ է ադոթել Ասրծուն և պաշարել նրան՝ ընրանիքի լույսը վառելու համար՝ հանչիւն իրար երջանկացնող գոյգերի: Առանց երկնրանքի, կարող ենք ընդգծել Արիսի սիրո քանասրեղծությունների մեջ արտահայտված այս միտումն ու գաղափարը: «**Արի սիրենք մենք մեկմեկու...**» գրքի «Սիրո րողերից՝ նախերգանքի փոխարեն» քանասրեղծության մեջ քնարական հերոսը քացում է կյանքի առեղծվածները և դրանց խաչմերուկներում՝ սիրո վեհությունն ու լույսը:

Սիրո քաղցրությունն ու աշխարհասրեղծ էությունն է ծիւում շարքի «Առաջին սերը», «Ջանգլույուններ», «Նվազ հավասրիացման» և այլ երգերում: Անմիջական զգացումներով, խոսքի պարկերավորությամբ ու առինքնող գաղափարի առկայությանը գեղագիրական հաճույթ են պարմառում ժողովածուի քառյակները: Բանասրեղծը փառաքանում է ծովածավալ սերը, որից երբեք չի հագնում սիրտը: Քնարական հերոսը խոսրովանում է, որ ինքը «սիրում է լուռ», «կարտում է լուռ», որ իր «կարտը թշում է անքն»: Դա պոերի հավարն է, ջերտ սիրելով հանդերձ, կրկին հարցնում է, թե «ի՞նչ է սերը», և ասես՝ գրկում է պարասիանը յուրովի՝ սերը գրկում են, քայց էլի սպասում են, և հենց դա է ասովածանվեր սիրո էությունը.

**Նորից կգաս ու կցվի  
Սիրոս երգերով,  
Սիրո համար էլ չեմ քախծի՝  
Կործանված սիրո:**

**Ու քո սերը կպարգևի  
Ինձ մի մեծ աշխարհ,  
Մի մեծ աշխարհ՝ սիրո, կյանքի  
Եվ երջանկության:**

**Նորից կերգի առվակը լուրք  
Մեր սիրո մասին.  
Ու երգերով իր քաղցրաշուրք  
Նա մեզ կհուզի:**

**Կմոռանանք մեր վիշտը հին  
Լցված երագով,  
Կգաս նորից ու կցվի  
Կյանքս քո սիրով...**

*Չես կարող չընդունել բանաստեղծի այս խորհուրդը և չհիշել անմահ Սայաթ-Նովայի իմաստությունը՝ «Մերը սեր կու բերն»:*

\*\*\*

*Ա. Արսենիի քնարերգության մեջ նկատելի տեղ են գրավում խոհական երգերը: Մի դեպքում դրանք բնասպաշարական հյուսվածքներն են, մյուս դեպքում՝ այն գործերը, որ նվիրված են հարազարներին. ժողովրդին, կյանքի առեղծվածներին:*

*Այս առումով, նախ բերենք հարազարներին նվիրված երգերը, որոնց շարքում հարկանշական են «Գազել տարիս», «Գազել մորս», «Գազել մոռացման» գործերը: Թռռն ապրում է քաղաքում, իսկ տարը ննջում է գյուղի գերեզմանոցում: Սակայն չեն մոռացվում տարի քնքշանքներն ու թռռան շարությունները, որ չուլված էին միմյանց: Թռռը տարիներ անց մեղանում է տարիս չլսելու համար և իրեն համարում է պարտք և խնդրում է, որ տարի հոգին ների իրեն:*

**Մոռացել ես երևի չարություններս բոլոր,-**

**Գու ներող ես եղել միշտ, այս անգամ էլ, տատ, ների՛ր:**

*Բայց դրանով չի մեղմանում թռռան ցավը, կրկնապատկվում է, որ տարի գերեզմանը մնացել է անշիրմաքար:*

*Որդիական խղճի և սիրո վառող խոստովանություն է մորը նվիրված գազելը: Որդին պարրասար է հառնելու չարի դեմ, ցրելու մոր քախիծը, սրբելու նրա արցունքները ու չթողնել մենակ:*

*Կարտուների հոսքը քնարական հերոսին փանում է դեպի գյուղ, որտեղ նրա հոգում ծիփում է ափսոսանքի ծովը, որ իրենց փսն քակում այլևս չի կանաչում թթենին, չի հառաչում, չի երգում: Բայց չի մարում հույսը, կյանքը պիտի ժպտա հայրենի քակում:*

**Թթենու մի չիվ է այսօր կանաչում նորից մեր բակում,**

**Նա հույսի շողն է մեր բակի՝ հուշերիս կանաչ թթենին:**

*Բնության և հասարակական կյանքի աստվածային փոխկապակցվածության մի երակն է «Ժայռի ճակատին» պարկերը, որ բերում են ամբողջությամբ:*

**Ժայռի ճակատին ստվեր կար ամպի,  
Արևը երգել երգն իր կարապի,  
Գնում էր՝ օրվա հոգսերից հոգմած,  
Ժայռածերպերում հանգստանալու:  
Այնպես էր գնում,  
Ասես էլ երբեք ետ չի դառնալու:**

*Խոհական լիրիկայի հուզող նմուշներից է «Վաղվա մասին, և՛ այսօրվա» բանաստեղծությունը, գրված պոետի իր իսկ 40-ամյակի նախօրյակին: Դա գնահատումն է անցածի, ակնկալիքի, միաժամանակ երախտի արտահայտությունը նրանց հանդեպ, ովքեր փաստորամյա հասակում իրենց կյանքն են տվել այսօրվա և վաղվա համար:*

\*\*\*

Արիս Արսենիի քնարերգությունը արժանացել է և՛ ընթերցողնե- **255**

...դրաստեղծներ ենգեմակի Տապի  
ԱՐԻՍ ԱՐՍԵՆԻ

րի, և՛ մի շարք գրականագետների ու գրողների դրական գնահատականին: Հանելի է նշել, որ դեռևս 1989թ. Միրիայում հայրերի գրականագետ Զակոբ Չոլաքյանը ընդհանրության մեջ գնահատել է «Գրական Զարսաղ» ամսանախոսն՝ րեղ գրած երգերը, դրանք համարելով Արցախի «ինքնաձանաչանս» արյահայտություն: Նա նկատում է, որ առանց այդ համընդհանուր ինքնաձանաչանս հասնելու, հնարավոր չէր լինի Արցախյան շարժումը: Եվ որպես քնարական հերոսի ներաշխարհի բացահայտանս հաջող օրինակներ, բերում է Արխի բանաստեղծությունները: Բնութագրելով կոնկրետ Արխի՝ Համո Մահյանին նվիրած երգը, Հ. Չոլաքյանն ընդհանրացնում է. «Արցախցին իր ինդճը, շրջապարբ, իր փոհմային գրույցներն ու պարմությունը պրպրելով կհավերժվի ապրող ու մեռած իր բոլոր ազգականների և հայրենի եզերքների հետ՝ հայրենով, խաչքարով, նույն հավաքով ու երազով, Հայի Նահապետով, Սուրբ Գրիգոր Լուսավորիչով, Սուրբ Մեսրոպով, Ավարայրով: Հասկանալի է, որ սրանք մեր ժողովրդի էությունն են, Հայաստան աշխարհի ու հայ ժողովրդի «հիշողությունը» կազմող հիմնական փարրերը: Արցախցին այսպես է, որ հայության կրողն է դառնում, իսկ Արցախը՝ Հայաստանի մի մասը: Միայն այս ըմբռնումներով է, որ արցախյան բանաստեղծությունը հասնում է հայրենիք և ազգ ըմբռնումների ձևի և բովանդակության դաշնության և ամբողջականության: Հայ բանաստեղծությունը արցախյան ներշնչում լինի, թե Սյունյաց աշխարհի, Թարթառի ափին վարարող հավաքի երգ լինի, թե Որոտանի ափին հեծեծող կարտրի երգ՝ նույն նվազն է՝ «միևնույն լարից միևնույն թառի» («Արցախեան ինքնաձանաչանս բանաստեղծութիւնը», Հայկպ, 1990, էջ 68):

Արխի քնարերգության առանձնահատկությունների դրական գնահատականն ենք կարողում գրականագետներ Լ. Գրիգորյանի «Ազնիվ մղումների բանաստեղծը», Ս. Եսաչարյանի «Արխի Գրիգորյանի բանաստեղծական աշխարհը», բանաստեղծ Ռ. Եսայանի «Համակնվազ», «Ապրում է փարածությունը, որպես միջոց լույսի» գրախոսություններում: Իսկ Արցախի գրողների միության վարչության նախագահ, փառանդավոր բանաստեղծ Վ. Հակոբյանը գրել է. «Արխի Գրիգորյանի գրիչը խուլաններ է հերկում, այսպես ասած, հերկված դաշտերում, հատարելով, որ նորույթը ասելիքի մեջ է, որ ասելիքն է կարևորում թեմայի հրատարակությունը: Եվ դրա գեղեցիկ վկայությունը Արցախի մարտական կյանքը պարկերող նրա զուլալ երգերն են» («Եղիցի լույս», 2001թ. թիվ 2):

Արխի Արսենիի պոեզիան, որ բազմալար է թեմայրիկ առումով, արժանի է լուրջ ուսումնասիրության:

### **Սոկրատ ԽՈՆՅԱՆ**

**Բանաստեղծ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր  
ԼՂՀ Գիտության վասպակավոր գործիչ**

«Լրապու» (Մեսրոպ Մաշտոց Համալսարանի գիտական հանդես),  
№ 2 (11), էջ 146-158, Սպեփանակերպ, «Գիզակ պլյուս» հր. փա., 2011  
Ընդիր երկերը 10 հարդրով, հ.10,  
Սպեփանակերպ, «Գիզակ պլյուս» հր., 2011 (էջ 274-289)



## ՀՆՂԻՆԱԿԻ ՆԱԽՈՐԴ ԳՐՔԵՐԸ

1. ԾԱԶԱԾ ԼՈՒՌԹՅՈՒՆ (բանասարկություններ), 1993, 48 էջ, փյւ.՝ 1000 օր.:
2. ԱՆԴՐԱՆԻԿ, ԱՅՍԻՆՔՆ՝ ԱՌԱՋԱՄԱՐՏԻԿ (սկնարկ՝ նամակով և բանասարկություններով միասիրյա), 1997, 32 էջ, փյւ.՝ 1000 օր.:
3. ՌԻՇԱՅԱԾ ԵՐԿԻՈՍՈՒԹՅՈՒՆ ԱՐԱՐԱՏ ԴԱՋԱՐՅԱՆԻ ՀԵՏ (սկնարկ), 1997, 24 էջ, փյւ.՝ 400 օր.:
4. ...ԵՎ ԱՅՍՊԻՍԻ ԾԱԿԱՏԱԳԻՐ (սկնարկ), 1998, 56 էջ + 4 թերթ նկ. ներդիր, փյւ.՝ 350 օր.:
5. ԴՈՂԱՆՋ ՀԻՇԱՏԱԿԻ (սկնարկ), 2000, 12 էջ, փյւ.՝ 300 օր.:
6. ԼՈՒՌԹՅԱՆ ԲՈՊԵ (սյոն), 2000, 24 էջ, փյւ.՝ 1000 օր.:
7. ԾՈՎԱԾԱԳԿԻ ԱՉՔԵՐ (բանասարկություններ), 2001, 28 էջ, փյւ.՝ 500 օր.:
8. ԱՆՏԱՌԻ ՉԱՅՆՑ ԻՆՉՈ՞Ւ ԵՄ ՀՈՒԶՎՈՒՄ... (բանասարկություններ), 2003, 12 էջ, փյւ.՝ 100 օր.:
9. ՁԵՐՎՈՆ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ԿՅԱՆՔՆ ՈՒ ԱՆՍԱՀՈՒԹՅՈՒՆԸ (վավերագրություն), 2005, 144 էջ + 8 թերթ գուն. նկ. ներդիր, փյւ.՝ 200 օր.:
10. ЖИЗНЬ И БЕССМЕРТИЕ ЗЕРВОНА ВАРТАНЯНА (документальный очерк), 2005, 144 էջ + 8 թերթ գուն. նկ. ներդիր, փյւ.՝ 200 օր.:
11. ՀԱՄԱՆՎԱԳ (բանասարկություններ և սյոններ), 2005, 96 էջ, փյւ.՝ 250 օր.:
12. ԱՓ (բանասարկություններ և սյոններ), 2007, 160 էջ, փյւ.՝ 250 օր.:
13. ՉԱՓԱԾՈՒ ԵՎ ԱՐՉԱԿ ԵՐԳԻԾԱՆՔ (բանասարկություններ, մանրապարումներ և ֆեյիեպոններ), 2008, 80 էջ, փյւ.՝ 250 օր.:
14. ԱՐԻ ՄԻՐԵՆՔ ՄԵՆՔ ՄԵԿՄԵԿՈՒ... (սիրային բանասարկություններին հավաքածու), 2008, 136 էջ, փյւ.՝ 500 օր.:
15. ՎԱՏԱԿԱՎՈՐ ՌԱՅԻՈՆԱԼԻՋՄՏՈՐԸ. Հրայր Վանյանի կյանքն ու գործունեությունը (կենսագրական-վերլուծական սկնարկ), 2009, 112 էջ, փյւ.՝ 150 օր.:
16. ԽԻՋԱԽՄԱՆ ՈՐԳԻՆ (փաստավավերագրություն), 2010, 160 էջ, փյւ.՝ 500 օր.:

ԱՐԿԱ ԱՐՄԵՆԻ ԵՐԿԻՐ ԺԱՂՈՒՅՈՒՆ, ԳԻՐԻ ԽԱՐԱԿԸ

## ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՐԱՍ ԳՐՔԵՐԸ

1. ԻՆՉՈ՞Ւ Է ԱՐԱՔՄԻ ԶՈՒՐԸ ՊՂՏՈՐ (վավերագրություն), 160 էջ:
2. ԻՄ ՊԱՊԸ ԽԱՉՈՒՆՑ ԱՆԴՐԻՆ Է (մանկական բանասարկությունների ժողովածու):
3. ԻՆՉ ԵՆ ՊԱՏՈՒՄ ՓՈՔՐԻԿՆԵՐԸ (մանկական բանասարկությունների ժողովածու):
4. ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ, գիրք 2 (արշակ երգիծանք, գեղարվեստավավերագրական էսսեներ, պատմագրականագիտական հոդվածներ ու գրախոսություններ):
5. ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ, գիրք 3 (հրապարակախոսություն, մեկագրություններ, դրվագներ մեր ոչ վաղ անցյալի պատմությունից, Արցախյան շարժման ժամանակագրություն):

# Արքեպիսկոպոսական գրքեր

- Արևարդիկի պատմածից 215  
Աղանա պատմական 218  
Ակրոսպիրոսը... (Բառախաղ-1) 137  
«Անաչկոյ» Արարարը 220  
Ամենից առաջ... 188  
Ամպը սարին... (Աղայում-18) 76  
Ամուսնանա՞նք, քե՛ն... 199-207  
Այրպես չէի որոշել... 38  
Այրակերպություն 163  
Այլսպարում-Փարվանա 180-190  
Այլ... «պարկերներ» (1-3) 174  
Այնպես է անուշ գերում... 144  
Այնպես լավ ես ինչ ժպտում... (Նահիրգ) 132  
... Այս գիշեր 157  
Այս ճանապարհը 19  
Այսպես խոսեց Քաղցրիկը 223  
Այրում է կարտրը... 135  
Անակնկալ հանդիպում 165  
Անահիր «Գ»-ն 202  
Անահիր «Ժ»-ն 201  
Անդրանիկի պատմածից 212  
Անյետի-անպարմելի 187  
«Անհամբերը» 196  
Անչրեր 28  
Անչրեի փակ 204  
Անչեչ երգի մասին... 190  
Անորոշություն 138  
Անվե՛ր քո ես քեզ սիրելու... 147  
Անրառը այնքան... (Աղայում-7) 73  
Անրառն ինչ... (Աղայում-8) 74  
Անցնում է կյանքը... 16  
Անունը եռք է... 136  
Անունը՝ երազ փոխը... 144  
Անուշիկի պատմածից 215  
Անքնություն 138  
Աշակի հնայքը 200  
Աշխարհընդդեմ հառաչանք 95  
Աշնանային պարկեր 100  
Աշուն 26  
Աչքեր, մի՛ նայեք... 45  
Առաջին անգամ 36  
Առաջին սերը 102  
Առաջին ուսուցչո՞ւհուս 219  
Ասա՛, ինչո՞ւ քեզ սիրեցի... 46  
Ասա՛, ո՞ւր... 43  
Ասում են՝ Անուշն ես դու... 177  
Ասում են, թե աղջիկները... 33  
Ավ. Բասակյանին 23  
Արի... 140  
Արի կամաց քայլերը... 34  
Արի սիրենք մենք մեկմեկու... 71  
Արցախի հավերժությունը 90  
Արևիկի պատմածից 214  
Բաժանվո՞ւմ եմ... 162  
Բայց՝ հավատում է 192  
Բայց՝ ո՛չ ախտասնը 164  
Բանասպետությունն իմ... 24  
Բառախաղ-1 (Ակրոսպիրոսը...) 137  
Բառախաղ-2 (Թողնենք զհինին...) 137  
Բառախաղ-3 (Կրծքածալ...) 137  
Բարեկամներ են... (Աղայում-2) 72  
Բարչունք փանող արսեհերով 10-57  
Բարչունք փանող արսեհերով 57  
Բարևեց աղջիկն այդ քեզ... 145  
Բեմի վրա... 192  
Բռնկվել էր... (Աղայում-20) 77  
Բրիգադայարի մենախոսությունը 193  
Պ-ազել բողոքի 106  
Պ-ազել կարոտի 111  
Պ-ազել մայրիկիս 107  
Պ-ազել մեղասական 109  
Պ-ազել մոռացման 112  
Պ-ազել մրերմական 110  
Պ-ազել մուրքի 106  
Պ-ազելների պատի 106-112  
Պ-ազել որոնման 112  
Պ-ազել պապիս 108  
Պ-ազել պատրանքի 109  
Պ-ազել սիրո 107  
Պ-ազել փափիս 108  
Պ-ազել փրկության 111  
Պ-ազել ցավի 110  
Պարնանային բնակար 15  
Պարնան հրավեր 17  
Պարնան... փոխարեն 163  
Պարուն 15  
Պանացի ու չես գալիս... 149  
Պոստիկի պատմածից 216  
Պրախանութի մուր 206  
Պոստական 184  
Պոստանները սիրախարված 182  
Պոստանները Փարվանա 181  
Պատարի պահին 157  
Պավեր ես կյուրում, քախիծ... 146  
Պեղին գույն 17  
Պարոցականը 220  
Պու, այնպես է լինել... 69  
Պու ստում ես՝ զո՞ւր սիրեցի... 46  
Պու սպելով արում ես ինչ... 47  
Պու արժանի ես ավելիին (Ռուզանին) 132



Իրար համար... 45  
**Լավ մարդուն՝ բարի ցանկություններով** 164  
 Լեյպրեմաներ Հրոն, Գեղամբ, Գինոսյանը և մյուսները 158  
 Լեկիկի ժպտացող դիմանկարի առաջ 192  
 Լեկների դասը 199  
 Լեռները 98  
 Լեռները իրևարիվել չգիրեն... 14  
 Լիներ... (Վկայում-13) 75  
 Լռության թույլ 116-129  
 Լույսը բացվում է... (Վերջերգ) 32  
 Լույսն ուղեկից լինի թեզ... 135  
 Լուռ եմ հավատում... 40  
**Խ աղաղ էր պահը...** 172  
 Խալոթ ու ես նորից... 147  
 Խաչունց աղբյուրը 13  
 Խոսենք շշուկով 161  
 Խոսողականություն 105  
 Խոսք բնթերցողիս 9  
 Խորենացու «հեր» 205  
 Խորհում ես, խորհում... 22  
**Ճ աղիկներն են միշտ...** 18  
**Ճ աղիած տիպոսություն** 169-175  
 Ճաղկանց փունջ ես... 132  
 Ճարը նիրհում էր... (Վկայում-6) 73  
 Ճնևոթյան ավերիս 171  
**Ճ ովածաղիկ աչքեր** 130-141  
**Վ ալյուս է, գվարթ է նա...** 148  
 Կանգնեիք քո դեմ... 35  
 Կապույտ են լինում... (Վկայում-12) 75  
**Կ ալրակապահեր** 178-207  
 Կարճարև մարտ 155  
 Կարոտը 25  
 Կարոտ կա աչքերիդ մեջ... 145  
 Կարոտի անբջանք (1-7) 173-174  
 Կարոտի լեզվով 175  
**Կ արոպների հովիտը** 12-32  
 Կարոտներիս կանաչ հովիտում... (Նախերգ) 12  
 Կզա 172  
 Կզնա... 38  
 Կղարչնե՞ս սիրտս գերիդ... 136  
 Կյանք, շար ես նման... 14  
 Կրծքածալ... (Բառախաղ-3) 137  
**1988, փետրվար 27-29** 113-115  
**Հ ամանվազ** 142-177  
 Հանդիսիկը 220  
 Հայաստան 22  
 Հայ ժողովրդի ճակատագիրը 91  
 Հայոց պարմության դասին 92  
 Հայկի պարմածից 214  
**Հայրենի կարգավ** 144-150

Հավատարմություն 21  
 Հավատար հանգանակ 168  
 Հարմար առիթով 166  
 Հինա ի՛նչ անենք... 203  
 Հինա տաքսի կվարչեմ... 189  
 Հիշողության մեղեդի 13  
 Հովի, Թունանյանին 23  
 Հորս հիշարակին 169  
 Հրածեչրի գանգ 222  
 Հրածեչրի խոսք 207  
 Հրածեչրի փոխարեն 139  
 Հույսի ճրագ 43  
**Պ ալարբադու...** 197  
**Ռ ալկալապահր** 154  
 Ռակալամարտը 27  
 Ռանապարհին... 162  
 Ռանապարհները 18  
 Ռանապարհու... 189  
**Ռ աքսած լռություն** 88-115, 90-105  
**Մ աղթանք** 31  
 Մաղթանք վերջին գանգի 166  
**Մ աքս չգանին** 151-159  
 Մարիամիկի պարմածից 211  
 Մեծերի մահով... (Վկայում-16) 76  
 Մեկի սիրով... 39  
 Մենավոր կաղնու... (Վկայում-5) 73  
 Մենության ուշ գիշեր էր... 147  
 Մենք 96  
 Մենք ամուսնանանք... 203  
 Մեր Անահիտները 201  
 Մեր Ջինան 200  
 Մեր հին, հնամյա... 168  
 Մեր սպասույթ 203  
 «Միամիտ» Արևիկը 219  
 Միայն դո՞ւ տեսար... 135  
 Մի՛ գոցիր, բաց արա, թող... 148  
 Մի՛ եղիր ուրագի պես... 149  
 Մի՛ թե վաղուց է... 39  
 Մի կյանքի պարմություն 101  
 Միևս մայրիկը 21  
 Մի՛ պարծենա... 14  
 Միշտ, երբ փողոցով... (Վկայում-9) 74  
 Միք, Նալբանդյան 42  
 Մնաս բարով... (Վերջերգ) 48  
 Մոռացած տարիք... (Նախերգ) 199  
 Մյուսհոգություն 196  
**Մ րբնիկ տողեր** 176-177  
 Մրտում էին քարերը... (Վկայում-4) 72  
**Յ ոթ գուսանների բալլադը** 185  
**Ն ա երագ էր...** 44  
 Նախերգ (Այնպես լավ ես...) 132  
 Նախերգ (Կարոտներիս կանաչ հովիտում...) 12  
 Նախերգ (Մոռացած տարիք...) 199



# Քույրանկարչույթ

<b>Լենա ԳՐԻԳՈՐՅԱՆ.</b> Ազնիվ մղումների բանաստեղծը	5-8
<b>Խոսք ընթերցողիս</b>	9
<b>ԲԱՐՉՈՒՆՔ ՏԱՆՈՂ ԱՐԱՀԵՏՈՎ</b>	10-57
Կարոպների հովիտը	12-32
Ես չեմ մոռացել	33-48
<b>Վեներա... Սիրո խորհուրդը (հաղվածներ)</b>	49-51
Յնորք (պոեմ)	52-56
<b>ՆՈՐ ՀԱՆԳԻՊՈՒՄ</b>	58-87
Ես ու դու	60-71
Պահի վիայումներ	72-78
<b>Պաբլո Ներուդայի մենահոսությունը (պոեմ)</b>	79-87
<b>ՃԱՔԱԾ ԼՌՈՒԹՅՈՒՆ</b>	88-115
Ճաքած լոռություն	90-105
Գազելների պասկ	106-112
1988, փետրվար 27-29 (պոեմ)	113-115
<b>ԼՌՈՒԹՅԱՆ ԲՈՊԵ</b>	116-129
<b>ԾՈՎԱԾԱՂ ԿԻ ԱՉՔԵՐ</b>	130-141
ՀԱՄԱՆՎԱԳ	142-177
Հայրենի կարգավ	144-150
Մայրս չգանին	151-159
40-ից հետո	160-168
Ծաղկած պիպուկուն	169-175
Սրերմիկ րոդեր	176-177
<b>ԿԱՏԱԿԱՊԱՀԵՐ</b>	178-207
Այլապարտում-Փարվանա	180-190
Էպիգրամներ և Ֆելիեպոններ	191-198
Ամուսնանա՞նք, թե՞ ... թիչ էլ սպասենք	199-207
<b>ՓՈՔՐԻԿՆԵՐԻ ՄՈԼՈՐԱԿՈՒՄ</b>	208-225
Ի՞նչ են պատմում փոքրիկները	210-217
Իմ պապը Խաչունց Անդրին է	218-222
Իմ բոռնիկները	223-225
<b>ԻՍԿ ԳՐՔԻ ՎԵՐՉՈՒՄ...</b>	226-256
...Հրապարակումներ հեղինակի մասին	
Բարի լույս («Բարեկամություն»)	228
Կարծիքներ	228-230
Մեկ հարց բանաստեղծ Արիս Գրիգորյանին	231
Հոբելյան	231-232
<b>Յակոբ ՉՈԼԱՔԵԱՆ.</b> Արցախեան ինքնաճանաչման բանաստեղծուհիներ	233-238
<b>Սվետլանա ԽԱՉԱՏՐՅԱՆ.</b> Գիրքն իբրև հուշարձան	239
<b>Սիրվա ԽԱՉԱՏՐՅԱՆ.</b> Արիս Գրիգորյանի բանաստեղծական աշխարհը	240-242
<b>Ռոբերտ ԵՄԱՅԱՆ.</b> «Համանվագ»	243-244
Ապրում է պարածությունը, որպես միջոց լույսի	245-246
<b>Սոկրատ ԽԱՆՅԱՆ.</b> Չերս ու առիթքնող քնարերգություն	247-256
Հեղինակի նախորդ գրքերը	257
Տպագրության պատրաստ գրքերը	257
Այբբենական ցանկ	258-261

**ԱՐԻՍ ԱՐՍԵՆԻ**  
(ԱՐԻՍ ԱՐՍԵՆԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ)  
*Երկերի ժողովածու*  
*Գիրք առաջին*  
*Բանասիրեղծություններ և պոեմներ*  
Ստեփանակերտ 2013

**ARIS ARSENI**  
(ARIS ARSENI GRIGORYAN)  
*Collection of works*  
*Book One*  
*Verses and poems*  
Stephanakert 2013

**АРИС АРСЕНИ**  
(АРИС АРСЕНОВИЧ ГРИГОРЯН)  
*Собрание сочинений*  
*Книга первая*  
*Стихи и поэмы*  
Степанакерт 2013

Գրքի վրա աշխատել են՝

Թամար ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ (սրբագրում)  
Մարիամ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ (շարվածք)  
Լուսինե ԲԱՂԿԱՍԿՅԱՆԸ (էջադրում)  
Ասյա ԱԲԲԱՀԱՄՅԱՆԸ (կազմի ձևավորում)

Հեղինակի հասցին՝

Адрес автора // **Address of the author**

ԼՂՀ, ք. Ստեփանակերտ, Տիգրան Մեծի փող. 23 ա, բն. 2

Нагорно-Карабахская Республика, г.Степанакерт, ул.Тигран Меша 23 а, кв. 2  
2, Tigran Mets Str. 23 a, Stepanakert, Republic of Nagorno-Kharabakh

Էլեկտրոնային հասցին՝

Эл.адрес // **E-mail**

arisarseni@mail.ru

arisarseni@gmail.com

arisarseni@yahoo.com

Հեռախոսները՝

**Тел. // Tel.**

+374 97 320795

+374 47 950794

Վեբ-կայքը՝

Веб-сайт // **Web-site**

www.arisarseni.fo.ru

www.arisarseni.blogspot.com

Հանձնված է տպագրության՝ 12.10.08 թ.: Ստորագրված է արտադրության՝ 10.02.13 թ.:

Տառատեսակներ՝ Aibbenaran, Aragatsotn, Armenian Normal, Armcoronet, ArmDzeragir,

ArTarumianHamalsaran, ArTarumianTory, DallakTimeNew, Erku,

Mk\_Parzi, Russian TimesET, Trchnatar:

Չափսը՝ 60x84 1/16, ծավալը՝ 16.5 տպ. մասնիկ: Տպարանակը՝ 300: Գինը՝ պայմանագրային:

---

Տպագրվել է «ԴԻԶՄԿ ՊԼՅՈՒՄ» հրատարակչության տպարանում

ԼՂՀ, ք. Ստեփանակերտ, Ա. Մամուկյանի փող. 121

Հեռ.՝ +374 47 946360

Ստեփանակերտ 2013